ՈՍԿԵ ԴԻՎԱՆ

ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ ՊՐԱԿ 3 • 2011




Պիլպուլ Հազարի, կանաչ գըննտարի,
զաստըված օր կսիրես՝ էլի ու արի:
Պիլպուլ Հազարու Հեքիաթ, Տարոն

Իմ ականջս է Հասել, ով բարեբանյալ և բարեկրթյալ թագավոր (պատմում է Շահրազադա թագուհին իր ամուսին Շահրիար թագավորին), որ Հին ժամանակներում, վաղուց անցած օրերում Պարսկաստանում կենում էր մի թագավոր՝ անունը Խոսրով-շահ, որին Մեծ պարգևատուն պարգևել էր Հզորություն, ջահելություն ու գեղեցկություն և որի սրտումը դրել էր արդարասիրության այնպիսի զորեղ զգացում, որ նրա թագավորության ժամանակ ուլն ու վագրը միմյանց Հետ Հաշտ էին ապրում և կողք-կողքի էին խմում միևնույն վտակից:
Ղազարոս Աղայան



Էս աշխարՀքում թե մի ճար կա, մի
Հնար կա քո ցավին,
Էն Հազարան ազնիվ Հավքն է, որ դու
չունես տակավին,

Որ երգում է Հազար ձենով, Հազար
ձևով կանչելով,
Հետն է բուրյան, մշտադալար վարդ է
թափում փնջերով.
Հովհ. Թումանյան



Մեխակի բույրով Հովն էր շշնջում
Հեքիաթներն Հազար ու մի գիշերվա,
Արմավն ու նոճին անուշ քնի մեջ՝
օրորվում էին ճամիեքի վրա:
Ավետիք ԻսաՀակյան

Հովհաննես Թումանյանի թանգարան
Hovhannes Toumanian Museum

ՈՍԿԵ ԴԻՎԱՆ

Հեքիաթագիտական հանդես



VOSKÉ DIVAN

Journal of fairy–tale studies

Պրակ 3 • 2011 • Volume 3

Հանդեսը հրատարակում է Հովհ. Թումանյանի թանգարանի հեքիաթագիտության բաժինը և *Fabula armeniaca* ծրագիրը՝ համագործակցությամբ Երևանի պետական համալսարանի:

Նյութերը տպագրվում են Հովհ. Թումանյանի թանգարանի և ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի խորհուրդների երաշխավորությամբ:

ISSN 1829–1988

Ոսկե դիվանը միջազգային հեքիաթագիտական պարբերական է՝ հրատարակվում է տարեկան մեկ անգամ: Հանդեսն ունի գիտական հոդվածների, ամենամյա գիտաժողովի նյութերի, նոր հրատարակությունների, ցուցահանդեսների, հաղորդումների, իրադարձությունների և մատենագիտության բաժիններ: Ուշադրության կենտրոնում հայկական բանահյուսական ու գրական հեքիաթն է, սակայն տպագրվում են նաև այլ մշակույթներին առնչվող նյութեր: Նյութեր կարելի է ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով:

Voské Divan is an international journal of folk and fairy tale studies. It contains the following divisions: Articles, Annual Conference Proceedings (Toumanian Museum), Minor Contributions, News, Events (seminars, new publications, fairy tale exhibitions etc), and Bibliographies. Interest focuses on Armenian narratives; however, materials related to other cultures are welcome too. Language: Armenian, Russian, English and French.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENTS

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ
RESEARCH ARTICLES

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Արևելյան հեքիաթն ընդգրկուն, նաև վիճելի եզր է: Սակայն ինչպիսի իմաստ էլ վերագրվի վերջինիս, հայկական համատեքստում այն կարևորվում է մի քանի նկատառումներով:

Հայկական հեքիաթն ունի նաև արևելյան կիսադեմ. մեր դիվանխանայում դարերով հանգրվանել է մի հրաշալի Արևելք՝ տարաշխարհիկ Չինումաչինն ու Հնդույամանը, մեր զրույցներում հպարտ ճեմում է տարագիր Սինամահավքը: Երկնքից վայր ընկնող երեք խնձորները ևս արևելյան բույր ունեն, սակայն, ազգային հեքիաթների ավարտին գրեթե անխափան հայտնվելով և բյուրավոր գեղեցիկ տարբերակներ ճյուղարձակելով, օծվել են իբրև տոհմիկ հայկական ֆաբուլայի եռապտուղ խորհուրդ:

Հայկական հեքիաթը հաճախ ներկայանում է եվրոպացի ընթերցողին որպես արևելյան զրույց: Այսպես, Էնդրյու Լենգի՝ հեքիաթների հայտնի ժողովածուի մեջ հայկական հեքիաթները զետեղված են «Ձիթագույն հատորյակում», որտեղ նրանց վերագրվում է արևելյան փիլիսոփայություն, իսկ հեքիաթները զարդարող գողտրիկ պատկերներում հայ թագաժառանգների գլուխները պսակված են կարմիր–կոկիկ չալմաներով: Ֆրանսիացի ընթերցողին հայկական հրաշավեպը ներկայացված է *Արևելքի մարգարիտներ* (*Les Joyaux de L'Orient)* մատենաշարում:

Առանձնահատուկ է հայ մտավորականի դերը արևելյան հեքիաթի բացահայտման մեջ: Հայազգի Ժոզեֆ Շարլ Մարդրյուսը «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուն թարգմանում է արաբերենից ֆրանսերեն՝ ազատելով տեքստը նախորդ թարգմանությունների պայմանականություններից և համեմելով այն թունդ էրոտիզմով: Մարդրյուսի թարգմանությամբ հիացել են Բորխեսն ու Վարգաս Լյոսան: Բլասկո Իբանյեսը Մարդրյուսի տեքստը թարգմանել է իսպաներեն, Փոյս Մեդերզը՝ անգլերեն:

Մարդրյուսի թարգմանությունից ոգեշնչված՝ նորաձևության արքա Պոլ Պուարեն ստեղծում է արևելյան–հեքիաթային անզուգական հավաքածու, որից և սկիզբ է առնում արևելապաշտության հաղթական երթը բարձր նորաձևություն…

Արևելքը արևմտյան հեքիաթում գրական հրապուրանք է, գեղագիտական պատրանք: Հայկական հեքիաթի համար արևելքը տևական մշակութային առնչություն է՝ կրքոտ, հաճախ վտանգավոր գրկախառնություն, որի թովքից հայկական հեքիաթի պահնորդ ոգին միշտ ազատվել ու իր սուրբ աշխարքն է դարձել հրեղենականջն ու հինավուրց միտքը՝ լի հրաշալուր զրույցների չքնաղ պատառիկներով: Վերադարձել է՝ գերեվարելով անտես, անմարմին հուրի–փարիներ, դև ու դերվիշ, պահպանելով ազգային հեքիաթի զորավոր լեզուն, զուսպ ու վայելուչ ոճը՝ երբևէ չուրանալով մեր մամիկների անգիր մատյանի խնկաբույր տիտղոսը՝ Պառավաշունչը:

Ալվարդ Ջիվանյան

ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԸ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԵՔԻԱԹ. ԱՐԵՎԵԼՔԸ ՀԵՔԻԱԹՈՒՄ
Հովh. Թումանյանի թանգարան, 30–31 մարտի, 2011 թ.

•

THE PROCEEDINGS OF THE 3rd FAIRY TALE STUDIES CONFERENCE
LE CONTE ORIENTAL: L’ORIENT DANS LES CONTES DE FEES
Hovhannes Toumanian Museum, Yerevan, 30–31 March 2011

Թամար Հայրապետյան

ԱՐԵՎԵԼՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ
(առևտրատնտեսական և պատմամշակութային փոխառնչությունների շուրջ)

Արևելյան մարդը, անկախ հասարակության մեջ գրաված դիրքից, առավելագույնս պարտավորված է պահպանելու նախնիների ավանդույթները, ծեսերը, սովորույթներն ու հավատալիքները, որոնց շուրջն էլ հյուսվում են հեքիաթները:

Գտնվելով Պատմական Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված միջազգային տարանցիկ առևտրի կենտրոնում՝ հայերը ծանոթացել են Արևելքին և սկսել իրենց համար բացահայտել այդ հեքիաթային աշխարհի գաղտնիքները, նրա մշակույթն ու կենսակերպը:

Հայկական հեքիաթներում և միջնադարյան մատենագրության մեջ կենցաղավարում են Արևելյան երկրների հետ փոխառնչությունների բազում մանրամասներ՝ ծովային և քարավանային առևտուր, ապրանքափոխանակություն, կնիք, դրամական շրջանառություն և այլն: Հազարան բլբուլ, Սինամահավք (չինական թռչուն), անմահական ջուր ու խնձոր և չնաշխարհիկ (Չինաց աշխարհից) գեղեցկուհիներ որոնող մեր հեքիաթների հերոսները հաճախ հայտնվում են օտար, այնկողմնային համարվող աշխարհներում՝ Չինմաչինում (Չինումաչինում), Հնդու երկրում, Արաբստանում և անգամ խորհրդանշական Պղնձե քաղաքում ու Քաջանց երկրում: Դրան համարժեք է չնաշխարհիկ բառի՝ Չին աշխարհից, այսինքն՝ հեռավոր, արտասովոր աշխարհից մեկնությունը:

Արևելյան պատկերացումների հիմքով ստեղծված հայկական հեքիաթներում առանցքային դեր է կատարում Հայաստանից արտահանվող և դրսից ներմուծվող ապրանքների տեսականին: Չինաստանից բերվող մետաքսի ու խեցեղենի փոխարեն Հայաստանից արտահանվում էր արհեստագործական արտադրանք՝ մետաղե գործիքներ, ոսկյա և արծաթյա իրեր, պղնձյա ամանեղեն, զենքեր ու զրահներ, բրդե գործվածքեղեն, որոնք արտադրվում էին Հայաստանի քաղաքների «գործոց տներում» (Ստեփանոս Սյունեցի 1861, 180, ՀԺՊ 1971, 810–813):

Տուրուբերան–Մուշից գրառված «Սարգիս», «Ձկան փորու թաս», «Ակոբ» և Կարճկան–Գոմսից գրառված «Դերվիշնիրն ու տղան» հեքիաթներում (ՀԺՀ XII 1984, 47–53, 449–454, ՀԺՀ XIII 1985, 276–281, ԲԱ FA IV, 2467–2516) չնաշխարհիկ թասերն այնքան անձեռակերտ են, որ նրանց գեղեցկությունից հերոսներն ուշաթափվում են կամ գինովանում, իսկ Շիրակից գրառված «Հաբրմանի» (ՀԺՀ IV 1963,15–26) հեքիաթում այնկողմնային աշխարհում հայտնված հերոսի՝ սիրուց վառվող մարմինը փորձում են հանգստացնել հմայական գաղտնիմաստ պարունակող ճենապակե ծիսական գյուգյումի (սկահակ) մեջ լցված ջրով:

Գործնական շփումներին, առևտրական և մշակութային կապերի հաստատմանը մասնակցում էին «Մետաքսի ճանապարհի»[1] մերձավորությամբ ապրող

1 «Մետաքսի ճանապարհը» սկսել է գործել մ.թ.ա. 2–րդ դարի կեսերին, երբ սկսվեցին

ժողովուրդները և այդ ճանապարհի երկայնքով տեղաբաշխված հայկական քաղաքները՝ Արտաշատը[1], Դվինը, Անին, Արծնը, Կարսը և այլն: Հայաստանը «Մետաքսի ճանապարհով» կապվում էր Սև և Միջերկրական ծովերի ավազանների նավահանգիստների հետ, դրանց վրայով առևտրական գործարքներ էր կատարում Իրանում, Միջագետքում, Եգիպտոսում, Հնդկաստանում և Չինաստանում: Առևտրական քարավանները Հայաստան էին բերում չինական ու միջինասիական մետաքսե գործվածքներ, հնդկական անուշահոտ յուղեր, համեմունքներ ու թանկագին քարեր: Հռոմա–պարթևական առևտրական կապերն ըստ Ստրաբոնի վերելք են ապրում Հայաստանի շնորհիվ, ինչպես նաև Պոնտական Կոմանա քաղաքի բարգավաճումը կապված էր Հայաստանից բերվող ապրանքների առևտրի հետ (Страбон 1964: 5–8, 3–36):

Հայտնի է, որ մոնղոլական հրոսակների կողմից Չինաստանի հյուսիսային շրջաններ քշված հազարավոր տարագիրները, որոնք գուցե Չարմաղանի կամ Բաթուի տարած հայազգի զինվորներից էին, նույնպես զբաղվում էին առևտրով (Աբրահամյան 1967, 327):

Հայկական «Քյոսի, Թոփալի ու Քոռի նաղլը» (ՀԺՀ I 1959, 507–511), «Մեռլի հրեշտակը» (ՀԺՀ II 1959, 243–253), «Ավճի Շաքուի տղեն» (ՀԺՀ IV 1963, 27–45), «Սիմոն կուպեցին հեքիաթը» (Նույն տեղում, 319–329), «Մաջրում խոջի հեքիաթը» (Նույն տեղում, 105–117), «Իմաստուն քուռագի հեքիաթը» (Նույն տեղում, 139–148), «Երեք դարդատեր» (ՀԺՀ VIII 1977, 532–547), «Առջի տղա» (Նույն տեղում, 790–794) և այլ հեքիաթներում հերոսներն առևտուր են անում, բախտ կամ ճշմարտություն որոնում Սպահանում, Հալեպում, Թեհրանում, Հնդու երկրում, Չին–Մաչինում, Բաղդատում, Սինամ (Չինաց) թագավորի երկրում և այլուր: «Մեռլի հրեշտակը» (ՀԺՀ II 1959, 243–253) հեքիաթում թագավորն իր որդիներից յուրաքանչյուրին «իրեք հարիր մանեթ» է տալիս ու պատվիրում, որ առևտուր անեն, «բա՛լի խելոքանում, մարդ են դառնում» (Նույն տեղում, 243): Մեծ ու միջնեկ տղաները փողերը «բազարում», քամուն են տալիս, «իրիկունը լափ դատարկ» գալիս տուն: Իսկ թագավորի պուճուր տղան «իրեք հարիր մանեթով» փակում է ծեծվող մեռելի պարտքերը, տերտեր է կանչում և իր ծախսով թաղում նրան: Երեկոյան նա դատարկ վերադառնում է տուն ու հորը պատմում իր արարքի մասին: Թագավորն ուրախանում է, հրամայում, որ իր գանձարանից մի գոգ ոսկի բերեն տղայի համար.«–Որդի,– ասում ա,– գնա՛ ուրիշ երկիր ապրանք ա՛ռ բե՛ ըստե ծախա, աղպորտանցդ միջին բալի էլի դու իմ էրեսը պարզ անես» (Նույն տեղում, 246): Եվ այսպես հայկական հեքիաթների հերոսները օրերով, շաբաթներով, ամսով ճանապարհ են գնում, օտար քաղաքների «քարվանսարում վե գալի, օթախ քրեհում, կենում, իրանց առուտուրի հեննա ըլնում» (Նույն տեղում, 249): «Հարամբաշու հեքիաթում» (ՀԺՀ II 1959, 368–376), «Սիմոն կուպեցին հեքիաթում» (ՀԺՀ IV 1963, 319–329) վաճառականները, հասնելով օտար երկիր, գնում են թագավորին տեսության և թույլտվություն են խնդրում՝ նրա երկրում առևտուր անելու համար. «Թագավորն ապրած կենա, մենք այսինչ բազրկյաններն ենք,

---

առևտրատնտեսական և մշակութային հարաբերություններ հաստատվել այս ժամանակի երկու խոշոր քաղաքակրթությունների՝ Հռոմեական և Հանի (Չինական) կայսրությունների միջև: Հենց այս ժամանակաշրջանում սկսեցին կապեր հաստատվել նաև Առաջավոր Ասիայի երկրների և Կենտրոնական Ասիայի ու Չինաստանի միջև (Мартиросян 1998 : 3):

1 Հայաստանի անդրանիկ մայրաքաղաք Արտաշատը, Պլուտարքոսի վկայությամբ, մ.թ.ա. I դարում ունեցել է առևտրատնտեսական լայն շառավիղ և կարևոր նշանակություն (Манандян 1954 : 53–54).

բերել ենք մեր ապրանքը էս քաղաքը սաղացնենք. թե իրավունք կա՝ ծախենք, թե իրավունք չկա՝ էթանք ուրիշ քաղաք:

Ասեց.– Որթի, իրավունք ունեք, բազրկյանների ապրանքը քաղաքներըմը կաղանա:

Բերեց թագավորը իրա նոքարը դրեց դրանց հետ, որ օքտի» (ՀԺՀ I 1959, 372):

«Մեռլի հրեշտակը» (ՀԺՀ II 1959, 243–253) հեքիաթում թագավորի որդին մեծարժեք նվերներով գնում է օտար երկրի թագավորի մոտ, գլուխ տալիս ու ներկայանում. «–Ֆլան երկրիցը, ֆլան թագավորի տղեն եմ,– ասում ա,– էկել եմ ապրանքի: – Ասում ա ու բերած փեշքաշները հանում, դնում թագավորի աղաքը» (Նույն տեղում, 249): Իսկ վերադառնալիս նույնպես «գալիս են, գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս...» (Նույն տեղում, 251):

Մետաքսը Չինաստանից Հայաստան և Արևմուտք տեղափոխելը ապահովում էր մեծ կարողություն: «Տակավին մ.թ.ա. 124թ. փաստեր են արձանագրված Հայաստան ներմուծված չինական մետաքսի վերաբերյալ» (Ժամկոչյան 1981, 97): Այս կապերը շարունակվեցին նաև միջնադարում, ընդհուպ մինչև XVII–XVIII դարերը (Кречетова 1940: 346–350): Քարավանները ճանապարհվում և մետաքսի բեռով ետ էին վերադառնում երկու տարվա ընթացքում. «Քարավանապետերը միշտ հայեր էին լինում: Արևելքն ու Արևմուտքը հեղեղող բեռնափոխադրումը կենտրոնացված էր Ջուղայի վաճառականների ձեռքում» (Бродель 1988:146): Օտար երկրներ առևտրի գնալիս հայկական հեքիաթի հերոսները «ասսու անումը տալիս են, ընկնում ճամփա» (ՀԺՀ I 1959, 507, ՀԺՀ II 1959, 247): Երկարատև այդ ճամփորդությունը թեև ապահովագրված չէր կյանքի համար վտանգավոր փորձություններից, սակայն գայթակղիչ էր եկամտաբերության առումով: «Սխալ կլիներ կարծել, որ Հայաստանը միայն միջազգային տարանցիկ առևտրի կամրջի դեր էր կատարում» (ՀԺՊ 1971, 811): Նա արտաքին այդ առևտրին մասնակցում էր նաև սեփական արտադրանքով: Հայաստանում դեռ հնագույն ժամանակներից արհեստները լայն տարածում էին գտել: Երկրի ներքին առևտրին համընթաց աշխուժանում էր հատկապես արտաքին առևտուրը: Ընդարձակ առևտրի պահանջներից ելնելով՝ Տիգրան Մեծի և Արտավազդ 2–րդի օրոք դրամ է կտրվում: Հայաստանից արտահանվում էր հացահատիկ, ձիեր, ջորիներ, աղ, գինի, երկաթ, կապար, պղինձ, անագ, ներկեր (որդան կարմիր), կաշի, բուրդ, Վանա լճի աղ դրած տառեխ ձուկը, գորգեր, անտառանյութ (փայտ), կաշվեղեն (ՀԺՊ 1971, 810–811, Աբրահամյան 1946, 75): Հիշատակվում է նաև Հայաստանի գինին, որը արտահանվում էր գլխավորապես Միջագետքի քաղաքները: Ըստ հայտնի հույն պատմիչ Հերոդոտոսի՝ հայկական գինին Եփրատի հոսանքով հասցնում էին մինչև Բաբելոն (Հերոդոտոս 1986, 80–81):

«Ավճի Շաբուի տղեն» (ՀԺՀ IV 1963, 27–45), «Որսորդ Հայրապետ» (ՀԺՀ XVI 2009, 397–408) հեքիաթներում թագավորը պահանջում է, որ որսորդ Շաբուի որդին իր համար բերի այնքան փղի ոսկոր (տարբերակ՝ ատամ), (ՀԺՀ XVI 2009, 398), որ դրանցով պալատ կառուցվի: Որսորդի տղան հորեղբոր խորհրդով թագավորից պահանջում է քառասուն ուղտ, քառասուն մեծ ջվալ բամբակ, քառասուն տիկ գինի, քառասուն մսագործ՝ համապատասխան գործիքներով. «Էս քյարվանն ընկավ ճամբա գնաց, շատ գնաց, քիչ գնաց, շատն ու քիչն աստված գիտե, զօր գնաց, գիշեր գնաց, տեյմորի հասավ Հնդու երկիրը» (ՀԺՀ IV 1963, 31):

Որսորդի տղան Հնդկաստանում քառասուն ջրավազանի ջրերը միանգամից թափել է տալիս, բամբակով լողավազանի անցքերը փակում և Հայաստանից

բերված քառասուն տիկ գինով հարբեցնում «Հնդու երկրի» քառասուն փղերին. «Էհ, գինի ու անսովոր անասուն, բիրաղի էն սհաթին հարբան ու խաշըլ խոտի պես վար թափան» (Նույն տեղում, 32), իսկ «ղասպները էս քառսուն ֆլին էլ մորթեցին, քերթեցին, ոսկորները բիրաղի մսեն բաժնեցին, լցրին բեռներու մեջը, բարձան ու էլի ետ դարձան գնացին: Գնացին հասան իրանց երկիրը: Տղեն տարավ բեռները թասլիմ էրավ թագավորին» (Նույն տեղում):

«Սումբաթի հեքիաթում» (ՀԺՀ II 1959, 525–533) հարուստ վաճառական Սումբաթի հոր քառասուն չրաղները (ապրանքն անվտանգ երկրեերկիր տեղափոխող ծառայողները) Սումբաթից պահանջում են, որ իր հանգուցյալ հոր պես իրենց աշխատանքով ապահովի: Սումբաթը չի ուզում «դուքանի» դուռը փակել, գեղեցկուհի կնոջը տանը թողնել և «չրաղների» հետ աշխարհեաշխարհ ման գալով՝ առևտուր անել: Նա աշխատանքի դիմաց «չրաղներին» ապրուստի փող է առաջարկում՝ յուրաքանչյուրին հինգ հարյուր, իսկ հետո՝ հազար մանեթ: «Չրաղները» չեն համաձայնվում՝ պատճառաբանելով.

«–Ախար չէ՞ նաղդ փող ա, կտանենք, կփչացնենք, կմնանք քո մոտին ամոթով» (Նույն տեղում, 526): Հեքիաթի շարունակության մեջ տեսնում ենք, որ առևտրական հարաբերությունների ծավալման շնորհիվ պարզ ապրանքափոխանակությանը զուգահեռ նկատելի է դառնում նաև դրամական շրջանառությունը: Առևտրատնտեսական կյանքում մեծանում է փողի դերը: Վերոհիշյալ հեքիաթում վաճառականի կինը հավատացած է, որ «Փողը փող կաշխատի»[1] (Ղանալանյան 1960, 248) և ամուսնուն խորհուրդ է տալիս փողի փոխարեն «չրաղներին» գործ տալ, որպեսզի փողը գործի մեջ դրվի և եկամուտ բերի. «Կնիկն ասում ա.– Դրուստ են ասում, նաղդ փողը կտանեն, կփչացնեն, գործ տու՛, գործ» (ՀԺՀ II 1959, 526): Կնոջ խորհրդով՝ Սումբաթը «չրաղներին» պատվիրում է քառասուն եզ առնեն, ապրանք առնեն, «էթան խրիդ անելու» (առևտուր անելու): Սակայն հեքիաթները ուշագրավ տեղեկություններ են պարունակում նաև «խրիդ անելու» բարդ օրենքների, հարստություն կուտակելու մոլուցքով իրար դավելու, չարանենգորեն ուրիշի ունեցվածքին տիրելու «բազրգյանների» խարդախությունների մասին: Նման պարագայում հեքիաթներում, տվյալ դեպքում՝ վերոհիշյալ «Սումբաթի հեքիաթում» կամ «Սիմոն կուպեցին հեքիաթում» (ՀԺՀ IV 1963, 319–329) սովորաբար թիրախ է դառնում փորձի պակաս ունեցող վաճառականի միայնակ մնացած կինը, ով հանիրավի զրպարտվում է նենգ վաճառականի կողմից: Բազմափորձ մի «բազրգյան» իր վրանն է խփում Սումբաթի վրանի հարևանությանբ և «չրաղների» միջոցով նրան կանչում է իր մոտ. «Էս բազրգյանը խամ ա, օրենքով մեզ պտի կանչեր ղոնաղ, ինքը մեզանից առաջ էր էկե. հմի բան չի ասե, գնացեք իրան կանչեք՝ գա, մի քիչ խոսանք» (Նույն տեղում): Եվ քանի որ «Առուտուր ընելիս ըպրանքին նիետ հոգի էլ ա ծախվում» (ԱԳՆ 2006, 43), վաճառականը զրպարտում է Սումբաթի կնոջը: Սումբաթը համոզված լինելով կնոջ հավատարմության մեջ գրազ (մարջ) է գալիս՝ պահանջելով ապացույցներ: Գրազը արխային հասարակություններին բնորոշ ծիսական մրցության ձև է, որի միջոցով հեքիաթի հերոս Սումբաթը ինքնահաստատման փորձություններ է հաղթահարում թե՛ իրական–կենցաղային և թե՛ ծիսական մակարդակում:

Վաճառականը Սումբաթին առաջարկում է նարդի խաղալ իրար դեմ. «Քառասուն բեռն իմն ա, քառասուն բեռը քունն ա, քառասուն չրաղ իմն ա, քառասուն՝ քունն ա. թե ես գնացի քու կնկա պատկերը բերեցի, քու քառասուն բեռը, քառասուն չրաղը

1 Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի № 102 ձեռագրի հիշատակարանում գրված է Ավետարանի՝ ոսկով, արծաթով, փղոսկրով պատված կազմի մասին:

ինձ, դու էլ ինձ նոքար, թե չբերի, իմ ունեցածը քեզ, ես քեզ նոքար» (ՀԺՀ II 1959, 527): Ինչպես կյանքում, հեքիաթում նույնպես զառ գցելը, խաբելն ու խորամանկելը իրենց հերթին դառնում են մրցության թեմա և խաղային ձև: «Խարդախը ձևացնում է, թե հետևում է խաղի կանոններին և մասնակցում է խաղին մինչև բռնվելը» (Հայզինգա 2007, 79): Հետաքրքիր է նկատել, որ «դեռևս XVII դարում ժամկետային առևտրային գործարքները հայտնի էին «գրազներ» անունով» (Նույն տեղում, 78–81): Վաճառականը կեղծ փաստերով Սումբաթին թյուրիմացության մեջ է գցում, գրազը շահում և ունեզրկում:

Սումբաթի կինը հարցուփորձ անելով հասնում է Թեհրան, իր խելքով ու հնարամտությամբ պատժում խարդախ վաճառականին, բացահայտում ճշմարտությունը, փրկում ամուսնուն և վերջինիս ունեցվածքը. «Մի էրկու օրից եդը Սումբաթը թազա ապրանքը առած էկավ իրա դուքանի առաջին վեր ածեց, ասեց.– Էթամ, տուն դիպչեմ, գամ, դուք տեղավորեք» (ՀԺՀ II 1959, 532): Քարավանները Հնդկաստանից Հայաստան էին բերում բրինձ (որիզ), բամբակ, բամբակի գործվածքներ, հնդկական համեմունքներ՝ պղպեղ, դարչին, թանկագին քարեր և գոհարեղեն՝ մարգարիտ, խնկեղեն, փղոսկր, սև փայտ, ներկող նյութեր (ՀԺՊ 1971, 810): Դրսում մեծ պահանջարկ էր վայելում ընկուզենու փայտը: «Քյոսի, Թոփալի և Քոռի նաղլը» (ՀԺՀ I 1959, 507–511) հեքիաթը ցուցանշական է հեքիաթի հերոսի ու նրա առևտրական գործերի հետ կապված մանրամասներով: Հեքիաթի հերոսը վաճառականի տղա է, ով հոր մահից հետո հարցուփորձ է անում՝ պարզելու, թե Հալեպում որ ապրանքը բարձր պահանջարկ ունի, իմանում է, որ «շիմշատ փետը շատ թանգ ա ծախվըմ Հալեպումը» (Նույն տեղում, 507): Եվ թեև հայրը պատվիրել էր Հալեպ չգնալ, «տղեն առավ քառասուն ղաթրի բեռ շիմշատի փետ, բարցեց, ասսու անըմը տվեց, ընկավ ճամփա» (Նույն տեղում): Աստծո անունով ճամփա ելած մարթը Հալեպ հասնելուն պես հայտնվում է փորձանքի մեջ: Առաջին իսկ իջևանատիրոջ «նոքարները» բեռնաթափում են բազրկյանի որդու քառասուն ջորիներին՝ պատճառաբանելով, թե առավոտյան ճանապարհ ընկնելն ավելի ապահով կլինի: Բեռնաթափման ժամանակ Թոփալը մի բեռ շիմշատ փայտ է գողանում, «կեսը լցնում է օջաղը, կեսն էլ դնում թախտի տակը» (Նույն տեղում): Հետո Քյոսեն, Թոփալն ու Քոռը բազրկյանի տղային հրավիրում են մի կտոր հաց ուտելու և խաբում են, թե. «Մեր քաղաքըմը էտ փետը մուֆթա ա, վառըմ են, ու տարավ շանց տվեց, որ օջաղը լիքն էր, թախտի տակը լիքն էր» (Նույն տեղում, 508): Իսկ հետո իբր ափսոսում են, որ էդ խեղճ մարթը անտեղի «ահագին ծախս ա քաշել, ահագին քրեհ ա տվել», ոնց որ «աղը բարցել ա՝ տանըմ ա Կողբըմն ա ծախըմ» (Նույն տեղում, 508): Բազրկյանի որդին Հալեպի խանութներից մեկում ծանոթանում է մի «դուքանչի հալիվորի» հետ և իմանում, որ Հալեպում Հայաստանից բերված շիմշատ փայտը շատ թանկ արժե, «մսխալը կաժենա հինգ մանեթ», իսկ ինքը Քյոսայի, Թոփալի և Քոռի՝ երեք թալանչի ընկերների հերթական զոհն է: Պարտված Քոռ թալանչին տանուտերին բողոքում է, իր մի աչքն է ուզում, որը իբր ժամանակին տվել է բազրկյանի տղային: Բազրկյանի տղան էլ ասում է. «–Շատ լավ. իմ մի հ’աշկն էլ հանեք, Քոռի էն մի հ’աշկն էլ հանեք, դրեք կշեռքը կըշռեք, թե որ բարեբար ըլի, տվեք նրան» (Նույն տեղում, 511): Կոնֆլիկտը հանգուցալուծվում է արդարությունն ու առևտուրը մատնանշող կշեռքի՝ թե՛ իրական–նյութական, թե՛ խորհրդանշական գործառույթով:

«Որսորդ Հայրապետ» հեքիաթում որպեսզի անզավակ թագավորը որդի ունենա պետք է ամուսնանա Հնդկաստանու թագավորի մարգարտե ատամներով աղջկա հետ, իսկ հրաշքներով լի Հնդկաստանու երկրից հարսնացուին բերելու համար

հեքիաթի հերոսը նվիրագործվում է՝ անցնելով համապատասխան բոլոր փորձություններով:

Հնուց անտի հայ ծովայինները մեծ համբավ ունեին Հնդկաստանի նավահանգիստներում[1]: «Սուրայի սովդաքյարի որթու հեքիաթում» (ՀԺՀ I 1959, 196–208), երբ հերոսները ոչ միայն իրենց երկրի ապրանքները ջորիներին բարձած (ղաթըր) տանում են հեռու երկրներ վաճառելու, այլև օտար երկրներից նավով ապրանք են բերում (մի գյամչի ապրանքը թափել էր, պըտի ետ դառնար) թագավորի աղջիկը նավավարին խնդրում է, որ իրեն էլ այդ նավով տանի հեռու երկիր. «Ախչիկը նի էլավ գյամին, գնացին: Համա ի՞նչ թավուր ա քշըմ գյամին, դու պրծա՛ր» (Նույն տեղում): Նույն «Որսորդ Հայրապետ» հեքիաթում «տղան փրցոց կեմին. տվեց անկինը. տասվերկու ամիս թարմ ծովի վրա մնըց. նե՛ սև, նե՛ քար, նե՛ լեառ կէրևա. էրկինք ու ծով կար» (ՀԺՀ XVI 2009, 402):

«Ավճի Շաբուի տղեն» (ՀԺՀ IV 1963, 27–45) հեքիաթում որդին զարմանում է, թե իր հայրն ինչ մասնագիտություն ուներ, որ այդքան զենք ու զրահ կա տան մի անկյունում. «Էս իմ հերս ի՞նչ զանիաթի էր, որ,– ըսավ մորը,– էսքան սիլլահ կը պահեր:

–Ավճություն կէներ,– ըսավ մերը:

–Ես էլ, – ըսավ,– ավճություն կէնեմ հորս պես» (Նույն տեղում, 28):

Հայաստանի հնագույն զենքերից են եղել նետն ու աղեղը (հեքիաթներում՝ նետ ու անեղ, նետվանեղ), ինչպես նաև պեղածո հարվածող մարտական զենքերը՝ քար նետող պարսատիկները (փիլիկան) (Լաստիվերցի 1971, 61–62), գուրզը (մական) նիզակը (մզրախ), որի փոխարեն հայ պատմիչները հաճախ գործածել են աշտեն կամ գեղարդ բառերը, իսկ Չարսանճագի բարբառով գրառված հեքիաթներում նետի փոխարեն գործածվում է խըշտ բառը: «Գորտ» (ՀԺՀ XVI, 2009, 334–352) հեքիաթում «մենծ տղան նետեց. խըշտը գնըց ընկավ լալային դուռը» (Նույն տեղում, 334): «Անմահական խնձոր» (Այրարատ) հեքիաթում թագավորի փոքր տղան «նետուանեղը վե կունի, կէթա խնձորի ծառի տակին ղարավուլ կքաշի» (ՀԺՀ II 1959, 24): «Աղբեր տղա և Քառասուն–ծամ Փարի» (ՀԺՀ I 1959, 537–551) հեքիաթում թագավորի որդին մորից պահանջում է յոթերորդ՝ փակ օթախի բանալին, բացում է այն և տեսնելով Քառասուն–ծամ Փարու պատկերը՝ ուշաթափվում է: Նա հոր ձիանոցից երկու ընտիր նժույգ է հանում, երկու «նետ ու անեղ» է առնում, ճամփա ընկնում՝ գտնելու նկարում տեսած գեղեցկուհուն: Վերոհիշյալ հեքիաթում Աղբեր տղան դևի հետ մականով կռիվ է անում, գետինը ճղում և անցնում հրաշապատում հեքիաթին բնորոշ բոլոր փորձություններով:

Հայ մատենագրության մեջ (Խորենացի 1981, 194) հիշատակություններ են պահպանվել արհեստի տարբեր ճյուղերով (մանածագործություն, ներկարարություն, ոսկերչություն, բրուտագործություն, զինագործություն, դարբնություն) զբաղվող մարդկանց մասին, իսկ ժողովրդական հեքիաթներում տեղեկություններ կան նրանց արտադրանքի վերաբերյալ, որոնց մի մասը առևտրի և փոխանակության միջոցով արտահանվում էր հարևան և հեռավոր երկրներ: Բնորոշ է, որ մ. թ. I–II դարերում հայոց լեզուն հարստանում է «շուկա», «խանութ» և առևտուր բնորոշող այլ ասորական բառերով (ՀԺՊ 1971, 813), ինչպես նաև հեքիաթներում հանդիպող «պազար» (բազար), «դուքան» (կուղպակ–կրպակ–կուրբա) բառերով (Նույն տեղում, 508, 525), որոնք վկայում են, որ ինչպես Արևելքում, մեզանում նույնպես քաղաքի հիմնական հատկանիշը շուկան է՝ իր խանութներով:

1 Տե՛ս նաև Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, (այսուհետ՝ ԱԳՆ) Արցախ, տետր № 1, 2006, «Փողը փող կը պիրի, թե վեր ղադրը գիդես» (ԱԳՆ 2006, 42):

Ցուցանշական է, որ արաբ հեղինակների վկայությունները հայերի բարեկեցիկ կյանքի մասին համախոս են հայկական աղբյուրների հետ: «Հայաստանում պատրաստվող բրդե, բամբակե ու մետաքսե զանազան գործվածքների ու կտորների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում արաբական մատենագիրները՝ Իստախրին, Իբն Հաուքալը, Յակուբին, Մասուդին և ուրիշները» (Մանանդյան 1940, 29): Իբն–ի Բատուտան Երզնկայի մասին հայտնում է, որ «այնտեղ կան լավ կարգավորված շուկաներ, այստեղ շինում են գեղեցիկ կերպասներ, որ իր անունով են կոչվում: Նրա մեջ կան պղնձի հանքեր, որով շինում են ամաններ և «բայսուսներ» (աշտանակներ)» (Իբն– ի Բատուտա 1940, 29):

Խոսելով Սմբատ Ա–ի և նրա հոր՝ Աշոտի թագավորության առաջին շրջանի մասին՝ Ստ. Տարոնեցին հայտնում է, որ մինչև իսկ հովիվներն ու նախրապանները հագնում էին մետաքսե պատմուճաններ (Ստեփանոս Ասողիկ 1885,161): «Արտուճ և խաղաղ թագավոր» (ՀԺՀ XVI 2009, 372–379) հեքիաթում թագուհին հանդիմանում է անտառում ծիսական փորձությունների հաղթահարման փուլում գտնվող, «քարը բարձ դարձրած» իր որդուն և վերջինիս հիշեցնում է իր «ղումաշե ընկողինը» (Նույն տեղում, 374):

Գործվածքեղենի և մասնավորապես մետաքսի արտադրության զարգացածությունը միջնադարյան Հայաստանի քաղաքներում հաստատվում է ինչպես ձեռագիր աղբյուրներով[1] ու մատենագրական վկայություններով (Փարպեցի 1982, 23, Գանձակեցի 1982, 135, Կաղանկատուացի 1983, 61–62), այնպես էլ գործվածքների պեղածո նմուշներով[2] և բանահյուսական միջավայրում կենցաղավարող հեքիաթներով: Կ. Գանձակեցին գրում է, որ հայ կանայք նուրբ ձեռագործերով զարդարել են իշխանական հագուստները, սուրբ խորանի ծածկոցները, եկեղեցական վարագույրները, որ «ներկված էր պես–պես ու գույնզգույն, գործված էր քանդակաձև ու նկարված էր պատկերներով» (Գանձակեցի 1982, 157): Միջնադարյան քնարերգության մեջ հաճախ է հիշատակվում «էպրըշում խալու, ոսկիթել տօշակի» և սիրած էակի պարանոցը գրկող նրբահյուս մետաքսի մասին (Սայաթ–Նովա 144–147): «Հելուզակ թագուհին» (ՀԺՀ III 1962, 262–273) հեքիաթում աղջիկն իր գլխաշորը տալիս է աղքատ հալիվորին, պատվիրում այն «պազարում» վաճառել՝ ապրանքի գինը սահմանելով «չորս հարիր մանեթ»: Այդ գումարով գնում են տեղաշոր, ուտելիք, հագուստ, մետաքս ու մետաքսե կտոր. «–Էս հարիր մանեթը կտաս յորղան դոշկի. հարիր մանեթն էլ կտաս ապրըշմի (մետաքս), ղնայուզի (մետաքսե կտոր)» (Նույն տեղում, 270): Մետաքսե կտորից աղջիկը գլխաշորեր է պատրաստում, իսկ հալիվորը դրանք վաճառում է շուկայում. «Աղջիկը օրական շիքեց լյայլուխ, հալիվորը ծախեց. հա՛ ծախեցին, հարստացան: Քաղաքին մեջ էլ մե մեծ վաճառական էդ խալիվոր դարձավ» (Նույն տեղում): «Քույրը ջիգյարով կըլի» (Նույն տեղում, 448–451) հեքիաթում հարուստ

---

1 Մանածագործության մասին խոսուն փաստեր են պահպանվել ձեռագրերի կազմերի ներսի կողմից ծածկված մետաքսյա և կտավե աստառներում (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռագիր № № 5554, 5555, 5559, 5563, 5591, 5569, 6263 և այլն, որոնք պատկանում են 12–13–րդ դարերին): Անիի երազահանում կողք կողքի հիշատակված են բամբակը, իլիկը, «Ջահրան» (ճախարակը), «ապրեշումը» (մետաքս), բուրդը, մազը և կաճը (ՄՄ, ձեռ. № 695, թ. 205բ):

2 1908թ. Տիգրան Հոնենցի տոհմային դամբարանից հանվել է վերջինիս ազգականներից մեկի՝ փոքրիկ իշխանադստեր հագուստը՝ «մետաքսեայ ամբողջ հագուստ ոսկէ բանուածքներով ու մետաքսով, և ոսկով նուրբ հիւսած քող, մետաքսեայ ժապաւէնից գօտի» (Օրբելի 1911, 46):

վաճառականը գնում է ուրիշ քաղաք «խրիդ անելու»: Թագավորը, նրա հարստության մասին լսելով, կանչում է իր մոտ հարցուփորձ անելու. «Ճաշի ժամանակ նա այնպիսի թաշկինակ հանեց, բերանը սրբեց, որ իսկի թագավորը չէր ունենա» (Նույն տեղում, 448):

Հայ ժողովրդական հեքիաթներում պերճանքի ոսկե զարդերը՝ թանկագին քարերով ընդելուզված մատանիները, մանյակները, գինդերը, կախիկները, ապարանջանները իրենց մեջ կրում են ծիսապաշտամունքային հավատալիքների հետքեր: Հնդկահայ արհեստավորության մեջ, մասնավորապես Կալկաթայի հայ համայնքում մեծ թիվ էին կազմում ոսկերիչները, որոնք «այնպիսի համարում ունեին, որ նրանց շատ հաճախ պատվերներ էին տալիս ո՛չ միայն Հնդկաստանից, այլ նաև Եվրոպայի և Ասիայի զանազան երկրներից» (Աբրահամյան 1967, 260): Հայկական հեքիաթներում թագավորին դիմավորում են ոսկյա սպասքով (ՀԺՀ VIII 1977, 66), հերոսները «խաս շորեր» են հագնում, «օսկի մատնիկ», «գինդ», «ապըրջան» կրում կամ «քյամար» կապում (ՀԺՀ IX 1968, 261–262): Վերոհիշյալ հեքիաթներում ամենաթանկարժեք զարդերն ու ակնեղենը հաճախ գնահատում են հրեա (ջհուդ) ոսկերիչները, որոնք շատ խորամանկ են և հմուտ առևտրի մեջ (ՀԺՀ II 1959, 163): Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեքիաթներում առկա հիշողությունները համախոս են պատմական տվյալների հետ (Бродель 1988: 146):

«Հարամբաշու հեքիաթում» (ՀԺՀ I 1959, 368–376) թագավորի որդին սիրահարվում է վաճառականի քրոջը: Թագավորը պահանջում է, որ աղջկա պատկերը քաշեն ու ուղարկեն իրեն. «Ես թաքավոր եմ, հո չեմ էրթա էն ախչկանը տենալու. ես պըտի էն ախչկա պատկերը տենամ՝ իմ տղի լայաղին ա, թե չէ» (Նույն տեղում, 374): Վաճառականն անհանգստանում է, թե ինչպես պիտի մի գիշերվա մեջ աղջկա պատկերը հանեն: «Քիրն ասեց.– Ախպեր ջան, դու արխեին կաց, իմ ձեռին դժար չի: Դու գնա դուքանը հինգ ռանգ աբռշումի թել բեր, կես գազ էլ ղնավուզ (մետաքսե կտոր), բեր, որ վրին գործեմ» (Նույն տեղում): Քույրը մետաքսե կտորի վրա ոսկե թելերով այնպիսի վարպետությամբ էր ինքն իրեն պատկերել, որ «ինքն էլ մայիլ մնաց իրա ձեռի գործի վրա: Բացի դրանից քիրը շինել ա մի ոսկե խոնչա, մի ոսկե կաքավ, ոսկե ճուտերը հետը ֆռռում են» (Նույն տեղում, 375):

Հանիրավի պատուհասված իրենց նշանածներին գտնելու նպատակով հայկական հեքիաթների հերոսուհիները թագավորից պահանջում են ոսկուց պատրաստված զարմանահրաշ առարկաներ, «ոսկե սինի», որի մեջ «ոսկե թազի, ոսկե աղվես (տարբերակներում՝ կատու և մուկ, (ՀԺՀ V 1966, 25) աքլոր և կաքավ, (ՀԺՀ IV 1963, 251) «օսկի հավ՝ օսկի կուտ հ՚առեջ» (ՀԺՀ IX 1968, 27) և այլն), որ թազին աղվեսի եննուցը վազելիս ըլնի» (ՀԺՀ II 1959, 35): Տուրուբերան–Մուշից գրառված «Քաջլուկն» (ՀԺՀ XII 1984, 582–591) հեքիաթի ոսկերչից թագավորը պահանջում է այնպիսի թուր պատրաստել, որ արևի պես շողշողա. «Հըմալ թուր մը կուզին հ՚ինձե, օր արևու պես փելք իտա» (Նույն տեղում, 586):

Մ. Խորենացին Արտաշես արքայի հուղարկավորության մասին հայտնում է. «…Նրա դագաղը, ասում է, ոսկեղեն էր, գահը և անկողինը բեհեզից և մարմինը պատող պատմուճանը ոսկեթել, գլուխը թագ դրած, ոսկյա զենքն առջևը» (Խորենացի 1981, 229): «Արտաշատում և Դվինում առևտրի և փոխանակման կարևորագույն ապրանքը շարունակում էր մնալ մետաքսը և մետաքսից պատրաստված հագուստները: Իր հատկությունների համար՝ թեթևություն, ամրություն, փափկություն, գեղեցիկ փայլ, Չինաստանից բերվող մետաքսը լավ համբավ էր վայելում ամենուրեք» (Мартиросян 1998 : 46) և պատահական չէ, որ մետաքսե

բարձերը թանկարժեք քարերով զարդարված գահերի հետ միասին արքայական իշխանության անբաժան ատրիբուտն էին կազմում (Նույն տեղում, 32):

«Հելուզակ թագուհին» (ՀԺՀ III 1962, 262–273) հեքիաթում առևտրական գործը մեծապես տուժում էր ոչ միայն տարբեր ելուզակների ու ծովահենների խարդախությունների, այլև մթնոլորտային տարբեր երևույթների պատճառով: Աստվածասեր արքայորդու խորհրդով վաճառականները ապավինում են իրենց աստծուն. «Աստված էլ քաղցրացավ, քամիքը փչեց. կյամիք տարան Ստամպոլու քաղաքից դուս բերին. բազրկյաններ ժողվան, հ՚իրար վրա, ասին.

– Աստված սիրող էս մարդին մե ազ խարճըղը տա:

Ամենը իր կողմով տվին, էղավ մի տոպրակ ոսկի» (Նույն տեղում, 267), որը Արևելյան կողմի թագավորի որդին կարող էր ստանալ միայն իր կնիքը ուղարկելուց հետո. «Երբ օր ես իմ փեչաղը հ՚օղորկի՝ էս ոսկին ըղրկի՛ր, գա» (Նույն տեղում):

Հայ առևտրականներին հաճախ ուղեկցում էին հայ հոգևորականները, որոնք Չինաստան էին գնում քարոզչության նպատակով[1]:

XVII դարում հայ վաճառականները Մետաքսի ճանապարհի արևմտյան հատվածի վրայով շարունակում էին իրենց առևտուրը: 1643թ. գրված մի հիշատակարանում վաճառական Հակոբը մանրամասնորեն նկարագրում է ծովով և ցամաքով կատարած իր ճամփորդությունը և իրացրած բարեհաջող առևտուրը (ՀԺՀ XII 1984, 436):

Այցելելով հեռավոր երկրներ և լավ ծանոթ չլինելով տեղացիների բարքերին՝ երբեմն վաճառականների հաղորդած տեղեկությունները տարածվում էին իրարամերժ ու սարսափազդու այլակերպումներով, որոնք վեր էին ածվում հրաշապատում սյուժեների: Այս ամենի արձագանքները տեսանելի են նաև հայ դասական գրականության մեջ (Տերյան 1989, 158, Սայաթ–Նովա 1986, 302–311): Քրիստոնյա հայերի համար Արևելքն ուներ սրբազան նշանակություն, որտեղից էլ սպասվում էր Քրիստոսի երկրորդ գալուստը: Այդպիսի մոտեցումը բացատրվում է նաև այն պատկերացումներով, որ դրախտը գտնվում է Արևելքում, իսկ Չինաստանն իր բնական դիրքի շնորհիվ համարվում էր աստվածընտրյալ երկիր, որտեղից բացվում են «դրախտի դռները»[2]: Հեթում պատմիչի վկայությամբ Չինաստանը գտնվում է հենց դրախտի մոտ (Հեթում պատմիչ 1842, 6–7), ինչը նրան ավելի գրավիչ և բացառիկ է դարձնում հայերի աչքերում:

Նույն պատմիչը հայտնում է, որ «այնքան այլազան և հրաշագեղ բաներ կան այս երկրի մեջ (այսինքն՝ Չինաստանում–Թ.Հ.) և այնքան՝ նրբարվեստ, որ հազիվ թե որևէ մեկը համեմատվի նրանց հետ» (Նույն տեղում, 6): Հայաստանում հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են չինական խեցեղեն և հախճապակի (սելադոն), որի արտադրության մշակույթը առաջացել է

---

1 Ուշագրավ է, Նիկոլայ Միլեսկու Սպաֆարիի (1675–1678թթ. գլխավորում էր ռուսական դեսպանությունը դեպի Չինաստան) վկայությունը Չինաստանում իտալացի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոյի և հայ անվանի հոգևորական, միսիոներ Անտոն Սուլթանիեցու հետ հանդիպման մասին (Աբրահամյան 1967, 326, Մարտիրոսյան 1989, 92):

2 Հասա մինչև Չինումաչին, / Հասա մինչև ծովը ճերմակ,/
Տեսա երկրի ծայրը վերջին/ Եվ դրախտի դուռը կրակ (Տերյան 1989,158): Չինաստանի ծովափնյա առևտրական քաղաք Կանտոնում 1307 թվականից առաջ կառուցվել է հայկական մեծ և գեղեցիկ եկեղեցի՝ հարակից շինություններով, իսկ կանտոնաբնակ չինարեն լեզվի ուսուցիչ Հովհաննես Ղազարյանը անգլերենից չինարեն է թարգմանել Աստվածաշունչը, որը չինագետ գիտնականների վկայությամբ առաջին և լավագույն թարգմանությունն է չինարեն (Աբրահամյան 1967, 329–330):

Չինաստանում, իսկ արդեն 9–10–րդ դարերում Դվինի խեցեգործական արհեստանոցներում վարպետները, վերամշակելով հախճապակե խեցանոթների որոշ զարդեր, ստեղծում են տեղական նմուշներ՝ հախճապակյա թասեր, ափսեներ, խոշոր պնակներ, կճուճներ՝ գծադիր և դրոշմված, խորաքանդակ և այլ զարդերով, որոնք ինքնատիպ են և ունեն ժամանակի հայկական արվեստին հատուկ ոճ (Ժամկոչյան 1981, 97–98): Սանկտ –Պետերբուրգի Էրմիտաժի Արևելյան արվեստի բաժնի հետազոտող Մ. Կրեչետովայի հեղինակած հոդվածում ներկայացված խեցեղենի նմուշները վերաբերում են արդեն 18–րդ դարի վերջին քառորդին և 19-րդ դարի սկզբին, երբ հայ–չինական առևտրական կապերն այնքան էին զարգացել, որ հայ վաճառականների պատվերով չինացի արհեստավորները պատրաստում էին հայատառ մակագրություններով ճենապակե առարկաներ (Кречетова 1940, 346–350): Ի դեպ «Սասնա ծռեր» էպոսի պատումներից մեկի համաձայն՝ Սասնա դյուցազնական ծռերը ծնվում են Չինաստանի (Սինամգա=Սինամահավք=չինական թռչուն) թագավորի աղջկանից (Սասնա ծռեր 1979, 445–446): Պատումների մեծ մասում Սասունցի Դավթին սպանում է չինական աչքերով նրա դուստրը՝ ծնված Չմշկիկ Սուլթանից: Նշենք նաև, որ Խանդութի աչքերը համեմատվում են չինական բաժակի հետ[1], իսկ չար աչքի դեմ հմայական աղոթքներում օձի կաթը լցնում են չինական բաժակի մեջ («Կթեցի զկաթ՝ քասա չինին»), (ՀՀԺԱ 2006, 84), ինչը վկայում է Հայաստանում չինական ապրանքների առկայության մասին:

Տուրուբերան–Մուշից գրառված «Սարգիս» (ՀԺՀ XII 1984, 47–53), «Ձկան փորու թաս» (Նույն տեղում, 449–454), «Ակոբ» (ՀԺՀ XIII 1985, 276–281), և Կարճկան–Գոմսից գրառված «Դերվիշնիրն ու տղան» (ԲԱ, FA IV, 2467–2516) հեքիաթներում ձկան փորից գտած ոսկե (արծաթե) թասերն այնքան անձեռակերտ են, որ նրանց գեղեցկությունից հերոսներն ուշաթափվում են կամ գինովանում: Այդ չնաշխարհիկ թասերը խորհրդավոր են, ինչպես և նրանց ծագումը: «Սարգիս» հեքիաթում թագավորի աղջիկը կենակցում է թասատեր տղայի հետ՝ թասը ձեռք բերելու համար (ՀԺՀ XII 1984, 51): Ցուցանշական է, որ ոսկե թասի գայթակղությանը չի դիմանում անգամ թագավորը (ՀԺՀ XII 1984, 53, 453, ՀԺՀ XIII 1985, 280): «Հաբրմանի» (ՀԺՀ IV 1963, 15–26) հեքիաթում այնկողմնային աշխարհում հայտնված հերոսի՝ սիրուց վառվող մարմինը փորձում են հանգստացնել կավե, ճենապակե, երկաթե, պողպատե, արծաթե, ոսկե ծիսական սկահակների (գյուգյումներ) մեջ լցված ջրով: Վերոնշյալ բոլոր հեքիաթներում կախարդական թասերը հմայական գաղտնիմաստ են պարունակում և առնչվում են ծիսաառասպելական հնագույն պատկե-րացումներին:

Հետաքրքիր է նկատել, որ Հայաստան բառը չինարեն հնչում է «Յա–մեյ–նի–յա», որի հիերոգլիֆները նշանակում են «Ասիայի գեղեցիկ միանձնուհի», իսկ Չինաստանը մշտական անուն չուներ: Թագավորական հարստության փոխվելով՝ փոխվում էր նաև երկրի և ժողովրդի անվանումը: Մեր նախնիները Ճեն, Ճենք, Ճենաստան ասելով, հավանաբար, հասկանում էին չինական Խենան նահանգում գոյություն ունեցած Ճեն կոչված թագավորական հարստությունը, իսկ ճենազն ասելով՝ երկրի բնակիչներին, այստեղից էլ՝ ճենապակի, այսինքն՝ չինական ապակի: Չինաստան եվրոպական անվանումը անտիկ շրջանից կապված է «Խան» կայսրությանը նախորդած «Ցին» (մ.թ.ա. 221–206թթ.) թագավորական տան հետ (լատ. Siane, ֆրանս.Chine, անգլ. China):

1 «Թ’ենուր աչքեր կը խարցնես,/Չենու կթխեններ, լզճ, չենու կթխեններ», «Ենու աչքեր կը նմանի չինու քասայի» (Սասնա ծռեր 1936, 32, 284):

Մ. Խորենացու, Փ. Բուզանդի, Ղևոնդի, Ա. Շիրակացու, Վ. Արևելցու, Կիլիկիայի թագավոր Հեթումի՝ Չինաստանի մասին հաղորդած տեղեկությունների մի մասը վերաբերում է Մամիկոնյանների գաղթականության և նրանց նախարարական տան չինական ծագման հարցին (Խորենացի 1981, 268–269)[1], իսկ մի մասն էլ՝ այդ զարմանահրաշ երկրի հարստություններին: Մ. Խորենացու վկայությամբ «Նրանց աշխարհն սքանչելի է ամեն տեսակ պտուղների առատությամբ, զարդարված է գեղեցիկ բույսերով, ունի շատ սիրամարգ, արտադրում է առատ քրքում և մետաքս, անչափ շատ կան այնտեղ համուրներ, հրեշներ և էշայծամ կոչվածներ»: Հայկական հեքիաթներում այնքան ցանկալի համարվող Սինամահավքը (Սինամարք) ծագում է sin–չին և murg– թռչուն բառերից և նշանակում է չինական թռչուն, Սինամ թագավորն էլ, բնականաբար, Չինաստանի թագավորն է, իսկ ազգ սինեացվոցը՝ չինացիները:

XVI–XVIII դարերում հայերն այնպիսի դիրք և հեղինակություն ունեին Չինաստանում, որ իրենց ապրանքները տեղափոխում էին հայկական տարբերանշան ունեցող սեփական շոգենավերով, իսկ եվրոպացիները Չինաստան մուտք գործելիս, Ղ. Ալիշանի վկայությամբ, ապահովության համար հագնում էին հայկական տարազ՝ ներկայանալով իբրև հայ (Ալիշան 1893, 467): Ճիշտ է, XVIII դարի վերջերին Չինաստանում հաստատված անգլիական առևտրական ընկերությունները և մյուս եվրոպացի գաղութարարները հայերի ազդեցությունը համաշխարհային առևտրի մեջ նվազեցնելու նպատակով սկսեցին հալածել չինահայ վաճառականներին, բռնագրավել վերջիններիս նավերը: Վերոհիշյալ հիշողություններն արտահայտվել են նաև հայկական հեքիաթներում (քարավանների վրա հարձակում, ապրանքների բռնագրավում և այլն): Հայկական հեքիաթների հերոսները հաճախ քարավանատերերին ու ջահելներին խրատում են գիշերը ճանապարհ չգնալ: Հեքիաթների շարունակության մեջ մենք տեսնում ենք, որ խրատին չհետևողները պատուհասվում են կա՛մ հեղեղից, կա՛մ ավազակների հարձակումներից (ՀԺՀ VII 1979, 136–139; 458–463, ՀԺՀ IX 1968, 119–123, ՀԺՀ XV 1998, 160–168, ՀԱԲ 1983, 127–128, Գուրունյան 1991, 45–47):

Արաբ աշխարհագրագետ Ալ–Իստահրին վկայում է Հայաստանի մայրաքաղաք Դվինում արտադրվող բրդե հագուստների, գորգերի, բարձերի, բազմոցների, ղայթանների և հայկական արտադրության այլ իրերի, ինչպես նաև Դվինում արտադրվող մետաքսյա կտորների և տեղում «քիրմիզ» (որդան կարմիր) կոչված ներկով մահուդի ներկման մասին (СМОМПК 1901, 19): «Խոջա Մահմուդ, խոջա Ալի» (ԲԱ FA IV, 2325–2392) հեքիաթում ջհուդները խոջա Մահմուդի ապրանքի մեջ «յափմա կըրմըզ» են որոնում, այսինքն՝ կեղծ որդան կարմիր ներկ, որը գտնելու պարագայում, վաճառականին պիտի տուգանեն: Ճիշտ է, հեքիաթում ջհուդները զրպարտում են վաճառականին, սակայն հեքիաթը փաստում է յուր ժամանակին որդան կարմիրի բարձր պահանջարկի և շուկայում տվյալ ներկի կեղծ ապրանքանմուշների մասին: «Բայց Հայաստանում ամենից ավելի շատ տարածված էր գորգագործությունը, որը պետք է բավարարեր թե՛ տեղական պահանջները և թե՛ արտահանվեր արտաքին շուկաներ: Արաբ պատմիչների տեղեկությամբ հայերը հարկի դիմաց խալիֆայությանը տալիս էին նաև գորգեր» (Աբրահամյան 1946, 82): «Սիմոն կուպեցին հեքիաթում» (ՀԺՀ IV 1963, 319–329) Ստամբուլի թագավորի որդին

1 Վ. Արևելցի պատմիչը շեշտում է, որ Մամակ և Կոնակ եղբայրները, փախչելով Ճենբակուր արքայից, եկել են հայոց արքա Արտաշեսի մոտ և իրենց քաջության համար ստացել սպարապետի պաշտոնը և կոչվել Մամիկոնյաններ (Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի 1960, 53-54):

իր հոր պալատում մի ամիս շարունակ հյուրընկալում է Սիմոն Կուպեցի տղային և պատասխան հրավերն ընդունում է՝ քայլելով Ստամբուլի պալատից մինչև հարուստ հայ վաճառականի դուռը փռած խալի խալիչայի վրայով: Եվ արևելք, և՛ արևմուտք արտահանվող հայկական գորգերի և դրանց վաճառքի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում Ադամ Մեցը: Հայտնի է, որ հայկական արտադրության գորգերն արտահանվում էին ոչ միայն Արևելք, այլև Արևմուտք: Օմեյյանների խալիֆ ալ–Վալիդ Երկրորդի տանը պատերը և հատակը ծածկված էին հայկական գորգերով: Ալ–Ռաշիդի կինը նստում էր հայկական գորգի վրա, իսկ նրան շրջապատող կանայք հայկական բարձերի վրա (Мец 1973: 369):

Հայաստանում արտադրվող բազմատեսակ նուրբ կտորեղենները վկայում են հում նյութի և ներկի (Փարպեցի 1982, 23) տեղական մեծ պաշարների մասին: Հյուսվածքագործությունը ծաղկում էր ոչ միայն Դվինում և Անիում, այլև Երզնկայում: Հայաստանի և Երզնկայի մասին Մարկո Պոլոն հայտնում է. «Այս մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որ կոչվում է Արզինգա (Երզնկա), ուր հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները (buckram): Երկրի ժողովուրդը հայեր են» (Հակոբյան 1932, 48): Հյուսվածքեղենի համար օգտագործում էին բուրդը, բուսական թելերը և շերամի որդի արտադրած մանրաթելը, որով հպարտանում է միջնադարյան առակի թթենին, «զի սաղարթ իւր նիւթ է մետաքսայ» (Գրական հուշարձաններ 1951, 50–51):

Կ. Գանձակեցին նշում է, որ մոնղոլների վարած դաժան հարկային քաղաքականության համաձայն՝ արհեստավորները նույնպես հարկատու էին պետությանը (Գանձակեցի 1982, 260): Խոսքը դարբինների, շապարարների (ծեփարարներ) մասին է, որոնք կերպասներ և բրդե կտորեղեններ ներկող արհեստավորներ էին (Աբրահամյան 1946, 75): Իսկ Արաբական տիրապետության տարիներին, հատկապես VII–VIII դարերում Օմեյյանների օրոք մտցված հարկահանության նոր՝ բնամթերքի միջոցով կատարվող կարգը, Հայաստանում ստեղծում է տնտեսական ծանր վիճակ: Շիրակից գրառված «Ծանր հարկեր» (ՀԺՀ IV 1963, 441–442) հեքիաթում դերվիշի շոր մտած թագավորի և վեզիրի ծարավը այգեպանը հագեցնում է իր այգում աճող նռան հյութով: Միայն մեկ նռան հյութը բավարարում է երկուսին:

«Բը էդ բաղեն ինչքա՜ն օքուտ կը քաղե բաղպանճին,– մտածում է թագավորը,– Ես մինչի հիմի հարկեր չեմ դրե ըդունց վրեն» (Նույն տեղում, 441):

Պալատ վերադառնալով՝ թագավորը հարկադրման է ենթարկում նաև այգեպաններին: Երկիրը հայտնվում է ծանր դրության մեջ: Երկու–երեք տարի հետո ծպտված թագավորն ու վեզիրը դարձյալ այցելում են այգեպանին և ջուր են խնդրում: Այս անգամ այգեպանը մի չորացած նուռ է բերում, քամում է, քամում, բան դուրս չի գալիս: Թագավորը հարցնում է, թե ինչպես եղավ, որ «էրկու–իրեք տարի առաջ էկա էս բաղը, ջուր ուզեցի. դու բերեցիր մի նռով էրկու հոգի կշտացուցիր:Հիմի սաղ բաղեն մեզի ընչի՞ չը կրցար ջուր խմցներ» (Նույն տեղում):

–Էյ,– ըսավ,– դերվիշ բաբա, քու հերըդ օրհնըվի, մեր թագավորը էման բանըմ չէրավ, օր բաղը բաղպանճին տիրեր խնամեր, օր շատ բան էղնիր:

–Ի՞նչ էրավ թագավորը,– հարցուց դարվիշը:

–Ի՞նչ պըտի էներ, հարկերը էնքան դրեց, օր չկրցանք տկեն դուս գայինք, բաղին էլ չաշխատանք, գնաց, չորցավ:

Նորեն թագավորը գնաց թախտը, հարկերը բաշխեց, երկիրը խաղաղացավ, հարստացավ» (Նույն տեղում, 442): Ուշագրավ է հեքիաթի հերոսի վերաբերմունքը

անխնա հարկահանության, մաքսային տուրքերի վերաբերյալ, որը, ցավոք, այսօր նույնպես շարունակում է մնալ արդիական:

Ամփոփելով բանահյուսական, մատենագրական, հնագիտական տվյալները և մասնավորապես հայ ժողովրդական հեքիաթներում առկա համապատասխան տեղեկությունները՝ քննվող թեմայի վերաբերյալ, կարող ենք ասել.

1. Հայերը հնուց անտի դրացիական կապեր են ունեցել հարևան ու հեռավոր ազգերի հետ ու ներգրավված ենք եղել արևելքի ու արևմուտքի, հյուսիսի և հարավի պատմամշակութային և առևտրատնտեսական միջազգային կարևոր գործընթացներում:

2. Հայ ժողովրդական հեքիաթներում Արևելքն ընկալվում է իբրև առասպելական շքեղության, ոսկեհուռ զարդերի ու անձեռակերտ գործվածքների հնամշակութային խորհրդանիշ, որտեղից բերվող կախարդական, իրերն ու առարկաները կիրառական նշանակությունից առավել ունեն ծիսաառասպելական իմաստավորում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա., (1967), *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, հ. Բ, Երևան, «Սովետական գրող» հրատ.:

Աբրահամյան Վ., (1946), *Արհեստները Հայաստանում IX– XIII դդ.*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

Ալիշան Ղ., (1893), *Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենետիկի Մխիթարայ վանս, ի ս. Ղազար:

Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, (1960), Քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, Բարիզ, «Արաքս» հրատ.:

Գանձակեցի Կ., (1982), *Հայոց Պատմություն*, Աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ.:

Գրական հուշարձաններ, (1951), Մ. Գոշ, *Առակներ*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

Գուրունյան Հ., (1991),*Համշենահայ բանահյուսություն*, Երևան, «Լույս» հրատ.:

Ժամկոչյան Ա., (1981), Միջնադարյան Հայաստանի հախճապակին 9–14–րդ դարերում.– *Հայաստանի հնագիտական հուշարձանները*, թիվ 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Իբն–ի Բատուտա,(1940), *Օտար աղբյուրներ հայերի մասին, Արաբական աղբյուրներ*, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, Պետական համալսարանի հրատ.:

Լաստիվերցի Ա., (1971), *Պատմություն*, Թարգմանությունը Վ. Գևորգյանի, Երևան, «Հայաստան» հրատ.:

Կաղանկատուացի Մ., (1983), *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հակոբյան Հ., (1932), *Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության*, Ուղեգրություններ, հ.Ա, (ԺԳ–ԺԶ դար), Երևան, Հրատ. Մելքոնյան ֆոնդի:

Հայ ազգագրություն և բանահյուսություն, (1983) (այսուհետ՝ՀԱԲ), Ռ. Գրիգորյան հ. 14, (Գեղարքունիք), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1984), (այսուհետ՝ ՀՁՀ), (1641–1660), հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հայզինգա Յ., (2007), *Homo Ludens, Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ*, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ.:

Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), (1959), հ. I, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1959), հ. II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1962), հ. III, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1963), հ. IV, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1966), հ. V, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1979), հ. VII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1977), հ. VIII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1968), հ. IX, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1984), հ. XII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1985), հ. XIII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1998), հ. XV, Երևան, «Ամրոց» հրատ.:

ՀԺՀ, (2009), հ. XVI, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:

Հայ ժողովրդի պատմություն,(1971), (այսուհետ՝ ՀԺՊ) հ. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, (2006), (այսուհետ՝ ՀՀԺԱ) Աշխատասիրությամբ՝ Ս. Հարությունյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

Հայրապետյան Թ.–ի անհատական գործուղման նյութեր, (այսուհետ՝ ԱԳՆ) Արցախ, տետր № 1, 2006:

Հեթում պատմիչ, (1842), *Պատմութիւն թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ*, Ի Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու:

Հերոդոտոս, (1986), *Պատմություն ինը գրքից*, թարգմ. Ս Կրկյաշարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետ՝ ԲԱ):

Մանանդյան Հ., (1940), *Հայաստանի քաղաքները 10–11–րդ դարերում*, Երևան, Արմֆանի հրատ.:

Մարտիրոսյան Հ., (1989), Հայաստանը Մետաքսի ճանապարհի խաչուղիներում.– *Պատմաբանասիրական հանդես*, №, 4, էջ 85–94:

Մովսիսի Խորենացվոյ Պատմութիւն Հայոց, (Խորենացի) (1981), Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

Սայաթ–Նովա.– *Հայ դասական քնարերգություն*, (1986), հ. 2, Երևան, «Սովետական գրող»:

Սասնա ծռեր, (1936), հ. Ա, Երևան, Հայպետհրատ:

Սասնա ծռեր, (1979), հ.Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, (Ստեփանոս Սյունեցի), (1861) Մոսկվա, Տպարան Լազարեան Ճեմարանի արեւելեան լեզուաց:

Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, (1885), (Ստեփանոս Ասողիկ), *Պատմութիւն տիեզերական*, Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխոդովի:

Փարպեցի Ղ., (1982), *Հայոց Պատմություն*, Քննական բնագիրը Գ. Տեր–Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

Օրբելի Յ., (1911), *Անւոյ աւերակները*, Վաղարշապատ, Ելեքտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի:

Мец, Адам (1973). *Мусульманский Ренессанс.* Москва: Наука.

Бродель Ф. (1988). *Игры обмена: Материальная цивилизация, экономика и капитализм, XV–XIII вв.*, (перевод с французского Л.Е. Куббеля), т.2, Москва: Прогресс.

Кречетова, М. (1940). Несколько китайских фарфоровых предметов с армянскими монограммами.// *Труды отдела Востока Эрмитажа*, т.3, Москва–Ленинград.

Мартиросян, А. (1996). *На Великом шелковом пути.* Ереван: Гитутюн.

Менандян, Я. (1954). *О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен.* Ереван: ЕГУ.

Сборник материлов для описания местностей и племен Кавказа (1901), (далее СМОМПК) выпуск двадцать девятый, Тифлис, Типографии: Канцелярии Главноначальствующего гражд. частью на Кавказе и К. Козловского.

Страбон (1964). *География.* Москва: Наука.

Tamar Hayrapetyan

THE ORIENT IN ARMENIAN FOLKTALES

Summary

The geographical location of Historical Armenia greatly contributed to the discovery of Oriental culture and lifestyle. One of the main routes of the Great Silk Road ran through Armenia. Many Armenian cities (Artashat, Dvin, Ani, Artsni, Kars and others) were located along the Silk Road and so were directly involved in trade and business contacts. By the Silk Road Armenia had trade business with the ports of the Black and the Mediterranean Seas as well as with Persia, Mesopotamia, Egypt, India and China. Armenian folklore and manuscript sources provide diverse records on trade relations with Oriental countries. The folktales have preserved unique details of caravan and sea trade, barter exchange and money circulation. The heroes of Armenian folktales seek their fortune in Isfahan, Aleppo, Tehran, and Baghdad and even in the City of Brass. Due to the mentioned sources we can state that since earliest times Armenians have had favourable relations with Oriental peoples and built economic, commercial and cultural relations with them.

Էսթեր Խեմչյան

ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄԱՎԻՊԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՏԱՎՈՒՇԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ ազգը, դարեր շարունակ ապրելով Հայկական լեռնաշխարհում, շրջապատված է եղել այլազգի հարևաններով, որոնց հետ ունեցել է տնտեսական, քաղաքական, մշակութային փոխառնչություններ: Դարավոր շփումներն իրենց կնիքն են դրել հատկապես ժողովրդական բանահյուսության վրա: Արևելյան ժողովուրդների բազմաշերտ ու հարուստ բանահյուսական ավանդույթը տարբեր ճանապարհներով մուտք է գործել Հայկական լեռնաշխարհ, ընդունվել տեղացի բանասացների կողմից: Եկամուտ բանահյուսական արժեքները նոր երանգ, մոտիվներ ու սյուժեներ են բերել իրենց հետ, որոնք կամ ձուլվել են տեղական բանահյուսական ժանրերին կամ, դառնալով հայաշունչ, շարունակել են ինքնուրույն գոյությունը՝ ընկալվելով որպես օտարածին միավոր: Արևելյան թեմատիկան հատկապես վիպական բանահյուսության մեջ է պահպանվել: Տավուշի բանահյուսական ժառանգության քննությունը ի հայտ է բերել արևելյան թեմատիկայով ու պատմավիպական կերպարների դրսևորումներով մեծաքանակ նյութ, որը պատերազմների, կոտորածների, բռնագաղթերի, համաճարակների պատճառով ազգաբնակչության տեղաշարժերի հետևանք է: 19–րդ դ. վերջում և 20–րդ դ. սկզբին Տավուշի մարզի տարածքի ազգաբնակչությունը իրենից ներկայացնում էր եռաշերտ մի հանրություն՝ բաղկացած տեղաբնիկներից, որոնք Շահ Աբասի բռնագաղթից հետո հրաշքով փրկված ու լեռներում ապաստանած տեղացիների հետնորդներն էին, վերաբնակներից, որոնց մի ստվար հատվածը 18–րդ դ. վերջին Արցախից և 19–րդ դ. սկզբին Արարատյան դաշտից տեղափոխվածներն էին և վերջապես 20–րդ դ. սկզբին ցեղասպանության հետևանքով գաղթած արևմտահայ հատվածի փոքրաթիվ ներկայացուցիչներից (ՀԱԲ XXI 2000, 5–6; ՀԱԲ XXV 2008, 9–10): Տավուշի ազգաբնակչության յուրաքանչյուր ազգագրական խումբ ուներ իր ուրույն սովորույթները, հավատալիքները, նիստ ու կացը, բառ ու բանը, որոնք միաձուլվելով ստեղծեցին մի ընդհանուր ազգագրական–բանահյուսական ինքնատիպ ժառանգություն:

Տավուշի բանահյուսական ժառանգության մեջ հատկապես ուրույն տեղ են գրավում այն հրաշապատում և իրապատում հեքիաթները, զրույցները, ավանդությունները, որոնց հերոսները փոխառնված են արևելյան ժողովուրդների բանահյուսական ավանդույթից և հանրահայտ պատմավիպական կերպարներ են:

Տավուշի բանահյուսության մեջ հիմնականում առկա են Սողոմոն իմաստունի, Ալեքսանդր Մակեդոնացու, Դանանդա Բահլուլի, Խիկար իմաստունի, Լոխման Հեքիմի, Լենկ Թեմուրի, Շահ Աբասի, Նադիր շահի անունների շուրջ հյուսված զրույցներն ու պատմությունները: Վերոհիշյալ պատմական դեմքերը իդեալականացվելով ու վիպական հերոսին բնորոշ գծեր ձեռք բերելով և

հեռանալով իրենց պատմական նախատիպից՝ դարձել են պատմավիպական հերոսներ:
Սողոմոն իմաստունի մասին հեքիաթները, զրույցներն ու ավանդությունները սիրված ու տարածված էին Տավուշի մարզում և բանասացների երկացանկում կարևոր տեղ էին գրավում: Տավուշի սողոմոնյան պատումների հիմնական մոտիվներն են.
ա) Սողոմոնը կնոջ պահանջով թռչունների ոսկորներից պալատ է կառուցում:
բ) Սողոմոն իմաստունը հասկանում է կենդանիների ու թռչունների լեզուն, սակայն իր իմացության գաղտնիքը չի կարող բացահայտել, որովհետև կմահանա:
գ) Աղքատ մարդը խոնարհաբար դիմում է Սողոմոնի օգնությանը և նրա խորհրդով հարստանում: Հարստանալուց հետո նա սկսում է ամբարտավան տոնով խոսել Սողոմոնի հետ, որի համար Սողոմոնը նրան պատժում է սխալ խորհուրդ տալով:
դ) Սողոմոն իմաստունը միջամտում է թագավորի դատին և օգնում է աղքատին խույս տալ մահապատժից:
ե) Սողոմոն իմաստունը և իմաստուն Եփրեմվերդին մրցում են իրենց գիտելիքներով:
Սողոմոն իմաստունի բանահյուսական կերպարը լայնորեն տարածված էր մերձավորարևելյան ժողովուրդների բանահյուսական ավանդույթում: Նրա կերպարի ձևավորման ճանապարհին ժողովրդական բազմաբնույթ զրույցները ու պատմական դեպքերը միավորվել, վերաշարադրվել, վերաիմաստավորվել ու ձեռք են բերել ժողովրդական զանգվածների հոգեկան ու գեղագիտական պահանջները բավարարող բանահյուսական խորիմաստ ստեղծագործություններ դարձել, որոնց կայացմանը նպաստել է նաև Աստվածաշունչը:
Աստվածաշնչում ներկայացված սողոմոնյան դարաշրջանի Իսրայելի պատմությունը գրի է առնվել ավելի ուշ և պատմական արժանահավատ տեղեկություններին զուգահեռ կազմողներն օգտագործել են նաև սերնդից սերունդ անցած ժողովրդական ավանդությունները, առասպելներն ու զրույցները՝ պատկերն ավելի գունագեղ դարձնելու համար: Ըստ Աստվածաշնչի՝ Սողոմոնը, ժառանգելով իր հոր՝ Դավիթի գահը, ողջակեզ է մատուցում աստծուն (Եհովային) և խնդրում իմաստություն՝ ժողովրդին դատելու և բարին ու չարը ճիշտ որոշելու համար (Աստվածաշունչ 1994, 428–429, Գ Թագ.: 2,3): Եվ քանի որ նա չի խնդրում ո՛չ երկարակեցություն, ո՛չ հարստություն և ո՛չ էլ թշնամիներին ոչնչացնելու կարողություն, աստված նրան շնորհում է ոչ միայն իմաստություն, այլև՝ այն ամենը, ինչ նա չի խնդրել:
Սողոմոն թագավորի 40–ամյա իշխանությունը նշանավորվել է խաղաղությամբ, շինարարական վերելքով և բուռն առևտրական հարաբերություններով, հատկապես ծովային առևտրով, որոնց արդյունքում Իսրայելը դարձել էր բարգավաճող երկիր: Սողոմոնի իմաստության, հարստության, արդարադատության հռչակը տարածվել է շրջակա երկրներում: Ըստ Աստվածաշնչի՝ նա իր ժամանակաշրջանի ամենաիմաստուն և բազմակողմանի զարգացած մարդն էր, որը հրաշալի գիտելիքներ ուներ բուսական ու կենդանական աշխարհի մասին, հեղինակ էր 3000 առակի և 1005 երգերի: Նրան վերագրված առակների ու «Երգ երգոցի» բանասիրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թե՛ առակները և թե՛ երգերը իրենց վրա կրում են եգիպտական մշակույթի ազդեցությունը, ինչպես նաև արձանագրվել է այն փաստը, որ մինչև Սողոմոնի

թագավորության տարիները գոյություն են ունեցել հին հրեական աֆորիզմների ժողովածուներ, որը հատուկ էր նաև մերձավորարևելյան մյուս ժողովուրդների (շումերներ, ասորացիներ, քաղդեացիներ, փյունիկեցիներ) հոգևոր մշակույթին (ИВЛ I 1983, 291): Համեմատությունները ցույց են տվել, որ աստվածաշնչյան Սողոմոնի առակաց գիրքը բազմաթիվ փոխառություններ ունի այդ հին ժողովածուներից (Կոսիդովսկի 1970, 437):

Անկասկած Սողոմոնի հռչակը դեռևս իր կենդանության օրոք նպաստել է, որ Իսրայելում և հարակից երկրներում նրա անվան շուրջը հյուսվեն բազմաթիվ զրույցներ ու պատմություններ: Մուսուլմանական առասպելաբանական ավանդույթում Սողոմոնը կոչվում է Դավիդի որդի Սուլեյման և մտել է մուսուլմանական Սուրբ գրքի՝ Ղուրանի մեջ: Ըստ Ղուրանի՝ Սուլեյմանը իմաստությանը զուգահեռ (Коран 1986, 271, 21:78:79) տիրապետել է բազմաթիվ հրաշագործությունների, իր նպատակներն իրագործելու համար օգտվել է թռչունների և ջիների ծառայություններից (МНМ II 1988, 475):

Սողոմոն իմաստունի և՛ աստվածաշնչյան, և՛ վիպական կերպարը, մուտք գործելով Հայկական լեռնաշխարհ, հիմնավորապես հաստատվել է այնտեղ ու ակտիվորեն շրջանառվել: Սողոմոն իմաստունին անդրադարձել են հայ պատմիչները և միջնադարյան բանաստեղծները: X–XIV դդ. միջնադարյան ժողովրդական երգերում տարածված հոգու և մարմնի վիճաբանության մոտիվը խնդիր ուներ քննելու, թե որն է առաջնային, հոգի՞ն, թե՞ մարմինը՝ իր բազում գործերով: Եվ հոգին, որպես իր իրավացիության հաստատում, օրինակ է բերում և՛ աստվածաշնչյան հերոսներին, և՛ իրենց մեծագործություններով հայտնի պատմական դեմքերին, որոնք անցել–գնացել են, և ոչինչ չի մնացել բացի հուշից:

Արի՛, իմ տխմա՛ր մարմին,
Բե՛ր, տեսնունք, ո՛ւմ է մնացած,
Չի՛ մնաց Աբրահամու,
Որ Սահակ մատաղ էր կտրած

Չի՛ մնաց Իսրայէլ[ին],
Ի Մովսէս աստուած էր խօսած,
Չի՛ մնաց որդոյն Դաւիթի,
Սողոմոն տաճար էր շինած:

Չի՛ մնաց ***Անկանդար Զուլղարին***,
Որ աշխարհս զաւթ էր արած,
Կռապաշտ, աստուածապաշտ
Եւ մեծամեծ թագաւորաց (Մնացականյան 1956, 401–402):

Միջնադարյան ժողովրդական իմաստասիրությունը հանգել է այն եզրակացության, որ մահվան հանդեպ անզոր են թե Սողոմոնի կառուցողական հանճարը, թե հարստությունն ու իմաստությունը, և կյանքում ամեն ինչ ունայն է ու անցողիկ:

Դըժոխքն՝ քան ըզքեզ լեղի
Եւ յետոյ զայն այլ կու բերես.
Սողոմոն յիշեաց զքեզ

Ու ասաց. «Եղո՛ւկ, վա՜յ եմ ես»:
Աւա՜խ, իմ կենճ արևուս,
Կու մեռնիմ, այլ ճարակ չունիմ:

Զի՞նչ օգուտ ***զիմաստութիւն,***
Քան զանգետ աղքատ մեռայ ես.
Անմեղք ի աշխարհիս եկի
Ու մեղօք գընամ սներես (Մնացականյան 1956, 599):

Սողոմոն իմաստունի կերպարը հատկապես մեծ տեղ է գրավել ժողովրդական ավանդազրույցներում: Աստվածաշնչյան ավանդությունների հիման վրա հայկական միջավայրում ստեղծվել են նոր զրույցներ, որոնք սփռվել են ողջ Հայաստանով մեկ: Տավուշի մարզի բանահյուսական ժառանգության մեջ զգալի թիվ են կազմում սողոմոնյան սյուժեներով զրույցներն ու ավանդությունները[1]:

Բանահյուսական բոլոր ստեղծագործություններում նրան բնորոշող առաջնային հատկանիշը իմաստությունն է, թեև պատումների որոշակի սյուժեներում առկա են նրա ոչ այնքան իմաստուն որոշումները, որոնց հետևանքով անխուսափելի են վատթարագույն հետևանքները: Ըստ Աստվածաշնչի՝ Սողոմոնը եգիպտական փարավոնի դստեր հետ ամուսնանալուց հետո ծավալում է ակտիվ շինարարական գործունեություն (Աստվածաշունչ 1994, 428, Գ Թագ.: 2,3), սույն պատմական փաստը հիմք է հանդիսացել բանահյուսական սյուժեների մի ողջ շարքի ստեղծման, որի տարբերակներում Սողոմոնը կնոջ պահանջով պետք է թռչունների փետուրներից պալատ կառուցեր[2]: Տավուշյան տարբերակներում կինը պահանջում է թռչունների ոսկորներով պալատ կառուցել (ըստ արևելաալավոնական հեքիաթային համացույցի՝ СУС–ВСС, 983*), Սողոմոնը, անսալով կնոջ պահանջին, հրամայում է բոլոր թռչուններին՝ ներկայանալ և սկսում է մորթել տալ նրանց: «Սողոմոն իմաստունն ու կռապաշտ թաքավըրի աղջիկը» (ՀԺՀ VI, 1973, 573) իրապատում հեքիաթում թռչունների արքան հրաժարվում է ներկայանալ Սողոմոնին, որովհետև չի վստահում մարդ–արարածին: Երբ Սողոմոնը նրա հետևից ուղարկում է աղավնուն, թռչունների արքան դարձյալ անվստահություն է հայտնում և պատմում մի առակ՝ սիրով ապրող ամուսինների ու տղամարդու մահից անմիջապես հետո կնոջ անհավատարմության մասին՝ իր վարքագիծն արդարացնելու և Սողոմոնին չվստահելու համար: Դրան հակառակ՝ աղավնին իր մեկնակերպն է ներկայացնում՝ պատմելով կանացի հավատարմության մասին դասական մի օրինակ, որով համոզում է թռչունների արքային՝ ներկայանալ Սողոմոնին: «Սողոմոն իմաստունն ու սայի դուշը» (ՀԱԲ XXI, 2000, 131, N 35 (35) հեքիաթում սյուժեն գրեթե նույն ձևով է զարգանում, և Սողոմոն իմաստունին չներկայացող սայ դուշին համոզողը շունն է, որը, ըստ սայ դուշի, աշխարհում ամենավստահելին է: Սայ դուշի այս փաստարկը Սողոմոնին խորհելու տեղիք է տալիս և, իր կասկածները փարատելու համար, երեք հարց է առաջադրում և՛ սայ դուշին, և՛ թռչունների արքային: Նրանց պատասխաններն ի դերև են հանում Սողոմոնի անմիտ որոշումը, և նա հրաժարվում է իր մտադրությունից. «Ախպեր, տու ինձանից իմաստուն ես, ազատ եք, տուք էլ, սաղ ծեր ղշերի ցեղն էլ» (ՀԺՀ VI 1973, 576): Բանահյուսական ավանդույթում հարց ու պատասխանի, այլաբանության ու գաղտնախոսության միջոցով ճշմարտությունը, իրողությունը, դիմացինի գիտելիքներն ու իմացությունը վեր հանելը տարածված հնարք է: Մարդու և թռչունի հակամարտությունը լուծելու համար առաջադրված հարցերի պատասխանից է

կախված հետագա դեպքերի զարգացումը: «Իմաստուն» Սողոմոնը դեռևս չի զգում իր արարքի անմտությունը և ակնկալում է պատասխան, որով պետք է առաջնորդվի և կատարի իր հետագա քայլը: Սողոմոնի առաջադրած հարց–հանելուկների նպատակը թռչունների արքային և սայ դուշին փորձության ենթարկելն ու նրանց մտավոր կարողությունները, խելամտությունը, սրամտությունն ու աշխարհաճանաչողությունը պարզելն է: Սովորաբար հեքիաթներում խնդրի լուծման բանալին ամփոփված է հարցի պատասխանի մեջ: Սողոմոնյան սյուժեներում նույնպես փորձությունը երեք հարցով է սահմանափակվում: Հեքիաթի տարբերակներում հարցերը միմյանցից տարբերվում են, բացառությամբ գլխավոր հարցի, այն է՝ «Աշխարհիս մարթն ա շա՞տ, թե՞ կնիկը», որի պատասխանով թռչունները Սողոմոնին հասկացնում են, որ նա էլ կանանց թվին է պատկանում, կանացի մտածողություն դրսևորելով և մեղք է գործում աշխարհի թռչունների նկատմամբ: Մրցակցությունը թռչունի և Սողոմոնի միջև ի հայտ է բերում առաջինի խելամտությունը և նույնիսկ կարելի է ասել, մտավոր առավելությունը Սողոմոնի նկատմամբ: Վերոհիշյալ սողոմոնյան սյուժեներում ակնհայտ են թռչնաշխարհի մասին նախնական պատկերացումներն ու նրանց շուրջ ստեղծված ավանդությունները: Առասպելաբանության մեջ թռչունները մարմնավորում են հաջողության, հարստության, պտղաբերության գաղափարը: Թռչուններին ոչնչացնելով՝ Սողոմոնը երկրի վրա փաստորեն ոչնչացնում է այն ամենը, ինչը կյանքի գրավականն է: Թռչունների արքային իր մոտ հրավիրելու համար Սողոմոնը նախ հերթականությամբ ուղարկում է ագռավին, չարթին (կաչաղակ) և հոպոպին ու արդյունքի չի հասնում: Ի վերջո ուղարկում է աղավնուն: Աղավնին քրիստոնեական առասպելաբանական ավանդույթում խորհրդանշում է սուրբ հոգին, ինչպես նաև հանդիսանում է մահվան համբավաբեր (МНМ II 1988, 346–349), հետևաբար նվիրակ–աղավնին թռչունների արքայի մոտ անվստահություն է առաջացնում. «… խանին էիտբար չի կա, նա ինձ լավ պանի չի կանչըմ» (ՀԺՀ VI 1973, 573): Ինչպես սողոմոնյան մյուս սյուժեները, այս սյուժեներով պատումներին նույնպես բնորոշ է ավարտ՝ ստուգաբանական ավանդությամբ, որն ընդլայնում է պատումի ճանաչողական սահմանները: Ըստ Ս. Հարությունյանի՝ հայոց կենդանական աշխարհի առասպելներում կենդանիներն ու թռչուններն իրենց այս կամ այն հատկանիշը ձեռք են բերել առասպելական որևէ նախադեպի հետևանքով: Նախադեպերը, ըստ արարման բաժանելով փուլերի, Ս. Հարությունյանը երրորդ փուլը կապում է աստվածաշնչյան հերոսների հետ (Հարությունյան 2000, 314): Հայկական առասպելներում, հեքիաթներում և ավանդազրույցներում այս փուլը կապվում է նաև Սողոմոն իմաստունի հետ, որի կամքով ու ցանկությամբ թռչունների որոշ տեսակներ ձեռք են բերում որևէ հատկանիշ: Ըստ «Սողոմոն իմաստունն ու սայ դուշը» պատումի՝ աշխարհը դեռ նոր է ստեղծվել, և շատ իրողություններ դեռևս ձևավորման գործընթացի մեջ են: Սողոմոն իմաստունը որպես երախտագիտության նշան անհնազանդ ու խելամիտ թռչունին անվանում է սայ և որպես ուտելիք հատկացնում է օրը մեկ ձի: Մշո, Մամռտանի, Կարսի և Ախուրյանի պատումներում[3] անհնազանդ թռչունը բուն է (կունդո), որին անհնազանդության համար Սողոմոնը անիծում է, որ կուրանա, բայց երբ համոզվում է, որ նա իրավացի է, նրան պարգևատրում է օրական երեք ճնճղուկով. «Տրա համար էլ չուր մկա, օրը իրեք ճնճուղ կուկյան կընգյնեն բվի առեճ, մեկ առավոտ կուտի, մեկ՝ իրիկուն, մեկ կբաշխի աստծուն: Մինչև հիմա էդպես է»[4]: Նույն կերպ ստուգաբանվում է նաև չղջիկի անփետուր լինելու հանգամանքը: Չղջիկը թագավորի հրամանով բոլորից շուտ է ներկայանում և, պատ-

ճառաբանելով, որ ձագուկներ ունի ու չի կարող երկար սպասել, փետուրները թափում և գնում է. «Էտոր խամար էլ չուր մկա շավռավինոյի վրեն բմբուլ չկա»:

Ինչպես երևում է բերված օրինակներից, սողոմոնյան սյուժեները և՛ խրատաբանական, և՛ ճանաչողական գործառույթ ունեն, որը պայմանավորված էր պատումները ստեղծողների՝ իրենց շրջապատող աշխարհը ճանաչելու և շատ երևույթներ մեկնաբանելու ու բացատրելու ցանկությամբ: Հատկանշական է նաև Սողոմոն իմաստունին որպես մրցակից բվի հանդես գալը, որի իմաստությունը սյուժեի ընթացքում ակնհայտ է դառնում: Այսինքն՝ նա կարողանում է հակակշռել իմաստությամբ հռչակված Սողոմոնին: Առասպելաբանական ավանդույթը բվին օժտել է իմաստության հատկանիշով: Հունական առասպելաբանության մեջ բուն իմաստության խորհրդանիշն է և հանդես է գալիս իմաստության աստվածուհի Աթենաս–Պալլասի հետ (МНМ I 1987, 125–129): Աներկբա է, որ սողոմոնյան սյուժեներն իրենց խորքում պահել են առասպելաբանական տարրեր: Ըստ Ղուրանի՝ քամին նույնպես ենթակա էր Սուլեյմանին (Коран 1986, 272,374, 21:81, 38:35): Տավուշյան իրապատում հեքիաթում Սողոմոն իմաստունն ինքն է օժտված քամի դառնալու հատկությամբ. «– Ես էլ,– ասըմ ա,– իմաստուն Սողոմոնն եմ,– ասըմ ա ու հա՛ անհայտանըմ, քամի ա տառնըմ ըտիան կորչըմ» (ՀԱԲ XXV 2008, №72 (72), 208):

Այդ հատկությունը, գումարվելով մարդկանց մտքերը կարդալու նրա ունակությանը, հնարավորություն է տալիս հասու դառնալու շրջապատում տիրող անարդարությանը և, միջամտելով թագավորական անարդար դատին, փորձությունից ազատելու թշվառ աղքատին (ՀԱԲ XXV 2008, №72 (72), 206–208):

Սողոմոնի կերպարանափոխությունը և կենդանիների լեզուների իմացությունը բացահայտում է նրա կերպարի աղերսը առասպելաբանական պատկերացումների հետ, ինչպես նաև նախաստեղծ ավանդական մոտիվների փոխանցումն ու մթագնված գոյությունը ավելի ուշ շրջանի ավանդազրույցների ու հեքիաթների մեջ:

Հայ բանահյուսության մեջ հայկական Ալեքսանդրապատումը ձևավորվել է փոքրասիական և միջագետքյան տարածաշրջաններից երկիր թափանցած ալեքսանդրյան սյուժեների և Ալեքսանդրի մասին պատմությունների, հատկապես հայերեն թարգմանված Կեղծ–Կալիսթենեսի պատմության հիման վրա (Խեմչյան 2002, 29):

Եկամուտ ալեքսանդրյան սյուժեները, հայկական միջավայրում պարարտ հող, ձևավորված ավանդույթ, մոտիվային կայուն ժառանգություն, առասպելաբանական հստակ պատկերացումներ և մտածողություն գտնելով, ոչ միայն ձուլվել են հայ բանահյուսական ժառանգությանը, այլև, տեղայնանալով ու ազգային նկարագրին բնորոշ ինքնատիպ գունավորում ստանալով, հարստացրել են և՛ ալեքսանդրյան սյուժեների երկացանկը, և՛ հայ վիպական բանահյուսությունը (Խեմչյան 2010, 495):

Ալեքսանդրյան սյուժեներն ընդգրկում են Ալեքսանդր Մակեդոնացու կյանքի բոլոր փուլերը՝ ծնունդից մինչև մահ և սերտորեն կապված են միմյանց հետ (Խեմչյան 2006, 94): Տավուշում գրառված սյուժեներից մեկը (ՀԱԲ XXI 2000, 132) խարսխված է կանխագուշակության վրա և ներկայացնում է Ալեքսանդրի ծնունդն ու կյանքի դրվագները՝ իր աշխարհակալական նկրտումներով: Ըստ այդ պատումի՝ երբ Մակեդոնացին ծնվում է, անմիջապես ոտքի է ելնում, վազում և բռնում է սենյակի երեք պատերը, բայց երբ ցանկանում է մոտենալ չորրորդ պատին, ընկնում է: Հասուն տարիքում Ալեքսանդրը գրավում է աշխարհի երեք կողմերը, իսկ չորրորդը չի կարողանում հաղթահարել:

ժողովրդական մտածողությունը, գործ դնելով գուշակության մոտիվը, ունկնդրին նախապատրաստում է Ալեքսանդրի հետագա ռազմական հաջողությունների ու նվաճումների պատմությանը: Տարբերակի սյուժեի հետագա զարգացումը պայմանավորված է մանուկ Ալեքսանդրի գործողություններով, որը ծառայում է որպես ***նախանշանային գուշակություն*** և որից էլ բխեցվում է Մակեդոնացու ռազմաքաղաքական նվաճումների պատմությունը: Քննարկվող սյուժեի մեջ առկա է նաև արգելքը, այն է՝ երեխան չի կարողանում մոտենալ չորրորդ պատին: Այն կոչված է կանխելու գուշակության բացասական հետևանքը, այն է՝ ողջ աշխարհը գրավելու պարագան, որը դիտվում է իբրև անբնական երևույթ: Ի դեմս այս մոտիվի, մենք գործ ունենք մարդ անհատի հզորացման (աստվածացման) կանխարգելման հետ: Ինչպես վկայում են հին հեղինակները (Արիանոս, Պլուտարքոս)՝ Ալեքսանդրը ձգտում էր համաշխարհային տիրապետության և նպատակ ուներ նվաճել ողջ Արևելքը, հասնել աշխարհի ծայրը և դուրս գալ Արտաքին մեծ ծով (օվկիանոս) (Արիանոս 1987, 227) և քանի որ, ըստ անտիկ հեղինակների, Հնդկաստանով ավարտվում էր Ասիան, հետևաբար, այն գրավելով, Ալեքսանդրն իրավունք էր ձեռք բերում համաշխարհային տիրապետության (Гафуров, Цибукидис 1980, 285):

Պատմական փաստերը հիմք են ծառայել բանահյուսական սյուժեների զարգացման համար: Եթե պատմական Մակեդոնացուն նրա կենսագիրները իդեալականացրել են և ներկայացրել որպես բազմահանճար անհատ, ապա բանահյուսական ստեղծագործություններում նրա կերպարի բացահայտման ժողովրդական մոտեցումները բազմազան են:

Տավուշում գրառված ալեքսանդրյան սյուժեների ինքնատիպ մոտիվներից են երկարակեցություն ձեռք բերելու նպատակով անմահների երկրի որոնումը (ՀԱԲ XXV 2008, № 74 (74), 208–211), իր իշխանությունն ու հզորությունը ի չարն գործադրելն ու դրա համար հատուցելը (ՀԱԲ XXI 2000, № 37 (37), 132–133), ինչպես նաև Ալեքսանդրի մահն ու նրանից բխող բարոյախրատական եզրակացությունը (ՀԱԲ XXI 2000, № 36 (36), 132): Պատահական չէ, որ անմահության մոտիվն աղերսվել է Ալեքսանդր Մակեդոնացու հետ: Նրա սրընթաց վերելքը, հաղթարշավն ու աստվածային ծագման վարկածը հող են նախապատրաստել, որ առասպելականացած վիպական հերոսը ձգտի անմահության:

Ալեքսանդրյան սյուժեներում տիրապետող՝ Ալեքսանդրի մահվան մոտիվը բոլոր դեպքերում փիլիսոփայական, բարոյախոսական ավարտով մատնանշում է կյանքի ունայնության ու անցողիկության գաղափարը, որի դեմ անզոր է նույնիսկ այնպիսի հզոր անհատը, ինչպիսին Ալեքսանդր Մակեդոնացին է: Իր կյանքի վերջում Ալեքսանդրը, հասկանալով այս պարզ ճշմարտությունը, իր մորը կտակում է, որ մահից հետո իր ձեռքը դագաղից դուրս թողնեն և հոգեհաց տան միայն այն մարդկանց, ովքեր մահ և վիշտ չեն տեսել: Նրա շարժվող թևը խոսուն ապացույց է, որ «աշխարհիս պանը էսպես էղել ա, էսպես էլ գնալ բդի» (ՀԱԲ XXI 2000, № 36 (36), 132) և ակնհայտ է, որ աշխարհում ոչ ոք զերծ չէ մահ տեսնելուց: Պատումի նպատակը միանշանակ ելակետ է ընդունում մահվան անխուսափելիության և կյանքի ունայնության գաղափարը ու մեկ անգամ ևս հաստատում, որ Ալեքսանդրի՝ անմահության ձգտելը լոկ անհասանելի երազանք է մահկանացուի համար:

Տավուշի բանահյուսական ժառանգության մեջ նշանակալից տեղ են գրավում շահաբասյան սյուժեները: Տավուշը Հայաստանի այն շրջաններից է, որի բնակչությունը 1604 թ. մեծ բռնագաղթի ժամանակ Շահ Աբասի հրամանով տեղահանվել և քշվել է Պարսկաստան: Թե՛ մեծ բռնագաղթից մազապուրծ ու

լեռներում ապաստանած տեղացիները և թե՛ հետագայում Պարսկաստան քշվածների վերադարձած սերունդները իրենց պատմական հիշողության խորքերից դուրս են բերել երկակի բնույթով վիպական մի կերպար, որի նախատիպը պարսից Սեֆյան արքայատոհմի ներկայացուցիչ Շահ Աբաս Մեծն էր: Ինչպես վկայում է Համբարձում Առաքելյանը՝ «Արևելքում, մահմեդական ազգերի մեջ երկու թագավորներ այնքան հերոսացած են, որ նրանց հիշատակը մինչև այսօր էլ թնդում է, և բոլոր հեքիաթների ու զրույցների մեջ շարունակ լսվում է նրանց անունը և գրեթե առասպելական քաջագործությունները» (Առաքելյան 1911, 67–68): Խոսքը Շահ Աբասի և Հարուն ալ Ռաշիդի մասին է, որոնց անվան շուրջ հյուսված սյուժեները մինչ օրս շրջանառվում են ժողովրդական բանավոր ավանդության մեջ:

Շահ Աբասի գործունեությունն այնպիսի խոր հետք էր թողել Իրանի և շրջակա երկրների պատմության մեջ, որ նրա անձը, իր հակասական, երկակի՝ չար ու բարի գործերով դարձել էր ժողովրդական խոսք ու զրույցի առարկա: Բոլոր այն իրական դեպքերը, որ շրջանառվում էին ժողովրդական զանգվածների բերանում թե՛ Իրանում և թե՛ Հայաստանում, սկսեցին գունազարդվել և նորովի հանդես գալ, և որքան էլ այս պատմական անձը իդեալականացվել է որպես բանահյուսական հերոս, այնուամենայնիվ իրականության ինչ–ինչ տարրեր ներթափանցել են բանահյուսական ստեղծագործությունների հենքի մեջ: Բանահյուսական Շահ Աբասը երկակի բնույթով հակասական կերպար է, որի արմատները գնում են դեպի իրական կյանքն ու նրա վարած քաղաքականությունը: Ելնելով Պարսկաստանի քաղաքական ու տնտեսական շահերից՝ Շահ Աբասը վարում էր երկդիմի քաղաքականություն (Խեմչյան 2008, 129–130): Բռնություններին, կոտորածներին, տեղահանումներին, ավարառությանն ու կրոնափոխությանը զուգահեռ նա մանր–մունր զիջումներ էր անում հայ արհեստավորների ու ջուղայեցի վաճառականների համար, թեթևացնում էր հարկերը, կրոնական բացահայտ անհանդուրժողականության պայմաններում, մերթ ընդ մերթ հովանավորում էր քրիստոնյաներին՝ վաստակելով «քրիստոնեասեր» թագավորի համբավ (Առաքել Դավրիժեցի 1988, 61–62; Աբեղյան 1970, 522):

XVII դարում Հայաստանում սկզբնավորված և ակտիվորեն շրջանառվող շահաբասյան սյուժեները, սերնդե–սերունդ փոխանցվելով, հղկվելով և իրենց մեջ ներառելով ավանդական բանահյուսության առասպելաբանական շերտերն ու հեքիաթային մոտիվները, հասել են մեր օրերը: Հայկական շահաբասյան սյուժեները ձևավորվել են նաև պարսկական հարուստ բանահյուսության ազդեցության տակ:

Տավուշի բանահյուսության մեջ շահաբասյան սյուժեները հիմնականում պատկանում են իրապատում հեքիաթների տեսակին, սակայն հանդիպում են նաև հրաշապատում հեքիաթներ[5]:

Շահ Աբասին վերագրվող մոտիվներն այնքան են սերտաճել Շահ Աբասի կերպարին, որ դարձել են շահաբասյան սյուժեների անքակտելի մասը: Տավուշի հեքիաթներում շահաբասյան ամենատարածված մոտիվներն են.

ա) ճակատագրի մոտիվը,

բ) անհավատարիմ և հավատարիմ կանանց մոտիվը,

գ) շահի ամուսնությունը հասարակ ծագումով անհատի (նախրչու, հովվի, ջրաղացպանի, գյուղացու) աղջկա հետ (խելացի),

դ) այլաբանական հարց ու պատասխան շահի և որևէ մեկի (ջուլհակ, ծերունի, գյուղացի, հովիվ) միջև,

ե) շահի հրամանը գործողությունների ազատության մասին և դրա խելացի կիրառումը,

զ) շահը որպես գող և գողերի ընկեր և այլն:

Շահաբասյան սյուժեների մոտիվների բազմազանությունը պայմանավորված է նրա պատմական նախատիպի հեղինակությամբ, իմաստությամբ ու բազմաբնույթ գործունեությամբ: Թեև այս մոտիվները ընդհանուր վիպական բնույթ ունեն և նրանցից շատերը խորը հնադարից են ավանդվել և իրենց մեջ պարունակում են առասպելաբանական ու նախնական մտածողության տարրեր, այնուամենայնիվ աղերսվել են շահաբասյան սյուժեներին, վերընձյուղվել և վերածվել շահաբասյան մոտիվների:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Տավուշի մարզի բանահյուսական երկացանկում առկա է հեքիաթային որոշակի սյուժեների ու մոտիվների խտացում: Հատկապես այդ երևույթը ի հայտ է գալիս պատմական անձանց հետ կապված թեմատիկայում, որն ակնհայտորեն պատմական զարգացումների հետևանք է:

Արևելյան պատմավիպական կերպարների մասին հայկական սյուժեները ձևավորվել են փոքրասիական, միջագետքյան, իրանական տարածաշրջաններից Հայաստան թափանցած սյուժեների հիման վրա: Դրանցում առկա են ոչ միայն հնագույն առասպելների մնացորդներ, որոնցից շատերը ժամանակի ընթացքում մթագնվել են, այլև պատմական հիմք ունեցող դեպքեր ու անցքեր, որոնք վիպական երանգավորում են ստացել: Երբեմն դարերի խորքից եկող միևնույն ավանդական սյուժեն աղերսվել է տարբեր պատմական դեմքերի (Ալեքսանդր Մակեդոնացի, Շահ Աբաս), ինչպես օրինակ, երկեղջյուր արքայի մոտիվը: Արևելքի պատմավիպական կերպարներին վերագրվող մոտիվները կայուն են, և յուրաքանչյուր կերպար ունի իրեն բնորոշ սյուժեներն ու մոտիվները:

Տավուշի վիպական բանահյուսության դիտարկումները ցույց են տալիս, որ այս տարածաշրջանում ակտիվորեն կենցաղավարել և պահպանվել են արևելյան բանահյուսական սյուժեների հայկական տարբերակները, որոնք հարստացրել են տավուշյան բանահյուսական երկացանկը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, այսուհետև՝ ՀԱԻԲԱ, FFV: 0731,01–0742,00; FFV: 0965,02–0966,00; FFV: 1163,01–1164,00, Ա. Կարապետյանի ձեռագիր հավաքածու, Շամշադին, 1963; FFIX: 9809,01–9810,00, Ա. Կարապետյանի ձեռագիր հավաքածու, Նոյեմբերյան, 1961; FEI: 1993–2006; FEI: 3543–3547, Է. Խեմչյանի ձեռագիր հավաքածու, Շամշադին (տպագրվել է ՀԱԲ XXI – № 35 (35), № 3 (87); FEII: 1307–1336; FEII: 3797–3800, Է. Խեմչյանի ձեռագիր հավաքածու, Իջևան (տպագրվել է ՀԱԲ XXV – № 72 (72), № 73 (73); FFVII: 8799, 01–8801,00, Ջ. Մանուչարյանի ձեռագիր հավաքածու, 1968:

2 ՀՀ ԳԱԱ ՀԱԻԲԱ, FFX: 1054,01–1054,01, Հ. Մովսիսյանի ձեռագիր հավաքածու, 1958,Ախուրյան, FFVIII: 1365,01–1370,00, Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի հավաքածու, 1969, Ախուրյան, FFVII: 0094,01–0096,00, Ս. Մովսիսյանի (Բենսե) ձեռագիր հավաքածու, 1920, Նոր Բայազետ, FFV: 2326,01–2327,00, Ա. Կարապետյանի ձեռագիր հավաքածու, 1966, Աշտարակ, FFIV: 3129,01–3130,00, Պ. Բարսեղյանի ձեռագիր հավաքածու, 1966, Լենինական:

3 ՀՀ ԳԱԱ ՀԱԻԲԱ, FFX: 1054,01–1054,01, Հ. Մովսիսյանի հավաքածու, Ախուրյան, FFVIII: 1365,01–1370,00, Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի հավաքածու, Ախուրյան,

FFVII: 0094,01–0096,00, Ս. Մովսիսյանի (Բենսե) հավաքածու, Մուշ, FFV: 2326,01–2327,00, Ա. Կարապետյանի հավաքածու, FFIV: 3129,01–3130,00, Պ. Բարսեղյանի հավաքածու (Կարս):

4 ՀՀ ԳԱԱ ՀԱԻԲԱ, FFV: 2326,01–2327,00, Ա. Կարապետյանի հավաքածու, բանասաց Օհան Մալխասյան, Արևմտյան Հայաստանի Մամռտան գավառի Հավնդոնց գյուղից:

5 ՀՀ ԳԱԱ ՀԱԻԲԱ Էսթեր Խեմչյանի, Արագ Կարապետյանի և Արտաշես Նազինյանի ֆոնդերում պահվում է շահաբասյան սյուժեների 50 պատում: Է. Խեմչյանի գրառած սյուժեների մի մասը հրատարակվել է ՀԱԲ XXI, Տավուշ և ՀԱԲ XXV, Իջևան (Զորոփոր) հատորներում, իսկ Ա. Կարապետյանի գրառումներից մի քանիսը տպագրվել է ՀԺՀ VI հատորում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. (1970), *Երկեր, h. Դ,* Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
2. Առաքել Դավրիժեցի (1988), *Պատմություն*, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
3. Առաքելյան Համբ. (1911), *Պարսկաստանի հայերը*, Վիեննա:
4. Աստվածաշունչ (1994), Մոսկվա:
5. Արիանոս (1987), *Ալեքսանդրի արշավանքը*, Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, «Հայաստան» հրատ.:
6. Խեմչյան Է. Հ. (2002), Երկեղջյուր Ալեքսանդրի հայկական պատումները և նրա ծիսաառասպելաբանական ակունքները, *// «Մովսես Խորենացի» գիտական, պատմաբանասիրական հանդես*, № 2*:*
7. Խեմչյան Է. Հ. (2006), Ջրային տարերքի նվաճման մոտիվը հայոց ալեքսանդրյան սյուժեներում, *// «Հայ ժողովրդական մշակույթ XIII*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
8. Խեմչյան Է. Հ. (2008), Շահ Աբասի կերպարը հայ վիպական բանահյուսության մեջ *// Proceedings of the First International Armenology and Iranology Conference,* 10–11 November, Isfahan.
9. Խեմչյան Է. Հ. (2010), Անմահական ջրի մոտիվը հայ բանահյուսության ալեքսանդրյան սյուժեներում, *// «Հայ ժողովրդական մշակույթ XV*, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
10. Կոսիդովսկի Զ. (1970), *Բիբլիական ավանդապատումներ,* Երևան, «Հայաստան» հրատ.:
11. ՀԱԲ XXI (2000), *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, h. 20, **Խեմչյան Է.,** Տավուշ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
12. ՀԱԲ XXV (2008), *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, h. 25, **Խեմչյան Է.,** Իջևան (Զորոփոր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
13. Հարությունյան Ս. Բ. (2000), *Հայ առասպելաբանություն*, Բեյրութ:
14. ՀԺՀ VI (1973), *Հայ ժողովրդական հեքիաթներ*, h. VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
15. Մնացականյան Աս. (1956), *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր*, //«Վիճաբանութիւն հոգւոյ ընդ մարմնոյ», //«Ողբ ննջեցելոց», Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
16. Гафуров Б. Г., Цибукидис Д. И. (1980), *Александр Македонский и Восток*, Москва: Наука.

17.ИВЛ I (1983), *История всемирной литературы*, т. I, // Аверинцев С. С., Древнееврейская литература, Москва: Наука.

18.*Коран* (1986), Перевод и комментарии Крачковского И.,Ю., Москва: Наука.

19.МНМ I (1987), *Мифы народов мира*, т. I, // Афина, Москва: Советская энциклопедия.

20.МНМ II (1988), *Мифы народов мира*, т. II, //Сулейман; // Соломон; // Иванов В. В., Топоров В. Н., Птицы, Москва, Советская энциклопедия.

21.СУС–ВСС (1979), *Сравнительный указатель сюжетов, Восточнославянская сказка*, Ленинград: Наука.

Esther Khemchyan

ORIENTAL HISTORICAL PERSONAGES IN THE FOLKLORE OF TAVUSH

Summary

The article deals with Oriental personages with specific historical background found in the folk tales of Tavush (a province in the North of Armenia). King Solomon, Alexander the Great, Dananda Bahlul, Khikar the Wise, Tamerlan, Shah Abas, Nadir Shah are among them. For centuries Armenians have been in close contact with their Eastern neighbours. The constant economic, political and cultural relations have visibly influenced Armenian folklore, folk tales in particular. The rich and multilayered folklore of Oriental peoples have penetrated into Armenian lore and have been accepted by the local storytellers. Through time the foreign cultural elements received new qualities, new colours. They either blended with the native folk genres acquiring 'Armenian' status or continued an independent life as exotic features. In both cases they enriched the native oral traditions. The folkloristic studies of Tavush folklore show that the mentioned characters keep appearing in specific motifs and plots.

Нелли Хачатурян

ВОСТОК И ЗАПАД В РУССКОМ СКАЗОЧНОМ ФЭНТЕЗИ (на материале трилогии М. Успенского «Приключения Жихаря»)

Фэнтези – один из наиболее востребованных жанров современной литературы, особенно среди читающей молодежи. Природа жанра остается предметом дискуссий, однако никем не оспаривается его генетическая связь с литературной сказкой, в свою очередь, тесно связанной с фольклорной, прежде всего, волшебной. А в ней волшебство часто неотделимо от экзотического хронотопа, в пределах которого кажутся более правдоподобными (в рамках «сказочного реализма») факты и события, нереальные или ирреальные в среде бытования сказки.

Евразийская природа России и ее культуры делает естественным появление как в фольклорной, так и, тем более, в литературной сказке преображенных, но узнаваемых примет и Запада, и, особенно, Востока, интерес к которому издавна характерен для русской ментальности (ср. у В. Звягинцевой: «Мне тяга к Кавказу, / Знакомая с детства, / От русских поэтов / Досталась в наследство»). Поэтому, к примеру, в сказках Пушкина, бесспорная связь которых с фольклором не должна заслонять от нас их не менее бесспорной литературности, встречаем на достаточно ограниченном пространстве и царей с восточными именами Салтан и Дадон (последний – типичный восточный царек и по психологии), и восточного мудреца–скопца в «сарачинской шапке белой», и инфернальную Шамаханскую царицу, а братья–богатыри из «Мертвой царевны» обороняют Русь от узнаваемых восточных персонажей русской истории и литературы. После Пушкина почти все русские классики так или иначе отдали дань восточной теме, кто меньше, как Толстой («Казаки», «Хаджи Мурат»), кто больше, как Лермонтов, не зря названный Ов. Туманяном «великим приемным сыном Кавказа»; утонченный европеец Блок, признавая, что России внятны «и острый галльский смысл, И сумрачный германский гений», в то же время не без вызова провозглашал: «Да, скифы мы, да, азиаты мы» («Скифы»). Почти все крупные представители Серебряного века имевшие для этого возможности, совершали дальние восточные путешествия, и их ориентальные мотивы рождались не только из традиции, помноженной на эрудицию, но и подкреплялись личными впечатлениями.

Ставшая культовой среди вузовской молодежи России постмодернистская по поэтике трилогия М.Успенского «Приключения Жихаря» продолжает на новом витке спирали эту традицию, что начинается уже с выбора героев: у русского богатыря Жихаря (тип постепенно умнеющего Иванушки–дурачка русской сказки) три побратима, двое из них – с Востока: китаец Лю и степняк Сочиняй–багатур (третий – англо–сакс, принц Яр–Тур, будущий легендарный король Артур). Что же касается упомянутой поэмы А.Блока «Скифы», то она неоднократно обыгрывается М. Успенским, а четверостишие «Привыкли мы, хватая под уздцы / Играющих коней

ретивых, / Ломать коням тяжелые крестцы / И усмирять рабынь строптивых» развернуто в большую, весьма ироническую сцену (618–621)[1].

Нам уже приходилось писать, что в устах побратимов сами их имена взаимно подвергаются национальной ассимиляции, прежде всего восточной (Хачатурян 2011). Так, степняк Сочиняй–багатур именует друзей в соответствии с нормами своего языка, восточного этикета, культуры в целом: Жихарь (уже князь) – Джихар–хан, Яр–Тур (уже король) – Камелот–каган (Камелот – резиденция легендарного Артура, каган (тюрк.) – титул главы государства, принятый до XII в. и на Руси, пока не был заменен болгарским заимствованием *князь* (Колесов 1986: 289)), для китайца Лю Жихарь – Жи–хан, а Яр–Тур – Яо Тун (после воцарения – Яо Тун ван, т.е. государь). Каждый оним трилогии по–своему уникален, в сумме же они демонстрируют богатство и разнообразие приемов и методов создания вокруг него системы ассоциаций и подтекстов, во много раз превышающих по объему сам текст, рассчитанный в немалой степени на герменевтическую эрудицию читателя. Попытаемся развернуто показать это на одном конкретном примере из многих возможных.

«Честно говоря, начали строить Большой Зиккурат <…> давно (современная наука считает зиккураты прообразом Вавилонской башни – Н.Х.). Еще при царе Ур–Нин–Нгирсу. Потом его сменяли на троне государи Набу–Мукин–апли, Набу–Мукин–зери, Набу–Надин–зери, Набу–шум–ишкун, двое Набу–шум–укинов, Набу–шуму–либур… Конечно, запомнить такие имена простому вавилонскому человеку (ср. штамп «простой советский (русский и т.д.) человек» – Н.Х.) было не под силу, и всех своих правителей вавилоняне для краткости именовали Вавилами: Вавила Воинственный, Вавила Красное Солнышко, Вавила Большое Гнездо, Вавила Гордый, Вавила Темнила, Вавила Бессмысленный, Вавила Грозный, Вавила Давила, Вавила Отца Родного Убила. Прозвища Вавил менялись, а жизнь оставалась прежней» (466).

Для русскокультурного читателя здесь имеются бесспорные параллели с русской историей, понятные и школьнику; совпадают, по возможности, даже инициалы: Вавила Красное Солнышко – Владимир Святославич, великий князь киевский в 980–1015гг., оставшийся под таким прозванием в былинах и канонизированный церковью за крещение Руси; Вавила Большое Гнездо – Всеволод Большое Гнездо, младший сын Юрия Долгорукого, великий князь в 1176–1212гг., имевший 12 детей; Вавила Темнила – Василий II Темный (1415–1462, великий князь с 1425г), внук Дмитрия Донского, в 1446 г. ослеплен Василием Шемякой; Вавила Грозный – Иван Грозный, первый русский царь (1547), в представлении не нуждается, краткая форма имени Иван – также на В (Ваня).

Сказанное заставляет задуматься и над остальными прозвищами. Наиболее соответствующими авторскому замыслу представляются следующие: Вавила Воинственный. Из трех претендентов – Мстислав Храбрый (XII в.), Мстислав Удалой (XIII в.) и Владимир Храбрый (1353–1410), внук Ивана Калиты, князь серпуховско–боровский – наиболее подходящим нам кажется последний, уже хотя бы потому, что о нем не историк знает больше, чем об остальных: в Куликовской битве 1380 г. он командовал решающим засадным полком, а почти через 30 лет (в 1408 г.) руководил обороной Москвы от татар. Наконец, Русь у Успенского – Многоборье (в ней много боров), а наш князь – серпуховско–боровский; совпадают и инициалы. Вавила Гордый – Симеон Гордый (1316 – 1353, великий князь с 1340 г.) – сын Ивана Калиты. Вавила

1 Здесь и далее все цитаты и отсылки даются по изданию: М. Успенский. «Приключения Жихаря». Романы. – СПб: Азука, 2000, с указанием страницы в тексте.

Бессмысленный – скорее всего Иван V (1666–1696) старший брат Петра Первого, провозглашенный в 1682 г. царем вместе с ним при регенстве их сестры Софьи (до 1689 года, когда она была свергнута Петром), слабый здоровьем и неспособный управлять государством. Вавила Давила – российские венценосцы, за редчайшим исключением, кротостью и всепрощенчеством не отличались, но здесь явно имеется в виду Николай I (1796 – 1855), третий сын Павла Первого, «жандарм Европы», подавивший Польское восстание (1830–1831) и Венгерскую революцию (1848–1849). В самой России на его счету жестокая и мстительная расправа над декабристами (некоторых из казненных, вопреки обычаю, вешали несколько раз, а остальных гноили «во глубине сибирских руд» четверть века, до самой смерти Николая I), тотальное подавление свободомыслия (вспомним Пушкина, Лермонтова, Герцена, Шевченко и многих других; известна, например, трагическая судьба Полежаева) с помощью учрежденной им политической охранки – печально известного Третьего Отделения). Вавила Отца Родного Убила – однозначно Александр I (1777– 1823), старший сын Павла I и внук Екатерины II, ненавидевшей сына как претендента на престол, узурпированный ею, и воспитавшей внука в нелюбви к отцу (Пушкин недаром назвал ее «Тартюфом в юбке и короне»). Александр знал о заговоре, в результате которого его отец был убит в своей спальне (1801г.), а Александр взошел на престол.

Отметим, что для российской истории достаточно характерна удельная борьба братьев в средние века (яркий пример – Святополк Окаянный, убравший на пути к трону троих братьев и сам погибший по воле единственного оставшегося, Ярослава Мудрого), однако отцеубийство в число пороков феодальной Руси не входило, да и братоубийство со временем стало восприниматься скорее как восточная черта, вызванная многоженством и, соответственно, обилием претендентов на престол. Между тем, например, султан Османской Турции Мехмед II в 1478 г. даже издал «едва ли не самый чудовищный из законов, которые только знала история. Он гласил: «Тот из моих сыновей, который вступит на престол, вправе убить своих братьев, чтобы был порядок на земле». Закон этот не остался на бумаге. На протяжении XVI и XVII веков 60 принцев османской династии, иные в младенческом возрасте, по воле султанов погибли насильственной смертью. Однако даже этот закон не смог оградить турецких монархов от дворцовых заговоров» (Петросян 1991: 165). Кстати, и сам Мехмед II был–таки отравлен, причем по приказу собственного сына, будущего Баязида II. В сказках тема предательства и интриг старших братьев, опасающихся, что их обойдет более удачливый младший, представлена повсеместно, хотя, в отличие от реальной жизни, в них добро всегда побеждает и почти никогда не мстит за личные обиды. Прослеживается эта установка и в трилогии: Жихарь отходчив и незлопамятен. Побратим же его, Сочиняй–багатур, при всех своих многочисленных достоинствах, будучи представителем восточной традиции, относится к потомству по–восточному и при рождении у Жихаря долгожданного наследника «Жихаревых переживаний не понимал и понимать не хотел, потому что сыновей этих у Сочиняя получилось даже с избытком – хватило бы только степи для всех. Вечный воспеватель девичьей красоты относился к появлению наследников примерно так же, как к овечьему окоту. Что и побратиму советовал» (593).

В период Ига эта «традиция» неоднократно затрагивала и интересы Руси. Так, когда в 1341 году умер «гроза Руси» хан Узбек, его сыновья начали борьбу за власть и, убив двух братьев, ханом стал Джанибек, благоволивший сыну Калиты Симеону Гордому («Вавила Гордый» Успенского) к вящей выгоде Москвы. Но в 1357 году

Джанибек, а также 12 его сыновей, были убиты его собственным сыном и их братом Бердибеком; с ним брату умершего от чумы Симеона Гордого Ивану Красному пришлось заново налаживать отношения, и это было не просто (Перхавко и др 2002: 306–311). Что касается Сочиняй–багатура, то он, по нашему мнению, вообще весьма напоминает хана Сартака (совпадают и инициалы), сына и наследника Батыя, ставшего другом и даже побратимом великого Александра Невского. Сартак высоко ценил русскую культуру и проявлял интерес к христианству (ислам был введен позднее Узбеком; до того ордынцы были весьма веротерпимы, а некоторые, в том числе и Чингизиды, даже исповедовали христианство). В 1255 году Сартак стал ханом Орды. Трудно представить, какие перспективы открывались и перед Русью, и перед Ордой, слившимся–таки через 2–3 века в единое государство (а Орда уже начала дистанцироваться от Монгольской империи), продлись такое положение достаточно долго, но уже через два года Сартак в свою очередь был отравлен, и ханом стал его дядя Берке, младший брат Батыя, начавший «закручивать гайки» в стране друга Сартака. Была силой произведена перепись населения, а затем сбор дани передан откупщикам, к тому же мусульманам. Беспредел, в том числе и религиозный, вызвал восстание, и Берке стал готовить крупномасштабное нашествие на Русь, что грозило неисчислимыми бедами и народу, и, пусть вассальной, но все же государственности. Русское же войско по праву сюзерена было затребовано для войны с Персией (вспомним, как армянская конница проливала кровь за Персию, а та тем временем громила Армению). Александр Невский, смирив себя, поехал на поклон в Сарай и пробыл там целый год, всячески задабривая Орду; в конце концов ему удалось добиться и отмены нашествия, и отсрочки в посылке войск. Спасая Русь, он подорвал свое здоровье, и по пути домой могучий воитель умер в 1263 году, всего сорока трех лет от роду (Перхавко и др. 2002: 273–277). Не будучи связаны политкорректностью историков, осмелимся заметить, что не исключаем и вариант с отравлением сильнейшего лидера Руси: точно так же умер по пути домой из Орды и его отец Ярослав Всеволодович (1190–1246), о котором достоверно известно, что почетная чаша на прощальном пиру, поднесенная ему самой ханшей, была отравлена, но умер он только через неделю, тоже не доехав до места (Перхавко и др. 2002: 262). Слишком уж много совпадений, а отравители при богатой практике были, естественно, высокого класса. Отравления, в том числе и судьбоносные, есть и у Успенского. Так княгиня Апсурда, взятая князем Жупелем из заморского Грильбара (значащий топоним семантически указывает скорее на Запад, но форма топонима явно тяготеет в Востоку (ср. Мадагаскар, Занзибар и др.), «приловчилась травить ядом непочтительных, даже и ближнюю родню. Князь Жупел на всякий случай ел из ее тарелки и пил из ее кубка» (11). Судьбоносным «опоением» Жихаря, принесшим неисчислимые бедствия и ему, и его княжеству, стало отравление богатыря магом Мордредом, племянником короля Артура, погубившим и своего дядю. А последствия неумного народного мятежа, бессмысленного и беспощадного, вспыхнувшего в отсутствие Жихаря и между делом рассорившего Многоборье с раскосыми подданными Сочиняя, имеют прямой выход в шестидесятые годы, на прекрасные до того отношения СССР с Китаем (старшее поколение еще помнит популярную песню «Москва–Пекин» с припевом «Русский с китайцем – братья навек»), дошедшие до прямого военного конфликта на острове Даманский в 1969 году, от которого выиграла только третья сторона.

Экскурс в российскую историю оказывается, таким образом, и актуальным, и многоплановым.

С другой стороны, имена вавилонских (равно как и ассирийских) владык и в самом деле труднопроизносимы и трудно запоминаются, что и было обыграно в начале XX века в знаменитой «Всеобщей истории, обработанной «Сатириконом», блестящей плеядой юмористов знаменитого журнала «Сатирикон», опыт которых, возможно, и инициировал сам пассаж М.Успенского и, несомненно, был ему знаком, как и всякому образованному гуманитарию.

Раздел древней истории, написанный Тэффи, сообщает об именах: «ассирийские цари были очень воинственны и жестоки. Врагов своих поражали (и удивляли, и убивали – Н.Х.) более всего своими именами, из которых Ассур–Тиглаф–Абу–Хериб–Назир–Нипал было самым коротеньким и простеньким. Собственно говоря, это было даже не имя, а сокращенная ласкательная кличка, которую за маленький рост дала царю его мамка». И далее: «Последним ассирийским царем считается, выражаясь сокращенно, Ашур–Адонай–Абан–Нипал» (Всеобщая история 1997: 10), что не совсем точно фактически, но сути не меняет. О более известном Вавилоне сказано кратко: «Тут же неподалеку находился Вавилон, известный своим столпотворением».

Имя Вавила и само по себе может служить примером смешения культур: оно означает «житель Вавилона», но по–латыни; в то же время в России это, казалось бы, иностранное имя всегда было простонародным, причем без наличия стилистически более высокого варианта (ср. Данила – Даниил, Гаврила – Гавриил и др.). Наконец, эзотерическая практика соотнесения имени и характера владельца также тяготеет к Вавилону, со времен Библии стяжавшему дурную славу как соединение пороков и величия: знак его имени – Лев, а характер противоречивый: «Враг Вавилы – гордость, вернее, гордыня <…> Вообще Вавила – раб своих пороков. <…> Он мстителен и скуп, но любит пустить пыль в глаза показной щедростью» и т.п. (Грушко, Медведев 1998: 73).

Разумеется, не все эти ассоциации возникают у каждого читателя, однако все они заложены в тексте и подкрепляются контекстом и вавилонских глав, в трилогии в целом.

События, факты, литература, сама история непрерывно подвергаются осмыслению не только рассказчиком, но и героями с позиций своей – европейской или, чаще, восточной – ментальности, причем евразийская природа Руси (место действия) проявляется и в том, что она оценивается представителями западной культуры как восточная, даже куда более восточная, чем в реальности. Так, хорошо образованный принц Яр–Тур рассказывает восточную, по его мнению, сказку о принявшем обет молчания рыцаре Бедол–ага (уже травестированный восточный колорит), вынужденном по прихоти капризной царевны Культур–Мультур (!) утопить верного дракончика, бегавшего за ним, как собачка. В «восточной сказке» без труда угадывается «Муму», с попутной оценкой и персонажей и самого крепостничества как азиатчины. Известная из мифологии фея Моргана (Морриган) говорит рыжему Жихарю: «Я узнала тебя, Рудра, Красный Вепрь Неба! Ты явился, чтобы в очередной раз покарать Змея Шешу?» Об индийском Шеше, равно как и Рудре, Жихарь слышит впервые в жизни, однако он действительно призван совершить этот подвиг, победить с помощью ритуального предмета мифологий Индии – ваджры – Мирового Змея, которого премудрый царь Соломон легко переводит в европейскую систему координат: «Ваш Мидгардом (Мировой Змей германо–скандинавской мифологии – Н.Х.) еще не скоро проглотит себя целиком – вот чего наш Левиафан никогда бы себе

не позволил!» (112). В тексте трилогии встречается и упоминание о Змее Апопе древнеегипетской мифологии (518).

Текст М.Успенского насыщен фольклорными элементами самого разного характера. В нем нередки сказочные обороты, формулы и сюжеты, часто иронически переосмысленные, нередко создающие эффект обманутого ожидания, переплетающиеся друг с другом. Так, Жихарь, подвыпив, рассказывает, что у него, как у сказочного королевича, в младенчестве были «ножки по колено в серебре, а ручки по локоть в золоте, во лбу светлый месяц, по затылку же – ясные звезды» (45). И все это отнято Мироедом. Однако эта, казалось бы, заведомая похвальба сироты–подкидыша оказывается недалека от истины, поскольку в конце трилогии выясняется, что Жихарь – наследный принц Криптона, планеты, загубленной Мироедом; родители успели перед гибелью подбросить его на Землю (популярный мотив западной фантастики), где ребенка нашли в лесу и воспитали разбойники Кот и Дрозд (травестируется и история принца Яр–Тура, то есть короля Артура, тоже найденного в лесу, но мудрецами–друидами). Лесная ведунья (=Баба–Яга), лучше других понявшая, в чем дело, старалась сделать из ребенка Супермена современной западной киносказки, для чего, как это нередко практиковалась в деревнях, закаляла мальчика в протопленной русской печи (сходным образом Фетида закаляла Ахилла в воде, а Деметра своего воспитанника в огне), однако ей помешали, полагая, что она просто хочет зажарить и съесть мальчика (уже по канонам русской сказки), из–за чего полного Супермена из Жихаря так и не вышло (588–590). Впервые встретившись с будущим побратимом, тогда еще Безымянным Принцем, Жихарь на вопрос, куда он направляется, отвечает фольклорной формулой: «Еду туда, не знаю куда». – «Весьма достойное направление, подходящее для всякого благородного воителя», – одобрил Принц» (69) в традициях странствующего рыцарства. В дальнейших совместных странствиях они встречают и камень на развилке трех дорог, с несколько измененной автором фольклорной надписью: «Прямо ехать – убиту быти. Налево ехать – женату быти. Направо ехать – коня потеряти» и выбирают потерю коня как наименьшее из зол.

Понятие «национальный колорит» и его художественное воплощение (например, в романах Вальтера Скотта о крестовых походах), а также осознание связи между индивидуальной человеческой судьбой и всеобщим движением истории принадлежат к великим открытиям европейского романтизма, которые послужили основанием для появления принципиально нового героя – сильной и незаурядной личности, способной на сильные чувства, на подвиг и в то же время – на преступление. Яркость и необычность образов героев – путешественников по суше и морю, благородных разбойников, воинов и влюбленных, способных выдержать любые испытания и приключения, но иногда совершающих необдуманные поступки, сочетаются в сказках Гауфа с чертами сатиры и юмора. В образах коварных и жестоких султанов и эмиров, неразумных калифов и их льстивых и вероломных визирей и советников явственно просматриваются черты правителей и чиновников современных германских территориальных государств.

Но есть в цикле «Караван» одна сказка, сильно отличающаяся по своему сюжету от всех остальных – это сказка о Маленьком Муке. Это тоже романтический герой, но, в отличие от красивого и сильного Орозмана, это карлик с большой головой и уродливым телом. В отличие от другого знаменитого героя романтизма, скрывающим под уродливой внешностью живую душу и сердце, оказавшееся способным на великую любовь, Маленький Мук обречен на жалкое существование среди жестоких к нему людей – от короля до его слуг. Его наивность, с которой он надеется обрести друзей, раздавая всем деньги – ведь он стал обладателем волшебной палочки, указывающей на клады, и туфель–скороходов! – вызывает сочувствие к нему читателя. Однако, полностью испив чашу унижений и обид, хотя и одержав победу над королем, Маленький Мук возвращается в родной город, чтобы навсегда остаться одиноким, хотя и уважаемым всеми человеком. В его имени слово «Маленький» несет особую смысловую нагрузку – это маленький человек, страдающий от несправедливостей и жестокостей, его бюргеры и филистеры не принимают и ненавидят так же, как и людей искусства, художников, и этот человеческий тип представляет еще одно художественное открытие немецких романтиков. А его нелепый костюм, состоящий из огромной чалмы, халата не по росту и огромных туфель мог бы послужить пусть очень отдаленным и «восточным» вариантом образа, созданного великим Чарли Чаплином.

Подводя итоги, отметим, что благодаря синтезу волшебства и реальности, восточных мотивов и образов с достаточно легко узнаваемыми чертами повседневной жизни современной автору Германии эти сказки не только составляют наиболее важную по своему идейному содержанию и интересную по своей художественной форме часть творческого наследия В. Гауфа, но и представляют один из наиболее ярких и значительных этапов в эволюции жанра художественной сказки в контексте европейской и мировой литературы.

Интересно было бы привести высказывание о сказках Гауфа другого писателя–сказочника, Вениамина Каверина, причем особенно важно, что Каверин протягивает нить от Гауфа к великому советскому сказочнику – Евгению Шварцу: «Мне кажется, что и сказки, и новеллы Гауфа, независимо от особенностей обоих жанров, существуют в некотором волшебном пространстве, которое само по себе не требует ни

географических, ни топографических признаков. Это атмосфера чуда. Эта обыкновенность необыкновенного получила продолжение в истории мировой сказки. И самый убедительный пример подобного феномена принадлежит нашему блестящему драматургу и сказочнику Евгению Шварцу» (Каверин 1990: 7).

ЛИТЕРАТУРА

1. Гауф, В. *Сказки.* Андерсен, Х.К. *Сказки и истории.* Антология. Москва: Правда (1980) .
2. *Hauffs Werke in zwei Bänden* (1975). Berlin und Weimar: Aufbau–Verlag.
3. Каверин, В. (1990). Сказки Гауфа. Вступительная статья //В. Гауф. *Сказки.* Москва: Художественная литература .
4. Артемьева О.А. (1983). *Жанровые и стилевые особенности малой прозы В.Гауфа.* Автореферат. Москва, МГУ.
5. Дьяконова Н.Я. (1978). *Английский романтизм: проблемы эстетики.* М. Наука.

Elena Karabegova

ORIENTAL CYCLES OF WILHELM HAUFF

Summary

Wilhelm Hauff's *Oriental Cycles – The Caravan* and *The Sheik of Alexandria and his Slaves* make an important part of his fairy tale heritage. The perception of Oriental culture was rather slow in Germany and owed much to the appearance of Oriental themes in French Enlightenment Literature as well as J.G. Herder's works. Hauff's Oriental tales were composed in the second half of the 19th c. when Hoffman's literary career was already declining, the three volumes of the Grimms' *Kinder– und Haus Märchen* were published and Brentano's fairy tales were being created. The stories in these collections interweave the poetic qualities of the German romantic fairy tale with oriental elements. On the one hand Hauff's *Oriental cycles* are rich in eastern flavour, on the other hand the characters are endowed with marked romantic features.

Нина Айрапетян

ТЕМА ПРАВИТЕЛЯ И ВЛАСТИ В АРАБСКОЙ СКАЗКЕ У. БЕКФОРДА «ВАТЕК»

Уильям Бекфорд (1760–1844) принадлежит к английским писателям эпохи предромантизма, который датируется современными исследователями от появления «Новой Элоизы» (1761) Руссо до 1824г. (года гибели Байрона).

Как указывает Н. А. Соловьева в своем труде «У истоков английского романтизма» (1988), впервые этот термин был предложен французским исследователем Д. Морие в 1909г. До этого предромантизм не рассматривался как отдельный этап в развитии европейской литературы. В. М. Жирмунский в послесловии к «Фантастическим повестям» («Замок Отранто», «Влюбленный дьявол», «Ватек», 1967) включает в понятие романтизма сентиментальную поэзию, «готический роман», литературу «бури и натиска», а Соловьева указывает также на факторы кельтского возрождения и поднимающийся интерес к скандинавской теме в 18 веке. У. Бекфорд при этом не включен в систему анализа английского предромантизма, очевидно потому, что сказка «Ватек» написана на французском языке.

Необходимо отметить, что делая главным героем этого произведения реальное историческое лицо 9 в., халифа Ватека из рода Абасидов, внука Гаруна аль–Рашида, Бекфорд поднимает тему власти, характерную для целого ряда сказок «Тысячи и одной ночи». Эта тема была особенно близка Бекфорду, мечтавшему о так и не осуществившейся политической карьере, несмотря на происхождение (отец его был олдерменом и лорд–мером Лондона), богатство и блестящее образование.

Знаток древних и новых европейских языков, Бекфорд по собственному желанию изучал также персидский и арабский языки. Проводя длительное время за границей, он приобрел привычки европейца–космополита, увлекающегося одновременно европейским и восточным Средневековьем.

Развитие ориентализма в Европе связано как с арабским нашествием («Песнь о Роланде», 1100г., «Песнь о Сиде», 1140г.), так и с крестовыми походами в Иерусалим, отразившимися в рыцарских романах. Затем он проявился в новеллах Возрождения, насыщенных яркими приключениями и путешествиями.

В период Просвещения 18 века ориентализм приобрел новую, актуальную направленность. Тема правителя и власти становится основной в таких произведениях как «Персидские письма» (1720) Монтескье, «Философские повести» Вольтера («Задиг», 1748), которые он сам называл философскими сказками, в его же трагедии «Магомед» (1742), в опере Бомарше и Сальери «Тарар» (1787). От показа и разоблачения картин восточной деспотии просветители постепенно переходят к утверждению идеи царства «справедливости и любви» («Задиг» Вольтера и «Тарар» Бомарше). Так иносказательно идеал просвещенного монарха отразился в ориенталистских произведениях французских писателей 18 века.

В свою очередь, исследователи творчества Бекфорда, отмечая тот факт, что сказка «Ватек» (1786) написана на французском языке, приходят к выводу, что он следует французской литературной традиции, начиная от А. Галана, переводчика сказок «Тысячи и одной ночи» в начале 18 в., до Вольтера. Сохранились также его собственные десять переводов сказок с арабского на французский (1780–1783) и незаконченная французская рукопись арабской сказки о Дарианоке, юноше из страны Гу–Гу, в которой обнаруживается полное разочарование автора в делах правителей и их приближенных. В этой сказке проявляется характерный для предромантизма элемент мистицизма, который станет одной из составляющих структуры сказки «Ватек».

Необходимо отметить следующее: проведя сравнительный анализ данной сказки и некоторых сказок «Тысяча и одной ночи», мы пришли к выводу, что Бекфорда интересовали не только «романтическая трактовка восточной тематики» и чудеса, которыми наполнены арабские сказки, но и своего рода их разоблачение, пародирование, доходящее до гротеска. Сказка «Ватек» – не бегство от реальной действительности на неизвестный и манящий Восток, что будет присуще произведениям европейского романтизма. У Бекфорда это продолжение и развитие традиционной для 18 в. критики абсолютизма, с использованием мотива таинственных, дающих власть восточных амулетов (мотив, который возникнет в новой трактовке в философской повести Бальзака «Шагреневая кожа», 1831г.).

Относительно сказки «Ватек» Жирмунский указывает, что «тайны готического романа являются здесь в ориентальном облачении» (Литературные памятники 1967: 282). Сам Бекфорд перестроил в готическом стиле родовое поместье в Фонтхилле, увенчав его «небывалой высоты» башней (300 футов), которая рухнула через несколько месяцев, была возведена заново и продержалась двадцать четыре года. Жирмунский считает, что ее идея была подсказана Бекфорду «Ватекем». Соловьева приводит тот факт, что в 1819 г. Т. Рикмен в «опыте определения стилей английской архитектуры» окончательно закрепил за национальным готический стиль, который продержался до 50–ых годов XIXв.

В свою очередь, проследив мотив башни в сказках «Тысячи и одной ночи», мы обнаружили его в «Рассказе о горделивом царе», где властитель построил для себя «высокий дворец, возвышавшийся и уходящий ввысь». Трижды подчеркнув элемент высоты, сказка закрепила его в характеристике мнимого величия правителя, который достиг исполнения своих самых заветных желаний, но тут же лишился всего. Аллах послал ему ангела смерти, который обвинил его в том, что он не употребил свою власть и свои деньги для помощи нуждающимся, не строил монастыри, мечети, мосты и водопроводы, а истратил их ради страстей своих.

Такова, в целом, и сюжетная линия сказки «Ватек» (исторический халиф Ватек умер в возрасте 32 лет). Аллах выступил в ней как верховный судья, с иронией наблюдая за попытками Ватека достичь неба путем строительства башни с одиннадцатью тысячами ступеней.

Другим источником сказки «Ватек» послужила, несомненно, «Сказка о Джиллиаде и Шимасе» из индо–иранского цикла сказок «Тысячи и одной ночи». По жанру это так называемая обрамленная повесть, которая, придерживаясь четкой сюжетной линии, состоит из множества историй, определяющих взаимоотношения царя и его подданных. Главный аспект власти – справедливость к поданным (Соломонов суд), ведь если ее нет, подданные восстают. Нужно отметить, что в средние века большую ценность представляли так называемые «царские зерцала», книги, в которых

давались советы царям и царедворцам о том, как внушать уважение к власти, соблюдать правила этикета и обладать сведениями из области научных знаний (интересно, что подобное сравнение принца Гамлета с зеркалом, увы, разбитым, приходит на ум Офелии, убеждающейся, как ей кажется, в его безумии). Но в сказках все выглядит не так однозначно. Например, в «Сказке о Джиллиаде и Шимасе» ставится вопрос о безраздельной власти. Чтобы ее достичь, нужно убивать всех остальных обладателей власти: везирей, военачальников, царедворцов. Власть прежде всего надо употреблять для наслаждений, советуют царю его жены. Ту же роль играют в сказке Бекфорда мать Ватека, царица Каратис, и его возлюбленная Нурониор, дочь эмира, которые отвратили халифа от государственных дел и заботы о своих подданых.

В восточной сказке мудрый отрок, сын казненного везиря Шамиса, возлагает вину не только на женщин, но и на самого царя, поскольку Аллах дал человеку свободную волю, и дело не в предопределении, как считает царь, а в желании самого человека совершать добро и зло. Сказка завершается раскаянием царя, едва не утратившего свои владения, и восстановленим гармоничных отношений со своими подданными, которые в свое время создал его отец Джиллиад.

В сказке «Ватек» Бекфорд, в отличие от данного первоисточника, полностью дискредитирует институт власти, который находится в руках просвещенного, но деспотичного и изнеженного правителя. Т.о., теория «просвещенной монархии» была развенчана Бекфордом еще при жизни самого Дидро, не скупящегося на лестные эпитеты в адрес Екатерины II, которая щедро вознаградила его за веру в ее просветительские таланты.

Из «Сказки о Джиллиаде и Шимасе» Бекфорд взял и по–своему обработал эпизод, который задает тон всему повествованию, Шимас говорит юному царю, сыну умершего Джиллиада: «Аллах дал человеку и сделал пять чувств причиной блаженства или вечного огня». Весь замысел сказки «Ватек» как бы заключен в этой емкой фразе, от начала и до конца. Сказка начинается с описания блаженства, которое испытывает Ватек в своих пяти дворцах, услаждающих его вкус, слух, зрение, обоняние, чувственность (Маруф–башмачник 1986: 331). Восточная экзотика здесь переплетается с обыгрыванием эстетики рококо, и это сближение двух эпох было совершенно прозрачным для читателей «Ватека», особенно если вспомнить пользующуюся большим успехом серию картин «Пять чувств» художника Жана Рау (1677–1734). Если в восточной сказке юноша–царь хочет знать, сотворены ли эти чувства ради добра или зла, то в сказке Бекфорда они призваны служить лишь наслаждению. Нарядно–декоративный стиль описания придворных празднеств Ватека, дразнящая чувственность и жеманность дочери эмира Нурониор, бездумное наслаждение жизнью – все это было близко и понятно читателям «Ватека», тем более, что само искусство рококо в 18в. стало своеобразным прощанием с миром галантных празднеств и сословно–аристократических иллюзий (которые позднее безуспешно пытался возродить М. Пруст в своих романах). Увлечение матери Ватека, царицы Каратис, черной магией невольно приводило на память современникам Бекфорда процесс 17 в. над колдуньей Вуазен, в который была замешана фаворитка короля Людовика XIV Франсуаза Монтеспан, «султанша», как между собой называли ее придворные. Стихией ее, как и у царицы Каратис, были дворцовые интриги. В 1691г. герцог Менский, ее сын, приказал силой освободить покои своей матери в Версале. А в конце жизни ее постоянно терзал страх смерти и ада. Сам Людовик XIV, утвердивший свой

девиз «Государство – это я», с детства страдавший булемией (обжорством), больше всего ценящий лесть, сменивший множество фавориток, также мог стать одним из прототипов Ватека. У. Черчилль писал о нем: «Внешний лоск и хорошие манеры, пышный церемониал и отработанный этикет лишь подчеркивали низость его образа жизни». Надгробную речь над ним в 1715 г. епископ завершил фразой: «Только Бог велик!», которая идентична прославлению Аллаха на Востоке, удерживавшего правителей от безмерного величия, самомнения и гордости.

Земная жизнь Ватека заканчивается во владениях Эблиса, куда он направился за волшебными талисманами по наущению его посланца, «индийца из неведомой страны», оказавшего большое влияние на его мать, царицу Каратис. До этого они вместе попирают мыслимые и немыслимые законы в общении как с самыми почитаемыми лицами государства, так и с простыми людьми. Все они трепещут перед ним и в то же время стараются высказать ему свою любовь, как наместнику Аллаха, за что в ответ получают или смерть, или страшные униженья и увечья. Разрешить эту ситуацию могло лишь глубокое разочарование поданных в своем властителе. Вот как анализирует этот процесс в книге «Пророк» Джебран Калил Джебран: «А если это деспот, которого вы хотели бы свергнуть с престола, посмотрите прежде, разрушен ли его престол, воздвигнутый в вашей душе» (Джебран 2003: 77).

В финальных сценах «Ватека» ощущается определенное влияние «Рассказа о Хасибе и царице змей» из сказок «Тысячи и одной ночи». Так же, как один из героев этого повествования отправляется на поиски места последнего успокоения царя Сулеймана (Соломона) с целью завладеть волшебным перстнем, полученным в дар от Аллаха и дающего власть над миром, Ватек отправляется в длительный путь, надеясь с помощью талисманов завладеть миром и сокровищами горы Каф, опоясывающей земную твердь.

Так же, как и в восточной сказке, правая рука Сулеймана, возлежащего на ложе в подземном царстве, лежит у него на груди, но когда он с мольбой поднимает руку, взывая о скором прекращении своих адских мук, посланных ему за принятие огнепоклонства, Ватек в ужасе видит, что сердце Сулеймана охвачено пламенем, и уже не прикасается к талисманам. Ими завладевает Каратис, которую Ватек вызывает в ад, чтобы проклясть ее за те нечестивые знания, которыми она его снабдила. У каждого из них сердце превращается в пылающий уголь (адское пламя Бекфорд переносит в грудь грешников), они обречены на вечные скитания в царстве Эблиса, не зная ни минуты покоя, и лишены надежды, в отличие от царя Сулеймана. Это наказание символизирует жгучие муки совести, которые не могут унять все сокровища, которые брошены джиннами к ногам Каратис.

Стиль этой части повествования стоновится тяжелым и мрачным, в особенности при изображении дворцов Истахара и подземного мира и при изображении самого Эблиса, сидящего на огненном шаре. Но автор явно приближает его к своим современникам: он казался молодым человеком лет двадцати с правильными и благородными чертами, а в его глазах отражались отчаяние и надменность.

Необходимо отметить, что на формирование эстетики предромантизма оказало влияние учение Э. Берка (1729–1797). Полемизируя с просветителями, он предложил вместо категории прекрасного категорию возвышенного, тесно связанного с ужасным, поскольку человеческие эмоции связаны не только с удовольствием, но и болью, страданием. Т.о., эстетика «готического романа» получила теоретическое обоснование уже в процессе своего развития.

Несомненно, что А. С. Пушкин был знаком со сказочной повестью «Ватек» и, возможно, строки «И угль, пылающий огнем, во грудь отверстую водвинул» в стихотворении «Пророк» (1826) возникли под влиянием финальной сцены этого произведения, единственного, которое пережило своего творца. Знаменитый 38 псалом Давида, где звучит песнопение «Воспламенилось сердце во мне, в мыслях моих возгорелся огонь: я стал говорить языком моим» (Библия 1988: 551) повлиял в свое время и на Данте при создании «Vita nova», и на Пушкина, вдохновенно заговорившего библейским языком. В то же время реминисценция на один из мотивов произведения Бекфорда, автора 18 в., написанного на французском языке, вошла как яркий и выразительный символ в образную систему стихотворения «Пророк», ставшего своеобразным свидетельством творческой зрелости гениального русского поэта.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. *Библия.* (1988). Москва: Издание Московской Патриархии.
2. *Литературные памятники* (1967). Гораций Уолпол. Жак. Казот. Уильям Бекфорд. Ленинград: Наука.
3. Соловьева Н. А. (1988). *У истоков английского романтизма.* Москва: Издательство МГУ.
4. *Тысяча и одна ночь* (1983). Т. 5. Душанбе: Ирфон.
5. Маруф–башмачник. *Избранные сказки, рассказы и повести из «Тысячи и одной ночи»* (1986). Москва: Правда.
6. Шифдар, Б. (1975). *Вступительная статья к книге «Тысяча и одна ночь».* Библиотека Вссемирной литературы. Москва: Худ. литература.
7. Борисов, Ю. В. (1991). *Дипломатия Людовика XIV.* Москва: Международные отношения.
8. *Французская живопись: XVI – первая половина XIX века.* ГМИИ им. А. С. Пушкина (1991). Москва: Изобразительное искусство.
9. Джебран Калил Джебран (2003). *Пророк.* София.

Nina Hayrapetyan

THE THEME OF THE RULER AND POWER IN BECKFORD'S ARABIAN TALE 'VATHEK'

Summary

Vathek was written during a time period when European culture was strongly influenced by Orientalism. In Zhirmunsky's definition Beckford's *Vathek* is a Gothic novel in Oriental attires. *Vathek* is closely connected to *Arabian Nights'* motifs. The comparative analysis of Beckford's *Vathek* and some tales of *Arabian Nights* shows that Beckford's tale is not merely a romantic interpretation of oriental themes but a kind of revelation, even a parody of Arabian tales, rather close to grotesque. The institution of power is completely discredited by Beckford. Even though the ruler he presents is highly educated, he is unfair and oppressive. The problem of interrelations of the ruler and his subjects are still of major importance in our days.

Եվա Զաքարյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐՎԻՇԸ

Հեքիաթներում արևելքի երկրների թափառական կերպարներ են՝ անտուն, անընտանիք, հմուտ արհեստների, երաժշտության, արվեստների, գուշակության, բուժման, հմայությունների մեջ, հասարակությունից դուրս, բայց կապված հավասարապես բոլոր խավերի հետ: Նրանց ողջ կյանքն անցնում է ճանապարհներին: Արևելքում նրանք ժողովրդական առօրյա դեմքեր են եղել, աչքի ընկել ճարտար լեզվով, ազատախոհությամբ, արդարամտությամբ և համարվել են ժողովրդի մեջ իշխող տրամադրությունների արտահայտիչներ: Նրանք ազատորեն շրջում են երկրեերկիր, քաղաքից քաղաք, մուտք գործում բոլորի՝ և՛ հասարակ մարդկանց, և՛ թագավորների տները, գիշերելու տեղ խնդրում, վայելում բոլորի հյուրասիրությունը: Նրանց առջև բաց են բոլորի դռները (ԵԼՄ Գ, 153): Նրանք միջնորդներ են հասարակության տարբեր շերտերի, մարդկանց ու սրբազան, խորհրդավոր ոլորտների, տարբեր քաղաքակրթությունների միջև: Նրանց ամենուր սիրով են ընդունում, բայց նաև՝ վախենում են:

Հմուտ լինելով կախարդությունների մեջ՝ երբեմն նրանք տեր են դառնում անսահման գանձերի, բայց հիմնականում ունեզուրկ են, աղքատ, կեղտոտ, վատ հագնված, չսափրված: Հեքիաթներում (երբեմն էլ իրականության մեջ) հաճախ թագավորներն են դերվիշի հագուստների մեջ ծպտված շրջում իրենց երկրում, տեսնելու մարդկանց վիճակը:

Դերվիշների մեջ կան չարագործներ ու կախարդներ, որոնք իրենց հմայական զորությունն օգտագործում են ի չարս: Մեծ մասամբ նրանք են, որ հեքիաթի հերոսին մղում են նվիրագործական փորձությունների, արգելքներ ու խոչընդոտներ ստեղծում նրանց ճանապարհին, նվիրագործողի իրենց գործառույթը համեմելով բացասական երանգներով: Երբեմն այդ բացասականն այնքան է թանձրանում, որ դերվիշին փոխարկում է զուտ թշնամական կերպարի, որոշ դեպքերում դարձնելով հերոսի կնոջն առևանգող Ջանփոլատին կամ երիտասարդ աղջիկներին սպանող Կապույտ Մորուքին փոխարինողներ (ՀԺՀ VIII, 755–756, XII, 349 և այլն), աղբյուրի տակ ապրող կախարդներ (ԷԱԺ Դ, 96), դիվային հատկություններ ձեռք բերած և երբեմն էլ փորձությունները չհաղթահարող պատանիներին ուտող սարսափելի մարդակերներ (ՀԺՀ VII, 607, IV, 311, VIII, 239):

Դերվիշները միանշանակ կերպարներ չեն, բազմաբնույթ են, բազմադեմ, տարբեր, խայտաբղետ: Նրանց մեջ շատ են նաև բարիները, որոնք իրենց գիտելիքներով ու հմայությամբ օգնում են նեղն ընկածին: Բուժման մեջ հմուտ են, նրանք գուշակում են հիվանդության պատճառն ու բուժում առաջարկում: Իմաստուն են, տեղյակ ամեն ինչից, խորագետ, գրագետ, հաճախ իրենց մոտ հմայական գրքեր են պահում (ՀԺՀ XIII, 471): «Դավրեշներ խելոք ու սարբաստ (=համարձակ, ազատախոհ) կէղնին» (ՀԺՀ X, 304): Այդ պատճառով էլ անգամ թագավորներն են դիմում նրանց խորհրդին (ՀԺՀ IX, 20–21): Ամենագետի իրենց հատկություններով հաճախ դառնում են հեքիաթի հերոսի օգնականն ու

խորհրդատուն (ՀԺՀ XV, 75, XII, 496, IV, 461, ԱՀ XXII, 165), անգամ գումարի դիմաց խորհուրդներ են տալիս (ՀԺՀ XIII, 282–283, 295): Նրանց հասու են ոչ միայն վերերկրային գիտելիքներն ու առեղծվածները, այլև տեղյակ են մարդկային հոգու գաղտնիքներին, նրանց թուլություններին, գաղտնի ձգտումներին (ՀԺՀ XIII, 471), հաճախ դառնում են լուր տանող–բերողներ ու զանազան գործեր կարգավորող միջնորդներ (ՀԺՀ IX, 431–434): Նրանց իշխանությունը տարածվում է նաև կենդանիների վրա: Լավ օձահմաներ են: Մի հեքիաթում իրանցի դերվիշը օձերին թույլ է տալիս փաթաթվել երեխայի վզով, ինքն էլ արաբերեն աղոթք է ասում, իբրև թովում է, որ երեխաներին օձ ու կարիճ չխայթի և փող հավաքում (ԷԱԺ Ա, 236): Այլ տեղ վիրավոր ամուսնուն փնտրող աղջիկն ականատես է լինում, թե ինչպես երկու դերվիշներ «շվացնում» են, «պետ–պետ» օձեր են հավաքվում, դերվիշները նրանցից հարցնում են «հազար ու մեկ ցավի ու վերքի դեղ ու դարմանի» մասին, և այստեղ աղջիկը լսում է նաև ամուսնուն բուժելու միջոցը (ԳՍ Ե1, 452–453):

Այլ տեղ թագավորի որդու կինն ամուսնությունից ի վեր 15 տարի է՝ չի խոսում: Ամուսինը խնդրում է դերվիշին, որ թուղթ բացի, որ կինը կարողանա խոսել: Դերվիշն ասում է, որ նա համր չէ, այլ պատճառ ունի չխոսելու, և առաջարկում երեք որդիներին երեք տարբեր գույնի ձվեր բաժանել, որ նրանք կռվեն, մայրը միջամտի և խոսի (ՀԺՀ XIII, 446):

Մի հեքիաթում դերվիշը հանդիմանում է թագավորին ու թագուհուն՝ նրանց թաքուն չար մտքերի համար, որի պատճառով որդին կույր է, խուլ ու համր: Դերվիշի մոտ թագավորն ու թագուհին խոստովանում են, մեղա գալիս, նոր միայն որդին բուժվում է (ՀԱԲ 14, 149): Դերվիշն այստեղ բարոյական չափորոշիչի դերում է հանդես գալիս և նպաստում երկրի ղեկավարի բարոյական կատարելագործմանը:

Նույն կերպ մի հեքիաթում դերվիշը առատ ողորմություն տվող անզավակ թագավորի կնոջը խորհուրդ է տալիս, որ նրանք անարդար չբանտարկեն, չկախեն մարդկանց, վերադառնան «ասսու ճանապարհին», մատաղ անեն, մոմ վառեն, և աստված որդի կտա: Նրանք հետևում են դերվիշի խորհրդին և զավակ ունենում (ՀԺՀ VIII, 201):

Սովորաբար դերվիշը, տեսնելով մարդկանց, միանգամից հասկանում է նրանց «դարդը» (ՀԺՀ XIII, 74, XV, 319, XIV, 41, ԷԱԺ Բ, 376), փորձում բուժել: Կամ այդ իմանում է՝ վիճակ, «ռամ» գցելով (ՀԱԲ 15, 54, ԷԱԺ Բ, 234), կամ հարցեր ուղղելով՝ քայլ–քայլ պարզում է ճշմարտությունը, խորանում դիմացինի վշտի պատճառի մեջ, բուժում առաջարկում: Երբեմն դա անում է անհատույց, երբեմն էլ հատուցում պահանջում կամ պայման է դնում՝ հետագայում ստանալու հատուցումը (ՀԺՀ VI, 116–118):

Դերվիշի ամենաբնորոշ բուժական գործառույթը ամլությունը վերացնելն է: Մի տարբերակում նա «ճժու դեղ» է ծախում (ՀԺՀ XIII, 102), այլ տեղ՝ 40 տեսակ դեղ է ծեծում սանդի մեջ, տալիս թագավորին, որ խմի ու զավակ ունենա (ԷԱԺ Բ, 234): Բայց ամենից տարածված «միջոցը» խնձորն է, որ կիսում են թագավորն ու թագուհին, ուտում և ինն ամիս անց զավակի տեր դառնում:

Ամենավաղնջական ժամանակներից սկսած մարդկային քաղաքակրթության կարևորագույն տոներն ու ծիսակատարությունները ձոնված են եղել բեղմնավորության, արգասավորության, պտղաբերության աստվածներին: Նրանց փառաբանել են, մեծարել, քանի որ նրանց պարգևած բերքի, բարիքների առատությունից է կախված եղել մարդկանց բարօրությունը: Պատկերագրության

մեջ ստվար թիվ են կազմում բեղմնավորության խորհրդանիշերը: Աշխարհաստեղծման սկիզբը հենց համարվել է արաման արդյունք, որում էական դեր է վերապահվել հայր–երկնքի ու մայր–հողի սեռական մերձեցմանն ու հողի, երկրի բեղմնավորմանը:

Մարդկանց բեղունությունն էլ բարիք է համարվել: Ամուսնացող զույգերին ամենակարևոր բարեմաղթանքները նրանց բազմանալուն, սերունդ տալուն, շատ զավակներ ունենալուն են վերաբերում: Իսկ ամլությունը և սեռական անկարողությունը համարվել են անեծք ու պատուհաս, մեծագույն դժբախտություն:

Հեքիաթներում հաճախ է հանդիպում ամուլ, անզավակ, դժբախտ թագավորի կերպարը: Ամլությունը, մանավանդ թագավորինը, համարվել է հասարակական, սոցիալական հարաբերությունների ներդաշնակության խախտման արդյունք, դրա դիմաց աստծո սահմանած պատիժ, որի վերացմանն ուղղված ծեսեր ու զոհաբերություններ էին կատարում, սրբերի դուռը գնում, դիմում գուշակների օգնությանը: Ազգագրական աղբյուրները լի են ամլության դեմ կատարվող հազար ու մեկ գործողությունների նկարագրություններով ու հեքիմական դեղատոմսերով: Մինչդեռ հեքիաթներում այդ միջոցներն այնքան էլ բազմազան չեն:

Անզավակ մարդու վիշտը մեծ է: Որքան էլ հարուստ է, «մալ ու դովլաթի տեր», բայց աչքին չի երևում, քանի որ «մի պտուղ չուներ», որ իրենից հետո ունեցվածքը վայելեր, և պատրաստ էր ողջ թագավորությունը տալ հանուն ժառանգ ունենալու (ՀԺՀ II, 222–224): Մի հեքիաթի անզավակ հայրն իր ողջ հարստությունն է ծախսում հեքիմների ու գրբացների վրա, որ մի զավակ ունենա, բայց նրանք օգնել չեն կարողանում (ՀԺՀ X, 62): Քանի որ ամլությունը համարվել է աստծո պատիժ, ամեն ինչ արել են՝ նրա գթասրտությանն ու ողորմածությանն արժանանալու համար: Էլ սրբի դուռ գնալ ու ողորմություն բաժանել (ՀԺՀ II, 189), էլ ժամում, մեջիթում աղոթել, Քուռ գետի վրա կամուրջ գցել, ժամ կառուցել (ՀԱԲ 15, 105), սովի տարում աղքատներին ցորեն բաժանել (ՀԺՀ VI, 140), ողորմություն բաշխել ժողովրդին (ԱՀ XIV, 100)՝ արդյունքում երբեմն աստված ողորմում է և զավակ տալիս:

Սակայն միշտ չէ, որ այս միջոցներն օգնում են անզավակ ամուսիններին: Եվ այստեղ է, որ օգնության է հասնում դերվիշը, հանկարծակի հայտնվում և խոստանում փարատել անպտուղ ամուսինների վիշտը: Երբեմն նա գիր է անում, որի վարպետն է, անզավակ թագավորի կինը հղիանում է, որդի ունենում (ՀԺՀ VIII, 38): Ավելի հաճախ նա խնձոր է հանում իր ծոցից, տալիս թագավորին, որ նա այն ուտի իր կնոջ հետ, և երեխա ունենան:

Խնձորը տարողունակ ու բազմարժեք խորհրդանիշ է, որը նշանակում է և՛ սեր, և՛ կուսություն, և՛ անմահություն պարգևող պտուղ: Անմահական խնձորը երիտասարդացնում է ծերին և բուժում հիվանդին (ՀԺՀ XIV, 319, 468–469): Անմահական խձորով և ջրով պառավը կենդանացնում է մասնատված տղային (ՀԺՀ XV, 132–133): Անմահական խնձորը մոտեցնելով մահամերձի քթին, Գաբրիել հրեշտակը խաղաղությամբ, առանց չարչարելու առնում է արդար մարդու հոգին (ԷԱԺ Դ, 197): Խնձորը նաև կյանքի խորհրդանիշ է: Կինն այրում է կենդանակերպ ամուսնու կաշին, ամուսինը աղավնի է դառնում, թռչում (մահվան խորհրդանիշ): Կինն առնում է երեք խնձոր և գնում փնտրելու ամուսնուն, ճանապարհին խնձորները բաժանում է ամուսնու մասին լուր տվողներին, վերջին խնձորը տալով՝ սպառվում է նաև իր կյանքը, ինքն էլ աղավնի է դառնում, ընկերանում ամուսնուն, և միասին գնում են ապրելու ծովի մեջ (=այն աշխարհում) (ՀԺՀ VIII, 19): Անմահություն

փնտրող տղային «ֆալաքը» (ճակատագիր) երեք անմահական խնձոր է տալիս, տղան դրանք բաժանում է ուրիշներին և ինքը մեռնում (ՀԺՀ II, 320–322):

Խնձորը սիրո միջնորդն է: Միմյանց խնձոր ուղարկելով՝ հայ աղջիկն ու տղան խոստովանել են իրենց սերը: Այդ դերն արտացոլված է նաև հեքիաթներում: Աղջիկն իր հավանած փեսացուին խնձոր է նետում՝ բոլորին հայտնի դարձնելով իր ընտրությունը[1] (ՀԺՀ XIV, 380): Տղան թագավորի աղջկան է տալիս անմահական խնձորը՝ իբրև սիրո նշան կամ ամուսնության առաջարկություն (ՀԺՀ XV, 37): Խնձորի մեջ դրած մատանիով հերոսը թագավորի աղջկան իմաց է տալիս իր վերադարձի մասին (ՀԺՀ XIV, 23): Խնձորը սիրո և հավատարմության ուխտի ծիսական փոխարինողն է: Այսպես, շեյխի աղջիկը արհեստավոր տղային խոստանում է, որ կսպասի նրան ու կամուսնանա հետը, եթե տղան գնա արհեստի մեջ հմտություն ձեռք բերելու, և որպես նշան՝ խնձոր է տալիս, որ քանի չի թոռոմել՝ կսպասի նրան (ՀԺՀ XIV, 92):

Ոսկե խնձորը խորհրդանշում է հարսնացու աղջկան. քոչվորների առաջնորդի վրանի վրա ոսկե խնձոր է դրված, դա նշանակում է, որ նա «ճրագի պես» շողշողուն, ամուսնացնելու տարիքի աղջիկ ունի (ԵԼՄ Գ, 29–30): Այստեղ խնձորը խորհրդանշում է նաև աղջկա անարատությունը:

Խնձորը նորընձյուղ կյանքի սկզբնավորողն է. պառավը աստծուց երեխա է խնդրում, աստված երկնքից երեք խնձոր է ուղարկում, դրանք պառավը դնում է օրոցքում, խնձորները մի քանի օր անց տղաներ են դառնում (ՀԱԲ 20, 78–79): Այս գործառույթով խնձորը պտղաբերության, բեղմնավորության, սեռական սիրո խորհրդանիշ է, կապված Աստղիկ դիցուհու պաշտամունքի հետ (Մելիք–Մուրադյան, 2000, 115 Ե), նրա բուսական բնորոշիչներից մեկը:

Խնձորը նաև սեռական հասունության, առնական ուժի նշան է. թագավորի քառասուն որդիները պատրաստ են ամուսնության, սակայն հայրը դա չի նկատում: Թագավորի փոքր որդին մի խնձոր է բերում հորը և հարցնում, թե ինչ կլինի խնձորը, եթե երկար պահեն: Հայրն ասում է՝ կփտի: Որդին նեղացած ասում է. «Բա մենք չենք հոտո՞ւմ, ինչի՞ մեզ չես աղջիկ ուզում» (ՀԺՀ VI, 677):

Սեռափոխ եղած՝ տղա դարձած աղջիկ–փեսան խնձոր ուտելով լրիվ առնականանում է և գնում կնոջ անկողինը (ՀԺՀ XIV, 182–184): Նույն հեքիաթի մի այլ տարբերակում անմահական խնձոր բերելու ուղարկված և տղա դարձած աղջիկ–փեսային երբ հարցնում են, թե բերե՞լ է խնձորը, նա պատասխանում է. «Խնձորը ես եմ, ի՞նչ խնձոր բերեմ: Դուք ինձ ղրգել եք, որ ես դառնամ խնձոր, ես էլ դառել եմ ու էկել եմ, էլ ի՞նչ եք ուզում» (ՀԺՀ VIII, 789): Այստեղ խնձորը տղամարդու առնական զորության անթաքույց նշանակ է:

Խնձորը նաև սեռական գործողություն է խորհրդանշում[2]. չոբանը հասնում է խնձորի այգին և տիրանում թագավորի աղջկան (ՀԺՀ V, 360): Դերվիշը անզավակ թագավորին խնձոր է տալիս, որ ինքն ու կինն ուտեն, կճեպները տան ձիուն, կինը զույգ զավակ ունենա, ստերջ ձին՝ զույգ քուռակ, որոնք հետագայում դառնում են նույն խնձորից ծնված թագաժառանգի հավատարիմ և իմաստուն օգնականն ու խորհրդատուն: Թագավորը գալիս է կնոջ անկողնու մոտ, գոտկից խնձոր է

1 Այս դրվագը կա նաև «Սասնա ծռեր» էպոսում: Խանդութը Դավթին տեսնելով, խնձոր է նետում նրան (ՍԾ Ա, 34):

2 Անեկդոտները և զվարճախոսությունները ևս տալիս են դրա ապացույցները. մի շատ «ման եկած» աղջկա հարս են տանում և հաջորդ օրը ետ ուղարկում հորանց տուն: Աղջիկը ճամպրուկը ձեռքին մտնում է իրենց թաղը, տղաները հեգնում են. «Էս ի՞նչ է, կարմիր խնձո՞րդ ես բերել»: «Կարմիր խնձո՞ր թողեցիք... կանաչ–կանաչ կերաք»,– պատասխանում է աղջիկը (ԴԲՆ):

ընկնում, կինն ասում է. «Ես ինչ խնձոր է, երիտասարդությունդ նո՞ր միտքըդ գըյնի կը» (ՀԺՀ IV, 302): Սեռական սիրո խորհրդանիշ է նաև աստվածաշնչյան իմացության ծառի պտուղը: Ս. Գրքում ոչ մի տեղ նշված չէ պտուղի տեսակը, սակայն բոլոր ժամանակների պատկերագրության, գեղանկարիչների գործերում այն խնձորի տեսքով է պատկերված և այդպես էլ ընկալվել է ս. Գրքի բանավոր ու գրավոր մեկնություններում: Այդ պտուղի կեսն ուտում է Եվան, կեսը տալիս Ադամին, և միասին գործում են մարդկության առաջին մեղքը՝ սեռական սիրո հաճույքը վայելում: Բացառված չէ, որ աստվածաշնչյան պատումի ավելի հին, բանավոր պատմություններում սեռական գործողությունը տեղի ունեցած լինի Եվայի և նրան գայթակղող ու խաբող օձի միջև, ինչպես դա եղել է Լիլիթի դեպքում: Կանոնիկ Աստվածաշնչում Լիլիթ չկա, այդ դավաճանության, նրանց սեռական կապի գաղափարը խորհրդանշական կերպով արտացոլված է խնձորի մեջ, որը տրվում է Եվային Սատանայի կողմից: Օձը արական ուժի ֆալլիկ խորհրդանիշ[1] է և ավելի շատ նրան է հատկանշում գայթակղողի դերը, որով այս պատմությունը կմիավորվի խեթական հնագույն առասպելներից[2] սերող, կամ ավելի հին ընդհանուր արմատներ ունեցող առասպելի հետ, որը պատմում է ամպրոպային աստծուն օձի հետ դավաճանող կնոջ և նրանից ծնված զավակի մասին: Հայ առասպելաբանության մեջ դրան համարժեք է Արտաշեսի, Սաթենիկի և վիշապազուն Արգավանի սիրային եռանկյունին: Արտավազդն ամենայն հավանականությամբ այդ սիրային կապից է ծնվել, որքան էլ վիպական պատմությունները փորձում են մեղմել և վիշապազուն հորից ժառանգած դիվական գծերը մեկնաբանել իբրև՝ «վիշապազունք մանուկ Արտավազդին գողացան և նրա տեղը դրին դև» (Մովսես Խորենացի 1981, 233):

Հեքիաթներում կնոջ դավաճանության պահը բացակայում է, փոխարինվելով աստվածաշնչյան մոտիվը հիշեցնող խնձորով. անզավակ, ամուլ թագավորի կինը հղիանում է դերվիշի տված խնձորից, որը սեռական գործողության ակնարկ է ենթադրում: Դերվիշի խնձորից հղիանալու մասին հեքիաթները բազմաթիվ են, որը վկայում է կայուն, արմատացած առասպելաբանական հենքի ու վիպական կարծրատիպի առկայության մասին: Հեքիաթների մի մասում դերվիշի դերը սահմանափակվում է միայն «բեղմնավորիչ» խնձոր տալով: Որոշ դիպաշարերում դերվիշն իրեն որոշակի իրավունքներ է վերապահում ծնված երեխաների նկատմամբ. նա կամ պահանջում է երեխաներին անվանակոչելու իրավունքը, կամ նույնիսկ տարիներ անց վերադառնում է ծնված ու հասակ առած որդու (մի տարբերակում՝ դստեր) ետևից: Այսպիսի հեքիաթներում նրա դերակատարումը երկակի է, հիմնականում բացասական. երբեմն նա նաև օգնում է տղային, բայց մեծ մասամբ ուզում է օգտագործել իր նպատակների համար, ապա վերացնել

1 Չբեր կանայք օձի շապիկ էին պահում շորերում՝ հղիանալու ակնկալիքով (Ստեփանյան 2007, 59): Երազում անկողնու մեջ օձ տեսնելը նշանակում է ամուսնություն կամ սեռային միություն (Տիեզերական երազահան 1991, 109): Հին հունական բժշկության աստված Ասքլեպիոսի՝ Էպիդավրոսի սրբավայրում գտնված քարե սալերի վրա պահպանվել են արձանագրություններ օձի միջոցով կանացի չբերության բուժումների մասին. սրբավայրում ինկուբացիայի ժամանակ կինը քուն է մտնում և երազում տեսնում, որ օձը պառկած է իր փորին: Հետագայում կինը մայրանում է և հինգ երեխա ունենում: Մեկ այլ կին երազում տեսնում է, որ ինքը մերձենում է օձի հետ, դրանից հետո մեկ տարվա ընթացքում նա երկու որդի է ունենում (Жебелев 1931; 328):

2 Մեծ աստվածուհի Աստարտեն մերկ մարմնով գայթակղում է Խաղամու օձին, միասին գնում են: Այս դրվագն անթաքույց ակնարկ է նրանց սեռական կապի մասին (Наговицын 2004: 43):

նրան՝ հանդես գալով տղային փորձությունների մղող նվիրագործողի դերում: Տարբերակներ կան, որոնցում դերվիշի անսահմանափակ իրավունքները բացատրություն ունեն. նա թագավորի տղային համարում է իր որդին: Հաճախ այդ միտքը տրվում է մի փոքր անորոշ. տարիներ անց վերադարձած դերվիշը տեսնում է տղաներին խաղալիս: «Կա ու չկա, էսոնք իմ խնձորի տղէկներն են»,– ասում է նա (ԷԱԺ Բ, 376): Երբեմն տղային թագավոր հայրն անվանում է «Դավրիշի տղա» (ՀԺՀ VI, № 23, «Դավրիշին տղան»): Տղայի ետևից վերադարձած դերվիշն ասում է. «Դե ես եկալ ըմ տըղաս տանեմ» (նույն տեղում, 117): Տղան նրան հաճախ «հայր» է կոչում, իսկ դերվիշը նրան «որդի» է անվանում (ԱՀ XXII, 162): Մի քանի տարբերակներում դերվիշը թագավորի մոտից վերցրած երեխային բացահայտ ասում է. «Բալամ, տյու իմ ախչիյն ես, խո թաքավորուն չես» (ՀԺՀ XIV, 42), «Բալամ, իմ ձեռ չէրթա, քյե սպանեմ, տյու իմ տղեն ես, ո՛չ թե թակավորուն» (ՀԺՀ XV, 325):

Ժողովրդական պատկերացումներում ամուսնական զույգի ամլության պատճառ հիմնականում կինն է համարվել[1]: Բայց հեքիաթների նյութի քննությունը հուշում է մեզ հակառակը: Երբ դերվիշն անզավակ թագավորի երեք կանանց երեք խնձոր է տալիս, որ նրանք ուտեն ու հղիանան (ՀԺՀ VIII, 697–698) կամ մոլլան անզավակ մարդու յոթ կանանց համար գիր է անում և նրանց մի–մի խնձոր տալիս, որ զավակներ ունենան (ՀԺՀ VIII, 298), այստեղ արդեն տղամարդու «մեղքի» բաժինն ակնհայտ է:

Հայկական հեքիաթներում դերվիշների բուժելու գործառույթը այդ կերպարի կարևորագույն և նրան բնորոշող կողմերից մեկն է, սակայն այդ բարդ ու հակասական կերպարների ողջ բազմազանությունը բացահայտելու համար նրանց այլաբնույթ դրսևորումները ևս հետաքրքիր են և արժանի մանրակրկիտ քննության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՀ XIV – *Ազգագրական հանդէս* (1906), գ. 14, Թիֆլիս, տպ. Մ. Դ. Ռօտինեանցի:

ԱՀ XXII – *Ազգագրական հանդէս* (1912), գ. 22, Թիֆլիս, տպ. Մ. Դ. Ռօտինեանցի:

ԳՍ Ե1 – Սրվանձտյան Գ. (1978), *Երկեր*, հ. 1, Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ԴԲՆ – *Դաշտային բանահյուսական նյութեր* (իմ գրառումներից);

ԵԼՄ Գ – Լալայեան Ե. (1915), *Մարգարիտներ հայ բանահիւսութեան*, հ. Գ, Հայոց ազգագրական ընկ., Թիֆլիս–Վաղարշապատ:

ԷԱԺ Ա – *Էմինեան ազգագրական ժողովածու* (1901), հ. Ա, Փշրանք Շիրակի ամբարներից: Հավաքեց՝ Ա. Մխիթարեանց: Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց հրատ., Մոսկուա–Ալեքսանդրապօլ:

ԷԱԺ Բ – *Էմինեան ազգագրական ժողովածու* (1901), հ. Բ, Ժողովրդական վէպ և հեքիաթ: Հավաքեց՝ Ս. Հայկունի: Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց հրատ., Մոսկուա–Վաղարշապատ:

ԷԱԺ Դ – *Էմինեան ազգագրական ժողովածու* (1902), հ. Դ, Ժողովրդական հեքիաթ: Հավաքեց՝ Ս. Հայկունի: Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց հրատ., Մոսկուա–Վաղարշապատ:

ՀԱԲ 14 – Գրիգորյան Ռ. (1983), Գեղարքունիք // *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 14, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

1 Ժողովրդական բժշկությունը բազմաթիվ միջոցներ է առաջարկում կանանց չբերության բուժումների համար:

ՀԱԲ 15 – Ղազիյան Ա. (1983), Արցախ // *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 15, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԱԲ 20 – Գևորգյան Թ. (1999), Լոռի // *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 20, Երևան, «Գիտություն»:
ՀԺՀ II – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1959), հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ IV – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1963), հ. IV, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ V – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1966), հ. V, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ VI – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1973), հ.VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ VII – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1979), հ. VII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ VIII – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1977), հ. VIII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ IX – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1968), հ. IX, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ X – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1967), հ. X, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ XII – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1984), հ. XII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ XIII – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1985), հ. XIII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ XIV – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1999), հ. XIV, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
ՀԺՀ XV – *Հայ ժողովրդական հեքիաթներ* (1998), հ. XV, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Մելիք–Մուրադյան Ե. (2000), Աստղիկ դիցուհու աղերսները Վարդավառի տոնակատարության հետ // *«Էջմիածին»*, հոկտեմբեր Ժ, № 10, էջ 110Ե–118Ե:
Մովսես Խորենացի (1981), *Հայոց պատմություն*, Երևան, Երևանի համալս. հրատ.:
ՄԾ Ա – *Սասնա ծռեր* (1936), հ. Ա., Երևան, Պետական հրատ.:
Ստեփանյան Ա. (2007), Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը // *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 22, Երևան, «Գիտություն», էջ 5–128:
Տիեզերական երազահան – Գրիգոր Յ., Սամուր Ֆաթիմի (1991), *Տիեզերական երազահան*, Երևան,«Կամար»:
Жебелев С. А. (1931). Эпидаврийская ареталогия // *Известия Академии Наук СССР*, 3, Отделение общественных наук, Москва: изд. АН СССР, с. 321–345.
Наговицын А. Е. (2004). *Магия хеттов*. Москва: Академический проект: Трикста.

Eva Zaqaryan

THE DERVISH IN ARMENIAN FOLK TALES

Summary

The dervish is one of the most unique Oriental personages in Armenian fairy tales. In most cases he is a mendicant, homeless character, a skillful craftsman and a musician, a fortuneteller and an all–knowing sage often skilled in the magic arts. The fairy tale dervish is an ambiguous figure: he can be wicked and helpful; having no distinct status in the society, he is at the same time connected with all its layers as is equally welcome into huts and courts. Curing barrenness and sterility is his best–known healing function. Undoubtedly the semantics of apple is multilayered in fairy tales. The dervish's apple is an explicit sexual metaphor and it is clear why he almost always claims right over the child conceived from the magic apple.

Սվետլանա Վարդանյան

ԽՈՍՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՔԻԱԹԻ ԺԱՆՐՈՒՄ

Հեքիաթը՝ որպես յուրահատուկ ժանր, ենթադրում է բանավոր խոսքի այնպիսի վերարտադրություն, որն ընդունակ է պահելու ունկնդրի ուշադրությունն ու հետաքրքրությունը պատմածի կամ ընթերցածի հանդեպ՝ զարգացնելով նրա մոտ վառ երևակայություն ու մտքի թռիչք: Այդ նպատակին է միտված ծառայելու խոսքի արտահայտչականությունը, որն առանձնանում է հնչերանգի, ռիթմի, առոգաբանական, հարալեզվական և շարժաբանական միջոցների հարուստ բազմազանությամբ: Ավելացնենք, որ նշված միջոցների կիրառումը պետք է լինի տեղին՝ պայմանավորված տեքստի բովանդակությամբ ու կառուցվածքով:

Հարկ է նշել, որ հեքիաթի ժանրը մինչև այժմ դեռևս չի արժանացել խոր ու համակողմանի ուսումնասիրության հնչյունաբանության տեսանկյունից: Հնչյունաբանական տարբեր ուղղությունների նվաճումների տեղափոխումը հեքիաթի ոլորտ՝ խթան կհանդիսանա հեքիաթասացի արվեստն ավելի բարձր գիտական հիմքի վրա դնելու համար:

Խոսքի արտահայտչականությունը սկսվում է հատույթային մակարդակից, քանի որ այդ մակարդակով են պայմանավորված հնչյունների հստակ արտաբերումը, խոսքի մաքրությունն ու կուլտուրան, որոնք կարևոր գործոններ են հեքիաթասացի պատմողական կամ ընթերցողական արվեստի համար: Մաքուր և հստակ արտասանության շնորհիվ է, որ հեքիաթասացը մատչելի ու ընկալելի է դարձնում իր խոսքն ունկնդրին: Ունկնդրի վրա ներգործելու հզոր միջոց է նաև հնչյունների գեղագիտական գործառույթը, երբ մենք դիտարկում ենք հեքիաթի տեքստը հնչաոճաբանության տեսանկյունից[1]: Տեքստի բարեհնչյունությունը հիմնականում պայմանավորված է հնչյունների «գործիքավորումով»: Որոշակի հնչյունների գերակայությունն ու նրանց երկարաձգումն առանձնակի երաժշտականություն ու ռիթմայնություն են հաղորդում տեքստին՝ դարձնելով այն ունկնդրի լսողության համար ավելի բարեհնչյուն[2]: Առանձնակի հնչեղություն են տալիս տեքստին ձայնավորներն ու ձայնորդներն իրենց հաճախակի կրկնությամբ ու երկարաձգումով: Ռնգային ձայնորդների հարևանությամբ ձայնավորները որոշակի ռնգայնություն են ստանում, դարձնելով հնչող խոսքն ավելի երգեցիկ, որը նպաստում է ունկնդրին խորասուզելու հեքիաթին բնորոշ «յուրահատուկ

---

1 Հնչաոճաբանությունը որպես գիտակարգ՝ ուսումնասիրում է հնչյունների գեղագիտական գործառույթը: Այս գիտակարգի ստեղծման գաղափարը պատկանում է Ն.Ս. Տրուբեցկոյին: Տե՛ս Н.С. Трубецкой, «Основы фонологии», М., 1960, сс. 1–7:

2 Բարեհնչյունության մասին ուսմունքը ծագել է դեռևս մ.թ.ա. V դարում: Մանրակրկիտ ուսումնասիրելով հնչյունների ոճական գործառույթը՝ հին հունական փիլիսոփաները բարեհնչյունությունը համարում էին խոսքի գեղեցկության համար կարևոր գործոն ճարտասանական արվեստում: Այս առիթով Ցիցերոնը հետևյալն է ասել. «Այսպիսով, երկու բան կա, որ շոյում է ականջը՝ հնչյունները և ռիթմը»: Տե՛ս Античные теории языка и стиля, под ред. О.М. Фрейденберг, М.–Л., 1936, с. 227.

տրանսի» մեջ: Այս ամենն իր ցայտուն դրսևորումն է ստանում անգլերեն լեզվով տեքստում: Այսպես օրինակ՝

The Lion and the Goat

|| 'Once • upon a ,time | there was an 'old • she- ˎgoat. || 'One ,day, | when it was 'getting ,dark,| she was 'returning ,home | with 'many \ other ˏgoats. || 'As she was • old and ,weak, | she 'got ˎ tired and was • left ˎbehind. || It 'became \ quite ˎ ˏdark, | and 'as she could \ not find her • way ,back, | she 'decided to • enter a ,cave | that she 'saw \ near ˏby. || 'What was her • surprise | when she 'went ,in | and 'found a \ lion,| • sitting ˎthere. || She was 'terribly \ frightened | and 'stood \ still for a ˏmoment, | 'then she ,thought | of 'what she • could ˎdo.[1] ||

(An Indian Fairy Tale by Mulk Raj Anand, p. 1)

Վերը ցուցադրված հնչյունային պատկերը բնորոշ է նաև հայերեն տեքստին: Այսպես՝

Չկնորսի տղան

||'Գնո՜ւմ են, | • ,գնո՜ւմ՝| 'շատ են • գնում, | թե ,քիչ, | 'ճամփին • տեսնում են 'մի ˎ ,մարդ՝ | 'ջրի վրա • ընկած ,խմում է ու ˎ կանչում. | «'Վա՜յ ˎջուր, | 'վա՜յ ˎջուր, | 'խմեմ, | • ծարավս ˎհովանա»:||

(Հայ ժողովրդական հեքիաթներ, էջ 22)

Հարկ է նշել, որ հնչյունների «գործիքավորումը» պատահական երևույթ չէ հեքիաթի ժանրում: Այն առկա է ոչ միայն անգլերեն, հայերեն, այլև այլ լեզուներով գրված տեքստերում: ***Հնչյունների «գործիքավորումը» հեքիաթի ժանրում միտված է ունկնդրի վրա գեղագիտական ներգործություն թողնելու:***

Խոսքի արտահայտչականությունը չի սահմանափակվում միայն հատույթային մակարդակով: Այն իր ցայտուն դրսևորումն է ստանում վերհատույթային մակարդակում՝ շնորհիվ հնչերանգի, առոգանության, ռիթմի և ասույթավորման:

Հնչերանգը նախադասության մեղեդին է (Vardanian 1996; նաև 2001: 215): Յուրաքանչյուր նախադասություն ունի իրեն բնորոշ հնչերանգը, լինի դա բանավոր թե՝ գրավոր խոսք: Հնչերանգը նախադասության բաղադրիչն է (Vassilyev 1970: 287), և, հետևաբար, այն կարելի է դիտարկել միայն ու միայն նախադասության մակարդակում: Դեռ ավելին, հնչերանգի շնորհիվ է նախադասությունը դառնում լիարժեք ու ավարտուն (Смирницкий 1957: 36):

Ելնելով վերը շարադրվածից՝ կարելի է պնդել, որ հնչերանգի մասին պարզ պատկերացում կարելի է կազմել՝ ելնելով նախադասության տիպերից: Սակայն նախադասությունը կարող է բաղկացած լինել հնչաշարույթներից (синтагмы), որոնք ունեն հստակ հնչերանգային ձևավորում: Այս առումով միանգամայն տրամաբանական է առաջ քաշել հետևյալ հարցադրումը. ի՞նչ հնչերանգային առանձնահատկություններով է օժտված հեքիաթը:

Առաջ քաշած հարցադրմանը հստակ պատասխան տալու համար անհրաժեշտ է մանրազնին ուսումնասիրության ենթարկել հեքիաթի տեքստային կտավը: Եթե մենք այն դիտարկենք շարահյուսության տեսանկյունից, ապա կարող ենք առաջ քաշել հետևյալ դրույթը. հեքիաթի տեքստային կտավը ներկայացնում է

1 (–) նշանը պատկերում է հնչյունի երկարաձգումը:

պատմողական նախադասությունների ամբողջություն, որոնք տեղ–տեղ ընդմիջվում են խոսակցական դարձվածքներով: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում պատմողական նախադասությունների մեջ պարփակված կարճ հնչաշարույթներն իրենց հնչերանգային պատկերով: Այսպես՝

The Lion and the Goat

|| She 'walked • boldly \ up to the the ,lion | as if she were \ not afraid of him at ˎall. || The 'lion • looked at ,her, | 'looked and ,looked, | 'not • knowing \ what to • think of this 'boldness of a ˎgoat. || He ,knew | 'goats had \ never dared to • come \ near ˏhim. || At 'last he ,thought | she could \ not be a ,goat | but must be some 'other • strange ,animal | 'which he had \ not seen ˏbefore. ||

|| “'Who are ˏyou, | 'old ˎone?” | he • asked her. ||

|| “I am the \ Queen of the ˏGoats”, | she ˎreplied. || “I 'came to • devour a 'hundred ,tigers, | 'twenty-five ,elephants | and 'now I am • looking for the 'ten ˎlions”. ||

|| The 'lion was • very much ˎ surprised to hear ˏthis, | and 'believing the goat had • really come to \ devour ,him, | 'got out of the • cave ,saying | that he was 'going to • wash his • face at the ˎriver. ||

Մեկ այլ օրինակ՝

Անմահական խնձոր

|| 'Լինում է, | • չի ,լինում՝ | 'մի ˎթագավոր. | 'սա • ունենում է 'երեք ˎտղա:||

|| Էս 'թագավորի • պալատի ,առաջ | մի 'խաս-այգի է ˎ լինում՝| 'մեջը • անմահական • խնձորի ծառ: || 'Թագավորը ինչ • անում է, | • չի ,անում՝| \ չի կարենում էդ 'անմահական • խնձորի ծառի • պտուղն ˎուտի: || 'Այգեպանները էդ • ծառը ,պահում են, | ,պահպանում, | 'հենց • գալիս է • խնձորի հասնելու ,ժամանակը՝| 'տեսնում են ծառի • վրա | \ ո՛չ • խնձոր ,կա, | \ ո՛չ էլ մի ˎբան: ||

|| 'Էդպես • տարիներ են ˎանցնում: ||

|| 'Մի օր | 'թագավորի • մեծ ,տղան | 'գալիս է • հորն ˏասում. |

| – 'Ա՛յ ˎհեր, | 'էս ,տարի • թող \ ես պահեմ ˏծառը, | 'գուցե • կարենամ | 'էդ • խնձորի • գողին ˎբռնեմ: ||

|– \Դո՛ւ ˏգիտես, | 'ա՛յ ˎորդի,- | 'ասում է ˏհայրը,- | 'թե ,կարաս՝ | 'գնա ˎպահի: ||

(Հայ ժողովրդական հեքիաթներ, էջ 115)

Երկու տեքստերում էլ պատմողական նախադասություններն առանձնացված են երկու–միավոր (||), իսկ հնչաշարույթները՝ մեկ միավոր (|) դադարներով: Օրինակներից պարզ երևում է, որ տեքստային կտավը երկու լեզվում էլ բաղկացած է պատմողական նախադասություններից, որոնք արտաբերվում են ստորին իջնող տոներով: Պատմողական նախադասություններն էլ իրենց հերթին բաղկացած են կարճ հնչաշարույթներից, որոնք արտաբերվում են ստորին բարձրացող, միջին իջնող ու ստորին համաչափ (low level) տոներով: Նշված տոներով արտաբերվող հնչաշարույթներն արտահայտում են մտքի անավարտություն:

Տեքստի հնչերանգային վերլուծությունը ցույց է տալիս, որ հնչերանգը համապատասխանում է նախադասության տիպերին: Պատմողական նախադասությունները, որոնք ավարտուն միտք են արտահայտում, արտաբերվում են ավարտուն հնչերանգով, իսկ նրանցում պարփակված անավարտ հնչաշարույթները՝ անավարտ հնչերանգով: Այս ժանրին բնորոշ հնչերանգային առանձնահատկություններից մեկն այն է, որ այստեղ սակավաթիվ են բարդ տոները՝ իջնող–բարձրացող (∨) և բարձրացող–իջնող (∧), որը պատահական չէ: Հեքիաթը նախատեսված է մանուկների համար, և այն պետք է ունենա պարզ տեքստային կտավ, որպեսզի հեշտ ընկալվի մանուկների կողմից, իսկ պարզ տեքստային կտավին բնորոշ են պարզ հնչերանգային տոներ: Ինչ վերաբերում է առոգանությանը, ապա այն զետեղված է տեքստում կետադրական նշանների միջոցով:

Վերհատույթային մակարդակում հաջորդ արտահայտչամիջոցը ռիթմն է: Այս կապակցությամբ հետևյալ հարցը կարող է ծագել. ինչպիսի՞ն է ռիթմային պատկերը հրաշապատում հեքիաթում:

Ըստ մեր կատարած դիտարկումների՝ հրաշապատում հեքիաթն ունի արձակին բնորոշ ռիթմ՝ իրեն հատուկ ռիթմային կառույցներով: Այդ կառույցները կարելի է վեր հանել ասութավորման՝ արձակի ռիթմի հիմնական հարաչափի միջոցով, որի անմիջական բաղադրիչը հնչաշարույթն է (Akhmanova & Minajeva 1973: 37):

Տեքստային կտավի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հագեցած է կարճ հնչաշարույթներով, որոնք խոսքին որոշակի դինամիզմ ու ռիթմայնություն են հաղորդում, որը կարևոր նախապայման է մանուկ ունկնդրի ուշադրությունը պահելու համար:

Հարկ է նշել, որ հեքիաթի ժանրին բնորոշ է լուրջ հավասարակշռված ռիթմային պատկեր, որը ստեղծվում է տարբեր երկարություն ունեցող հնչաշարույթների հաջորդականությամբ: Այսպես օրինակ՝

Կախարդական սփռոցը

|| 'Լինում է, | • չի ,լինում՝ | 'մի ˎթագավոր: || 'էդ • թագավորը • երեք տղա է ˎունենում: || 'Փոքր ,տղան 'շատ • խելոք է ˎլինում: || 'Ինչ բան որ • թագավորն ուզում էր ,աներ, | 'փոքր • տղայի \ հետ էր • խորհուրդ ˎանում: ||

|| 'Մի ,օր | 'կանչում է • փոքր ,տղային, | ˌասում. |

| – 'Ձեզ • պիտի \պսակեմ, | 'ի՞նչ ˎկասես: ||

|| 'Փոքր • տղան ˌասում է. |

| – 'Թող • քո \ ասածը ˌլինի, | 'ա՛յ ˎհեր, | 'համա • մեզ • պսակելուց ,առաջ 'ման ,արի, | որ 'իրեք • հարսնացուն ,էլ | 'մի • տանից ˎբերես: ||

(Հայ ժողովրդական հեքիաթներ, էջ 6)

Տեքստում միմյանց են հաջորդում տարբեր երկարության հնչաշարույթներ, որոնք ստեղծում են ռիթմային բազմազանություն: Հեքիաթի ռիթմին բնորոշ են նաև բառային, շարահյուսական և այլ տեսակի կրկնություններ, որոնք ուժեղացնում են տեքստի ռիթմայնությունը (Варданян 1987: 63):

Հեքիաթի համար նոր հեռանկար կարող է բացել բանասիրական հնչյունաբանությունը (Davidov, Egorov 1971: 60–75; նաև՝ Egorov, Pavlova, Kosmynin 1976), որը ստեղծվել է գրականության և հնչյունաբանության կցվանքում: Դիտարկելով հրաշապատում հեքիաթը բանասիրական հնչյունաբանության լույսի ներքո՝ հե-

քիաթասացը կտիրապետի հեքիաթի տեքստը գրավոր ձևից բանավորի փոխադրելու արվեստին՝ կենդանի հնչողություն տալով տեքստում կետադրական նշանների միջոցով զետեղված ողջ խոսքային երաժշտությանը: Այստեղ խոսքը դառնում է արվեստ, քանի որ մենք գործ ունենք կետադրական նշանների վերնշանային գործառույթի՝ և հետևաբար, առոգաբանական և հարալեզվական միջոցների վերշարահյուսական մակարդակի հետ (Vardanian 1993: 18): Այս մակարդակում է խոսքի արտահայտչականությունն իր լիարժեք դրսևորումը ստանում՝ շնորհիվ տեմբր I–ի և տեմբր II–ի:

Տեմբր I–ը ձայնի որակն է՝ պայմանավորված ձայնալարերի երկարությամբ ու հաստությամբ, նրանց խոնավությամբ, ինչպես նաև արձագանքարանների ծավալով ու ձևով (Варданян 1976: 35; նաև Варданян 1997: 77): Արձագանքարանների հնարավորություններն առավելագույնս օգտագործելու դեպքում կարելի է ստանալ տարբեր ձայնային որակներ, որոնք կարող են օգտագործվել հեքիաթասացի կողմից տարբեր կերպարների խոսքային դիմանկարները ստեղծելիս:

Տեմբր II–ը խոսքի վերհատույթային և վերշարահյուսական գունավորումն է՝ պայմանավորված տեքստի բովանդակության ընդհանուր բնույթով, այսինքն՝ ոճով (Варданян 1997: 77): Այս առիթով հարց է ծագում. իսկ ո՞րն է հեքիաթին բնորոշ տեմբր II–ը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հեքիաթի ժանրին բնորոշ է պատմողական տեմբր II–ը՝ ընդմիջված (կտրտված) խոսակցական երկխոսություններով: Այս տեմբրն առանձնանում է պատմողական նախադասություններին բնորոշ իջնող հնչերանգով, տրամաբանական դադարներով, դանդաղ տեմպով, ձայնավորների սահուն հոսքով ու երկարաձգումով (Վարդանյան 2011: 34): Այսպես՝

Չկնորսի տղան

|| 'Գնու˜մ են, | ˏգնո˜ւմ՝| 'շատ են • գնում, | թե ˏքիչ, | 'ճամփին • տեսնում են մի ˏմարդ՝| ջրի վրա ընկած ˏխմում է | ու ˎկանչում. | «'Վա˜յ ˎջուր, | 'վա˜յ ˎջուր, | 'խմեմ, | • ծարավս ˎհովանա»:||

|| 'Չկնորսի • տղան ու • Փահլևանը 'գովում են նրա ˏքաջությունը, | որ 'ամբողջ • ջուրը ˏցամաքացրել է, | 'հլա • դեռ «'Վա˜յ • ջուր» է ˎկանչում: ||

|| 'Էս • ի՞նչ ˏքաջություն է,- | ˏասում է,- | 'իսկական \ քաջը 'Չկնորսի • տղան է, | որ 'ասում են • օխտը • սարի ˏհետևից | 'Չրեղեն • ձին ˎբերել է: || 'Էդ • ո՞ւր եք ˎգնում, | 'ինձ • հետներդ \ չե՞ք ˏտանի:||

|| – 'Երկու ˏչըլնենք, | 'թող \իրեք ˏըլնենք, | 'ինչի՞ • չենք ˎտանի: ||

|| 'Չկնորսի • տղան | 'մի • ոչխար ˏէլ | 'Ջուր • ծծող • իգիթի \ համար է ˎմորթում: || 'Միսն ˏուտում են, | 'դմակը • Շանը ˎտալիս: || 'Ճամփան • շարունակում ˏեն, | ˎգնում: || 'Գնո˜ւմ են, | ˏգնո˜ւմ՝| 'շատ են • գնում, | թե ˏքիչ, | 'տեսնում են մի ˎջրաղաց՝| ˎյոթաչքանի, | 'ներս են ˏմտնում, | 'տեսնում են, | որ մի 'մարդ • նոր աղած • ալյուրն ˏուտում է, | ու 'միալար ˎկանչում. | «'Վա˜յ ˎհաց, | 'վա˜յ ˎհաց, | 'ուտեմ ˎկշտանամ»:||

(Հայ ժողովրդական հեքիաթներ, էջ 22)

Տեմբր II–ի կազմակերպման հարցում իր մեծ լուման ունի նաև բառագիտական հնչյունաբանությունը (Minajeva 1973: 90–113; նաև Minajeva 1982): Այն կօգնի հեքիաթասացին՝ ուսումնասիրելու այն բոլոր առոգաբանական ու հարալեզվական միջոցները, որոնց օգնությամբ այլաբերություններն ու բանադարձումները,

ոճական հնարներն ու միջոցները կամ ոճական գունավորում ունեցող բառերն ու բառակապակցություններն առանձնանում և ավելի ցցուն են դառնում խոսքի հոսքում:

Հնչյունաբանական մյուս ուղղությունը, որը սերտ կապ ունի հեքիաթի ժանրի հետ ճարտասանական հնչյունաբանությունն է (Долецкая 1982; նաև Апресян 1978; նաև Варданян, Марианян 1992: 61): Այս ուղղությունն ամբողջապես հիմնված է առոգաբանական ու հարալեզվական միջոցների վրա և միտված է գեղագիտական ներգործություն թողնելու ունկնդրի վրա: Օգտվելով ճարտասանական միջոցների զինանոցից՝ հեքիաթասացը կարող է ունկնդրի հետ աչքերի միջոցով կենդանի կապ (շփում) հաստատել (an eye–to–eye contact), դիմախաղի և ձեռքերի շարժումների օգնությամբ իր պատմելու կամ ընթերցելու արվեստը դարձնել ավելի համոզիչ ու տպավորիչ, սակայն դիմախաղն ու ձեռքերի շարժումները պետք է համապատասխանեն տեքստի բովանդակությանը և բխեն նրանից:

Հոդվածում առաջ քաշած հարցադրումները տեսական ու գործնական նշանակություն ունեն և կարող են նպաստել հեքիաթի ժանրում կատարվող ուսումնասիրությունների հետագա զարգացմանն ու կատարելագործմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Հայ ժողովրդական հեքիաթներ* (2004), Երևան, «Արևիկ»:
2. *Հնդկական ժողովրդական հեքիաթներ* (1989), Երևան, «Արևիկ»:
3. Ջիվանյան Ա. (2007), Երկնքից իջավ երեք խնձոր. Հայ ժողովրդական հեքիաթների փակող բանաձևերը. դրույթներ միջազգային գիտ. *«Արթյանական ընթերցումներ»*, հոկտեմբերի 1–3, էջ 48–49:
4. Վարդանյան Ս.Ն. (1989), Լեզվական «երաժշտության» նշանակությունը լեզվաբանության ուսումնասիրության ոլորտում // *Բանբեր ԵՊՀ*, № 3, էջ 186–188:
5. Վարդանյան Ս.Ն. (2011), Խոսքի արտահայտչականությունը հրաշապատում հեքիաթում, թեզիսներ միջազգային գիտ. *«Արևելյան հեքիաթ. Արևելքը հեքիաթում»*, 30–31 մարտի, Երևան, Հովհ. Թումանյանի թանգարան:
6. *Античные теории языка и стиля* (1936). Под ред. О.М. Фрейденберг, М–Л.: Соцэкгиз.
7. Апресян Г.З. (1978). *Ораторское искусство.* М. : МГУ.
8. Варданян С.Н. (1976). *Сонорные в составе финальных консонантных комплексов современного языка в речи и пении (в сопоставлении с русским и армянским).* КД, М., МГУ.
9. Варданян С.Н., Марианян А.Г. (1992). *Риторические приемы и выразительные средства как необходимые компоненты лекторского мастерства в преподавании иностранных языков.* Тезисы республ. научно–методическ. конференции, ЕГУ.
10. Варданян С.Н. (1997). Тембральная организация в речевом и певческом изглашении. Тезисы докл. конференции, «*Семиотика и преподавание языков»*, ЕГУ.
11. Долецкая Е.С. (1982). *Риторика лекторской речи.* Автореферат канд. дисс., МГУ.
12. Смирницкий А.И. (1957). *Синтаксис Английского языка.* М: Литература на иностранном языке.
13. Трубецкой Н.С. (1960). *Основы фонологии.* М.: Изд.–во иностранной литературы.
14. Akhmanova O. and L. Minajeva ed.-s (1973). *An Outline of English Phonetics.* M.: MSU Press.

15. Akhmanova O., Minajeva L. and O. Mindrul (1986). *Philological Phonetics*. M.: MSU Press.
16. Anand, Mulk Raj (1966). *Indian Fairy Tales*. Bombay.
17. Davidov M.V., & G.G. Egorov (1971). *English Phonology*. M.: MSU Press.
18. Egorov G.G., Pavlova S. & A.N. Kosmynin (1976). *A Phonetic Guide to Extracts from Dickens*. Elista.
19. Minajeva L. (1982). *Word in Speech and Writing*. M. : MSU Press.
20. Vardanian S., (1993). On Speech and Singing. *//Akhmanova Readings*. Moscow, Lateum–Maal, Issue № 2.
21. Vardanian S., (1996, 2001). Suprasyntactics of Speech and Singing. *// Semiotics and Language Teaching. Theoretical Principles and Practical Applications*. Yerevan State University, Armenia, May 20–22, Canada, pp. 215–217.
22. Vassiliev V.V. (1970). *English Phonetics*. M.: Higher School Publishing House.

Svetlana Vardanian

THE EXPRESSIVENESS OF SPEECH IN THE FAIRY TALE GENRE

Summary

The expressiveness of speech is distinguished by a rich variety of intonational, rhytmical, prosodic, paralinguistic and kinesic means which are of great importance for the narrator's art in the fairy tale genre. The study of this genre through prism of different trends of modern phonology will contribute to raise the narrator's art to a higher level of scientific precision. Hence, the present article aims at investigating the fairy tale on the segmental, suprasegmental and suprasyntactic levels. The article mainly dwells upon the peculiarities of intonation, rhythm and timbre II of this genre.
1. the intonation of the fairy tale is characterized by simple tones; complex tones are seldom used.
2. the rhythm of the fairy tale is that of prose with its typical rhythmical patterns. The fairy tale is defined by its properly balanced variety of rhythm which endows the narration with some dynamism.
3. the fairy tale is distinguished by the narrative timbre II interpolated by dialogues. The parameters of this timbre are: falling tones of narrative sentences, logical pauses, slowed down tempo and a smooth flow of prolonged vowels.

Արմեն Սարգսյան

ԱՐԵՎԵԼՔԻ ԶՎԱՐՃԱԽՈՍ ԽՈՋԱ ՆԱՍՐԵԴԻՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Արևելքի զվարճախոս Մոլլա Նասրեդինի (Խոջա Նասր–Էդ–Դին, Հոջա Նասրետտին, Մոլլա Մըսրադին) զվարճապատումները բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում նաև՝ հայության շրջանում ամենատարածվածներն ու մասսայականություն վայելողն են եղել:

Արդեն մի քանի հարյուրամյակ է՝ շրջանառվում են նրա մասին (կամ նրան վերագրվող) տարատեսակ երգիծական մանրապատումներն ու առակատիպ կառույցները:

1978թ. ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը Մոսկվայում «Արևելքի ժողովուրդների հեքիաթները և առասպելները» մատենաշարի շրջանակներում ռուսերեն հրատարակում է մի ժողովածու (Харитонов, Двадцать три Насредина 1978), որն ընդգրկում էր 23 ժողովուրդների նասրեդինյան 1119 պատում՝ թարգմանված հունարեն, ասորերեն, բուլղարերեն, սերբերեն, մակեդոներեն, խորվաթերեն, արաբերեն, պարսկերեն, տաջիկերեն, թուրքերեն, թուրքմեներեն, ադրբեջաներեն, թաթարերեն, ուզբեկերեն, ույգուրերեն, ղազախերեն, ավարերեն, չեչեներեն, լեզգիերեն, թաբասարաներեն, դարգիներեն, անդիերեն և ռուտուլերեն լեզուներից:

Նասրեդինյան պատումների այդ համահավաքը կազմող Խարիտոնովը առաջաբանում խոսում է նաև եվրոպական տարբեր երկրներում (Բուլղարիա, Ռումինիա, Հարավսլավիա), Միջին և Կենտրոնական Ասիայի, ինչպես նաև արաբական երկրների ժողովուրդների մոտ, անգամ Չինաստանում այդ շարքի զվարճապատումների տարատեսակ դրսևորումների մասին, անդրադառնում նաև հայկական և վրացական բանարվեստում Նասրեդինի կերպարի արտացոլմանը՝ մատնանշելով հայերի և վրացիների բանարվեստում Արևելքի զվարճախոսին վերագրվող սյուժեների սակավությունը: Չգիտես՝ ինչու նա այդ միտքը հաստատելու համար մեջբերում է միայն վրացական մեկ աղբյուր (Грузинский народный юмор, Тбилиси 1967: 14) և գրում, որ իրեն չի հաջողվել այլ հրատարակությունների հասու լինել (Харитонов 1978: 11):

Ինչ խոսք, ժողովածուն կազմողի համար այն օրերին դժվար չէր լինի հարցում անել նաև Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ՝ հիմնավոր տեղեկություններն ու անհրաժեշտ նյութերն ստանալու և դրանք օգտագործելու համար:

Իր վերլուծության մեջ Խարիտոնովը այս երկու քրիստոնյա ժողովուրդների նասրեդինյան կերպարը համարում է փոխառած, որի տեղը, ըստ նրա, աստիճանաբար գրավում է մեկ այլ՝ առավել հիմնավոր ազգային արմատներ ունեցող կերպար, ինչպիսին, հայերի ղարաբաղցի զվարճախոս Պըլը Պուղին է: Ըստ Խարիտոնովի՝ նասրեդինյան շատ սյուժեներ սկսել են կապվել նմանատիպ ազգային հերոսների հետ (Харитонов 1978:11):

Սակայն հեղինակն անտեսում էր նաև հակառակ երևույթը, երբ այս կամ այն համազգային կամ լոկալ–տեղային զվարճապատումը կարող էր վերագրվել համընդհանուր ճանաչում ձեռք բերած օտար զվարճախոսին՝ նրան դարձնելով այն ձգողական ուժը, որը դեպի իրեն կարող էր ձգել ու «սեփականացնել» զանազան տարածքներում ծնունդ առած տարբեր կրոնների ու ժողովուրդների մանրապատումները: Դարեր շարունակ այդ նույն գործառույթն են կատարել հույն և ասորի ժողովուրդների առակախոս–զվարճախոսները՝ Եզոպոսը և Խիկար (Ախիկար) Իմաստունը: Այդ գործառույթն է իր վրա վերցրել նաև Արևելքի զվարճախոս Մոլլա (Խոջա) Նասրեդինը:

1986թ. վերոհիշյալ գիրքը՝ 1069 պատումներով (անհետաքրքիր շուրջ 50 նմուշ հանված), Գևորգ Հայրյանի թարգմանությամբ և Արամ Ղանալանյանի առաջաբանով, լույս տեսավ նաև հայերեն՝ որտեղ վաստակաշատ բանագետն անդրադառնում է մեր բանարվեստ մուտք գործած նասրեդինյան մանրապատումներին: Դրանք «սերվել ու հարազատ են դարձել մեր ժողովրդին, – գրում է Ղանալանյանը, – …և արցախցի հռչակավոր Պըլը Պուղու, շիրակցի Պոլոզ Մուկուչի, լոռեցի Հոբոսի, ղափանցի Գինոսի և շատախցի ծռերի կողքին, երբեմն էլ նրանց դերերում մենք հանդիպում ենք Խոջա Նասրեդինին» (Խարիտոնով 1986, 4):

Դեռ 1874թ. Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանն իր «Առակավոր բանք ազգայինք և օտարք» գրքի առաջաբանում գրում էր.«Մեզի կերևի, թե մեր ազգին մեծ մասին բերանը մինչև ցայժմ պտտող հայերեն առակներում ու առածներում գոնե մեկ մասը Խիկարա Իմաստնո հնարածներն են, և Նասրետտին խոճայի անունովը պատմված առակներում և նոցա բերանը դրված առածներում մեկ մասն ալ մեր Խիկարա Իմաստնո հնարածներն են, ինչպես արդեն հայտնի է, որ չինաց Կոնֆուցեին, հունաց Եզոպոսին ու Դիոգենեսին, արաբացվոց Լոգմանին, տաճկաց Նասրետտինին առակներն ալ իրարու հետ շփոթած են, և մեկում հնարածը մյուսին անունովը կհիշվի, ուստի և կարելի չէ համարձակ վճռել, թե այս կամ այն առակն ու առածը Խիկարինն է, թե Եզոպոսին, թե Նասրետտին Խոճային, թե ուրիշ ազգային կամ օտար առակախոսի» (Այվազեան, 1874, ժ–է): Ի դեպ, Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը Խիկար Իմաստունին համարում էր Արծրունյաց Սենեքերիմ թագավորի օրոք (մոտ 1000թ.) ապրած անվանի զվարճաբան առակախոս և ժողովրդական իմաստասեր:

Փաստորեն Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը շուրջ մեկուկես դար առաջ առաջին անգամ հայ իրականության մեջ խոսում է առակների, զվարճապատումների և առածների թափառող սյուժեների առկայության փաստի մասին, հիմնավորում բանարվեստի այդ տեսակների՝ մի ժողովրդից մյուսին փոխանցվելու երևույթը:

Այդ նույն խնդրին 30 տարի անց՝ 1904 թվականին անդրադառնում է նաև հայագիտության մեծ երախտավոր Երվանդ Լալայանը: Նա հրատարակում է նասրեդինյան առակ–զվարճախոսությունների մի գիրք՝ 228 պատումներով, որոնց գերակշռող մասը հայ ասացողներից Լալայանի գրառածներն են: Ժողովածուում առաջին անգամ ներկայացվում և հիմնավորվում է հայկական միջավայրում նասրեդինյան զվարճապատումների թե՛ թափառող սյուժեների (թարգմանություն, շփման զանազան միջոցներով փոխանցում և այլն), թե՛ տեղայնացած զվարճախոսի շուրջը ստեղծված զուտ հայկական պատումների առկայության տեսակետը, թե՛ ազգային զվարճախոսներից դրանց այլ՝ առավել մասշտաբային՝ օտար զվարճախոսներին անցնելու վարկած (Լալաեան 1904):

«Առակների այս շարքը, – ժողովածուի առաջաբանում գրում է Լալայանը, – սկսում ենք Մոլլա – Նասր – էդ – դինին *վերագրված* առակներով: Ասացինք, որ մեր նպատակն է հայոց ժողովրդական առակներ հավաքել, մինչդեռ սկսում ենք մի մոլլի առակներով: Ճշմարիտ է, մոլլան թուրք է, սակայն նրան վերագրված առակների մեծագույն մասը հայ ժողովրդի ստեղծագործություն է՝ նման այն բազմաթիվ թրքական երգերի, որ ասել են մեր հայ աշուղները կամ ժողովուրդը: Մոլլա Նասր – էդ – դինի ահագին ժողովրդականությունը պատճառ է եղել, որ տեղական փոքրիկ առակախոսների՝ հոբոսների, կիկոսների, ծակսահակների, պըլըպուղիների և ուրիշ այսպիսիների առակները նրան են վերագրվել, և, այսպիսով, Մոլլա Նասր – էդ – դինը կորցրել է յուր առանձնահատուկ տիպը. նա միաժամանակ ներկայանում է մեզ և՛ իբր հիմար՝ Հոբոսի պես, և՛ իբր խելացի՝ Խիկար Իմաստունի պես, և՛ իբր խորամանկ՝ Ծակ – Սահակի պես, և՛ իբր տխմար՝ Կաճետի ծոերի պես. այնպես որ սա միաժամանակ է և՛ Կալինո, և՛ Տարտարեն, և՛ Գոբզեկ, և՛ Դոն Քիշոտ, և՛ Սանչո – Պանչո, և՛ Կոլոնել Ռամոլլո, և՛ Բարոն դը Մյունշհաուզեն – մի խոսքով, նրա մեջ մարմնացած են այն բոլոր տիպերը, որ զանազան տեղերի ժողովրդական հոգեբանությունը կամ հումորը կամեցել է ստեղծել» (Լալաեան 1904, Բ –Դ):

Այնուհետև Ե. Լալայանը՝ իբրև ապացույց իր մեկնաբանության, ներկայացնում է իր իսկ գրառած նյութերի գերազանցությունը թուրքական բնագրերի հետ. «Իրենք՝ թուրք հրատարակիչները, նրան միմիայն 145 առակ են վերագրում, մինչդեռ իմ այս պրակի մեջ կրկնապատիկն է գրի առնված, և դեռ որքա՜ն կան, որ անծանոթ են ինձ՝ չհաշված բամբառակները, որոնց թիվը հազարից անցնում է» (Նույն տեղում, Դ):

Այս կամ այն զվարճապատումը ստեղծվելուց հետո եթե շրջապատի կողմից ընդունվում է, արծարծած խնդիրներն ու առաջադրած հարցերը և դրանց քննադատությունը, ծիծաղ առաջացնելու ինքնատիպ ձևերն ու միջոցները եթե ընդունվում են հանրության կողմից, ապա հերոսներն առաջին հերթին պետք է ընդհանրացվեն: Նրանք որքան ճանաչված լինեն, այնքան լսարանի համար գրավիչ կարող են լինել: Երբեմն էլ զվարճախոսը զվարճասերներին «կարող էր պարտադրել» որոշակի կանոններ: Այսպես, օրինակ, ըստ Ե. Լալայանի դիտարկման՝ «Այժմ հայ ժողովրդի մեջ տիրում է այն նախապաշարմունքը, որ ով Մոլլա Նասր – էդ – դինի մի առակն ասե, անշուշտ յոթը լրացնելու է, իսկ եթե յոթն ասի, յոթն անգամ յոթը՝ քառասուն և ինը լրացնելու է, ապա թե ոչ՝ անիծված կլինի» (Նույն տեղում, Է):

Ի դեպ, այս նախապաշարմունք – գործառույթը 1950–1960 թվականներին փոխանցվել էր շիրակցի զվարճախոս Պոլոզ Մուկուչին, և նրա անունը տվողը պարտադրված էր Պոլոզ Մուկուչի յոթ անեկդոտ պատմել (կանոնակարգում բացակայում էին յոթն ասելուց հետո շարունակվող գործընթացը և չկատարելու դեպքում անիծված լինելու հանգամանքը):

Սրամիտ խոսքը, ծիծաղով, ծաղրով ասելիքը վերարտադրելու կարողությունը հատուկ է մարդ արարածին՝ անկախ ազգությունից և կրոնական պատկանելությունից: Հետևապես շատ անգամ ոչ թե դժվար, նույնիսկ անհնար է այս կամ այն պատումը տեղայնացնելը, կոնկրետ որևէ ժողովրդին վերագրելը: Նասրեդինյան պատումների սյուժեներից շատերն էլ բազմահայրենիք են: Թերևս հենց դա է պատճառը, որ մի շարք ժողովուրդներ, Հոմերոսի ծննդավայրի պատիվը իրենց վերագրող հունական յոթ քաղաքների նման, դարեր շարունակ վիճարկում են Նասրեդինի հայրենիքի պատիվն իրենց վերագրելու համար: Այդ վեճին

համառորեն մասնակցում են թե՛ հնագույն ժողովուրդները, թե՛ նորաթուխ ազգային միավորումները: Նույնիսկ մեկ դարը չբոլորած «ադրբեջանցի» հորջորջվող կովկասի թաթարների մերօրյա «գիտնականները» ևս անմասն չեն սեփականացման գործընթացից՝ Նասրեդինին համարելով ադրբեջանցի, քանի որ, իբր, 13–րդ դարում այդ անունով ադրբեջանցի գիտնական է եղել՝ Հաջի Նասրեդին Թուսի (Харитонов 1978:6): Ավելացնենք նաև, որ նրանք, սեփականացնելով իրենց հարևանների մշակութային ժառանգությունը, այդ թվում նաև՝ ժողովրդական բանարվեստը, հասցրել են նասրեդինյան մի քանի ժողովածու հրատարակել:

Ինչ խոսք, Արևելքի զվարճախոսը սիրված է եղել բոլոր ժողովուրդների կողմից, և նրա անունը, անկախ կրոնից ու ազգությունից, շրջանառվել է ամենուրեք:

Ամենևին նպատակ չունենալով Նասրեդինի հայրենիքը վիճարկողների մեջ մտցնել նաև հայերին՝ փորձենք անդրադառնալ հանրահայտ զվարճախոսի հանդեպ եղած հետաքրքրություններին նաև հայկական միջավայրում, ներկայացնել հայերեն թարգմանությունները, հայկական շրջանակներից գրառումները, դրանց հրատարակությունները, ինչպես նաև տեղայնացված զվարճախոսին ու նրան վերագրված պատումների առանձնահատկությունները:

Հայ իրականության մեջ Խոջա Նասրեդինի զվարճապատումների՝ մեզ հայտնի հայերեն առաջին թարգմանությունը կատարվել է 1858 թվականին Զմյուռնիայում (Իզմիր): Այն ֆրանսերենից թարգմանված 32 նմուշ պարունակող մի գրքույկ է՝ «Ծաղրաբանությիւնք Նասրէտտին Խօճայի» վերնագրով: 1910 թվականին Կ. Պոլսում թուրքերենից հայերեն թարգմանած հրատարակվում է «Հօճա Նասրէտտինի զուարճալիքները» գիրքը՝ շուրջ 350 պատումներով, որը տարիներ անց վերահրատարակվում է Բեյրութում և Բոստոնում:

Երբվանի՞ց է Խոջա (Մոլլա) Նասրեդինի կերպարը շրջանառվել հայոց մեջ, դժվար է ասել, բայց որ նասրեդինյան պատումների առաջին գրառողներից մեկն էլ մենք՝ հայերս ենք եղել, դա փաստ է, և որ շուրջ 170 տարիների ընթացքում մեզ մոտ հսկայածավալ աշխատանքներ են կատարվել Արևելքի զվարճախոսին վերագրվող անեկդոտ–զվարճապատումների գրառման և հրատարակության ուղղությամբ, դա էլ է անժխտելի փաստ: Հայ իրականության մեջ առաջին անգամ Խաչատուր Աբովյանը 1841 թվականին իր գրառած նասրեդինյան զվարճապատումների երեք նմուշ չափածոյի է վերածել և ընդգրկել առակ–զվարճախոսությունների ժողովածուում (Աբովեան 1864):

Հետագա տարիներին հրատարակված անեկդոտների զանազան ժողովածուներում ևս տեղ են գտել Մոլլա Նասրեդինի մանրապատումները: Այսպես, օրինակ, Հովհաննես Նազարյանցը 1876 թվականին Բաքվում հրատարակած «Անեկդոտներ» – ի ժողովածուի առաջին հատորում ընդգրկել է նասրեդինյան առակ–զվարճապատումների 8 նմուշ, մեկ տարի անց՝ 1877 թվականին Թիֆլիսում հրատարակած երկրորդ հատորում՝ 12 նմուշ, իսկ 1883 թվականին կրկին Թիֆլիսում տպագրած երրորդ հատորում՝ 5 նմուշ:

1892 թվականին շուլավերցի դպիր Սմբատ Շահազիզյանը Թիֆլիսում հրատարակում է «Ծիծաղի տոպրակ» զվարճապատումների ժողովածուն՝ 18 նասրեդինյան նմուշներով:

1904 թվականին, ինչպես վերը նշվեց, Երվանդ Լալայանը Թիֆլիսում հրատարակում է «Ժողովրդական առակներ: Ա. Մոլլա Նասր–Էդ–Դին» զուտ նասրեդինյան առակ–զվարճապատումների ժողովածուն, որն ընդգրկում էր 228 նմուշ: Դա, փաստորեն, հայ իրականության մեջ արևելքի զվարճախոսին (և ոչ միայն արևելքի) նվիրված մեծաքանակ նյութերով առաջին ժողովածուն էր, որոնց

պատկառելի մասը հենց իր՝ Լալայանի գրառումներն էին՝ կատարված հիմնականում Բորչալուի գավառի (Գուգարք–Լոռի, Բոլնիս Խաչեն) հայկական բնակավայրերում: Ի դեպ, 1903 թվականին նա կարողացել էր հրատարակել նաև լոռեցի Հոբոսի զվարճապատումների մի փոքրիկ ժողովածու՝ 18 մանրապատումներով և հայ զվարճախոսին նվիրված հակիրճ առաջաբանով:

«Ժողովրդական առակներ: Ա. Մոլլա Նասր–Էդ–Դին» գրքի առաջաբանում Լալայանը մեր իրականության մեջ առաջին անգամ փորձ է անում վերլուծել և մեկնաբանել նասրեդինյան պատումների տեղայնացման և տեղական պատումների նասրեդինացման գործընթացը: Նպատակ ունենալով շարունակել և ամբողջացնել հայ զվարճախոսների երգիծական մանրապատումները պրակներով հրատարակելու աշխատանքը՝ Լալայանը իր առջև խնդիր էր դրել հայության միջավայրում շրջանառվող հայ զվարճախոսներին և արևելքի զվարճախոս Նասրեդինին վերագրվող պատումները գրառելիս չխուսափել կրկնություններից, համադրել դրանք, պարզելու համար, «թե ո՞րն է առակի իսկական հեղինակը, կամ վարիանտներից ո՞րն է նախատիպը»:

1913 թվականին Արտեմ Եսայանը Թիֆլիսում հրատարակում է«Ծիծաղի տկճոր»: Մոլլա Նասրեդինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտների և սրախոսությունների ժողովածու» գիրքը, ուր տեղ էր գտել նաև 37 նասրեդինյան զվարճապատում:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ–ի աշխատակից Վերժինե Սվազլյանը իր գրառած նասրեդինյան 11 զվարճախոսություններն ընդգրկել է 2000 թվականին հրատարակած «Պոլսահայ բանահյուսությունը» գրքում, իսկ նույն ինստիտուտի աշխատակից Էսթեր Խեմչյանը՝ 2000 թվականին տպագրված ՀԱԲ–ի 21–րդ հատորում՝ շամշադինյան 7 նմուշով, և 2008 թվականին տպագրված ՀԱԲ–ի 25–րդ հատորում՝ իջևանյան 11 նմուշով:

2009 թվականին հրատարակվում է Հովհաննես Հովսեփյանի կողմից գրի առած Ղարադաղի բանահյուսական նյութերի ժողովածուն, ուր տեղ էր գտել նաև Մոլլա Նասրեդինի զվարճապատումներից 19 նմուշ:

Ձեռագիր վիճակում մեծ քանակությամբ նասրեդինյան գրառումներ կան թե՛ ԳԱԱ ՀԱԻ–ի արխիվում, թե՛ Հայաստանի պետական արխիվում, թե՛ գրականության և արվեստի թանգարանում, թե անձնական մի շարք հավաքածուներում:

Հայկական նասրեդինյան գրառումների աշխարհագրությունը ևս ընդգրկուն է՝ Պոլիս, Ալաշկերտ, Ղարադաղ, Սալմաստ, Երևան, Թիֆլիս, Բաքու, Շիրակ, Լոռի, Իջևան, Շամշադին, Ջավախք ...:

Այսպիսով, առկա նյութերը հավաստում են, որ մեզ մոտ Արևելքի զվարճախոս Նասրեդինը սիրվել և մեծ մասսայականություն է վայելել, իսկ նրան առնչվող մանրապատումները հայերի շրջանում բավականին մեծ քանակ են կազմել՝ ընդգրկելով թե՛ Պատմական Հայաստանի բնակավայրերի մեծ մասը, թե՛ նրանից դուրս գտնվող հայաշատ վայրերը: Շուրջ 170 տարիների ընթացքում դրանք գրառվել և ընդգրկվել են ինչպես տարատեսակ անեկդոտների ժողովածուներում, այնպես էլ զուտ Նասրեդինին նվիրված գրքերում: Հայոց մեջ շրջանառվող նասրեդինյան մանրապատումներից զատ, արևելքի զվարճախոսին են վերագրվել նաև տեղական զվարճախոսների երգիծապատումները, ինչը հաստատում են գրառած նյութերն ու բանահավաք–բանագետների մեկնաբանությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Харитонов С. (1978). *Двадцать три Насредина*. Москва: Наука.

Աբովեան Խ. (1864), *Պարապ վախտի խաղալիք,* Տփխիս:

Այվազեան Գաբրիել արքեպիսկոպոս (1874), *Առակավոր բանք ազգայինք և օտարք*, Կ. Պոլիս:

Եսաեան Ա. (1913), *Ծիծաղի պկճոր: Մոլլա Նասրեդինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտների և սրախոսությունների ժողովածու,* Թիֆլիս:

Խեմչյան Է. (2000), *ՀԱԲ* – 21(Շամշադին), Երևան, «Գիտություն»:

Խեմչյան Է. (2008), *ՀԱԲ* – 25 (Իջևան), Երևան, «Գիտություն»:

Լալաեան Ե. (1904), *Ժողովրդական առակներ,* Թիֆլիս:

Խարիտոնով Մ. (1986), *Քսաներեք Նասրեդին*, Երևան, «Հայաստան»:

Հովսեփյան Հ. (2009), *Ղարադաղի հայերը.* Հատոր 2, Բանահյուսություն, Երևան, «Գիտություն»:

Նազարեանց Յ. (1876), *Անեկդօտներ,* Ա հատոր՝, Բաքու, Բ հատոր՝ 1877, Թիֆլիս, Գ հատոր՝ 1883, Թիֆլիս:

Շահազիզեան Ս. (1892), *Ծիծաղի տոպրակ,* Թիֆլիս:

Սվազլյան Վ. (2000), *Պոլսահայ բանահյուսությունը*, Երևան:

Armen Sargsyan

THE SATIRICAL FIGURE HODJA NASREDDIN IN ARMENIAN RECORDS

Summary

During 170 years a large corpus of jokes and humorous stories about Hodja Nasreddin has been collected in historical Armenia and regions inhabited by Armenians. Many of these anecdotes have been published in various collections; others appeared in volumes entirely related to Nasreddin. A considerable part of the texts is kept in Armenian archives. The material now available shows Nasreddin was so admired and popular among Armenians that folk stories about him were often believed to have originated in Armenian locations. In some cases jokes actually told by local satirical figures were ascribed to him.

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆԸ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Հրաշապատում հեքիաթի կառուցվածքային կայուն գործառույթներից է հերոսի՝ հեռավոր աշխարհ մեկնելը՝ այնտեղ փորձություններ հաղթահարելու, կախարդական իրեր կամ հարսնացու բերելու նպատակով: Աշխարհը, ուր մեկնում է հերոսը, սովորաբար ընկալվում է որպես կախարդական, գերբնական և ամենայն հրաշքներով լի այնկողմնային մի տարածք, ուր հասնելը քչերին է տրված, իսկ կոնկրետ փորձության հաղթահարումը՝ միայն ընտրյալին՝ հերոսին:

Հայ ժողովրդական հեքիաթներում այդ կախարդական աշխարհը հիմնականում կամ մնում է անանուն, կամ կոչվում է Մութ աշխարհ, Սև աշխարհ՝ այդպիսով հակադրվելով Լույս աշխարհին: Սակայն մի շարք հեքիաթներում գերբնական աշխարհը անվանվում է արևելյան երկրների անուններով՝ Չինումաչին, Հնդստան, Արաբստան, Մսրա երգիր և այլն: Այս հեռավոր երկրները ընկալվում են որպես ծանոթ աշխարհից դուրս, գերբնական, հրաշքներով լի տարածքներ՝ այդպիսով ասոցիացվելով այնկողմնային, կախարդական աշխարհին: Համապատասխանաբար նույնպիսի գերբնական հատկանիշներով են բնութագրվում այս աշխարհների իրերն ու մարդիկ:

Նշված արևելյան երկրների անվանումները հեքիաթներում չեն գործածվում կոնկրետ աշխարհագրական տարածք մատնանշելու նպատակով. դրանք խորհրդանշական ընկալում ունեն, իրենց կիրառությամբ էլ համարժեք են և հաճախ սյուժեի տարբերակներում փոխարինում են իրար: Այս առումով հատկապես խոսուն է այն փաստը, որ Չինաստանի ու Հնդկաստանի հեքիաթային անվանումների՝ Չին Մաչինի և Հնդու Յամանի կողքին տարբերակներից մեկում հանդիպում է Հնդու Մաչին անվանումը (ՀԺՀ IX, 1968, 200–201), որը ակնհայտորեն առաջին անվանումների միացությունից է առաջացել և խոսում է դրանց համարժեքության և իմաստային նույնականացման մասին:

Չինաստանի կամ Չին–Մաչինի, Հնդստանի, Արաբստանի համարժեք կիրառության օրինակներ մեզ տալիս են նաև բանահյուսական այլ ժանրերը: Այսպես. հայոց առած–ասացվածքներում ու հանելուկներում այս երկրները հաճախ հիշատակվում են ինչպես ուղղակի հեռավորությունը ակնարկելու նպատակով (***Վանցվոց կաղը մինչև Չինաստան է հասեր*** (Սրվանձտյանց, 1978, 139)***,*** ***Խնձորկեցի կաղը Հնդըստան է հասել*** (Ղանալանյան 1960, 97), այնպես էլ առասպելական, երկնային աշխարհին են խորհրդանշում (***Հնդստան, Արաբստան, // Էրկու պարոն էկան նստան. // Վեր կացին, գնացին, // Մանրերը ժողովվեցին:*** Հանելուկի լուծումն է՝ երկինք, արեգակ, լուսին և աստղեր (Հարությունյան 1965, 11)[1]: Չինաստանի և Հնդկաստանի՝ որպես առասպելական աշխարհների նույնարժեք կիրառության ակնհայտ օրինակ են մեզ տալիս հայոց երկվորյակային առասպելները, ուր Չինաստանից Հայաստան ապաստանած

1 Հնդկաստանի՝ որպես առասպելական, երկնային աշխարհի իմաստավորման մասին ակնարկում է նաև Ս.Հարությունյանը (Հարությունյան 2000, 19):

Մամիկին և Կոնակին առասպելի ավելի ուշ փոփոխակում փոխարինում են Հնդկաստանից եկած Դեմետրն ու Գիսանեն: Ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Աբեղյանը. «Երկու դեպքում նս դա պետք է առնվի ոչ իսկական մտքով: Հնդկաստան ու Չինաստան իբրև արևելյան հեռավոր երկրներ միշտ իրար տեղ դուրս են գալիս թե՛ մեր հեքիաթների և թե խոսք ու զրույցի մեջ» (Աբեղյան 1966, 298):

Այս ամենով հանդերձ պետք է նշել, որ հայ ժողովրդական հեքիաթներում ակնհայտորեն ավելի հաճախակի կիրառությամբ առանձնանում է Չինումաչին կամ Չին–Մաչին կախարդական աշխարհը: Ի դեպ, հեքիաթներում, ուր վերոհիշյալ արևելյան երկրները հանդես են գալիս միաժամանակ, դրանցից բուն կախարդական աշխարհի խորհրդանիշ է ընկալվում հենց Չինաստանը: Այսպես. թագավորի երեք որդիները մեկնում են հարսնացու որոնելու: Ավագը ամուսնանում է Հնդստանի թագավորի աղջկա հետ, միջնեկն՝ Արաբստանի, իսկ կրտսերը, ում սովորաբար բաժին են հասնում ամենաբարդ և անհաղթահարելի փորձությունները, մեկնում է Չինումաչին, և միայն այստեղ է սյուժեն հյուսվում հրաշապատում մոտիվներով, այստեղ են հանդես գալիս դև Ջամփոլադը ու կախարդական հատկանիշներով օժտված արքայադուստրը (ՀԺՀ XIII, 1985, № 2): Հեքիաթի՝ եռակիության սկզբունքի կիրառման դեպքում, որպես կանոն, բոլոր առումներով գերապատվությունը երրորդինն է:

Այլ պարագայում թերևս անհարկի կլիներ հեքիաթային կախարդական աշխարհի բնութագիրը կապել կոնկրետ սյուժեների հետ, քանի որ գերբնական, անդրաշխարհային նման տարածքները հայտնվում են բոլոր հրաշապատում հեքիաթներում, սակայն այս դեպքում հարաբերականորեն կայուն մոտիվների առկայությունը թույլ է տալիս խոսել նաև Չին–Մաչին կախարդական երկրի ընկալման յուրահատկությունների մասին կոնկրետ սյուժետային դրսևորումներում: Չինումաչինը՝ որպես կախարդական երկիր, հիշատակվում է հատկապես հետևյալ սյուժեներում:

Հերոսին հանձնարարություն է տրվում՝ բերել Չինումաչինի թագավորի աղջկան: Որոշ սյուժեներում այդպիսի պահանջ է ներկայացնում վիշապը, որը փաթաթվում է հարսնացուների հետ տուն վերադարձող արքայազների վրանի շուրջ և գերի է վերցնում փոքր եղբոր հարսնացուին: Հերոսը մեծ դժվարությամբ բերում է աղջկան, վիշապը պայթում է, աղջիկ է դառնում (ՀԺՀ IV, 1963, № 28), կամ տղա է դառնում. պարզվում է, որ նա Չին թագավորի տղան է (ՀԺՀ III, 1962, № 11):

Չին–Մաչինի արքայադստերը բերելու առաջադրանքը մի խումբ այլ տարբերակներում այն անիրագործելի համարվող հանձնարարություններից է, որոնք տրվում են հերոսին՝ նրան կորստի մատնելու նպատակով: Հանձնարարությունը տալիս են կամ հերոսի մայրն ու նրա սիրեկան դևը (Խեմչյան 2000, № 11), կամ դավաճան քույրերը, որոնք ժամանակին փոխել էին իրենց կրտսեր քրոջ ոսկեծամ ու ոսկեճկույթ զավակներին և փոխարենը շան լակոտներ դրել: Չինաստանից բերված աղջիկը բացահայտում է քույրերի նենգ արարքը (ՀԺՀ X, 1969, № 21):

Սակավաթիվ հեքիաթներում Չինումաչինը այնկողմնային աշխարհ է, ուր կինը տեղափոխում է իր մահացած ամուսնու մարմինը (Գուրունյան 1991, 133–144), ուր թռչուն դառնալով թռչում է գորտ–աղջիկը, որի շապիկը այրել էր ամուսինը (ՀԺՀ III, 1962, № 20) և այլն:

Ինչպես տեսնում ենք, Չինումաչինին վերաբերող սյուժեների մեծ մասում հերոսը մեկնում է այդ երկիր՝ բերելու ***Չինումաչինի թագավորի աղջկան***:

Չինաստանի արքայադուստրը հեքիաթային չտեսնված, «հուրի–մալաք» գեղեցկուհիներից է, որի համբավը տարածվել է ամբողջ աշխարհում, որին ձգտել են տիրանալ շատերը, սակայն ոչ մեկի չի հաջողվել, որին տիրելու համար ընտրյալ հերոսը պետք է պայքարի կա՛մ նրա բազմաթիվ երկրպագուների, կա՛մ վիշապի, կա՛մ էլ հենց իր՝ տղամարդու հագուստով ծպտված գեղեցկուհու դեմ: Չինումաչինի արքայադստեր՝ որպես բացառիկ գեղեցկուհու համբավը հեքիաթներից մեկում անգամ պատճառ է դառնում, որ մեկ այլ գեղեցկուհի, վիշապի փոխակերպվելով, հերոսին ուղարկի այդ արքայադստերը բերելու՝ գեղեցկությամբ նրա հետ մրցելու նպատակով: Աղջկան տեսնելուց հետո վիշապը պայթում է, մի գեղեցիկ աղջիկ դառնում և հարցնում հերոսին, թե արդյոք իրենցից որն է ավելի գեղեցիկ: Հերոսը պատասխանում է՝ «Շիտակն օր ըսեմ, դու ռունդ ես (գեղեցիկ)»: Աղջիկն ասում է. «Բոլոր աշխարքը էսոր կը խոսեին, ինձի չէին խոսի, ես էդոր համար էդման սեհրբազութեն կէնեի օր էդոր բերեի մեկմ տեսնիմ» (ՀԺՀ IV, 1963, 269):

Չինական արքայադստերը մենք տեսնում ենք նաև «Սասնա ծռեր» էպոսում: Որոշ պատումներում առաջին ճյուղի հերոսուհի սեհրբազ–կախարդուհի ***Քառսուն Ճող Ծամը*** ներկայացվում է որպես Չինումաչինի թագավորի աղջիկ («Սասնա ծռեր» 1936, պատումներ Է, Ժ, ԺԱ, ԺԹ): Եվ հեքիաթում, և՛ էպոսում Չինաստանի արքայադստերը բնորոշ են այնպիսի հատկանիշներ, որոնք բնութագրական են ընդհանրապես կախարդական երկրի արքայադստերը, հեքիաթային և էպիկական դյուցազնուհիներին. նա հանդես է գալիս որպես ***կախարդուհի՝ սեհրբազ***, որն օժտված է ինչ–որ հզոր, գերբնական ունակությամբ. իր երկրպագուներին քար կամ կենդանի է դարձնում, սպանում կամ մեկ այլ վնաս է հասցնում, և միայն հերոսին է հաջողվում թովչազերծ անել ու տիրել նրան: Այսպես, էպոսում Չինաստանի արքայադուստրը բազմաթիվ արքայազների «սեհր» է արել, մեկին աղվես է դարձրել, մեկին կախարդել է, որ ինչքան ջուր խմի, չհագենա: Նրա «սեհրի» գաղտնիքը յոթ ծովերի կղզու վիշապի բերանի մատանին է, որ կարող է հանել միայն հրեղեն մարդը («Սասնա ծռեր» 1936, 321): Հեքիաթի արքայադուստրը ևս, ինչպես մեր էպոսի դյուցազնուհիները, որոշ պատումներում տղամարդու հագուստով մենամարտում է հերոսի դեմ, որը եկել էր տիրանալու իր հոր՝ Չին թագավորի ձիուն (ՀԺՀ XI, 1980, № 18):

Չինաստանի աղջիկն օժտված է նաև արևային հատկանիշներով. նա ոսկե մազեր ունի, հաճախ գտնվում է վիշապի գերության ներքո, կամ նրան փորձում են փախցնել դևերը: Նրան տիրանալու համար տեղի է ունենում վիշապամարտ: Ոսկեմազ արքայադստեր կերպարը ընդհանրապես բնորոշ է կախարդական աշխարհին, ուր գերակշռում է ոսկին ու ոսկեգույնը: Ռուսական հեքիաթներում, օրինակ, այդ ոսկեմազ արքայադստերը կոչում են ***Елена Золотая Коса Непокрытая Краса*** (Пропп 1986: 285): Եվ էպոսում Չինական արքայադուստր ներկայացվող Քառսուն Ճուղ Ծամի, և՛ հեքիաթի չինական գեղեցկուհու դեպքում շեշտվում են ոսկե վարսերը:

Չինական աշխարհի հետ կապված սյուժեներում հարաբերականորեն կայուն դրսևորում ունեն նաև ***Չինաստանի թագավորի*** հետ կապված մոտիվները: Մի շարք հեքիաթներում Անտես–Աննման գեղեցկուհին հեքիաթի սկզբում չի հիշատակվում որպես Չինաստանի արքայադուստր, սակայն պարզվում է, որ նրան ուզում է կնության առնել Չինաստանի արքայազնը: Այլ հեքիաթներում արդեն հերոսի կինը դարձած գեղեցկուհու ոսկե մազն ընկնում է ծովը, հասնում Չին թագավորին, որը կամենում է տիրել նրան և փախցնում է ջադու պառավի միջոցով (ՀԺՀ III, 1962, № 27):

Համանման դրվագ է ներկայացված նաև «Սասնա ծռերի» պատումներից մեկում: Դավիթը գնում է Գյուրջիստանի գեղեցկուհուն բերելու, պարզվում է, նրան Չին արքան է ուզում ամուսնացնել իր որդու հետ: Սյուժեի զարգացման մեջ տեսնում ենք Չին արքայի և Դավթի կռիվը. սա բացառիկ պատում է, ուր Դավիթը մահանում է հենց կռվի ժամանակ (երդմնադրուժ եղած ու թուլացած Դավթին մարտի դադարի ժամանակ դավադրաբար սպանում է մի պառավ («Սասնա ծռեր», 1936, 377):

Քննարկվող սյուժեներին շատ մոտ իրապատում հեքիաթում Չինաստանի թագավորի փոխարեն հանդես է գալիս Չինաստանի ոսկերիչը, իսկ գեղեցկուհին, որի հետևից մեկնել էր հերոսը, ոսկերչի կինն է, որին ամուսինը փակի տակ էր պահում (ՀԺՀ IV, 1963, № 28):

Չինաստանի թագավորն ու ոսկերիչը այս հեքիաթներում հակահերոսի հատկանիշներ են ի հայտ բերում, ներկայանում են ակնհայտ դիվային գործառույթներով. կամենում են բռնի տիրել, կամ էլ ուղղակի փախցնում են արևային աղջկան: Պատահական չէ նաև, որ հենց ոսկերիչն է աղջկան փակի տակ պահողը. ոսկերիչը ոսկու տիրակալն է, իսկ ոսկին արևի խորհրդանիշներից է (այս մասին մանրամասն տե՛ս Զաքարյան 2004, 45–50):

Այս ամենը հիմք է տալիս հեքիաթային Չինումաչին սիմվոլիկ տարածքը բնութագրել որպես երկնային, արևային մի երկիր, արևային գեղեցկուհու արևելյան բնակավայր:

Ռուս մեծ բանագետ Վ.Պրոպը հեքիաթի կախարդական, այնկողմնային աշխարհի մասին ուշագրավ դիտարկում է կատարում: Խոսելով այն մասին, որ հերոսի վերջին հանգրվանը արևային երկիրն է, ուր և ոսկեմազ արև աղջիկն է՝ նա նկատում է. «Այն ժողովուրդները, որոնք չեն ունեցել արևի պաշտամունք, նրանց հատուկ չէ կախարդական առարկաների ոսկե գույնը» (Пропп 1986: 293): Հայ ժողովրդի դիցաբանական աշխարհում արևի պաշտամունքը յուրահատուկ տեղ ունի. այդ է վկայում Միհրի պաշտամունքի լայն տարածումն ու նրա առասպելի հարատևությունը մեր էպոսում: Հետևաբար բնական է, որ մեր հեքիաթներում արևային աշխարհի նրա հետ կապված՝ ոսկուն ու ոսկեգույնին առնչվող մոտիվները ամենահաճախադեպն են ու սիրվածը: Միանգամայն օրինաչափ է նաև, որ հայ մարդու համար որպես արևի բնակավայր են ընկալվել հենց արևելյան երկրներն ու հատկապես՝ Չինաստանը:

Չինաստանի՝ որպես հրաշքների, շքեղության և ճոխության աշխարհի հայկական ընկալման մասին է խոսում նաև հայերենում մի շարք բառերի ստուգաբանությունը: Այսպես, մեր լեզվում հաճախակի կիրառվող ***չնաշխարհիկ*** բառը, որն ամենայն հավանականությամբ ստուգաբանվում է որպես Չինաց աշխարհից բերված և նշանակում է «արտակարգ կերպով լավ՝ գեղեցիկ, անզուգական, աննման» (Աղայան 1976, 1162), ուղղակիորեն նույն՝ հեքիաթային իմաստավորումն է պարունակում: Ըստ երևույթին, նման մտայնություն է ընկած նաև ***ճենապակի*** բառի ստուգաբանության հիմքում (ճենական=չինական ապակի), թեև այստեղ ստուգաբանությունը գիտական բացատրություն ունի. այդ ապակին առաջինը ստեղծել են Չինաստանում, սակայն բառի ստեծման և լայն տարածման հարցում, կարծում ենք, մեծ դեր է խաղացել նաև Չինաստանի՝ որպես կախարդական, հրաշքներով լեցուն հեռավոր արևելյան երկրի հայկական ընկալումը:

Չինաստանի՝ նման ընկալման մասին է վկայում նաև Մովսես Խորենացին, որը Մամգոնի հետ կապված դեպքերը շարադրելիս կանգ է առնում նաև Ճենաց

աշխարհի նկարագրության վրա: «Նրանց աշխարհն սքանչելի է ամեն տեսակ պտուղների առատությամբ, զարդարված է գեղեցիկ բույսերով, ունի շատ սիրամարգ, արտադրում է առատ քրքում և մետաքս, այնչափ շատ կան այնտեղ համուրներ, հրեշներ և էշայծյամ կոչվածներ: Այնտեղ, ասում են, ընդհանուրի կերակուր են կազմում փասյանը, պորը և նմանները, որոնք մեզ մոտ պատվական և քչերին մատչելի կերակուրներ են: Իսկ ակնեղենների ու մարգարիտների հաշիվը, ասում են, չգիտեն: Եվ այն զգեստները, որ մեզ մոտ պատվական է և քչերին մատչելի, նրանց մոտ սովորական զգեստ է» (Խորենացի 1981, 271),– գրում է պատմագիրը: Ակնհայտ է, որ պատմահայրը փոխանցում է Չինաստանի մասին ժողովրդական պատկերացումները, այդ է վկայում նաև երկու անգամ կրկնվող «ասում են» բառը:

Խորենացու՝ Ճենաց աշխարհի բնութագրումը հարցի մեկ այլ դիտանկյուն է բացահայտում: Ինչպես տեսանք, բազմաթիվ այլ բնորոշումների կողքին Խորենացին Չինաստանը բնութագրում է նաև որպես ***սիրամարգաշատ*** մի երկիր: Սիրամարգ բառը պարսկական փոխառություն է, որ նշանակում է ***չինական թռչուն,*** ծագել է ***sin=չին*** և ***murg=թռչուն*** բառերից (Մալխասեանց 2010, 217): Հայկական բարբառներում այն տարբեր հնչողություն ունի՝ սիրամարք (Ախց.), սինամարք (Մշ.), սինամահաֆք (Ալշ.), սինամոն խավք (Բշ.) (Աճառյան 1979, 219) և, ինչպես արդեն բազմիցս նկատվել է, դա նույն ***Սինամ հավքն*** է, որը Զմրուխտ հավքին և արծվին զուգահեռ մեր ժողովրդական հեքիաթներում հաճախ հանդես է գալիս որպես կենաց ծառի վերնամասի բնակիչ և հերոսին տանում կախարդական, այնկողմնային աշխարհ: Ուշագրավ է, որ Սինամ հավքը հայոց հանելուկներից մեկում պատկերվում է երկնային Հնդու քաղաքի քառասուն ճյուղերից մեկի վրա.

Մե ծառմ կա Հնդու քաղաք,
Ճողեր թալե քաղքե քաղաք.
Հըմեն ճողին քյառսուն ճրագ,
Էն մեկ ճողին՝ սինամախավք
(Հարությունյան 1965, № 75):

Հանելուկը վերաբերում է երկնքին ու աստղերին: Փաստորեն Հնդու քաղաքն այստեղ առասպելական, երկնային քաղաքի իմաստավորում ունի (Հարությունյան 2000, 19):

Հեքիաթների որոշ պատումներում Սինամ հավքը հերոսին տանում է ***Սինամ թագավորի*** երկիր (Խաչատրյան 1999, № 3): Եթե Սինամ հավք նշանակում է չինական թռչուն, ուրեմն Սինամ թագավորի երկիրը նույն Չին թագավորի երկիրն է՝ Չինաստանը: Սինամ թագավորի մասին սյուժեն դարձյալ գերբնական, հրաշապատում մոտիվներով լի մի հյուսվածք է, որն առկա է հայոց ամենատարբեր հեքիաթներում:

Հեքիաթային նյութը մեզ տալիս է Սինամ թագավորի երկրի և Չինումաչինի կապի ևս մեկ ապացույց: Արքայազների վրանի շուրջ փաթաթված վիշապը, որը, ինչպես արդեն նշել ենք, որոշ պատումներում հերոսին ուղարկում է Չինաստանի արքայադստերը բերելու, նույն սյուժեի այլ տարբերակներում հերոսին հանձնարարում է իմանալ Սինամ թագավորի գաղտնիքը: Սինամ թագավորի երկիր կարող է տանել միայն հավքը՝ Զմրուխտ կամ Սինամ, որի ձագերին վիշապից պետք է ազատի հերոսը: Դա մի դժվար ուղևորություն է, որն անգամ հավքն է դժկամությամբ հանձն առնում, և հերոսից պահանջում է ճանապարհի համար

վերցնել 40 ոչխարի դմակ և 40 լիտր գինի: Հեքիաթների շարունակությունը դարձյալ համապատասխանում է. գաղտնիքն իմացած հերոսի վերադառնալուց հետո վիշապը պայթում է և աղջիկ դառնում. պարզվում է՝ նա Սինամ թագավորի քույրն է կամ դուստրը (Գրիգորյան 1983, № 2, 76–81): Մեկ այլ ուշագրավ դիպաշարում տեսնում ենք աղջկա և թռչնի նույնացում: Այստեղ Սիրամարգը Արաբստանի թագավորի կրտսեր դուստրն է, որին փախցրել էր դևը: Աղջիկը աղոթքով «Սիրամարգի–խավ» է դառնում՝ հեքիաթի վերջում նորից վերածվելով աղջկա (ՀԺՀ IX, 1968, Հավելված 1, № 15 (97):

Ծագումնաբանական նշված ընդհանրություններն, իհարկե, հիմք են տալիս ենթադրելու, որ Սինամ թագավորի երկիր կոչված սիմվոլիկ տարածքը նույն Չինումաչինն է՝ մեկ այլ անվանումով: Թեև Սինամ հավք և Սինամ թագավորի երկիր անվանումներն արդեն լիովին կորցրել են իրենց նախնական՝ չինական հավք և Չինաստան նշանակությունները և բացարձակ անիրական, առասպելական արժեք են ձեռք բերել, այնուամենայնիվ դրանց ծագումը մեզ դարձյալ ուղղորդում է դեպի Չինաստանի՝ հայերի համար ունեցած հեքիաթային, կախարդական աշխարհի նախնական սիմվոլիկ իմաստավորումը:

Չինումաչին գերբնական երկիրը իր իմաստավորումը որոշակիորեն պահում է նաև իրապատում խոհախրատական հեքիաթներում, ուր այն արդեն ընկալվում է ոչ թե որպես կախարդանքի, այլ ազնվության, արդարադատության երազված մի աշխարհ, ուր դատարան չկա, որովհետև գողեր չկան, ուր իշխանավորները արդար վճիռներ են կայացնում, իսկ մարդիկ պարզ են ու մաքուր: «Էս քաղաք էման քաղաք էր, օր ոչ գող կար, ոչ գիշութեն կար, մենակ մեկ քարգա կը քաշեին թյուքնի վրեն, կերթային կը պառկեին... »,– այսպես է բնութագրում բանասացը Չինի–Մաչին քաղաքը, ուր մեկնել էր հերոսը պանդխտության և ծառայության էր մտել ոսկերչի մոտ (ՀԺՀ IV, 1963, № 44):

Ամփոփելով նշենք, որ հայ ժողովրդական հեքիաթներում հիշատակվող հեռավոր արևելյան երկրներից հատկապես Չինաստանն է հանդես գալիս որպես կախարդական աշխարհի խորհրդանիշ: Նրա շուրջ հյուսված սյուժեները հարաբերականորեն կայուն դրսևորում ունեն, ուր մեծ դերակատարում ունի Չինաստանի արքայադուստրը, որը հանդես է բերում ընդգծված արևային հատկանիշներ: Դիվային հակահերոսի բացասական բնութագիր ունի Չինաստանի թագավորը կամ ոսկերիչը, որը բռնի տիրանում է արևային աղջկան:

Չինաստանի՝ որպես կախարդական աշխարհի խորհրդանիշի մեկ այլ դիտանկյուն են ներկայացնում Սինամ հավքի ու Սինամ թագավորի մասին սյուժեները, որոնք ստուգաբանվում են որպես չինական հավք և Չին թագավոր, սակայն հեռացած լինելով իրենց նախնական իմաստից, բոլորովին անիրական, այլաբանական իմաստավորում են ձեռք բերել՝ շարունակելով սակայն իրենց մեջ կրել նախնական ընկալման հետքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. (1966), *Երկեր*, h. Ա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
2. Աղայան Էդ. (1976), *Արդի հայերենի բացատրական բառարան*, Եր., «Հայաստան» հրատ.:
3. Աճառյան Հ. (1977), *Հայերեն արմատական բառարան*, h. 3, Եր., ԵՊՀ հրատ.:
4. Աճառյան Հ. (1979), *Հայերեն արմատական բառարան*, h. 4, Եր., ԵՊՀ հրատ.:
5. Գրիգորյան Ռ. (1983), Գեղարքունիք, *ՀԱԲ*, h. 14, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

6. Գուրունյան Հ.(1991), *Համշենահայ բանահյուսություն*, Ե., «Լույս» հրատ.:
7. Զաքարյան Ե. (2004), Ոսկերիչը հայկական հեքիաթներում, *Հայ ժողովրդական մշակույթ, XII հանրապետական գիտաժողովի նյութեր*, Եր., էջ 45–50:
8. Խաչատրյան Ռ. (1999), Թ-ալին, *ՀՍՀ*, հ. 19, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
9. Խեմչյան Է. (2000), Տավուշ, *ՀՍՀ* հ. 21, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
10. Խորենացի Մ. (1981), *Հայոց պատմություն*, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ.Մալխասյանի, Եր., ԵՊՀ հրատ.:
11. Հակոբյան Գ. (1974), *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*, Եր., «Հայաստան» հրատ.:
12. ՀԺՀ (1962), հ. 3, կազմ. Ա.Մ.Նազինյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
13. ՀԺՀ (1963), հ. 4, կազմ. Մ.Ս.Մկրտչյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
14. ՀԺՀ (1973), հ. 6, կազմ. Ա. Մ. Նազինյան, Վ. Գ. Սվազլյան,Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
15. ՀԺՀ (1968), հ. 9, կազմ. Մ.Ս.Մկրտչյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ. :
16. ՀԺՀ (1969), հ.10, կազմ. Ս.Տարոնցի, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
17. ՀԺՀ (1980), հ. 11, կազմ. Մ.Ս.Մկրտչյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
18. ՀԺՀ (1985), հ. 13, կազմ. Ա.Ս.Ղազիյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
19. Հարությունյան Ս. (2000), *Հայ առասպելաբանություն*, Բեյրութ, Համազգային Վահէ Սէթեան տպարան:
20. Հարությունյան Ս. (1965), *Հայ ժողովրդական հանելուկներ*, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
21. Ղանալանյան Ա. Տ. (1960), *Առածանի*, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
22. Մալխասեանց Ստ. (2010), *Հայերէն բացատրական բառարան*, հ. 4, Եր.,ԵՊՀ հրատ.:
23. Սրվանձտյանց Գ. (1978), *Երկեր*, հ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
24. «Սասնա ծռեր» (1936), հ. Ա, խմբագրեց պրոֆ. Մ.Աբեղյան աշխատակցությամբ Կ.Մելիք–Օհանջանյանի, Պետական հրատ.:
25. Пропп В. (1986), *Исторические корни волшебной сказки*, Ленинград, Изд–во ЛГУ.

Nvard Vardanyan

CHINA AS A FABULOUS LAND IN ARMENIAN FAIRY TALES

Summary

In Armenian fairy tales China and its fairy tale toponym *Chinumachin* often appear to symbolize a thrilling, far away land, full of wonders. In such fairy tales the gold–haired ‘Chinese’ princess is inevitably the Beauty of the World. It is for her sake that the hero struggles with the dragon and the King of China. The China motifs are frequently met in the first branch of *Daredevils of Sassoun,* the Armenian national epic too. Such affinities support our suggestion that in Armenian worldview China is a symbol of a fabulous world, the Eastern dwelling of the Radiant Beauty. *King Sinam’s Land* and *the Sinam Bird* are expressions the etymology of which point at the Land of the Chinese King and the Chinese Bird. In a series of Armenian realistic folk tales China is presented as the Ideal Land of justice and honesty.

Натали Арутюнян

О ПРЕЛОМЛЕНИИ ОБРАЗОВ ВОСТОЧНЫХ СКАЗОК И ЛЕГЕНД В ЕВРОПЕЙСКОМ И АРМЯНСКОМ МУЗЫКАЛЬНОМ ТЕАТРЕ

Светлой памяти Георгия Григорьевича
и Ирины Георгиевны Тиграновых

Древние цивилизации, которые географически расположены по большей части к юго–востоку от европейского континента, не могли не привлекать внимание европейских культур как с прагматической, так и с духовной точек зрения. *Omne ignotum pro magnifico est*[1] – объективные ограничения общения между странами Востока и Запада, и стихийная мифологизация всего того, что случайно становилось известно о восточных странах, привели к тому, что в коллективном бессознательном жителей Европы сформировалось представление о Востоке в целом как о нереальной, волшебной, одним словом, сказочной стране. Но и сегодня, когда благодаря техническим средствам связь между различными странами стала гораздо активнее, эти стереотипы во многом сохранили свою силу, а восточная волшебная сказка, получившая множество воплощений в музыкальном театре, а отсюда – и в кино и мультипликации, не потеряла своего обаяния и привлекательности.

Известно, что ещё в 326 году до н.э. Александр Македонский положил начало эллинизму, ставшим исторически первым серьёзным шагом на пути синтеза культурных достижений различных цивилизаций. Но и после того, как Васко да Гама открыл морской путь в Индию (1499), и путешественники из Португалии, Голландии, Англии, Дании и Франции начали привозить в Европу редкие специи, чай, шёлк, ковры, искусные украшения из дерева, золота, серебра и драгоценных камней, интерес к древним легендам не пропал. Напротив, восточные сказки и легенды стали обрастать новыми подробностями, а сказочные персонажи, благодаря этим предметам роскоши, обретали новую жизнь, сливаясь в воображении европейцев с подлинными жизненными реалиями. Так, с течением времени шло формирование и нового жанра экзотической литературной волшебной сказки. При этом «тоска по слишком нежным странам», – как определил непреодолимую тягу европейцев к восточной экзотике К.Дебюсси, – была весьма неясной. Так, «само название города Голконда стало синонимом невообразимого богатства. Но среди экзотических или «ориентальных» вещей царила полная неразбериха – турки, африканцы, персы, американские индейцы и жители Карибского бассейна – все были из одного и того же воображаемого региона – «Индий», который существовал больше в поэтических фантазиях европейцев, чем на географической карте» (Warren 2006: 97–98).

շեղումը դրսևորվում է հերոսուհու մահվան տեսարանի նկարագրության մեջ: Այսպես՝ Օթելլոն խեղդում է Դեզդեմոնային, մինչդեռ Չինտիոյի մոտ մավրը հանձնարարում է դրոշակրին ավազով լցված գուլպայով ծեծել իր կնոջը մինչև մահանա: Այնուհետև մավրը և դրոշակիրը Դեզդեմոնայի անկենդան մարմինը դնում են անկողնուն, ջախջախում գլուխը և անկողնու վերևում ճեղքելով առաստաղը՝ տպավորություն ստեղծում, թե ընկնող գերաններն են մահվան պատճառ դարձել: Հետագայում մավրը զղջում է իր հանցանքի համար և սկսում ատել դրոշակրին՝ իջեցնում է պաշտոնը և հրաժարվում նրա ծառայություններից: Վերջինս փորձում է վրեժխնդիր լինել և հեծելազորի առաջնորդին հայտնում է, որ մավրն է մեղավոր կնոջ մահվան մեջ: Վերադառնալով Վենետիկ՝ նրանք մավրին մատնում են այնտեղի իշխանություններին: Մավրը ձերբակալվում է, Կիպրոսից տեղափոխվում Վենետիկ, տանջանքների ենթարկվում, բայց հրաժարվում է ընդունել իր մեղքը: Նա դատապարտվում է աքսորի, սակայն, վերջիվերջո, Դեզդեմոնայի հարազատները գտնում և սպանում են նրան: Դրոշակիրը, թեև խուսափում է Դեզդեմոնայի մահվան պատասխանատվությունից, բայց ներառվում է այլ հանցանքների մեջ և տանջանքների ենթարկվելով մահանում:

Խմբավորելով դիպաշարային ընդհանրություններն ու տարբերությունները՝ անդրադառնանք «Կապույտ Մորուքը» շարքի պատմություններին՝ վերջիններս և վերը նշված երկերը քննելով թեմատիկ առնչությունների համատեքստում:

«Կապույտ Մորուքի» տարբերակների միջտեքստային ուսումնասիրությունը դժվարանում է նրանով, որ շատ տարբերակներում այս կերպարը հանդես է գալիս դիմակավորված:

«Կապույտ Մորուքի» տարբերակներից է անգլիական «Պարոն Ֆոքսը», որ գրվել է Պերրոյից առաջ: Հետաքրքրական է, որ Շեքսպիրի «Իզուր տեղը մեծ աղմուկ» պիեսում հիշատակվում է այս հեքիաթը (Ջիվանյան 2002, 43): Երբ Կլաուդիոն ասում է “*If this were so, so it were uttered*”, Բենեդիկտը շարունակում է “Like the old tale, my Lord, *it is not so, nor it was, but indeed God forbid it should be so*”:

Կլաուդիո: Եթե այդ այդպես լիներ, ուրեմն պատասխանը ճիշտ կլիներ:
*Բենեդիկտ: Ինչպես հին հեքիաթի մեջ, տեր իմ. «***Այդ այդպես չէ, եղել է, չի եղել, աստված ոչ անի, որ այդպես լինի***»:*
(Շեքսպիր 1953, ար. առ., տես. առ., էջ 495)

Փաստորեն Շեքսպիրը ծանոթ է եղել հեքիաթին: Ի տարբերություն Պերրոյի «Կապույտ Մորուքի»՝ անգլիական տարբերակում գլխավոր կերպարը կապույտ մորուք չունի և նրա տեսքը սարսափելի չէ, ընդհակառակը, խիզախ և բարեկիրթ պարոնի տպավորություն է թողնում: Գլխավոր հերոսուհին (ի տարբերություն Պերրոյի պատումի) անուն ունի՝ Մերի: Եթե Պերրոյի տարբերակում հերոսուհու եղբայրների մասին հիշատակվում է միայն տեքստի վերջում, ապա անգլիական տարբերակի հենց սկզբում հիշատակվում են Մերիի երկու եղբայրները: Ֆրանսիական տարբերակում Կապույտ Մորուքի կինը ամուսնությունից հետո է ամեն ինչ իմանում, «Պարոն Ֆոքսում» հերոսուհին մինչ ամուսնությունն է մտնում արգելված սենյակ: Փեսացուի բացակայության ժամանակ այցելելով նրա տուն՝ Մերին ականատես է լինում անսպասելի վերադարձած Ֆոքսի դաժանությանը. հետևից քարշ տալով՝ սա ներս է բերում մի հարուստ օրիորդի և, չկարողանալով նրա մատից հանել ադամանդե մատանին, կտրում է ձեռքը: Ձեռքն ընկնում է տակառի հետևում թաքնված կնոջ գիրկը: Հաջորդ օրը Մերին պատմում է, որ

սարսափելի երազ է տեսել ու մանրամասն նկարագրում նախորդ օրվա դեպքը: Ֆոքսն ամեն ինչ ժխտում է, սակայն Մերին ցույց է տալիս ադամանդե մատանին կրող ձեռքը: Այս տեսնելով՝ Մերիի եղբայրները սպանում են Ֆոքսին:

Նշենք, որ Գրիմների «Կապույտ Մորուքը» ավելի մոտ է անգլիական տարբերակին, քան Պերրոյի «Կապույտ Մորուքին»: Սակայն հարսնացուն այստեղ ոչ թե իր, այլ փեսացուի նախաձեռնությամբ է այցելում նրան ու ծեր կնոջ օգնությամբ բացահայտում ամուսնու գաղտնիքը:

«Հազար ու մեկ գիշեր» ժողովածուի «Երեք խնձոր» հեքիաթում նույնպես հերոսուհին դառնում է ամուսնու դաժանության զոհը: Ամուսինը, հավատալով ստրուկի սուտ պատմությանը, կասկածում է կնոջը դավաճանության մեջ և բառ անգամ չասելով նրան՝ դանակով կտրում վիզը: Այնուհետև սառնասրտորեն գլուխն անջատում է մարմնից, դնում զամբյուղը, իսկ վերջինս դնելով սնդուկի մեջ՝ նետում գետը:

Նշենք, որ և՛ պիեսում, և՛ Պերրոյի հեքիաթում առկա է կրոնական խնդիր, թեև առաջին հայացքից այն երկրորդական կարևորություն ունի: Գրված լինելով Իսպանիայից մահմեդականների արտաքսվելուց մեկ դար հետո՝ պիեսում հակակրանքի ակնհայտ տարրեր են բացահայտվում ինչպես Օթելլոյի մավրական արմատների, այնպես էլ նրա կրոնական ու մշակութային յուրահատկությունների նկատմամբ: Արևմուտք ու Արևելք հակադրությունը բացահայտվում է նաև վենետիկցիների և թուրքերի տարաձայնության մեջ. Վենետիկի քրիստոնյա բնակիչները ցանկանում են պաշտպանվել մահմեդական թուրքերի ազդեցությունից, և կարծես ճակատագրի հեգնանքն էր, որ *մավր* Օթելլոն էր այն անձը, ով կարող էր ավարտին հասցնել այդ առաքելությունը:

Օթելլոյի էթնիկական ծագման վերաբերյալ կարծիքները տարբերվում են: «Արդեն Շեքսպիրի» (Arden Shakespeare) խմբագիր Հոնիգմանը եզրակացնում է, որ Օթելլոյի ազգությունն անորոշ է: Մավրի վերածննդյան նկարագրություններն անորոշ էին, հաճախ՝ անհամատեղելի և հակասական[1]: «Մավր» բառի իմաստային դաշտը և գործածությունն այնքան էլ հստակ չէր, կիրառվում էր բնորոշելու մուգ մաշկ ունեցող մարդկանց նկարագրելիս և համարժեք էր «աֆրիկացի», «եթովպացի», «սևամորթ» և նույնիսկ «հնդիկ» բառերին:

Եվրոպացիները «մավր» էին անվանում բերբերներին, իսկ հետագայում նաև արաբներին, մահմեդական իբերիացիներին և Մալիից ու Նիգերիայից եկող բնակիչներին:

«Մավր» բառը մի շարք իմաստներ է ձեռք բերել «moreno» լատինական արմատից, որ ինչպես Իսպանիայում և Պորտուգալիայում, այնպես էլ Բրազիլիայում կարող է նշանակել «թխամորթ»: Կուբայում և այլ իսպանախոս երկրներում այն նույնպես ունի «սևամորթ» կամ «թխամորթ» իմաստը:

Պորտուգալիայում և Իսպանիայում «mauro» նշանակում էր նաև գերբնական էակ, «այլմոլորակային»: Մավր էին անվանում նաև ոսկեգույն կամ կարմրավուն մազերով գեղեցկատես ծովահարսներին՝ հավատալով, որ նրանք մոգական զորություն ունեն: «Մավր» էին կոչում նաև չմկրտված՝ «ոչ քրիստոնյա» երեխաներին:

---

1 Անգլերենում «moor» ասելով հասկանում են Մարոկկոյի բնակիչ կամ մահմեդական բնակչության ներկայացուցիչ: Արաբների, իսպանացիների և բերբերների միախառնումից, մավրերը ստեղծեցին արաբ–անդալուսական քաղաքակրթությունը («moor». In *Britannica. com.* Retrieved June 12, 2011, from http://www.britannica.com:

Պիեսում Յագոն Բրաբանցիոյի հետ զրուցելիս Օթելլոյին անվանում է «*արաբական ձի*» (barbary horse)՝ անուղղակիորեն մատնանշելով նրա՝ այլ կրոնի պատկանելը.

IAGO: 'Zounds, sir, you are one of those that will not
serve God, if the devil bid you. Because we come to
do you service and you think we are ruffians, you'll
*have your daughter covered with a **Barbary horse**;*
you'll have your nephews neigh to you; you'll have
coursers for cousins and gennets for germans.
(Shakespeare 1961: I.i. 108–113; p.14)

Նմանատիպ վերաբերմունք է նկատվում Բրաբանցիոյի խոսքերում.
BRABANTIO: For if such actions may have passage free,
Bondslaves and pagans shall our statesmen be.
(I.ii. 98–99; p.22)

Ակնարկն անուղղակի վերաբերում է Օթելլոյին՝ նրա օտարական լինելուն, այլ հավատք դավանելուն:

Անդրադառնանք Շարլ Պերրոյի պատմությանը: Պերրոն Կապույտ Մորուքին ներկայացնում է որպես դաժանության կատարյալ տիպար, հրեշ–ազնվական, ով մոլորեցնում և մեկը մյուսի հետևից սպանում է իր կանանց: Համանման սյուժեով հեքիաթներ բնորոշ են շատ մշակույթների: Հեքիաթի հերոսուհին անցնում է նույն ճանապարհով, որով անցել են Ղովտի կինը, Պանդորան, Եվան և բոլոր այն կանայք, որոնք ներկայացնում են «կանացի հետաքրքրասիրության» թեման: Մյուս կողմից Կապույտ Մորուքը համեմատելի է Ղովտի, Կուպիդոնի, Ադամի, նաև անտիկ դիցաբանության մի շարք տղամարդ կերպարների հետ:

Կապույտ Մորուքին հաճախ վերագրում են մահմեդականին բնորոշ գծեր: Ասպես, 1798թ. Ջորջ Քոլմանը Թուրքիայում բեմադրեց Պերրոյի հեքիաթի վրա հիմնված ներկայացում, որտեղ Կապույտ Մորուքին փոխարինում էր Աբոմելիքը, իսկ օժանդակ կերպարներին՝ Իբրահիմն ու Սելիմը (Jeter 2009):

Մահմեդականության ակնհայտ անդրադարձներ հանդիպում ենք պատումի հետևյալ տողերում.

… neither one would have him, and they kept sending him back and forth between them, not being able to make up their minds to marry a man who had a blue beard. What increased their distaste for him was that **he had already had several wives, and nobody knew what had become of them** (Zipes 1997: 17).

***

*At first she could make out nothing, since the windows were shuttered. After a short time, though, she began to perceive that the floor was covered with clotted blood of the dead bodies of several women suspended from the walls. **These were all the former wives of Blue Beard, who had cut their throats one after the other**. She thought she would die from fright, and the key to the room fell from her hand (Zipes 1997: 19).*

Դիտարկենք մեկ այլ թեմատիկ առնչություն: Պիեսում Օթելլոն, խանդից կուրացած, վճռում է սպանել Դեզդեմոնային, սպանել առանց դաշույնի.

OTHELLO: Yet I'll not shed her blood,
Nor scar that whiter skin of hers than snow,
And smooth as monumental alabaster.
Yet she must die, else she'll betray more men.
Put out the light, and then put out the light.
(V.ii. 3–7; p.133)

Նա հրամայում է Դեզդեմոնային աղոթել այն մեղքի համար, որ «դեռ անհաշտ է երկնային շնորհի և թողության հետ» (թարգմ. Հովh. Մասեհյանի).

OTHELLO: If you bethink yourself of any crime
Unreconcil'd as yet to heaven and grace,
Solicit for it straight.
DESDEMONA: Alas, my lord, what do you mean by that?
OTHELLO: Well, do it, and be brief; I will walk by.
I would not kill thy unprepared spirit.
No (heaven forfend!), I would not kill thy soul.
DESDEMONA: Talk you of killing?
OTHELLO: Ay, I do.
DESDEMONA: Then heaven
Have mercy on me!
OTHELLO: Amen! with all my heart.
(V.ii. 26–34; p.134–135)

Ինչքան էլ Դեզդեմոնան փորձում է համոզել նրան, որ մեղք չի գործել, որ հավատարիմ է, որ իր միակ մեղքը ամուսնուն սիրելն է, Օթելլոն չի հավատում և, շարունակ կրկնում է, որ նա պիտի մահանա.

OTHELLO: That handkerchief which I so lov'd and gave thee
Thou gav'st to Cassio.
DESDEMONA: No, by my life and soul!
Send for the man, and ask him.
OTHELLO: Sweet soul, take heed,
Take heed of perjury; thou'rt on thy death–bed.
DESDEMONA: Ay, but not yet to die.
(V.ii. 47–51; p.135)

Խանդից կուրացած Օթելլոն չի ուզում ոչինչ հասկանալ և պնդում է, որ եթե նույնիսկ Դեզդեմոնան երդումով ժխտի նրա կասկածները, միևնույնն է, մահանալու է.

OTHELLO: Yes, presently.
Therefore confess thee freely of thy sin;
For to deny each article with oath
Cannot remove nor choke the strong conception

That I do groan withal. Thou art to die.
DESDEMONA: Then Lord have mercy on me!
OTHELLO: I say, amen.
DESDEMONA: And have you mercy too! I never did
Offend you in my life; never lov'd Cassio
But with such general warranty of heaven
As I might love. I never gave him token.
OTHELLO: By heaven, I saw my handkerchief in his hand.
O perjur'd woman! thou dost stone my heart,
And mak'st me call what I intend to do
A murder, which I thought a sacrifice:
I saw the handkerchief.
(V.ii. 52–66; p.135–136)

Շատ նման մի դրվագ տեսնում ենք «Կապույտ Մորուքը» հեքիաթում.

The next morning he asked her to return his keys. She gave them to him, but her hand trembled so much that he did not have any difficulty in guessing what had occurred.
"Why is it," he said, "that the key to the little room is not with the others?"
"I must have left it upstairs on my table," she replied.
"Bring it to me right now," said Blue Beard.
After several excuses she was compelled to produce the key. Once Blue Beard examined it, he said to her, "Why is there blood on this key?"
"I don't know," answered the poor woman, paler than death.
"You don't know?" Blue Beard responded. "I know well enough. You wanted to enter the room! Well, madam, you will enter it and take your place among the ladies you saw there."
…………………………
"If I must die," she replied, looking at him with eyes bathed in tears, "give me a little time to say my prayers."
"I shall give you a quarter of an hour," Blue Beard answered, "but not a minute more."
.....Blue Beard began to roar so loudly that the whole house shook. So his poor wife descended to him and threw herself at his feet, all disheveled and in tears.
"It's no use," said Blue Beard. "You must die!"
He seized her by the hair with one hand and raised his cutlass with the other. He was about to cut off her head when the poor woman looked up at him. Fixing her dying gaze upon him, she implored him to allow her one short moment to collect herself.
"No, no," he said, lifting his arm, "commend yourself as best you can to Heaven." (Zipes 1997: 19–20, 21)

Սակայն հեքիաթում իրադարձությունների հետագա ընթացքը բոլորովին այլ է: Ի տարբերություն պիեսի՝ մինչ այդ պատումում Կապույտ Մորուքի կնոջ ոչ մի անգամ չհիշատակվող եղբայրները կանխում են դժբախտությունը.

At that moment there was such a loud knocking at the gate that Blue Beard stopped short. The gate was opened, and two horsemen burst through. With drawn swords they

*ran straight at Blue Beard, who recognized them as the brothers of his wife – one a dragoon, the other a musqueteer. Immediately he fled, hoping to escape, but they pursued so quickly that they overtook him before he could reach the step of his door and passed their swords through his body, leaving him dead on the spot (*Zipes 1997: 21*).*

Պիեսում Օթելլո/Դեզդեմոնա զրույցը երկարում է և ամեն վայրկյան թվում է՝ Օթելլոն պիտի վերագտնի բանականությունը, սակայն նա Դեզդեմոնային նույնիսկ աղոթելու հնարավորություն չի տալիս.

DESDEMONA: O, banish me, my lord, but kill me not!
OTHELLO: Down, strumpet!
DESDEMONA: Kill me to–morrow; let me live to–night!
OTHELLO: Nay, an you strive,–
DESDEMONA: But half an hour!
OTHELLO: Being done, there is no pause.
DESDEMONA: But while I say one prayer!
OTHELLO: It is too late.
He stifles her.
(V.ii. 78–83; p.136–137)

Ճակատագիրն ասես սխալն ուղղելու ևս մեկ հնարավորություն է տալիս նրան: Թվում է՝ Էմիլիան կանխելու է դժբախտությունը. Օթելլոն սթափվելու է.

EMILIA: [within] My lord, my lord! what, ho! my lord, my lord!
(V.ii. 85; p.137)

Բայց Էմիլիայի ձայնը փոխանակ սթափեցնելու, ասես նոր ուժ է տալիս Օթելլոյին, և նա ավարտում է այն, ինչ սկսել էր.

OTHELLO: What noise is this? Not dead? not yet quite dead?
I that am cruel am yet merciful;
I would not have thee linger in thy pain.
So, so.
(V.ii. 86–88; p.137)

Հետաքրքրական է կանգ առնել «Օթելլոյի» և այս շարքի պատմությունների գունային տարրերի մեկնության վրա ինչպես թեմատիկ–կերպարային, այնպես էլ ոճաիմաստային առնչության համատեքստում:

Գունային հակադրության սուր ընկալումը Շեքսպիրը հաճախ կապում է պիեսում գերիշխող հույզի հետ: Այսպես՝ Օթելլոյին ուղղված Յագոյի արհամարհական բնորոշումը՝ «*սև* պառավ խոյ», ուղղակի հակադրության մեջ է դրվում Դեզդեմոնային բնութագրող «*ճերմակ* գառնուկ» հեգնական փոխաբերության հետ.

IAGO: Even now, now, very now, ***an old black ram***
Is tupping your ***white ewe****.*
(I.i. 88–89; p.13)

***

Յագո: Հիմա, հենց հիմա, հենց այս րոպեիս ***մի սև պառավ խոյ***
Յափկել է ***ճերմակ գառնուկիդ*** *վրա:*
(Շեքսպիր 1980, ար. առ., տես. առ., էջ 14)

Ինչպես Բրաբանցիոն է ասում, Օթելլոյին կարելի է սիրել միայն «թովքի շղթաների մեջ», այլապես հնարավոր չէ լինել խելամիտ ու «իրեն նետել նրա զարհուրանք ազդող **մրոտ գրկի մեջ**» (Հովհ. Մասեհյան).

BRABANTIO: For I'll refer me to all things of sense,
If she in chains of magic were not bound,
Whether a maid so tender, fair, and happy,
So opposite to marriage that she shunn'd
The wealthy curled darlings of our nation,
Would ever have, (t'incur a general mock)
Run from her guardage to the sooty bosom
Of such a thing as thou– to fear, not to delight*.*
(I.ii. 64–71; p.20)

Գունային հակադրության մեկ այլ ուշագրավ տեսարան կա ողբերգության այն հատվածում, որտեղ Օթելլոն իր սև լինելը վատի, կեղծիքի չափանիշ է համարում.

OTHELLO: ... Her name, that was as fresh
As Dian's visage, ***is now begrim'd and black***
As mine own face *(III.iii. 386–388; p.88).*

'Begrim'd', 'black'՝ «մրոտ», «սև» ածականները պարզապես գունային երանգավորում չեն հաղորդում խոսքին, այլ օգտագործվում են «անմաքուրի». «անազնիվի», «դավաճանի» փոխարեն:

Հետևյալ օրինակը մեկ անգամ ևս բացահայտում է սև գույնի յուրօրինակ ընկալումը պիեսում.

EMILIA: O, the more angel she,
And you the blacker devil!
(V.ii. 129–130; p.139)

Այսպիսով, ողբերգության մեջ գույներն ունեն նաև արտահայտված հոգեբանական դրսևորում: Օթելլոյի արտաքինը նույնացվում է էությանը. արտաքին սևությունն ասես կրկնապատկվում է ներքին չարությունից: Գույնի հակադրումն ասես նախապայման է պիեսի ներքին լարվածությունն էլ ավելի ընդգծելու համար:

Թեմատիկ–կերպարային, ինչպես նաև ոճաիմաստային միջտեքստային առնչություն կարելի է հաստատել վերը բերված օրինակների և Պերրոյի տեքստի այն հատվածների հետ, որտեղ գլխավոր կերպարին նկարագրելիս հեղինակը շարունակաբար հիշատակում է նրա մորուքը: Չնայած գունային հակադրում

այստեղ չկա, բայց ավելի սեղմ համատեքստում մի քանի անգամ կրկնվող «կապույտ» մակդիրն ընթերցողի ուշադրությունը սևեռում է գույնի վրա.

*…**this man had a blue beard**, which made him look so ugly and terrifying that there was not a woman or girl who did not run away from him (Zipes 1997: 17).*

***

*… neither one would have him, and they kept sending him back and forth between them, **not being able to make up their minds to marry a man who had a blue beard** (Zipes 1997: 17).*

***

*The neighbors and friends of the young bride did not wait for her invitation, so eager were they to see all the treasures contained in the country mansion. **They had not ventured to enter it while her husband was at home because they had been frightened of his blue beard** (Zipes 1997: 18).*

Անգլիական տարբերակում, ինչպես նաև Գրիմների մոտ գլխավոր հերոսները ամենևին էլ սարսափազդու արտաքին չունեն:

Միջտեքստային ոճական առնչությունների տեսանկյունից փորձենք քննել պիեսում և Պերրոյի հեքիաթում առանցքային դեր ունեցող առարկաները՝ թաշկինակը և բանալին: Երկու տեքստերում էլ վերջիններս օժտված են հմայական ուժով, երկուսն էլ ակամա դառնում են դժբախտության պատճառ: Համապատասխան հատվածները քննելիս պարզ է դառնում, որ տեքստերի հեղինակները գերբնական հատկություն են վերագրել առաջին հայացքից անկարևոր, բայց տեքստում մեծ խորհուրդ ունեցող առարկաներին: Օթելլոն իրենց երջանկության գրավականը տեսնում է կախարդական հյուսվածքով թաշկինակի զորության մեջ, քանի որ կախարդ եգիպտուհու տված թաշկինակում է սիրո գաղտնիքը: Նա թաշկինակի ամբողջ պատմությունը ներկայացնում է ոճականորեն հագեցած բնորոշումներով.

OTHELLO: That handkerchief
Did an Egyptian to my mother give;
She was a charmer, and could almost read
The thoughts of people. She told her, while she kept it,
'Twould make her amiable and subdue my father
Entirely to her love, but if she lost it
Or made gift of it, my father's eye
Should hold her loathly, and his spirits should hunt
After new fancies. She, dying gave it me;
And bid me, when my fate would have me wive,
*To give it her. I did so, – **and take heed on't;***
Make it a darling like your precious eye.
To lose or give't away were such perdition
As nothing else could match.
(III.iv. 55–67; p.94)

Թաշկինակը մարգարեական է, քանի որ սիբիլլուհին մոգական մոլուցքի մեջ է հյուսել կերպասը, իսկ ներկը քամել կույս աղջիկների սրտից.

OTHELLO: 'Tis true. There's magic in the web of it.
A sibyl, that had number'd in the world
The sun to course two hundred compasses,
In her prophetic fury sew'd the work.
The worms were hallow'd that did breed the silk,
And it was dy'd in mummy which the skillful
Conserv'd of maidens' hearts.
(III.iv. 69–74; p.95)

Անդրադառնանք Պերրոյի երկի համապատասխան երկու դրվագներին.

"Here are the keys to my two great storerooms," he said to her. "These are the keys to the chests in which the gold and silver plates for special occasions are kept. These are the keys to the strongboxes in which I keep my money. These keys open the caskets that contain my jewels. And this is the passkey to all the apartments. ***As for this small key," he said, "it is for the little room at the end of the long corridor on the ground floor. Open everything and go everywhere except into that room, which I forbid you to enter. My orders are to be strictly obeyed, and if you dare open the door, my anger will exceed anything you have ever experienced"*** *(Zipes 1997: 18).*

***

Then she noticed that the key to the room was stained with blood. She wiped it two or three times, but the blood would not come off. In vain she washed it, and even scrubbed it with sand and grit. But the blood remained, for the key ***was enchanted****, and there was no way of cleaning it completely. When the blood was washed off one side, it came back on the other (Zipes 1997: 19).*

Ամփոփելով, նշենք, որ էական թեմատիկ, դիպաշարային, կերպարային և լեզվաոճական ընդհանրություններով հանդերձ՝ վերլուծվող տեքստերը, ելնելով ժանրային պոետիկայի պահանջներից, պետք է ունենան արմատապես տարբեր ավարտներ. ահա այստեղ է, որ ողբերգության և հրաշապատում հեքիաթի տեքստերը կտրուկ բեկվում են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Շեքսպիր Վ. (1980), *Օթելլո*, թարգմ. Հովh. Մասեհյանի, Երևան, Սովետական գրող հրատ.:

Շեքսպիր Վ. (1953), *Իզուր ջանքեր մեծ աղմուկ*, թարգմ. Խ. Դաշտենցի, Երևան, Հայպետհրատ:

Ջիվանյան Ա. (2002), The Bluebeard or Reading Between The Lines // *Աստղիկ*, N 12, Սահակ Պարթև:

Grimm, J. & W. (1993). *Grimms' Fairy Tales*. Hertfordshire: Wordsworth Children's Classics.

Mr. Fox (1994). *English Fairy Tales*. Hertfordshire: Wordsworth Classics.

Zipes, J., translator (1997). *Beauty and The Beast and Other Classic French Fairy Tales*. Signet Classic.

Shakespeare, William (1961). *The Late Shakespeare. The Tragedy of Othello The Moor of Venice*. Yale University Press.

Jeter, Edje "Blue-Bearded Mormons". In *Juvenileinstructor.org.* Retrieved August 01, 2009, from http://www.juvenileinstructor.org.

Tatevik Hovhannisyan

SHAKESPEARE'S 'OTHELLO' AND TALES OF THE BLUEBEARD CYCLE ASPECTS OF INTERTEXTUALITY

Summary

The present article is an intertextual interpretation of Shakespeare's 'Othello'. The analysis of the material shows that Shakespeare's tragedy has obvious affinities with the tales of the 'Bluebeard' cycle: Perrault's *Blue Beard*, the English *Mr. Fox* etc. A number of major similarities are manifested on the levels of motif, character and style. The study of the mentioned texts reveals correspondences otherwise unobserved. The key differences are conditioned by generic demands rather than plot development.

«ՊՂՆՁԵ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՐԱԲԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Հ. Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հայ գրականության մեջ, ինչպես և մյուս արևելաքրիստոնեական գրականություններում, թարգմանական հուշարձանները նախորդել են ազգային գրականության ստեղծմանը՝ կարևոր դեր խաղալով վերջինիս կազմավորման գործում։

Հայ թարգմանական գրականության պատմությունն ընդունված է բաժանել հետևյալ շրջանների. ա) դասական թարգմանություններ՝ ամբողջ V դարը, բ) հունաբան դպրոցի թարգմանություններ՝ V դարի վերջ—VIII դարի սկիզբ, գ) կիլիկյան շրջանի թարգմանություններ՝ XII—XIII դդ., դ) միարարական (ունիթոռական) միջավայրի թարգմանություններ՝ XIV դար, ե) ուշ միջնադարյան թարգմանություններ՝ XVII—XVIII դդ.։

Այսպիսով, VIII դարի սկզբից մինչև XI դարն ընկած ժամանակահատվածը և XV—XVI դդ. բնութագրվում են որպես թարգմանական գործունեության անկման շրջաններ Հայաստանում[1]*։*

Աստվածաշունչը՝ հայ թարգմանական գրականության առաջին հուշարձանը, թարգմանվել է սկզբում ասորերենից (405—408 թթ.), այնուհետև հունարենից (432—433 թթ.)[2]*։ Բացառապես ասորերենից և հունարենից էին արվում բոլոր հայերեն թարգմանությունները ամբողջ V դարի ընթացքում։ Այնուհետև հայ թարգմանական գրականության մեջ սկսեցին գերակշռել հունարենից արվող թարգմանությունները, որոնք թե՛ ծավալով, թե՛ իրենց ընդգրկումով և նշանակությամբ գերազանցեցին ասորերենից կատարվածներին։*

Ավելի ուշ Հայաստանում սկսեցին թարգմանություններ անել նաև արաբերենից, լատիներենից, վրացերենից և շատ այլ լեզուներից։

Հայ միջնադարյան թարգմանական գրականության մեջ արաբերենից կատարված թարգմանություններն անհամեմատ ավելի համեստ տեղ են գրավում (ինչպես ծավալով, այնպես էլ պատմամշակութային նշանակությամբ), քան ասորերենից և հատկապես հունարենից արվածները, սակայն նրանք ևս, անկասկած, որոշակի գիտական արժեք են ներկայացնում։ Արաբերենից կատարված թարգմանությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջնադարյան Հայաստանում թարգմանվել են մեծ մասամբ գործնական նշանակություն ունեցող երկեր՝ բժշկարաններ, անասնաբուժական ու երկրագործական ձեռնարկներ և այլն[3]*։*

Ներկայումս հայագիտությանը հայտնի է, ի թիվս միջնադարյան այլ թարգմանությունների, նաև արաբական գեղարվեստական արձակի մի քանի նմուշ, որոնք վերագրվում են հանրահանաչ «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթաշարին։ Վերջինիս արաբերեն բնագրում առայժմ հայտնաբերվել են միայն «Պղնձե քաղաքի պատմության» և «Մանկան ու աղջկա պատմության» նախօրինակները[4]*։ Ինչ վերաբերում է մյուս նման «պատմություններին», որոնք*

---

1 *Լ. Տեր-Պետրոսյան. Հայ հին թարգմանական գրականություն. Երևան, 1984, էջ 7։*

2 *Ս. Արևշատյան. Հնագույն հայկական թարգմանությունները և նրանց պատմամշակութային նշանակությունը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1, էջ 25—26։*

3 А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 264—265.

4 H. Laurentie. La version armenienne du conte de la ville d'Airain.—Revue des Études Arméniennes, 1. 1921, p. 297—302. *Ն. Անդրիկյան. Ազգային վեպերն.—«Բազմավեպ», № 7—8, Վիեննա, 1906, էջ 343։*

նույնպես ենթադրաբար դասվում են արաբերենից արված թարգմանությունների շարքը[5], ապա այդ հարցը դեռևս կարիք է զգում համոզիչ փաստարկների և լրացուցիչ գիտական տվյալների։

Վերոհիշյալ բոլոր «պատմություններից» մենք կանգ կառնենք միայն «Պղնձե քաղաքի պատմության» վրա։

...Շատ դարեր ի վեր Սողոմոն Իմաստունը պղնձե կժերի մեջ է զնդանել ջիններին, կժերը կնքելով իր կնիքով, որի կախարդական ուժի առջև անզոր են չար ոգիները։ Եվ ահա ամեն անգամ, երբ որևէ մեկը պատահաբար ծովի հատակից բարձրացնում է այդ անոթներից մեկը և բացում այն, բանտարկված ջիննը, բարձր աղաղակելով, դուրս է փախչում։

Լսելով այն մասին, որ նման պղնձե անոթներ կարելի է ձեռք բերել հեռավոր ու առեղծվածային Պղնձե քաղաքի մոտ, խալիֆը մի ամբողջ «արշավախումբ» է ուղարկում այնտեղ։

Սակայն չափազանց դժվար է ու վտանգավոր Պղնձե քաղաք տանող ճանապարհը։ «Արշավախումբն» առաջնորդում է մի իմաստուն ծերունի։ Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ճամփորդները վերջապես հասնում են Պղնձե քաղաքին, բայց պարզվում է, որ վերջինս շրջապատված է անմատչելի պարսպով և ոչ մի դարպաս չունի։ Պարսպի վրայով անցնելու բոլոր փորձերը ողբերգական վախճան են ունենում, քանի որ քաղաքը կախարդված է։ Վերջապես իմաստուն ծերունին Թալիսմանի օգնությամբ կարողանում է խումբը ներս տանել քաղաք։ Պղնձե քաղաքը գեղեցիկ է և չափազանց հարուստ, սակայն ոչ մի կենդանի շունչ չկա այնտեղ, բոլոր բնակիչները մեռած են, նրանց թվում և քաղաքի չքնաղ տիրուհին...

...Մահի առջև անզոր է ամեն ինչ՝ թե՛ անսահման իշխանությունը, թե՛ բոլոր գանձերը, թե՛ գեղեցկությունը, երիտասարդությունը և երջանկությունը։ Ունայն է մարդկային կյանքը, ունայնություն ունայնության...

...«Արշավախումբը» վերադառնում է կժերով հանդերձ և պատմում խալիֆին Պղնձե քաղաքում տեսածի մասին։ Խալիֆը սաստիկ հուզվում է, համակվում աշխարհուրացության գաղափարով և նվիրվում ապաշխարհության, որովհետև համոզվում է, որ անցողիկ ու անօգուտ է և՛ իր փառքը, և՛ իշխանությունը, և՛ հարստությունը...

Այսպիսին է «Պղնձե քաղաքի պատմության» համառոտ բովանդակությունը։

«Պղնձե քաղաքի պատմությունը» պատկանում է այն զարմանալիորեն կենսունակ գրական հուշարձանների թվին, որոնք, ամենալայն ժողովրդականություն վայելելով միջնադարյան Հայաստանում, շարունակել են գրավել հայ ընթերցողի ուշադրությունը ընդհուպ մինչև XX դարը։ Այդ են վկայում, մասնավորապես, «Պղնձե քաղաքի պատմության» աշխարհի տարբեր գրադարաններում հանգրվանած բազմաթիվ ձեռագիր ընդօրինակությունները, ինչպես նաև մի ամբողջ շարք հրատարակությունները։

Ձեռագրերից 32-ը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (XVI—XIX դդ.)[6], հինգը՝ Փարիզի Ազգային Գրադարանում[7], մեկը՝ Հռոմի Ս. Վլասի հայոց հյուրանոցի գրադարանում[8], երկուսը՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը (XVII—XVIII դդ.)[9]. վերջիններիս թվին պետք է ավելացնել նաև Ն. Անդրիկյանի մոտ հիշատակված «քանի մը Ոսկեփորիկները», «որոնց ամենեն հինը 1559 թվականը կկրե»[10]։ Ամենայն հավանակա-

5 Դրանց թվին են պատկանում, օրինակ, Փահլուլ Թագավորի, Արդլճաֆարի և Ճեմիլայի պատմությունները և այլն։

6 Ձեռ. №№ 1677, 1682, 2354, 2398, 4285, 5622, 5623, 5992, 6092, 6185, 6451, 6485, 6961, 7026, 7027, 7076, 7227, 7709, 7993, 8267, 8332, 8387, 8447, 8724, 8963, 8968, 9265, 9428, 10107, 10166, 10275, 10329։

7 Ձեռ. №№ 185, 285, 286, 308, 309։ Տե՛ս Ա. Լորանսիի նշված հոդվածը, էջ 297—302։

8 Ձեռ. № 33/24։ Տե՛ս Ն. Ակինյան. Զրույց Պղնձե քաղաքի.—«Հանդես ամսօրյա», 1958, № 1—4, էջ 22։

9 Ձեռ. № 88 և 466։ Տե՛ս Ն. Անդրիկյան. Նշվ. աշխ., էջ 298։

10 Ն. Անդրիկյան. Նշվ. աշխ., էջ 298։

նությամբ նշված ցուցակը չի կարելի սպառիչ համարել։ Պետք է ենթադրել, որ հետագա որոնումները կլրացնեն այն։

Պատկառելի թիվ են կազմում նաև «Պղնձե քաղաքի պատմության» հրատարակությունները[11]։

Երկար ժամանակ «Պղնձե քաղաքի պատմության» հայերեն երկու տարբերակները գիտվում էին որպես «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթաշարի արաբերեն բնագրից կատարված թարգմանություններ[12]։ Սակայն նորահայտ փաստերի առկայությունը ստիպում է վերանայել այդ կարծիքը։

Հայտնի է, որ «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուի մեջ ընդգրկված հեքիաթները մասամբ արաբական ծագում ունեն, մասամբ էլ փոխ են առնված այլ ժողովուրդներից՝ հնդիկներից, պարսիկներից, հրեաներից, հույներից և այլն։

«Պղնձե քաղաքի հեքիաթը» حكاية مدينة النحاس պատկանում է արաբական ծագում ունեցող հեքիաթների թվին և կրում է հին արաբական բանահյուսական ավանդույթի կնիքը։ Այն կազմավորվել է հարավ-արաբական հընագույն քաղաքակրթությունների արձագանքը հանդիսացող լեգենդների հիման վրա[13]։ Ինչպես իրավամբ նշում է Վ. Վ. Լեբեդևը, այդ լեգենդները յուրօրինակ մի հուշ են Եմենի, Օմանի, Հադրամաութի հինավուրց, երբեմնի ծաղկուն քաղաքների կործանման մասին։ Այդ է պատճառը, որ «Պղնձե քաղաքի հեքիաթը», ինչպես և մյուս նման հեքիաթները, տոգորված են հոռետեսական տրամադրությամբ, աշխարհի ու մարդկային կյանքի ունայնության գաղափարով, բարոյախոսական-խրատական ոգով։

Ակնհայտ է, որ հենց թվարկված հատկանիշներն են որոշիչ դեր կատարել՝ հնարավորություն տալով միջնադարյան հայ թարգմանիչներին ժամանակի հայ գրականությունը հարստացնելու աշխարհհայացքային «քրիստոնեական» ոգով շնչող ևս մի երկով։

Քննելով «Պղնձե քաղաքի հեքիաթը», Վ. Վ. Լեբեդևը գալիս է այն եզրակացության, որ «այդ հեքիաթում միահյուսվել են մի քանի սյուժեներ՝ Սողոմոն թագավորի (Սուլեյման իբն Դա՚ուդի) կողմից պղնձե կժերի մեջ բանտված ջինների մասին պատմությունը. այդ կժերը ձեռք բերելու նպատակով խալիֆ Աբդ ալ-Մալիք իբն Մարվանի հրամանով կազմակերպված արշավի մասին պատմությունը, պալատի նկարագրությունը, որն ինչ-որ ժամանակ պատկանել է մի հզոր թագավորի. Սուլեյման իբն Դա՚ուդի՝ ջինների դեմ մղած պատերազմի պատմությունը և, վերջապես, բուն լեգենդը պղնձե քաղաքի մասին։ ...Քանի որ ո՛չ հրեական, ո՛չ հյուսիս-արաբական աղբյուրներում տվյալ լեգենդը վկայված չէ, կարելի է ենթադրել, որ այն ծագել է Հարավային Արաբիայում՝ Սողոմոն թագավորի մասին հրեական լեգենդների հիման վրա»[14]։

«Պղնձե քաղաքի պատմության» արաբերեն բնագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթաշարի մեջ է ամ-

---

11 Հայտնի են XVIII—XIX դդ. կատարված մոտ քսան հրատարակություններ։ Ավելի մանրամասն տե՛ս Հ. Սիմոնյան. Հայ միջնադարյան կաֆաներ. Երևան, 1975, էջ 137, ծան. 6, էջ 138։

12 Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 23—24։ Հ. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 136։ П. Мурадян. Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке. Ереван, 1966, с. 46—51.

13 Ա. Լորանսիի կարծիքով «այս հեքիաթն անվիճելիորեն արաբական ծագում ունի», սակայն ծագել է այն ուժեղ տպավորության ազդեցությամբ, որ թողել են արաբ բեդուինների վրա եգիպտական քաղաքները, որոնց համար վերջիններս հայտնություն էին։ Տե՛ս H. Laurentie. Op. cit., p. 298.

14 В. В. Лебедев. Следы южноарабской фольклорной традиции в сказках «Тысячи и одной ночи».—Народы Азии и Африки, 1973, № 1, с. 105, 107.

փոփվել միայն XV—XVI դդ., Եգիպտոսում[15]. բնագրի նախնական խմբագրությունն արտացոլող ձեռագրերում այն բացակայում է։ Դրանց թվին է պատկանում, օրինակ, XIV դարի երկրորդ կեսով թվագրվող այն արաբերեն ձեռագիրը, որից իր ֆրանսերեն թարգմանությունն է արել Ա. Գալլանը[16]։

Նախքան «Հազար ու մեկ գիշեր»-ի մեջ ընդգրկվելը «Պղնձե քաղաքի հեքիաթը» մի քանի դար շարունակ (IX դարից սկսած) զետեղված է եղել կամ առանձին ձեռագրերի, կամ խրատաբարոյախոսական բնույթի ժողովածուների մեջ[17]։ Արաբերեն ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն է ունեցել այդ հեքիաթի մի քանի խմբագրություն. Հայերեն թարգմանությունների երկու տարբերակները նույնպես հաստատում են այդ։ Հետագայում «Հազար ու մեկ գիշեր»-ի մեջ է ընդգրկվել այդ խմբագրություններից ամենահայտնին։

Քանի որ «Պղնձե քաղաքի պատմության» Հայերեն թարգմանությունները կատարվել են XIII դարից ոչ ուշ և, որպես կանոն, նույնպես զետեղված են խրատաուսուցողական նպատակամիտվածություն ունեցող ժողովածուների կամ առանձին ձեռագրերի մեջ, ակնհայտ է, որ «Պատմությունը» հայերեն է թարգմանվել դեռևս մինչև արաբերեն բնագրի՝ «1001 գիշերների» մեջ ամփոփվելը, այսինքն՝ կա՛մ որևէ առանձին ձեռագրից, կա՛մ խրատական բնույթի որևէ ժողովածուից։

Ներկայումս հայագիտությանը հայտնի է «Պղնձե քաղաքի պատմության» երեք խմբագրություն։ Դրանցից հնագույնը ուսումնասիրողների կողմից թվագրվում է X դարի վերջով և իրենից ներկայացնում է հեքիաթի թարգմանության համառոտ խմբագրությունը։ Այս խմբագրության առայժմ հայտնի միակ օրինակը հայտնաբերվել և հրատարակվել է 1958 թ. Ն. Ակինյանի կողմից։ Ըստ Ն. Ակինյանի նկարագրության նրա գտած ձեռագիրը կրում է հետևյալ վերնագիրը. «Զրուց եւ խաւսք առաջի թագաւորացն եւ իշխանացն զոր թարգմանեցին Դաւիթ կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լիզվէ»[18]։

Հիշյալ թարգմանության երկրորդ, ընդարձակ խմբագրությունը ներկայացված է երկու տարբերակով։ Առաջին, այսպես կոչված «նախագրիգորիսյան» տարբերակը, ըստ մի շարք ձեռագրերի հիշատակարանների[19], թարգմանվել է Առաքել Անեցու (Շիրակվանեցու) կողմից 1222 թ.։ Երկրորդ տարբերակը պատկանում է բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու գրչին, որը XV դարում «լուսածել» է Առաքել Անեցու թարգմանությունը՝ հարստացնելով այն կաֆաներով և գեղարվեստական հնարքներով[20]։

Համեմատելով X և XIII դդ. թարգմանությունները, Պ. Մուրադյանը ցույց է տվել, որ դրանք «Պղնձե քաղաքի պատմության» տարբեր խմբագրություններ են, քանի որ դրանցից առաջինում հանդես են գալիս երկու վեզիրներ՝ Դեմետրիտ և Քարիմատին անուններով, իսկ երկրորդում՝ միայն մի վեզիր՝ Ամիրաֆ անունով[21]։ Հետևաբար, նույն հեքիաթը հայերեն է թարգմանվել երկու անգամ, տարբեր արաբերեն բնագրերից։

---

15 Նույն տեղում, էջ 110։

16 Ն. Անդրիկյան. Նշվ. աշխ., էջ 293։– Notice sur quelques manuscrits des Mille et une nuits et la traduction de Galland, par M. H. Zotenberg.– Notices et Exstraits des Manuscrits de la Bibliothèque Nationale, t. XXVIII, Ire partie, Paris, MDCCCLXXXVII, p. 167—320.

17 В. В. Лебедев. Указ. соч., с. 105.

18 Ն. Ակինյան. Նշվ. աշխ., էջ 23։

19 Ըստ Ա. Լորանսիի, Առաքել Շիրակվանեցու անունն են կրում Փարիզի Ազգային գրադարանի բոլոր հինգ ձեռագրերը (տե՛ս H. Laurentie. Op. cit., p. 298), ինչպես նաև Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 68 ձեռագիրը (տե՛ս Հ. Տաշյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան Մատենադարանին ի Վիեննա. հ. Ա, Վիեննա, 1895, էջ 354)։

20 Գրիգորիս Աղթամարցի, աշխ. Մ. Ավդալբեգյանի. Երևան, 1963, էջ 325։

21 П. Мурадян. Указ. соч., с. 45.

Այժմ ավելի հանգամանորեն քննենք X դարով թվագրվող հայերեն թարգմանության հարցը՝ Թարգմանության լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ավելի շուտ միջին հայերեն է, քան գրաբար, մի փաստ, որ X դարին վերաբերող նման այլ գրական հուշարձանների բացակայության պայմաններում տարակուսանքի առիթ է տալիս։ Ճիշտ է, հայտնի է, որ միջին հայերենին բնորոշ բառեր և քերականական ձևեր հանդիպում են IX—X դդ. գրական հուշարձաններում ևս[22], սակայն այդ դեպքում խոսքը վերաբերում է լոկ առանձին բառերի ու ձևերի։ Մինչդեռ նշված թարգմանության լեզուն այնքան հեռու է գրաբարից, որ Ն. Ակինյանն այն անվանում է «հնագույն ռամկորեն» և նույնիսկ «Տայոց նահանգի բարբառ»[23]։

Եվ իրոք, թարգմանության լեզուն և շարադրանքի ոճը այնքան մոտ են խոսակցականին, որ ակամայից ստիպում են մտածել բանավոր ճանապարհով կատարված լինելու հնարավորության մասին։ Սակայն համեմատությունը «Պղնձե քաղաքի հեքիաթի» արաբերեն բնագրի հետ հաստատում է, որ թարգմանությունն իրոք գրավոր ճանապարհով է կատարված։

Այսպես, հայերեն թարգմանության մեջ հանդես եկող Ամիր Մուսի անվանը արաբերեն բնագրում համապատասխանում է امير موسى Ամիր Մուսա. ակնհայտ է, որ արաբերենի ոչ այնքան լավ իմացության պատճառով թարգմանիչը ճիշտ չի ընթերցել موسى անունը։ Նույն պատճառով բառացիորեն է թարգմանված կամ, ավելի ճիշտ, առանց թարգմանության է թողնված փուկա կուժ[24] արտահայտությունը, որին արաբերեն բնագրում համապատասխանում է كيزان الفقاع «գարեջրի կժեր»[25] բառակապակցությունը և այլն։

Համեմատության համար բերենք Պղնձե քաղաքի՝ արաբերեն բնագրից քաղված նկարագրությունը, ինչպես նաև Ն. Ակինյանի հրատարակած հայերեն թարգմանության համապատասխան հատվածը.

فبان لهم سواد عظيم وفيه نارين،
متقابلة عنى بعد في ذلك السواد.
فقال الامير موسى للشيخ ما هذا
السواد العظيم والنارين المتقابلة.
قال له الدليل ابشر ايها الامير فهذه
مدينة النحاس وهذه صفتها عندى فى
كتاب المطالب ان سورها من الحجارة
السود ولها برجين من النحاس الاندلسى
الاصفر فيراهما الناظر كانهما نارين
متقابلة ومن اجل ذلك سميت مدينة
النحاس قال ولم يزالوا سايرين حتى
وصلوا اليها واذا هى عالية حصينة

...Եւ հասան ի մեծ լեառն մի եւ էրեւցաւ քաղաքն սեւագոյն. եւ Երկու տեղ էրեւնար որպէս բոց։

Ասէ Ամիր Մուսին ընդ Հալեւորն, թէ Այն սեւն ինչ է։

Ասէ Հալեւորն. Պղնծի քաղաքն է. ու գրած ունիմ, որ իւր պարիսպն սեւ քար է եւ երկու պղնծի պուրճն ի վերայ դրան կայ, յորժամ արեգակն ցաթէ եւ փայլէ՝ Պղնծի քաղաքն վասն այնոր ասեն։

Եւ սկսան գնալ եւ մատեցան եւ տեսան խիստ գեղեցիկ։ Եւ էր բարձրութիւն պարսպին վաթսուն կանկուն, եւ դուռն հիսուն. եւ թվէր թէ միակտոր էր պարիսպն։

22 Ա. Այտընյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի. Վիեննա, 1866, էջ 142—145, 161։

23 Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 22—24։

24 Նույն տեղում, էջ 31։

25 „Tausend und Eine Nacht". Arabisch. Nach einer Handschrift aus Tunis. Hrsg. von M. Habicht. Bd. VI, Breslau, 1834, S. 350 (այսուհետև՝ Habicht).

شاهقة فى الهوى منيعة علو اسوارها
ثمانون ذرعا ولها خمسة وعشرون بابا
ما ينفتح كل باب الا بحيلة وما يكون
منها بابا الا ومن داخل المدينة ...

Ասէ Ամիր Մուսին. Ջեմ տեսնուլ գայս քաղաքիս դուռն։

Ասէ Հալեւորն. Գրած ունիմ, որ հիսունհրորդ դուռն է. տլըսմով պիտի բանալ[26]։

Միանգամայն ակնհայտ է, որ արաբերեն բնագրի և հայերեն թարգմանության մեջբերված հատվածները չափազանց նման են իրար։ Կասկածից դուրս է, որ հայ միջնադարյան թարգմանիչը, որի անունը, ցավոք, մեզ չի հասել, ձեռքի տակ ունեցել է «Պղնձե քաղաքի հեքիաթի» արաբական վերոհիշյալ տարբերակին[27] շատ մոտ մի բնագիր։

Նկարագրելով ձեռագիրը, որտեղ ինքը հայտնաբերել է «Պղնձե քաղաքի պատմության» համառոտ տարբերակը, Ն. Ակինյանը նշում է, որ այն «չունի հիշատակարան, վասն զի վերջին թուղթեր ինկած են. այս պատճառով ալ անհայտ են գրչին անունը, գրության տեղն ու տարին»[28]։ Հենվելով այն փաստի վրա, որ ձեռագրի վերնագրում հիշատակվում է Դավիթ Կուրապաղատի անունը, որը «վախճանած է 1000, մարտ 31», Ակինյանը գտնում է, որ թարգմանությունը կատարվել է հավանաբար 950—1000 թթ. Տայոց նահանգում և որ թարգմանիչները «տայեցի ըլլալու են»[29]։

Առաջին հայացքից ամեն ինչ համոզիչ է թվում, եթե միայն ուշադրություն չդարձնենք թարգմանության լեզվին։ Ըստ Ն. Ակինյանի, այն իրենից ներկայացնում է Տայոց «գողտրիկ գավառաբարբառը»[30]։ Պ. Մուրադյանը նույնպես կարծում է, որ դա Տայոց բարբառն է[31]։ Ա. Տեր-Ղևոնդյանը գրում է, որ այդ լեզուն ավելի շատ մոտ է միջին հայերենին[32]։

Նախքան հետագա դատողություններին անցնելը պետք է նշել երկու հանգամանք. ա) Տայոց բարբառը մեզ փաստորեն ծանոթ չէ, այդ պատճառով թարգմանության լեզուն կարելի է Տայոց բարբառ համարել միայն ենթադրաբար, և բ) միջին հայերենը որպես գրական լեզու հաստատվել է XIII դարում՝ այս փաստը հավաստելու են գալիս բազմաթիվ թվագրված գրական հուշարձաններ։

Այսպիսով, որպեսզի հակասությունները վերանան, պետք է ենթադրել, որ կամ միջին հայերենն է XIII դարից շատ ավելի առաջ ասպարեզ իջել, կամ էլ Ն. Անդրիկյանի հայտնաբերած թարգմանությունն արված է ոչ թե X դարում, այլ ավելի ուշ, և որ ձեռագրի վերոհիշյալ տիտղոսաթերթը, որտեղ հիշատակվում է Դավիթ Կուրապաղատի անունը, սխալմամբ է ամրացվել հիշյալ ձեռագրին։

Այժմ փորձենք ի մի բերել այն բոլոր տեղեկությունները, որ մեզ հայտնի են Տայոց բարբառի մասին, ինչպես նաև այն փաստերը, որ մեզ ընձեռում է նշված թարգմանության լեզվի հանգամանալից վերլուծությունը՝

Տայոց բարբառի գոյության մասին հիշատակում է VIII դարի մատենագիր Ստեփանոս Սյունեցին իր «Քերականության» մեջ (էջ 187)[33]։ Ուրեմն, X դարում Տայոց բարբառն իրոք գոյություն ուներ։

---

26 *Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 40։*

27 Habicht. Bd. VI, S. 343—401.

28 *Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 22։*

29 *Նույն տեղում, էջ 23, 24։*

30 *Նույն տեղում, էջ 22, 23։*

31 *Պ. Մուրադյան. «Պատմութիւն Պղնձէ քաղաքի» զրույցի հայկական և վրացական պատումների ու նրանց փոխհարաբերության շուրջ.—«Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 258։*

32 А. Тер-Гевондян. Указ. соч., с. 265.

Մեզ հայտնի են Տայոց բարբառի մի քանի առանձնահատկություններ. դրանք վկայված են մի քանի վրացական ձեռագրերում, որոնք թվագրվում են 978—988 թթ. և X դարի 70-ական թթ. և ստեղծված են Տաո-Կլարջեթի գավառում։ Ի. Աբուլաձեն, ուսումնասիրելով այդ ձեռագրերում պահպանված հայերեն հիշատակարանները, առանձնացրել է մի շարք հնչյունական և քերականական ձևեր, որոնք բնորոշ չեն X դարի գրական լեզվին՝ գրաբարին, «Հիշատակագրությունների լեզուն օժտված է ավելի կենդանի խոսակցական հայերեն լեզվի հատկություններով, քան թե ժամանակի գրական լեզվի։ Նրանց շեղումները հայերեն գրական լեզվի քերականական նորմաներից բացահայտում են բարբառի որոշ նշաններ թե՛ ձևաբանության և թե՛ հնչյունաբանության տեսակետից։ Քանի որ այդ հիշատակագրությունները գրվել են Տաո-Կլարջեթում, հետևաբար դրանց մեջ նկատվող բարբառային երևույթները կարելի է ընդունել Ժ դարի Տայքի հայերեն լեզվի—բարբառի համար իբրև բնորոշ հատկություն»[34]։

Ինչպես արդեն նշվել է, «Պղնձե քաղաքի պատմության» X դարով թվագրվող թարգմանության լեզվում նույնպես հանդիպում են բարբառային ձևեր։ Վերջիններիս համեմատությունը Ի. Աբուլաձեի հոդվածում քննարկվող բարբառային ձևերի հետ ցույց է տալիս, որ համընկնում են այդ բարբառային երևույթների մոտ 50 տոկոսը, ընդ որում այդ համընկնող երևույթները չի կարելի համարել որևէ կոնկրետ բարբառի բնորոշ առանձնահատկություններ, քանի որ դրանք կարելի է գտնել կը *ճյուղին պատկանող ցանկացած արևմտահայ բարբառում։*

Այսպիսով, նշված թարգմանության լեզուն Տայոց բարբառ համարելու փորձը կրում է խիստ պայմանական բնույթ։

Այժմ հանգամանորեն վերլուծենք թարգմանության լեզուն՝ վերջնականապես պարզելու համար, թե արդյոք այն միջին հայերե՞ն է, թե՞ գրաբար։

Ահա վերլուծության արդյունքները. տեքստում հանդիպում են՝

ա) Հոգնակիակերտ –նի *և* –վի *մասնիկներով կազմված գոյականական ձևեր, որոնք բնորոշ են միջին հայերենին, օրինակ՝ խանութնի, ասպարնի, աղջիկնի, բախըլնի, գովի, կէշէովի և այլն։*

բ) Բայի անցյալ կատարյալ և սպառնի ժամանակների մի շարք ձևեր, որոնք նույնպես բնորոշ են միջին հայերենին՝ երեկ, երետ, լսեց, ասցիր, գնալու ենք, գալու էք և այլն։

գ) Հարակատար և վաղակատար դերբայների օգնությամբ կազմված բայական ձևեր, որոնք խորթ են գրաբարին, ինչպես, օրինակ, կարդացել եմ, տեսել էր, գրած ունիմ , կապած է, շինած էր և այլն։

գ) Տեքստում հանդիպում են թուրքերեն բառեր. X դարի գրական հուշարձանի համար այդ փաստն ուղղակի անհավանական է։

ե) Թարգմանության մեջ հանդիպում է պարոն *բառը (հին ֆրանս.* baron*-ից), որը հայերենի մեջ է թափանցել XII—XIII դդ. ոչ շուտ։*

զ) Գրիչն օգտագործել է օ և ֆ տառերը, որոնք, ինչպես հայտնի է, հայոց այբուբենին են ավելացվել XII դարում. ահա ևս մի ապացույց, որ ձեռագիրը ստեղծվել է XII դարից ոչ շուտ[35]։

է) Գրաբարի համար ամենևին հատկանշական չէ այնպիսի ձևերի գործածությունը, ինչպիսիք են՝ դարտակ, պացխում, շալկող, հիմիկ, խրկել, մը-

---

33 *«Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն ըրովանդակ զբառսն զեզերականս, որ պէս զԿորճայն և զՏայեցին և զխութայինն և զՉորրորդ Հայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի միայն զՄիջերկրեայսն և զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ և աւգտակարք ի պատմութիւնս, զի մի վրիպեսցի անընդել գոլով լեզուացն» (տե՛ս Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. մաս Բ, Երևան, 1951, էջ 128)։*

34 *Ի. Աբուլաձե. X դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունները և նրանց նշանակությունը հայ բարբառագիտության համար.—«Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 38—39։*

տիպ գնել, ժուռ գալ, շնախկլել և այլն, որոնք ընդհակառակն, շատ սովորական են միջին հայերենի համար։

բ) Բառերի ուղղագրության մեջ զգացվում է արևմտահայերենի խիստ ազդեցությունը. այսպես, ձայնեղ բաղաձայնները խլացվում են՝ կանկնած—կանգնած, սանտալ—սանդալ, հանկիստ—հանգիստ, գնտանել—գնդանել, պրինծ—պղինձ և այլն, մի երևույթ, որը նույնպես խորթ է գրաբարին և բնորոշ է միջին հայերենին և այլն։

Այսպիսով, վերոհիշյալ փաստերի լույսի ներքո մնում է եզրակացնել, որ կամ նշված տեքստն իրենից ներկայացնում է Դավիթ Կուրապաղատի պատվերով X դարում կատարված թարգմանության՝ հետագայում միջին հայերենի վերածված տարբերակը, կամ էլ նշված թարգմանությունն արվել է XII դարից ոչ շուտ, ըստ տիտղոսաթերթը, որտեղ հիշվում է Դավիթ Կուրապաղատի անունը, տվյալ ձեռագրին է ամրացվել հետագայում, թյուրիմացաբար։

«Պղնձե քաղաքի պատմության» արաբերեն բնագրի և հայերեն թարգմանության համեմատությունից պարզվում է, որ դրանք հիմնականում համընկնում են՝ չնայած որոշ տարբերությունների առկայությանը։ Այսպես, հայկական տարբերակը սովորաբար ավելի համառոտ է, սեղմ, մինչդեռ արաբերեն բնագրում հաճախ են հանդիպում կրկնություններ և մանրամասն, երկարաշունչ նկարագրություններ։ Սյուժեն թե՛ արաբական, թե՛ հայկական տարբերակներում համարյա նույնն է, չհաշված որոշ դրվագների տարբերությունը, չափածո հատվածների և մի քանի գործող անձանց անունների որոշ անհամապատասխանությունը։

Նշված տարբերությունները, բնական է, բացատրվում են այն փոփոխություններով, որ կրել են իրենց բազմադարյան գոյության ընթացքում թե՛ արաբական, թե՛ հայկական տարբերակները։ Այդտեղ որոշակի դեր են խաղացել թե՛ կրոնական պատճառները՝ համապատասխանաբար որոշ մահմեդական կամ քրիստոնեական գունավորում հաղորդելով տեքստին և թե՛ այն, որ գրավոր տեքստը, հատկապես աշխարհիկ գրականության մեջ, չէր դիտվում որպես ինչ-որ անձեռնմխելի բան, այլ այն կարելի էր փոփոխել, կրճատել կամ ընդարձակել, «գեղեցկացնել», «լրացումներ» ու «շակումներ» մտցնել և այլն։ Դրա հետևանքով թե՛ արաբերեն բնագիրը, թե՛ հայերեն թարգմանությունը այսօր մեզ են ներկայանում բազմաթիվ տարբերակներով։

АРАБСКАЯ И АРМЯНСКАЯ ВЕРСИИ «СКАЗАНИЯ О МЕДНОМ ГОРОДЕ»

А. Н. МКРТЧЯН

Резюме

«Сказание о Медном городе» принадлежит к числу тех удивительно жизнестойких письменных памятников, которые, будучи широко распространены в средневековой Армении, продолжали оставаться в центре внимания армянского читателя вплоть до XX века. Долгое время оба армянских перевода «Сказания», датируемые X и XIII веками, связывались с арабским оригиналом «Тысячи и одной ночи». Однако вновь обнаруженные факты заставляют пересмотреть это мнение. Изучение арабской версии «Сказки о Медном городе» показывает, что несколько веков (с IX в.) она бытовала в самостоятельных списках и сборниках назидательного характера и была включена в свод «Тысячи и одной ночи» лишь в XV—XVI вв. Поскольку армянские переводы относятся к более раннему времени (не позднее

35 Ն. Ակինյանը ձեռագիրը թվագրում է XIV դարով։ Տե՛ս Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 22։

XIII в.) и, как правило, тоже представлены отдельными списками либо входят в сборники нравоучительных сочинений, то совершенно очевидно, что армянские переводы сделаны еще до включения «Сказки о Медном городе» в свод «Тысячи и одной ночи».

До сих пор ряд исследователей вслед за Н. Акиняном считали, что «Сказание о Медном городе» впервые было переведено на армянский язык в X в., основываясь на том, что в заглавии рукописи, обнаруженной Н. Акиняном, упоминается Давид Куропалат; язык перевода, изобилующий диалектизмами, считался «диалектом области Танк». Однако детальное изучение языка перевода показало, что упомянутая рукопись создана не ранее XII в., так как: а) язык перевода представляет собой скорее среднеармянский язык, чем грабар, между тем среднеармянский язык стал употребляться в качестве литературного не ранее XII—XIII вв.— это доказывается множеством датированных памятников; б) в тексте встречаются буквы օ и ֆ, которые, как известно, были добавлены к армянскому алфавиту в XII в., а также слово պարոն (заимствовано из старофранц. baron не ранее XII в.) и турецкие слова; в) тайкский диалект науке практически неизвестен: те его особенности, на которые обратил внимание исследователей И. Абуладзе, совпадают с диалектными особенностями перевода только частично (примерно на 50%), причем совпадения нельзя считать признаками какого-либо конкретного диалекта, они присущи всем западноармянским диалектам ветви «կը».

Таким образом, нужно либо предположить, что перевод, обнаруженный Н. Акиняном, был сделан не в X в., а позже, и заглавный лист с упоминанием Давида Куропалата был присоединен к рукописи случайно, либо считать, что до нас дошло переложение на среднеармянский язык перевода X в., действительно выполненного по заказу Давида Куропалата.

Hasmik Mkertchian

ARABIAN AND ARMENIAN VERSIONS OF “THE TALE OF THE CITY OF BRASS”

Summary

For a long time the two Armenian translations of the *Tale of the City of Brass* dating from the 10th and 13th centuries were thought to belong to the original text of *One Thousand and One Tales.* Newly found data, however, make us change this opinion. The study of the Arabic text of the *Tale of the City of Brass* shows that for a few centuries (beginning the 9th) the tale could be found both independently and in collections of moral tales, and was included into *One Thousand and One Tales* only in the 15-16th centuries. As the Armenian translations date to an earlier period it is obvious that these renderings were done before the tale became part of the *Arabian Nights.* According to the general opinion the *Tale* was first translated into Armenian in the 10th c. This opinion was based on the fact that name of King David Kuropalates was included into the manuscript title. The language analysis of this translation, however, shows the manuscript was created not earlier than the 12th century. The language is Middle Armenian, which got the status of literary language only in the 12-13th centuries (witness several letters added to the Armenian alphabet only in the 12th c., the word *paron* which is a 12th c borrowing from Old French and a number of Turkish words). Thus, we can either suggest that the text of the *Tale of the City of Brass* was translated later than the 10th c. and the name of King David Kuropalates was added to the manuscript later, or we deal with a later Middle Armenian adaptation of a 10th century translation.

* Հոդվածն առաջին անգամ հրատարակվել է *Պատմա-բանասիրական հանդեսում*, (1986), №2, էջ 130-138.: Վերահրատարակվում է հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

«ՊՂՆՁԵ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԿԱՖԱՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Բազմաթիվ են Մաշտոցի անվ. Մատենադարանում և արտասահմանյան հայ գրապահոցներում գտնվող «Պղնձե քաղաքի պատմության» ձեռագրերը, որոնց ընդօրինակումները շարունակվել են մինչև XX դարը։ XVIII դարից սկսած, ընդօրինակումներին զուգահեռ, սկիզբ է առնում և լայն ծավալ ստանում նրա տպագրության գործը՝ հատկապես Կ. Պոլսում, Էջմիածնում, Սաղրասում։ Ընդհանուր առմամբ հայտնի է Պատմության XVIII—XIX դարերում կատարված շուրջ երկու տասնյակ հրատարակություն։ Սրանցից զատ, տարբեր ժամանակներում, քաղվածաբար հրատարակվել են նաև Պղնձե քաղաքի պատմության կաֆաները (ընդմիջող երգեր)[1]։

Պղնձե քաղաքի պատմության հետ առնչվող շատ հարցեր թեև վաղուց են արժանացել մասնագետների ուշադրությանը, բայց մինչև օրս էլ շարունակում են տարակարծությունների տեղիք տալ։

Ուշադրության կենտրոնում է եղել հատկապես թարգմանության ժամանակի հարցը, որին առաջին անգամ անդրադարձել է Ղևոնդ Հովնանյանն իր «Հետազոտությունք նախնյաց ոամկորենի վրա» ուսումնասիրության մեջ։

Հենվելով Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 88 ձեռագրում առկա հիշատակարանի հաղորդած տվյալների վրա, բանասերը եզրակացնում է, որ Պատմությունը թարգմանվել է 1222 թ., Առաքել Անեցու կամ Շիրակվանեցու կողմից Ղ. Հովնանյանի հետևությամբ մի շարք բանասերներ (Ն. Անդրիկյան, Հ. Տաշյան, Հ. Քյուրտյան) Պղնձե քաղաքի հավանական կամ հաստատ թարգմանիչ են հայտարարում նույն Առաքել Անեցուն[3]։ Թարգմանության հարցին անդրադառնալով, բանասեր Ն. Ակինյանը այն մոտավորապես նույն ժամանակների գործ է համարել, թեպետ ոչ Առաքել Անեցու ձեռքով կատարված։ «Թարգմանությունը հին է, հավանորեն 1250—1350 շրջանեն, երբ ծաղկեցան Ֆրիկ և Հովհաննես և Կոստանդին Երզնկացիք և թարգմանվեցան Ցարմանի Ասմանի, Փահլուլ թագավորի, Աղքատ թագավորի և Աբղլ Ճաֆարի և Ճեմիլայի պատմությունները

Հայագետների մի այլ խումբ, առանց անդրադառնալու նախորդ բանասերների բերած փաստարկներին, Պղնձե քաղաքի պատմության թարգմանիչ է

---

1 Գ. Հովսեփյան, Գրիգորիս Աղթամարցի, «Արարատ», 1919, էջ 19։ Ա. Չոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 86։ Ն. Ակինյան, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958, էջ 112։

2 Հ. Ղ. Հովնանյան, Հետազօտութիւնք Նախնեաց ռամկօրենի վրայ, Վիեննա, 1897, էջ 332։

3 Ն. Անդրիկյան, Ազգային վեպերեն, «Բազմավեպ», 1906, էջ 289։ Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց... ի Վիեննա, էջ 348։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1946, էջ 372։ Հ. Քյուրտյան, Պղնձե քաղաքի պատմությունը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1955, № 10, էջ

4 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ ճՁ։

համարում XVI դարի տաղերգու Գրիգորիս Աղթամարցուն։ Նման հայտարարությամբ դեռևս 1882 թ. հանդես էր եկել Արիստակես վարդ. Տեկանցը[5]։ Հետագայում, 1912 թ. Շավարշ վարդ. Սահակյանը, ի հաստատումն վերջինիս, հրապարակ է հանում Պատմության ձեռագիր օրինակներից մեկում առկա մի այլ հիշատակարան, ուր Գր. Աղթամարցին հիշատակվում է իբրև Պղնձե քաղաքի «լուսածող»։ Այդ հիման վրա էլ նա Գր. Աղթամարցուն է վերագրում թարգմանության և բոլոր կաֆաների հորինման գործը, դրանով իսկ թարգմանության ժամանակը ետ բերելով դեպի XVI դար։ Շավարշ Սահակյանը ուղղակի գրում է. «...մենք կրնանք Գրիգորիս կաթ. Աղթամարցին ճանչնալ իբրև թարգմանիչ «Պղնձէ քաղաքին» և հեղինակ անոր կաֆաներուն...»[6]։

Պղնձե քաղաքի նախնական թարգմանության ժամանակի հարցը լուծելու համար շրջադարձային նշանակություն ունեցավ 1958 թ. Ն. Ակինյանի կողմից հայտնաբերված և «Հանդես ամսօրյայում» հրապարակված Պղնձե քաղաքի պատմության հնագույն թարգմանության մինչ այդ անհայտ ընդօրինակությունը։ Պարզվում է, որ Առաքել Անեցու թարգմանությունից շուրջ 3 դար առաջ, դեռևս X դարում, Տայոց գավառում «ի խնդրոյ կամ ի հաձոյս» հայազգի Դավիթ Կուրապաղատի, թարգմանվել է և Պղնձե քաղաքի պատմությունը։ Նրա պատվերով թարգմանվել են մի շարք այլ զրույցներ, այդ թվում՝ Մանկան և աղջկա, Ցարման մանուկի պատմությունները, որոնք գետեղվել են «Զրուց եւ խաւսք առաջի թագաւորացն եւ իշխանացն, զոր թարգմանեցին Դաւիթ Կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լեզվէ» վերնագրի ներքո[7]։

Նորահայտ այդ թարգմանությունը ստիպեց նրա հրատարակչին, ապա նաև շատերին վերանայել նախկինում պաշտպանած իրենց տեսակետները Պղնձե քաղաքի պատմության՝ հայ իրականություն ներթափանցելու նախնական ժամանակի մասին։ Եթե նախկինում բանասերների մեծ մասը, անծանոթ լինելով Ն. Ակինյանի մատնանշած ձեռագրին և վկայակոչելով սոսկ Ղ. Հովնանյանի հրապարակած տվյալները, Պղնձե քաղաքի պատմության հայկական առաջին թարգմանությունը համարում էր 1222 թ. Առաքել Անեցու կատարածը, ապա այժմ նոր փաստերի լույսի տակ ընդունվում է հիշյալ թվականից շուրջ երկու դար առաջ կատարված մեկ այլ թարգմանության գոյությունը։ Ըյուրիմացությունից խուսափելու նպատակով իր «Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի» գրքին Ն. Ակինյանը կցում է մի հավելված, ուր անդրադառնալով նույն գրքի նախորդ էջերում հիշյալ հարցի շուրջը հայտնած իր կարծիքին, ասում է. «Այժմ, երբ երևան եկավ Պղնձե քաղաքի պատմության նախագրիգորիսյան բնագիր մը, հարկ է այս տեսությունը բարեփոխել»[8]։

Նորագույն ուսումնասիրություններում առաջին թարգմանության ժամանակն արդեն տարակուսանքներ չի հարուցում։ Իբրև Պղնձե քաղաքի նախնական թարգմանություն վկայակոչվում է Ն. Ակինյանի հրապարակած X դարի թարգմանությունը[9], որին 1222 թ. հաջորդել է երկրորդ թարգմանությունը, կատարված Առաքել Անեցու ձեռքով։

5 Արիստակես վարդ. Տեկանց, Հայերդ, Թիֆլիս, 1882, էջ

6 Շավարշ ծ. վարդ. Սահակյան, Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցի և «Պղնձե քաղաքին» թարգմանությունը, «Տաճար», 1912, № 40, էջ 595։

7 Ն. Ակինյան, Զրույց Պղնձե քաղաքի, «Հանդես ամսօրյա», 1958, 1—4, էջ 21։

8 Ն. Ակինյան, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, էջ ՃԽԹ,

9 Մ. Ավդալբեգյան, Գրիգորիս Աղթամարցի, Երևան, 1963, էջ 324։

Պղնձե քաղաքի թարգմանության բնագրի և կաֆաների հետ առնչվող շատ հարցեր բանասիրության մեջ կապվել են XVI դարի տաղերգու Գրիգորիս Աղթամարցու անվան հետ։

Պղնձե քաղաքի արաբական բնագիրը, «Հազար ու մի գիշերի» շատ զրույցների նման, ունեցել է ոտքերի ձևով ասված խրատական կաֆաներ, որոնք ծառայել են արծարծվող հիմնական գաղափարների լուսաբանմանը։ Հայ թարգմանիչները, բնականաբար, պետք է թարգմանեին և այդ կաֆաները կամ դրանց մի մասը։ Հետագայում պահանջ է զգացվել Պատմությունը թարմացնել բանաստեղծական նորանոր երգվող ընդմիջարկություններով (կաֆաներով)։ Այսպիսով, բնագրային կաֆաների կողքին, աստիճանաբար, տեղ են գտնում մեծ թիվ կազմող բոլորովին նոր քառյակներ-ութնյակներ։ Եվ եթե Պատմության ամենահին ընդօրինակությունն ունի շուրջ 24 կաֆա, ապա որոշ ձեռագրերում դրանց թիվը հասնում է 80-ի։ Դարերի ընթացքում կատարված աստիճանական այս ներմուծումները ստեղծել են այնպիսի հարաբերակցություն Պղնձե քաղաքի օրինակների միջև, որը հնարավոր է դարձնում ըստ կաֆաների առկայության տարբերել այդ երկի երեք խմբագրություն՝ նախնական, նախագրիգորիսյան և գրիգորիսյան:

1. Նախնական խմբագրություն. *Սա, ինչպես նշվեց, կատարված է X դարում, ժամանակի խոսակցական լեզվով՝ «գողտրիկ գավառաբարբառով...», ունի 24 կաֆա, որոնց մի մասը թարգմանական է։ Դրանից առաջինը սկսվում է «Գնաց ժամանակ սոցա», իսկ վերջինը՝ «Աւաղ տամ հազար բերան» տողով։ Այս կաֆաները չունեն հեղինակային պատկանելության նշումներ, հաճախ անմշակ են, երբեմն՝ թերի և աղճատ։ Բուն բնագիրը (արձակ մասը) մյուս օրինակների համեմատությամբ համառոտ է։ Այս խմբագրության միակ օրինակը Ն. Ակինյանի հրապարակած՝ Դավիթ Կուրապաղատի պատվերով կատարված թարգմանությունն է։*

2. Նախագրիգորիսյան խմբագրություն. *Այս խմբագրության կաֆաները ևս սովորաբար սկսվում են «Գնաց ժամանակ նոցա» և ավարտվում «Աւաղ տամ հազար բերան» կաֆայով։ Նախնական խմբագրության պարունակած կաֆաներից զատ ունեն հավելյալ նոր կաֆաներ։ Կաֆաների ընդհանուր թիվը հավասար է 50-ի։ Այստեղ ևս բացակայում են նշումներ հեղինակների մասին։ Նախագրիգորիսյան խմբագրության պատկանող ձեռագրերը Մաշտոցի անվ. Մատենադարանում հետևյալներն են՝ №№ 1677, 1682, 6451, 7076, 7227, 7709, 8267, 8963, 9428, 10107, 10166։*

3. Գրիգորիսյան խմբագրություն. *Գր. Աղթամարցին նշանակալի աշխատանք է կատարել բնագրային կաֆաների մշակման և իր կողմից ստեղծված կաֆաներ ներմուծելու ուղղությամբ։ Կաֆաների թիվն է 65—75, որոնք ունեն հաստատուն, ուրույն դասավորություն։ Այստեղ, սովորաբար, առաջինը «Ասեմ քեզ զրուց, Մուսէ...» սկզբնատողով կաֆան է, որին հաջորդում են նախորդ խմբագրություններում բացակայող որոշ տներ։ Մնացած հավելյալ կաֆաները ցրված են ողջ շարադրանքի մեջ որոշակի կարգով, սակայն այնպես, որ նորից ավարտվեն «Աւաղ տամ հազար բերան...» կաֆայով։ Փոքր թիվ չեն կազմում «Գրիգորիս» անունը կրող կաֆաները։ Գրիգորիսյան խմբագրության են պատկանում Մատենադարանի №№ 2354, 5622, 6092, 6185, 6485, 6961, 8332, 8387, 8447, 8698, 8724, 9265, 10275 ձեռագրերը։*

Այսպիսի պայմաններում նախ անհրաժեշտ է դառնում առանձնացնել բուն բնագրային կաֆաները հետագա ներմուծումներից, ապա միայն անդրադառնալ հայ հեղինակների հորինած առանձին կաֆաներին կամ նրանց խմբերին։ Որոշակի դժվարությունների հետ է կապված «բնական ողբերի» տարբերակումը։ Դեռևս չի գտնված այն հնագույն խմբագրությունը, որից կատարված է զրույցի հայերեն թարգմանությունը X դարում։ Ավելին, Պղնձե քաղաքի հայերեն մնացած բոլոր օրինակներն անգամ՝ ամփոփված հետագա դարերի գրչագրերում և տպագիր ժողովածուներում, թեև մոտենում, սակայն լիովին չեն նույնանում զրույցի հանրահայտ «եգիպտական խմբագրությանը» (ստեղծված անհամեմատ ուշ՝ XIV—XVI դդ.)։ Արաբերեն ձեռագրերի առանձին օրինակներն իրարից տարբերվում են նաև կաֆաների բնույթով, դասավորության եղանակով ու քանակով։

X դարում հայերեն թարգմանված Պղնձե քաղաքի պատմությունը պետք է ավելի նախնական վիճակ ներկայացներ։ Պատմության եգիպտական խմբագրության արաբերեն[10] և ռուսերեն[11] օրինակների հետ հայերեն օրինակների համեմատությունից պարզվում է, որ վերջիններս ավելի սեղմ են, սխեմատիկ (և՛ բնագիրը, և՛ կաֆաները)։ Ամենայն հավանականությամբ, արաբական օրինակներում ներմուծումները կատարվել են աստիճանաբար, հետագա խմբագրությունների ընթացքում։ Իսկ հայերեն տարբերակը ավելի վաղ վիճակ ներկայացնելով, զերծ է մնացել այդ կերպարանափոխություններից։

Միջնադարի հայ թարգմանիչները ևս կաֆաների հարցում բավական հեռացել են բնագրից։ Անտարակուսելի է, որ վերջիններս, ելնելով հայոց լեզվի տաղաչափական առանձնահատկություններից, որոշ խմբագրությամբ են ներկայացրել կաֆաները։ Ակնբախ է, որ խմբագրման գործը տարվել է մի ուղղությամբ. ուշադրությունը հիմնականում սևեռված է եղել զգջման, ապաշխարանքի և հոգևոր կյանքի փառաբանման վրա, որով և նկատելիորեն ստվերի տակ է թողնվել բնագրի երգերի համեմատաբար աշխույժ ոգին։ Բազմավաստակ հայագետ Արշակ Չոպանյանը իրավացիորեն նկատում է, որ «հայ թարգմանիչը ընդհանուր իմաստն առնելով իր ուզածին պես շարադրած է (ավելի պարզուկ և ավելի համառոտ)»[12]։ Նման վերաբերմունք է եղել և զրույցի արձակ մասերի նկատմամբ։ Հավանաբար այս հանգամանքն էլ նկատի առնելով, Չոպանյանը իր կազմած «Հայ էջեր» ժողովածուի մեջ հրապարակած Պղնձե քաղաքի 10 կաֆաները (հանված Փարիզի Ազգային մատենադարանի № 308 ձեռագրից) բնութագրում է իբրև հայկական բանաստեղծություն՝ «օտար գործի մը հետևողությամբ գրված»[13]։ Որոշակի դեր է խաղացել բնագրում եղած մուսուլմանական կրոնի հետ կապվող պատկերացումները հայկականով փոխարինելու երևույթը։

Այս բոլորով հանդերձ, այդ ուղղությամբ տարված բանասիրական պրպտումները հնարավորություն են ընձեռում ընդհանուր պատկերացում ունենալ

[10] Tausend und Eine Nacht, Arabisch, nach einer Handschrift aus Tunis, Hrsg., von Dr. Maximilian Habicht, Breslau, 1834.

[11] „Тысяча и одна ночь", Госиздат, 1959.

[12] Ա. Չոպանյան, Հայ էջեր, էջ խ։

[13] Նույն տեղում։

թարգմանական կաֆաների մասին[14]։ Չծավալվելու համար նշենք միայն, որ Ն. Ակինյանի «Հանդես ամսօրյայում» հրատարակած օրինակը համեմատաբար ճիշտ է ներկայացնում բնագրային կաֆաների ընդհանուր պատկերը։

Քննությունը պարզում է, որ Պղնձե քաղաքի պատմության հայկական օրինակներում ընդգրկված կաֆաներից առնվազն հետևյալ տասը իրենց հիմքում ունեն արաբական համանման երգեր.

1. Մահն, որ յայս տեղս գայ	6. Ես էի մեծ թագաւոր
2. Մահն բաժանեց զմեզ	7. Արարիչն արարածոց
3. Քանի՞ Աղամայ որդիք	8. Մեռած, թէ հազար եմ
4. Հաշվէ, թէ քանի բարի	9. Զինչ գանձ ու կումաշ կայր ինձ
5. Եկն ինձ մահ և ոչ կարացի	10. Ո՞ւր են թագաւորք երկրի

Բնագրային կաֆաների հետ ունեցած առնչությամբ վերոհիշյալ երգերը հավասարարժեք չեն. նրանց մի մասը հարազատ թարգմանություն է, մյուսներում առկա են փոփոխություններ, մնացածներն էլ փոխադրություն են հիշեցնում։

Հարազատ թարգմանված կաֆաներում հիմնականում ճշտորեն վերարտադրված է լինում համապատասխան երգի բովանդակությունը՝ Ահա մի հատված այդ կաֆաներից.

Нет пользы от воинов, которых я набирал,	Եւ ո՛չ բազում հեծել աւգնեցին ինձ,
Ни друг, ни соседи мне тогда не помогут...	Ո՛չ ազգականք իմ աւգնեցին ինձ,
К другому перед зарей вернется она опять,	Ի ամենայն մեծութենէս տարան զիս
Носильщик когда придет к тебе и могильщик.	Շալկող և փորող մի[15]:

Ընդ որում, նույնն է նաև մեջբերված կաֆաների տեղադրումը արձակ բնագրում. նույնական են նրանց նախորդող և հաջորդող հատվածները։

Երբեմն հայերեն օրինակի և ավելի ինքնուրույն կաֆաների համադրությունը տալիս է բնագրի մեկ կաֆայի համարժեքը.

Коль вспомните меня через много лет вы,	1. Աւաղ զմեռած անունս իմ,
Превратности когда друг друга сменят.	Որ այլ ոչ բնաւ յիշուի բարի.
То я—Шеддада сын, людей владыка,	Թագաւոր՝ որդի Գաղատայ,
И всей земли со всякою страною...	Թագաւորի որդի Շաաայ:
Я был велик, царей их унижал я,	2. Ես մեծ թագաւոր էի,
И жители земли меня боялись.	Զօրաւոր, հզօր և արի.

---

14 *Մենք հիմնականում հենվում ենք Պղնձե քաղաքի Ն. Ակինյանի հրատարակած օրինակի, «1001 գիշերի» արաբերեն հրատարակության* (Tausend und Eine Nacht, Arabisch, nach einer Handschrift aus Tunis, Hrsg., von M. Habicht, Breslav, 1834), *վերջինիս հետ ընդհանուր առմամբ նույնացող ռուսերեն* („Тысяча и одна ночь", М., 1959) *հրատարակության և Մատենադարանի համապատասխան ձեռագրերի վրա։ Լրացուցիչ աղբյուր է 1902 թ. Պետերբուրգում լույս տեսած* „Тысяча и одна ночь" *ժողովածուն (ըստ Մարգրյուսի ֆրանսերեն թարգմանության)։*

15 *Այս և հաջորդ համեմատելի կաֆաները վերցնում ենք գրույցի ռուսերեն թարգմանության 1959 թ. հրատարակությունից, քանի որ վերջինիս արաբերեն նախօրինակը մոտ է հայկականին։ Հոդվածը չծանրաբեռնելու նպատակով այստեղ չենք մեջբերում գրույցի 1839 թ. Բրեսլաու քաղաքում հրատարակված արաբերեն բնագրի համապատասխան կաֆաները, որոնք ընդհանուր առմամբ նույնանում են վերոհիշյալ ռուսերեն կաֆաներին։*

Я владел деньгами, числа которых сочесть
нельзя,
Копил я их на случай перемены.
И мне думалось, будто выкуплю всем
богатством я
Мой дух и жизни срок назначу новый.
Все отверг господь, и свою лишь волю
исполнил он,
И теперь один я, лишен друзей и братьев.

Շատ գանձ ու ղումաշ ունի,
Որ չուներ մարդ ի վերայ երկրի.
Զհոգիս իմ անտես արի
Ու զրնչից շահն բռնի.
Զամէնն այժմ այլոց թողի,
Մեկ զպատանքս առի ու գնացի։

Այս և այլ օրինակների հիման վրա հնարավոր է ենթադրել, որ թարգմանությանը զուգահեռ, շանտեսելով հայկական հայրեն-կաֆաների քառյակային-ութնյակային բնույթը, հայ թարգմանիչները բնագրի երկարաշունչ կաֆաներ մասնատել են գողտրիկ երգերի և տեղադրել դատ-դատ, երբեմն էլ բնագրի տարբեր մասերում։

Ահա մի ուրիշ օրինակ.

Где ныне цари и то,
Что в мире построили?—
Покинули то они,
Что строили на земле,
В могиле они лежат
Залогом за дело их,
И тлеют они в земле,
Бесславно погибшие...

Ո՞ւր են թագաւորք երկրի,
Որ առաջ զանվանքն յիշեցի։
Եւ կամ քանի քաղաք
Ու բերդեր յերկիր շինեցին.
[illegible] մահն ի վերայ երեկ,
Նայ ամէնքն դատարկ գնացին.
Իւրեանց անհուն գանձն
Լուկ իւրեանց հետ փող մի չառին։

Նկատեցինք, որ թարգմանությունը հաճախ կատարված է փոփոխություններով։ Նման կաֆաների գրված տեղերը և ընդհանուր ոգին նույնը լինելով, նմանությունը մոտավոր է լինում։ Այս իմաստով էլ այդ կաֆաները հեռավոր տարբերակներ կամ ազատ վերաշարադրումներ են հիշեցնում։ Անհավասիկ մի օրինակ.

Как часто я медлил, как часто метался,
Как много я разных людей перевидел!
Как много я съел и как много я выпил,
Как много я слышал певиц в своей жизни!
Как много запретов, как много приказов
Я дал и как много дворцов неприступных
Подверг я осаде, потом обыскал,
И много певиц я оттуда похитил,
Но только глупец, я предал перешел
Пытаясь добиться того, что не вечно...

Հաշվէ, թէ ՔԱՆԻ բարի
Ցայս անուն կեանքս վայելեցեր.
Ու կամ թէ ՔԱՆԻ քաղաք
Ու բերդեր յայլոց խլեցեր։
Հիմիկ ես խաւար մտաւք
Ու որդունքն այլ գան ի քեզ.
Ինչե՞ր ունի պացխուն տալու,
Որ այս կեանքս զրկեցեր։

Թվարկված 10 կաֆաներից զատ, Պղնձե քաղաքի առանձին ընդօրինակություններում առկա են «Ո՛, Ազամա որդիք» սկզբնատողով կաֆաներ, որոնք իրենց տեղադրումով և բովանդակությամբ համապատասխանում են արաբերեն բնագրի որոշ արձակ դարձվածներին։ X դարի թարգմանության մեջ այդպիսի կաֆաները երկուսն են, որոնք, ինչպես վկայում են փաստերը, հետագայում համալրվել են համահնչուն այլ կաֆաներով։

Փաստերը ցույց են տալիս, որ Պղնձե քաղաքի պատմության համար կաֆաներ են հորինել Մխիթարը *(XIII դ.),* Հովսեփ Աղթամարցին *(XVI դ.),* Գրիգորիս Աղթամարցին *(XVI դ.),* Զաքարիա Գնունյանցը *(XVI դ.) և ուրիշներ։*

Մխիթարն իբրև կաֆաների հեղինակ մինչև օրս անծանոթ է մնացել բանասիրությանը։ Ելնելով որոշ փաստերից, հնարավոր է ենթադրել, որ Նորա-

հայտ այս բանաստեղծի անունով ավանդված կաֆաները ժամանակագրական առումով Պղնձե քաղաքի պատմության առայժմ հայտնի հեղինակ ունեցող կաֆաներից հնագույնն են։

Ո՞վ է Մխիթարը։ Բանասիրությանը հայտնի բազմաթիվ նույնանուն անհատներից և ոչ մեկին Պղնձե քաղաքի կաֆաների հետ ուղղակիորեն առնչող մատենագիտական հիմքեր առայժմ չեն հայտնաբերված։ Այնուամենայնիվ, որոշ կցկտուր տեղեկություններ հուշում են XIII դարում ապրած, Պղնձե քաղաքի պատմության թարգմանիչ Առաքել աբեղա Անեցու կամ Շիրակվանեցու գործակից Մխիթար Ջեչկանց Շիրակվանեցու անունը։ Հայտնի է միայն, որ Առաքել Շիրակվանեցին թարգմանություններ կատարելիս օգտվել է Մխիթար Ջեչկանցի աջակցությունից[16]։

Անիին մերձակա Բագնայր գյուղի վանքի 1223 թ. արձանագրություններից մեկում Մխիթարը հիշատակվում է իբրև որդի «Ջէչկանց Աւետեացն» և հայր Վահրամի[17]։

Մխիթարի կաֆաները հանդիպում են Մաշտոցի անվ. Մատենադարանի միայն մեկ՝ № 6185 ձեռագրում (XVII դար, գրիչ՝ Հովհաննես Ավերակցի)։ Վերջինս Պղնձե քաղաքի գրիգորիսյան խմբագրությանը պատկանող օրինակներից է, իսկ նրանում եղած կաֆաներն էլ հայտնի են Պատմության այլ ձեռագրերից։ Նորություն են կազմում սոսկ Մխիթարի «Ասաց Ամիրմուսէն զկափայս ի Մխիթարէ», «Եւ ասաց զողբս ի Մխիթարէ» և նման նշումներ ունեցող թվով հինգ կաֆաները, որոնց սկզբնատողերն են.

1. Քաղաք գեղեցիկ շինած
2. Էնց զարմանալի շինուածք
3. Բազմեալ բազումի դշխոյ
4. Զարմանք է գործ արարչին
5. Գերի Ադամայ որդի։

Եթե կաֆա հորինող հեղինակներին արևելյան այս գունագեղ զրույցի մեջ հրապուրել և բանաստեղծական ներշնչանքի աղբյուր է հանդիսացել աշխարհի ունայնության, վայելքների անցողիկության և աստվածային ամենակարողության խիստ միջնադարյան մտայնությունը, ապա Մխիթարը տալիս է քաղաքի, արքայական գահույքի, առասպելական կենդանու երևակայական նկարագիրը։ Ակնառու է Աղեքսանդրի առասպելական պատմության համապատասխան դրվագների երբեմն բառացի նմանությունների հասնող ազդեցությունը Մխիթարի կաֆաների վրա։

Ժամանակագրական առումով Մխիթարին հաջորդած մյուս հեղինակը Հովսեփ Աղթամարցին է։ Այս բանաստեղծի մասին մեզ հայտնի փաստերը կցկտուր են։

Գ. Հովսեփյանը, մատնանիշ անելով Պղնձե քաղաքի պատմություն ներմուծած նրա մի կաֆան, գրում է. «Գրիգորիս Աղթամարցին ճոխացրել է կաֆաներով (Պղնձե քաղաքի պատմությունը—Հ. Ս.), ավելի ևս խտացնելով Պղնձե քաղաքի մեջ արտահայտված մտքերը. այդ գործում նրան աջակից է հանդիսացել և Հովսեփ Աղթամարցին. գոնե ՄԸ կաֆան նշանակված է սորա անունով...»[18]։ Մեկ այլ տեղ, վկայակոչելով էջմիածնի № 588 (այժմ՝ Մաշտոցի

16 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 372։

17 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 121։

18 Գ. Հովսեփյան, Գրիգորիս Աղթամարցի, էջ 16։

անվ. Մատենադարանի № 5622) ձեռագրի նշումները, դարձյալ կրկնում է. «Մի- ողը նշանակված է Հովսեփ Աղթամարցու անունով»[19]։

Այսքանով սպառվում են կոնկրետ տեղեկությունները կաֆաների ասպարեզում Հովսեփ Աղթամարցու կատարած աշխատանքի մասին։ Հետագայում միայն Ն. Ակինյանը, օգտվելով մի այլ աղբյուրից (Վիեննա, № 977 ձեռ.), բավարարվում է Գ. Հովսեփյանի նկատած կաֆայի թռուցիկ հիշատակումով[20]։ Խոսքը «Գերի Ադամայ որդի, զամէն է՞ր կատես հետ մեղաց»...[21] ութատող կաֆայի մասին է, որը Պղնձե քաղաքի մի շարք օրինակներում (№№ 10275, 5622, 6185, Վիեննայի № 977 և այլն) կրում է Հովսեփ Աղթամարցու անունը։ Անկասկած, այս վերագրումը պետք է հավաստի համարել, քանի որ հակառակ ցուցումներ հայտնի չեն։

Այժմ անցնենք Պղնձե քաղաքի պատմության համար Գր. Աղթամարցու հորինած կաֆաներին։

Գր. Աղթամարցու գրչին վերագրված կաֆաներ են հրատարակել տարբեր բանասերներ, որոնք վստահություն են ցուցաբերել իրենց հայտնի մեկ ձեռագրի վկայությունների նկատմամբ։ Այդ իմաստով ուշագրավ են Գ. Հովսեփյանի մտորումները։ Նա նկատում է, որ իր տրամադրության տակ գտնվող ձեռագրում թվով 34 կաֆաները, որոնք ներկայացվում են Գր. Աղթամարցու անունով, ասված են հերոսների կողմից, օրինակ՝ «Ի բերանոյ ալեւորին», «Եւ ասաց Ամիրմուսէն զողըս ի Գրիգորիսէ» և այլն, ի հակադրություն մնացած ողբերի, որոնք «բուն պատմության մասն են կազմում՝ գրված արձանների կամ գերեզմանների վրա»։ Անհեղինակ կաֆաներից, սակայն, Հովսեփյանը առանձնացնում է վերոհիշյալ 34-ի հետ որոշ ընդհանրություններ դրսևորող նույնատիպ 9 կաֆա, որոնց՝ ձեռագրերում անհեղինակ լինելը, ըստ հրատարակչի, չի խանգարում դրանք Գր. Աղթամարցունը համարել։ Այսպիսով, ըստ Գ. Հովսեփյանի, ստացվում է 43 կաֆա, այսինքն այնքան, որքան Աղթամարցին իրեն է վերագրում ձեռագրի հիշատակարանում։

Որքան էլ հավանական են թվում այս դատողությունները, որոշ հանգամանքներ, սակայն, կասկածի տակ են առնում այդ հաշիվները։ Նախ, չպետք է մոռանալ, որ այդ 9 կաֆաների մի մասը արդեն առկա է Պատմության X դարի թարգմանության մեջ, որին ծանոթ չի եղել բանասերը։ Այնուհետև փաստերին հակասում է բանասերի այն պնդումը, թե «բնական» (բնագրային) ողբերը բացառապես արձանների և տապանաքարերի վրայի եղածներն են։ Ինչպես երևում է, բնական ողբերի շարքում չի բացառված նաև տարբեր հերոսների կողմից ասված որոշ կաֆաների գոյությունը։ Օրինակ.

...Окружавшие его слушали... и стал говорить такие стихи:
—Что до меня, мне Сулейман не страшен,
Ведь обо всех делах осведомлен я...

Այս հատվածը ռուսերեն է թարգմանվել արաբերեն բնագրից։

Այնուհետև Գ. Հովսեփյանը ձեռագրի մնացած 28 կաֆաները դասում է բնագրային երգերի շարքը։ Այդ կարծիքը ևս առայժմ մնում է տարակուսելի.

19 *Նույն տեղում, էջ 17։*

20 *Ն. Ակինյան, Գրիգորիս կաթողիկոս Աղթամարի, էջ ԻԳ։*

21 *Այս կաֆան չշփոթել Մխիթարի 5-րդ, նույն սկսվածքն ունեցող կաֆայի հետ։*

որովհետև մեզ հայտնի արաբական երկու բնագրերում եղած կաֆաների թիվը կազմում է 14։ Ըստ երևույթին, այստեղ անտեսվել է հայ այլ հեղինակների կաֆաների գոյության հնարավորությունը։

Գր. Աղթամարցու կաֆաների հաջորդ հրապարակումը պատկանում է Ն. Ակինյանին, որն օգտվել է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 977 գրչագրից (ԺԶ դ.)։ Բանասերը Գրիգորիսի վաստակը տեսնում է Պղնձե քաղաքի «բնագրի մեջ աղավաղած, պակասավոր կաֆաներու թիվը աճեցնելու մեջ»[22]։ Ընդ որում, նշված ձեռագրում Գրիգորիսին վերագրված 45 կաֆաներից 18-ը նա համարում է տաղերգուի կողմից մշակված բնական ոդբեր։ Հետևաբար, մնում է ենթադրել, որ մնացած 27 կաֆաները դիտվել են իբրև բուն գրիգորիսյան կաֆաներ։ Ն. Ակինյանն այնուհետև մեկ-երկու կոնկրետ օրինակով մատնացույց է անում միջնադարյան բանաստեղծների, հատկապես Մկրտիչ Նաղաշի բանաստեղծությունների վրա Պղնձե քաղաքի որոշ կաֆաների ազդեցությունը։

Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեգյանը իր «Գրիգորիս Աղթամարցի» մենագրության ծանոթագրություններում հատուկ բաժին է հատկացրել Պղնձե քաղաքի ձեռագրերի քննությանը (տե՛ս նշված աշխատության 323—327 էջերը)։ Հեղինակին հատկապես հետաքրքրել է Պղնձե քաղաքի պատմության կաֆաների հորինման գործում Գր. Աղթամարցու կատարած աշխատանքի հարցը, որի մասին նա եզրակացնում է. «Մաշտոցյան Մատենադարանի մեր ձեռքի տակ եղած ձեռագրերը կասկածելի են դարձնում նաև այդ կաֆաների՝ Աղթամարցու սեփական ստեղծագործություն լինելու հանգամանքը»։

Պղնձե քաղաքի պատմության կաֆաների հորինման գործում Գր. Աղթամարցու վաստակը ներկայացնելու իմաստով բացառիկ դեր ունի Մաշտոցի անվ. Մատենադարանի № 5622 ձեռագիրը, որն ամփոփում է տաղերգուի արժեքավոր հիշատակարանը և կաֆաները։ Ձեռագիրն ընդօրինակված է 1700 թ., Գրիգոր քահանայի ձեռքով «ի Ջերմաձոր, Մոկաց թաղին»[23]։ Ուշագրավ է ձեռագրի հիշատակարանը, ուր որոշակիորեն ասվում է, որ տաղերգուն բնագրի «բնական» ոդբերի թիվը ավելացրել է իր իսկ հորինած ԽԳ (43) կաֆայով.

Զլուսաձող Պատմութեան Պղնձէ քաղաքիս՝	Քառասուն երեք սար ու ջումլայ
Զկաթուղիկոսն Գրիգորիս,	Ոտանաւոր ողբ կա ի սմայ,
Յիշեցէք յաստուած ողորմիս	Յանիմաստէս գրեալ ի սայ,
Ըզեղկելի մեղօք գերիս.	Մտացրդ ձեր յանոյանայ...[24]։

Այս վկայությունը հաստատված է նաև ձեռագրի նույնանուն գրչի՝ Գրիգոր քահանայի հիշատակարանում. «Ո՛վ եղբարք, յորժամ ընթեռնուք զպատմութիւնս և զուարճանայք, յայնժամ զիմաստուն կաթողիկոսն զտէր Գրիգորիսն յիշեցէք և աստուած ողորմի ասացէք նմայ, զի շատ աշխատեցաւ ի հետ սորայ և ԽԳ ողբ յիւրմէն ասեալ ի սայ, թող զայն, որ զերկու վանկըն և զմեկն ինքն էր արարեր ի բնական ողբերն, զի պակաս էր ընդ նմին...»[25]։

22 Ն. Ակինյան, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, էջ 88։

23 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5622, թ. 231 բ։

24 Նույն տեղում, թ. 54 բ։

25 Նույն տեղում, թ. 55բ։ Հայտնի են նույն հիշատակարանները պարունակող Պղնձե քաղաքի ևս երկու օրինակ։ Առաջինը գրված է 1624 թ. (տե՛ս «Տաճար», 1912, № 40, էջ 595), երկրորդը՝ 1628 թ. (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 10329, թ. 113բ)։

Կարելի է բերել ուրիշ փաստեր ևս, որոնք ավելի հավանական են դարձնում միջնադարյան թարգմանական զրույցների հետ նշանավոր տաղերգուի նմանօրինակ կապերը։ Եվ իրոք, հայտնի է, որ Գրիգորիս Աղթամարցին գործոն մասնակցություն է ունեցել նաև Ալեքսանդր Մակեդոնացու հանրահայտ պատմությունը կաֆաներով հարստացնելու գործին։ Իբրև այդ իրողությունը հավաստող անառարկելի փաստարկներ կարելի է հիշել 1526 և 1536 թթ. բանաստեղծի անմիջական մասնակցությամբ ստեղծված Աղեքսանդրի պատմության երկու ձեռագրերում եղած ինքնագիր կաֆաները[26]։

№ 5622 ձեռագրում կաֆաների թիվն է 72, որոնք բոլորն էլ համարակալված են հայկական այբուբենի տառերով, ընդ որում, 34 կաֆայի դիմաց՝ լուսանցներում կա «Գրիգորիս» նշումը։

Պետք է նշել, որ № 5622 ձեռագիրը հիմնականում (մասնակի խոտորումներով) հետևում է մի որոշակի սկզբունքի։ Այդ ձեռագրում Գրիգորիսի անունով են նշանակված հիմնականում այն կաֆաները, որոնք չկան նախագրիգորիսյան օրինակներում։ Սրանք Գր. Աղթամարցու այն կաֆաներն են, որոնք հետագայում որոշ հաջորդականությամբ ավելացվել են արդեն եղած կաֆաներին։

Հասկանալի է, Գր. Աղթամարցին ինքը կամ նրան ժամանակակից որևէ գրիչ է գրիգորիսյան նորաստեղծ կաֆաները, հին կաֆաներից զատելու նպատակով, ներկայացրել հեղինակի անվան նշումով։

Այստեղից պարզ երևում է, որ 1857 թ. տպագրության հիմքում ընկած ձեռագիր օրինակում չեն եղել այն կաֆաները, որոնք կան № 5622 ձեռագրում և կրում են «Գրիգորիս» նշումը։ Կնշանակի վերջիններս, իրոք, առանձին ծագում ունեն՝ կապված Գր. Աղթամարցու անվան հետ։ Գր. Աղթամարցու հորինած կաֆաների սկզբնատողերն են.

1. Ասեմ քեզ զրուց, Մուսէ՛
2. Յոյս ունիմ ես առ աստուած
3. Աղաչեմ զքեզ, ստեղծո՛ղ
4. Մեր կեանքն է զետոց նման
5. Յառաջ ի քաղաքն իջնուք
6. Երբ թիւրն կենաց լբցոփ
7. Մեռաւ նախահայրն Ադամ
8. Ա՛յ իմ գեղեցիկ արքայ
9. Մարդ, որ չինչքն յոլով լինի
10. Զինչ որ Ադամայ որդիք
11. Իմ զօ՛րք, իմ հեծե՛լք ամէն
12. Ծառ մարդ ու ապլան յոլով
13. Այս կեանքս ի խաբող յերակ
14. Գազանք, դուք յաշմէ եկէք
15. Մի՛ երկնչիր, ո՛վ արքայ
16. Ո՛վ անքննելի աստուած
17. Է՛, զարմանագործ աստուած
18. Այս անցաւորական աշխարհս
19. Քանի մի խրատ տամ քեզ
20. Անթիւ եւ բազում մարդիկ
21. Մուսէ՛, դու բազում լացիր
22. Մահն ոչ բազաւոր կասէ
23. Այս երևելի բարիքս

Համապատասխան որոշ վկայություններ են պահպանվել նաև №№ 10329, 10275, 6185 և այլ ձեռագրերում, որոնք բոլորն էլ պատկանում են գրիգորիսյան խմբագրությանը։ № 5622 ձեռագրի նշումները հիմնականում համընկնում են նույն խմբագրությանը պատկանող Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 977 ձեռագրի տվյալներին[27]։

Սրանցից զատ, № 5622 ձեռագրում հանդիպում ենք Գրիգորիսին վերագրված մի քանի կաֆաների, որոնք միևնույն ժամանակ առկա են և նախագրի-

26 *Այդ մասին տե՛ս մեր հոդվածը ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1968, № 8, էջ 85։*

27 *Ն. Ակինյան, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, էջ 112։*

գորիսյան խմբագրության օրինակներում՝ առանց հեղինակի անվան։ Ո՞րն է այս երևույթի բացատրությունը։ Թերևս հենց այստեղ պետք է որոնել Աղթամարցու կողմից բնական ողբերի պակասող տողերի և վանկերի հավելման փաստը, որի մասին ձեռագրի հիշատակարանում ակնարկում է հիշյալ Գրիգոր քահանան. «ղերկու վանկըն և զմէկն ինքն էր արարեր ի բնական ողբերն, զի պակաս էր»։ Ըստ այսմ, Գր. Աղթամարցին հենց այս վերջին խմբի կաֆանե-րի մեջ է, որ պիտի կատարած լինի լրացումներ։ Նման ենթադրությունը ավելի քան հավանական է դառնում, երբ դիմում ենք ուղղակի այդ կաֆաներին։ Նրանցից մեկը, որը մի շարք ձեռագրերում (№№ 10275, 5622, 6185, Վիեննայի № 977) Գրիգորիսի անունով է, աղճատումներով առկա է անգամ X դարի օրինակում։ Ահա X դ. օրինակում եղած այդ կաֆան և նրա դիմաց՝ նույնի՝ Գր. Աղթամարցու անվամբ հայտնի տարբերակը.

Գեղեցիկ ղօվուճք եւ թագաւորական,
շինել չկարէ մարդ զայս ոչ ոսկի նման.
Դուք վայ շինողացս տուք,
որ չվայլեցաք զինքս միաբան.
Գնացաք և տեղիս թողաք,
մեր ամեն ոսկերք ճողացան:

(«Հանդես ամսօրյա», 1955,
№ 1—4, էջ 43):

Այս դրունս գեղեցիկ, աղուոր,
գովելի, մեծ, արքայական.
Չկարէ շինել այլ բան զայս,
զի այս շինուածքս է աննման.
Այ վայ դուք սոցա տուէք,
որ չեղաւ նա մեզ բնակարան,
Գրնացաք և ասա թողաք
զանցաւոր շինուածքս ամենայն:

(Պատմութիւն Պղնձէ քաղաքին,
Տփղիս, 1857, էջ 33):

Այստեղ էլ, սակայն, զգացվում է լրացուցիչ փաստերի անհրաժեշտու-թյուն։

Հնարավոր է մեկ այլ ենթադրություն ևս. քանի որ Պղնձե քաղաքի մեզ հասած ձեռագրերը հիմնականում ընդօրինակված են XVII—XVIII դդ., ապա բացառված չէ, որ հետագայում նախագրիգորիսյան որոշ օրինակների մեջ փոխանցված լինեին և գրիգորիսյան մի քանի կաֆաներ։

Քննվող հարցի առնչությամբ գոյություն ունի մասնակի տարակուսանք հարուցող մի հանգամանք, որը կարող է որոշ դեպքերում շփոթությունների տե-ղիք տալ։ Խոսքը վերաբերում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 58 ձեռագրին՝ ընդօրինակված Տրապիզոնում, 1657 թ., Ամիրասի Երզնկացու կող-մից[28]։ Այդ ձեռագրի հետ մեր ունեցած ծանոթությունը սահմանափակվում է Տաշյանի հաղորդած տեղեկություններով։ Ըստ հիշատակագրի հավաստման (թ. 6բ), ձեռագրում ամփոփված Պղնձե քաղաքի պատմությունը, ինչպես և մի երազահան «ի յարապ լեզւէ ի հայոց բառ» է թարգմանել Առաքել Անեցին կամ Շիրակվանեցին 1222 թ., օժանդակությամբ Մխիթար Ջեչկանցի։ Մեզ հայտնի է նաև ձեռագրի առաջին կաֆան՝ «Ասեմ քեզ դրուց, Մուսէ»։ Հենվելով այս փաստի վրա և ելնելով նույն կաֆայով սկսվող մի շարք ձեռագրերի ծանոթու-թյունից, հնարավոր է վերջինս ևս դասել գրիգորիսյան խմբագրության ձեռա-գրերի շարքը։ Առաջին հայացքից կարծես ստացվում է հակասություն՝ XIII դարի թարգմանության մեջ առկա են կաֆաներ, որոնք մի շարք այլ աղբյուր-ներից հայտնի են XVI դարում ապրած Գր. Աղթամարցու անունով։

Շիրակվանեցու հիշատակարանի առկայությունը չպետք է կասկածի տակ դնի այդ ձեռագրում ևս Աղթամարցու հորինած որոշ կաֆաների ներթափանց-

---

[28] *Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց..., էջ 354։*

ման հնարավորությունը։ Անկասկած, XIII դարի հիշատակարանը պահպանած այս ձեռագիրը հարստացել է հետագայի տարբեր հեղինակների՝ այդ թվում և Գր. Աղթամարցու կաֆաներով։ Նույն եղանակով էլ Աղեքսանդրի պատմության մեջ տեղ գտած ամենատարբեր հեղինակների զանազան կաֆաներ երկար ժամանակ վերագրվել են Խ. Կեչառեցուն, նրա մի հիշատակարան-կաֆայի հիման վրա, ուր ասվում է.

Առ ձեզ պաղատանք ընկնիմ,
Ընթերցողք, գրոցս ի լման,
ԸզԿեչառեցիս մոլարս,
Արարէք յիշման զիս արժան,
Որ ոտանաւոր ամէն,
Ասացի, զինչ ի սմայ, որ կան...[29]

Հիշատակարանը գրվել է XIV դարում, իսկ Պատմությունը շարունակել է կաֆաներ ներառնել նույնիսկ XVI—XVII դարերում։

Ինչպես երևում է, պրպտումներն առայժմ ուրվագծում են Պղնձե քաղաքի պատմության բնագրի մեջ կաֆաների ներհյուսման գործում Գր. Աղթամարցու կատարած աշխատանքի միայն որոշ կողմերը։ Սակայն այսքանն էլ որոշակի հիմք է տալիս պնդելու, թե տաղերգուի գրչից ելած կաֆաները ավելի են, քան ներկա հոդվածում հիշատակվածները։

Պղնձե քաղաքի որոշ կաֆաներ կապվում են Զաքարիա Գնունյանց բանաստեղծի անվան հետ։ Նկատենք, որ նախկինում (Ն. Ակինյան, Գ. Հովսեփյան և այլք) Զաքարիան իբրև կաֆագիր հիշատակվել է լոկ Աղեքսանդր Մակեդոնացու պատմության կապակցությամբ։ Պարզվում է, սակայն, որ Պղնձե քաղաքի պատմության որոշ կաֆաներ ևս հուշում են Զաքարիա Գնունյանցի անունը։ Հետաքրքիր է, որ մեզ հայտնի ձեռագրերում Զաքարիայի կաֆաները ոչ թե գրված են բուն բնագրում, այլ ուրիշ կաֆաների հետ կցված են Պղնձե քաղաքի պատմության վերջից՝ իբրև հավելված, առանց հեղինակի անվան հիշատակության։ Եվ քանի որ որոշ հիմքեր կան ենթադրելու, որ Զաքարիայի կաֆաները Պղնձե քաղաքի պատմություն մուտք են գործել միջնորդաբար՝ Աղեքսանդր Մակեդոնացու պատմության միջոցով, ապա այս հարցին մենք նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ մեկ այլ անգամ՝ Աղեքսանդր Մակեդոնացու պատմության հետ Զաքարիայի առնչությունները քննելու կապակցությամբ։

Պղնձե քաղաքի պատմության հայերեն թարգմանությունը, այսպիսով, իր բազմադարյան գոյության ընթացքում աստիճանաբար համալրվելով նորանոր կաֆաներով, ընդհանուր առմամբ պարունակում է մոտ 100 կաֆա։ Այդ կաֆաները ներկայացնում են երկու առանձին խմբավորում. 1. բնագրից եկող կաֆաներ (բնական ողբեր), որոնց թիվը նախնական տվյալներով հասնում է 10-ի և 2. հայ հեղինակների ստեղծած կաֆաներ։ Դատելով այս հոդվածում հրապարակված փաստերից, երկրորդ խմբավորման կաֆաներից հայտնի են դառնում Մխիթարի (XIII դ.) 5 կաֆա, Հովսեփ Աղթամարցու (XVI դ.) 1 կաֆա և Գրիգորիս Աղթամարցու (XVI դ.) 23 կաֆա։ Բնական է, որ Պատմության մնացած կաֆաները ստեղծվել են ոչ միայն այս, այլև ուրիշ հեղինակների կողմից, որոնց անունները, սակայն, չեն պահպանվել։

29 *Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3587, թ. 26ա։*

Hasmik Simonyan

ON THE VERSES OF “THE TALE OF THE CITY OF BRASS”

Summary

The Mashtots Matenadaran and repositories of Armenian manuscripts outside Armenia host numerous manuscripts of *The Tale of the City of Brass*. The hand reproduction of the tale text in Armenian continued up to the 20th c. In the 18th century the process of active publication of the *Tale* began in Constantinople and Echmiatsin. Around twenty publications dating from the 18-19th centuries have survived. Collections of verses from the *Tale of the City of Brass* were published too. In the course of centuries the Armenian rendering of the *The Tale of the City of Brass* has been enriched with around 100 rhymes (Arab. *qafiya*). The corpus of these texts can be divided into 1. Verses rendered from the original text of the laments and 2. Verses of Armenian authorship composed by *Mkhitar* (12th c), *Hovsep Aghtamartsi* (16thc), *Grigoris Aghtamartsi* (16^{th} c.) and poets whose names have not reached us.

* Հոդվածն առաջին անգամ հրատարակվել է *Պատմա-բանասիրական հանդեսում*, (1969) № 2, էջ 155-166: Վերահրատարակվում է հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Jack Haney

ON SOME VERY LONG RUSSIAN FOLKTALES

Без присказки сказка,	*Without a pretale the tale*
Что без полозьев салазки.	*Is like a sled without runners.*
С горы по льду	*Down the hill over the ice*
Нет им ходу,	*There's no track for it,*
А по гладкому пути	*And over the smooth way*
Нечего их и за собой везти.	*There's nothing to carry behind.*

The twentieth century apparently saw the birth and death of an exceptional sort of folktale in Russia, the "Long, Long Tale", known in Russian as the *долгая сказка*.[1] Or rather should one say, known to a few Russians as the *долгая сказка*. Most of them insist that a tale should be not too *длинная* and never *долгая*. But as will be made clear, долгая сказка is precisely the term used by the tellers of these tales and that is the term that will be used here. But for the English reader there is a problem: how to distinguish between the two Russian words for which we apparently make no common distinction. "Long" and "Lengthy" are used almost interchangeably for both time and space. The proposed solution involves the manner in which the tales were commonly told.

But first to the question of provenance. As far as I can ascertain at the present time, these very long folktales were recorded only over a limited time, from ca. 1930 to ca. 1976. There are none in the classical collection of N. E. Onchukov (*Северные сказки*), nor in the Karelian tales selected by M. K. Azadovskii (*Русские сказки в Карелии. Старые записи*). Not surprisingly, the brothers Sokolov did not collect any of them in the Belozersk region either. Nor did Karnaukhova. As far as I have been able to discern, they have been published in but three scholarly editions:

1. *Сказки М.М. Коргуева*, ed. A.N. Nechaev, Petrozavodsk, 1939.
2. *Русские народные сказки Карельского Поморья*, A.P. Razumova and T.I. Sen'kina, Petrozavodsk, 1974.
3. *Русские народные сказки Пудожского Края,* A.P. Razumova and T.I. Sen'kina, Petrozavodsk, 1982.

The tales at my disposal were collected only in two regions: first in the East Karelian seacoast area (Поморье) and subsequently in the Pudozh area in southeast Karelia. Both

1 While preparing my *The Complete Russian Folktale*, published in seven volumes 1999–2006, I became aware of some Russian folktales that stood out from the others in one important respect: they were inordinately long. I included three of these lengthy tales in an *Anthology of Russian Folktales*, which was published in 2009. A further sixteen of these unusual tales constitute *Long, Long Tales from the Russian North*, a volume I have just recently completed.

these areas were centers of folk–tale collecting through the first three–quarters of the twentieth century. Thus, these long, long tales are a product of a limited time and a limited geographical area.

The third interesting observation to be made here is that all the long, long tales appear to fall into the category known to folklorists as Tales of Magic (Aarne–Thomson), Wondertales, or, popularly, fairytales[1]. It is likely that a thorough search of the archival materials, especially those of the Karelian filial of the Russian Academy of Sciences in Petrozavodsk, would turn up not only additional long, long tales but also some that are not classified as wondertales. (For a variety of reasons I have been unable to return to those holdings since my initial visit there more than a decade ago.)

The most important factor distinguishing these tales from the usual wondertales is the manner in which they were most often told. Apparently the first to describe this was the writer Mikhail Prishvin, who in his 1907 work *В краю непуганых птиц*, tells of meeting a certain Manuilo Petrov, a hunter and trapper in far–flung Karelia. This Petrov was a teller of these very long tales. It is unfortunate that Prishvin did not record any of Petrov's longer tales, although his collection of the latter's tales makes up the bulk of his tales included in Onchukov's *Северные сказки*[2]. According to Prishvin, "In the long winter evenings, Manuilo would keep on telling [his tale] until he was convinced that every single man was asleep. To ascertain this he would from time to time shout out: 'Are you asleep, Christians?' And if even one responded, he would fix the reed light and continue his tale." (Prishvin 1957: 73) The master of the long tales, and one of the outstanding narrators of the twentieth century, M. M. Korguev, seems to have employed a strikingly similar technique. Korguev was hired to accompany crews on the fishing boats that plied the White Sea in the summers. His task was apparently solely to entertain the ships' crews telling folktales. Nechaev writes (Haney 2009: xxviii) that Korguev would tell a single tale over several nights while he was at sea, and indeed one can occasionally find places in the narratives as he told them to Nechaev where he might have broken off his narrative for some reason or another. Korguev, like Petrov, told his tales in the evenings, after supper. At an appropriate time he would interrupt his tale to ask the crew: "Are you asleep?" If he received an answer, he would continue the tale, but if no one responded, he assumed that all slept and he broke off the narration to continue on a subsequent evening. V. Dmitrichenko collected four tales from the Pudozh raconteur, O. I. Dmitriev in 1939 and he stated that "Dmitriev's tales are long, most often fantastic, and the heroes have the most extraordinary names." (Sen'kina 1988: 32).

The value placed on these long tales and their narrators was apparently considerable. Stepanida Ivanovna Golovina, a teller of tales herself, was asked about her own, shorter tales. She responded to the ethnographers recording her works: "What do you mean, women {Razumova and Sen'kina, who were transcribing her tales}? What will you do with these tales? A tale is good only when it is really long. And are there many such tales? Bah!" (Razumova and Sen'kina 1974: 12) Perhaps Golovina is guilty merely of false modesty. More likely, however, she expressed the opinion of someone "in the know." Indeed, such

1 The popular designation of the Magic or Wondertales as fairytales seems inappropriate when referring to Russian tales. The Russian tales contain no fairies, a word derived from the ME faerie, which meant "enchanted". I prefer "wondertale", as not all the Russian tales classified A-T 300-750 contain magic.

2 Prishvin cites the difficulties in writing down Petrov's tales in his notes preceding the tales published in Onchukov's collection, see Onchukov, N. E., Северные сказки, St. Petersburg., 1998, vol. 2, p. 72. He also quotes Petrov here as saying that to be a good narrator one needs "only a memory without holes." (недырявая память).

was the authority of the tellers of the long, long tales that those who knew only short tales, or animal tales, or even the tales of everyday life would refer folklorists to those who knew the long ones: "You'd better go to Gavrilych, he knows good, long (долгие) tales, he'll go on for a whole night with one, and maybe a night won't suffice." (Ibid.)

Perhaps here I should give some idea of how long a "long" tale was. Kabrenov's tale "Fear Bogatyr" comes to eleven printed pages, "Ondrei the Shooter" and "Ivan Medvedevich the Bear's Son" (Korguev) to seventeen and twenty printed pages respectively (Haney 2009: 274–321); Nikonov's average in the Russian eighteen printed pages, and Mikhail Dmitriev's tales about twelve pages on average. Most Russian folktales take up less than five printed pages and the majority less than that.

All the tales to which I have had access belong to a type Russian investigators have termed "epic." This is, I would suggest, not an ideal term, as in folklore and literary studies the word epic is applied to many genres, none of them especially resembling these long, long tales. I would propose to call them "serial tales", as that is the way they were characteristically told. And in all other respects, these serial tales are wondertales: they feature well thought–out introductions and conclusions of the traditional sort, the typical folktale formulae, triplification of actions – sometimes even speech – and commentators uniformly cite the traditional manner in which they were told: at evening in the winter, solemnly, without gesture but with varied intonation. An additional feature is of interest: the narrators I have examined in some detail began learning folktales and the art of telling tales from relatives, most usually males. (I know of no women who told these long tales.)

And just who were these tellers of the serial tales? At this point I should reiterate that my studies to date include no unpublished materials that may conceivably remain in the archives of the Russian Academy of Science, whether in Petrozavodsk, St. Petersburg, or Moscow. The printed record, however, will permit us to characterize these tales and their сказители (*сказочник* is the older term) as a whole.

The most prominent of the five whose works I have studied is Matvei Mikhailovich Korguev. Born in 1883 in the village of Keret' in Karelia to a Karelian–speaking mother, Korguev first heard folktales from his mother in her native language and then from his mother's brother, but it appears that it was from his fellow villagers of Keret' that he first became acquainted with the Russian tales for which he is so justly admired. It is worth noting here that he knew the Karelian language sufficiently well to sing at least one Karelian rune, and he is reported to have known Karelian folktales. (Chistov 1980: 189) Korguev's childhood was not a happy one. His father died when he was just a child of six and he was forced to go to work first repairing fishnets, then as a herder and then at thirteen as a cook on a merchant vessel. His real dream as a youth was to outfit himself with the equipment to go to sea, to "become a real Pomor." It was not to be. As an adult Korguev worked at a number of menial jobs: he went to sea, hired on as a day laborer, worked in a forest camp, helped lay rails and even string telegraph lines. And it appears that wherever he worked, he kept an open ear for folktales. In later years he was to recall how he heard a tale in 1904 one rainy day and immediately made it his own and retold it over and over again. Thus, his tale "Frantsel the Venetian."

Korguev early on was hired to tell tales in a variety of situations, especially at sea. Later on, as a reindeer herder, he told tales to the youths who were also herding. His fame as a storyteller spread and in the last ten years or so of his life he frequently appeared before large audiences to tell his tales in Arkhangel'sk, Petrozavodsk, Leningrad, and Moscow. In 1937 he was awarded the "Badge of Honor" and made a member of the Union of Writers (!).

His repertoire was large: he knew and told up to 150 different tales, not all of them the long "serial" tales. Unfortunately, not all of Korguev's tales have been published.

Of course, Korguev's tales, and those of the other tellers of serial tales, were what are called in Russian "*контаминационные*", "complex" (but hardly contaminated, as the English cognate would suggest.) Many, many Russian folktales are. (SUS 1979: 395–398) This is not a distinguishing feature of the serial tales.

The second Pomor teller of the serial tales whose work I have translated is Petr Iakovlevich Nikonov, born in 1887 and from the village of Sukhoi Navolok, Karelia. Unfortunately, only four tales were recorded by investigators from this talented storyteller, apparently all in 1938. Of these, only two have been published. Nikonov was the son of a ship owner who had fallen on hard times and it was from his father that he learned his tales. Of his father it is said that "Iakov Nikonov loved to tell the long tales and would go on with one for several nights; and you didn't want to go to sleep." (Razumova and Sen'kina 1974: 388) P. IA. Nikonov was a perfectionist and related his few tales with great attention both to their content and to his own manner of telling them. He would frequently interrupt his own narration to alter a word or expression he found unsatisfactory.

Հոգեհարազատության զգացումով ներշնչված՝ Աղայանը կատարում է ռուսական «Родник» ամսագրի 1890թ. հուլիս–օգոստոսյան միացյալ համարում տպագրված Ե. Ա. Սիսոևայի «Հեքիաթների անմահ ստեղծողը» կենսագրական ակնարկի թարգմանությունը, որը լուսընծայվում է «Աղբյուրի» 1890 թ. վերջին հինգ համարներում (№ 8–9, 294–315, № 10, 348–361, № 11, 400–411 և № 12, 451– 458): Կցելով նյութին որոշակի միջամտություններ՝ Աղայանն արտահայտում է իր անկեղծ հիացմունքն Անդերսենի ստեղծագործության՝ մասնավորապես հեքիաթների վերաբերյալ և դրանով բացատրում Անդերսենի կենսագրությամբ հետաքրքրված լինելու հանգամանքը. «Գիտենալ Անդերսենի հեքիաթները և չփափագիլ գիտենալու, թե ինչպիսի մարդ է Անդերսենը՝ անկարելի է» (Աղայան 1962, 450): Նույն հիացմունքով, սակայն, Աղայանը չի խոսում անդերսենյան հեքիաթների հայերեն թարգմանությունների վերաբերյալ, վերջինիս չի գոհացնում դրանց թարգմանական որակը. «…ծանոթանանք հռչակավոր բանասերի կյանքին, այն մարդուն, որի հեքիաթները թարգմանված են բոլոր եվրոպական լեզուներով, կան և հայերեն թարգմանություններ, թեև ոչ այնքան հաջող», – գրում է Աղայանը

(Աղայան 1962,449): 19–րդ դարի 80–90–ական թվ.–ին և 20–րդ դարասկզբին, Անդերսենը հայտնվել էր հայ հրատարակիչների և թարգմանիչների ուշադրության կենտրոնում. 1882թ–ին Տ. Նազարյանի հրատարակությունը Թիֆլիսում լուսընծայում է Անդերսենի «Սոխակ» և «Խոզարած» հեքիաթները՝ գրքույկին կցելով փոքրիկ նախաբան և ակնկալելով թարգմանական լեզվի վերաբերյալ անաչառ քննադատություն.« …թարգմանութեան լեզուի մասին կը յուսանք որ մամուլը անաչառ դատողությիւն տայ» (Անդերսեն 1882, 3): «Աղբյուր» ամսագրի 1890 թ.–ի 1–ին համարում տպագրվում է Անդերսենի «Աղջիկն ու լուցկիները» հեքիաթը Ալ. Ծատուրյանի թարգմանությամբ: 1904թ. Թիֆլիսում հրատարակվում են «Անդերսենի հեքիաթները»՝ 9 հեքիաթ հեղինակի կենսագրական մանրամասներով, Տ. Ջավենի ֆրանսերենից–հայերեն թարգմանությամբ և այլն):

Անդրադարձն Անդերսենի կենսագրությանը և ակնարկի լուսընծայումը «Աղբյուրի» էջերում պայմանավորված էր նաև ամսագրի հիմնական սկզբունքներից մեկով. այն է՝ «Երեխաներին կրթել մեծ մարդկանց օրինակով»: Այս հիմնարար սկզբունքի մասին ասվում է «Աղբյուրի» 1884թ. 3–րդ համարի հավելվածում (Հակոբյան 1959, 68):

Աղայանը կատարում է Անդերսենի կենսագրական ակնարկի թարգմանությունը՝ տեսնելով դանիացի հեքիաթագրին «մեծ մարդկանց» բույլում՝ կարևորելով գրողի տաղանդն ու ստեղծագործությունների արժեքավորությունը:

Իրենց գաղափարական–ստեղծագործական նկարագրով և մասնավորապես իբրև հեքիաթագիրներ, Հ. Ք. Անդերսենն ու Ղ. Աղայանն ունեն բազմաթիվ ընդհանրություններ, որոնք տեսանելի են գրողների ստեղծագործական ճակատագրերում, ընտրված ուղիներում և նույնիսկ վերջիններիս ստեղծագործությունների վերաբերյալ կատարված գրաքննական գնահատականներում, ինչը ժամանակին նկատել է Աղայանը, ցավով նշելով ակնարկում «հնասեր և նորատյաց» քննադատների անզիջում գնահատականների մասին, որոնք անարդարացի էին գտնվել Անդերսենի և նրա ստեղծագործությունների նկատմամբ: Վերջինս հարկ է համարում «միջանկյալ և բնագրից դուրս մի ծանոթություն տալ», որում պարզաբանում է «կյանք, պարզություն, անմեղություն, բնականություն» մերժող հնասեր նորատյացների քննաբանությունները, այսպիսով, զուգահեռ տանելով Անդերսենի քննադատների և իր ժամանակակից քննաբանների միջև: Աղայանի արդարացի կարծիքով «ինչքան էլ լավ գրես, եթե աշխարհիկ է պահպանած չես հին բանաստեղծելու ձևը, ճարտասանության կանոնները, նրանք (հնասերները, իմը՝ Լ. Հ.) կմերժեն: Նրանց համար կյանք, պարզություն, անմեղություն, բնականություն չկա, – ավելացնում է Աղայանը,– այլ միայն արվեստ է այն էլ շատ անգամ ճոռոմաբանության և արվեստականության հասցրած…» (Աղայան 1962, 473): Նման անարդարության հանդիպել էր նաև հայ հեքիաթագիրը. Աղայանի ստեղծագործությունն անարդարացի դատելու միտումին հակված էին նույնիսկ ուշ շրջանի որոշ գրաքննադատներ: Խոսուն օրինակ է Մխիթարյան միաբանության գրագետներից հայր Սիմեոն Երեմյանի անդրադարձը Աղայանի երգերին ու հեքիաթներին: Վերջինս, Վենետիկում տպագրված «Ազգային դեմքեր» գրքում, խոսում է հայ գրականության մեջ կատարված բանահյուսական մշակումների, նաև Աղայանի երգերի ու հեքիաթների մասին, ըստ արժանվույն չգնահատելով դրանց պարզ, ժողովրդական բառ ու բանով համեմված լեզուն: Նրա կարծիքով Աղայանն ուղղակի «շպարել է իր գրվածքները նախշուն բառերով, ճոխացրել իր գրությունները առասպելներով, և կարգ մը անքննադատ դասակարգերուն համար նշանավոր գրագետ մը համարվել» (Երեմյան 1920, 39):

Գրողներին ուղղված նմանօրինակ մեղադրանքները ժողովրդական պատկերավոր լեզվից և հեքիաթի ձևակաղապարային հնարավորություններից հրաժարվելու պատճառ չհանդիսացան: Երկուսն էլ համոզված էին, որ նման սկզբունքներով գրված հեքիաթները հետաքրքիր կլինեն թե՛ մեծերին, թե՛ փոքրերին:

«Իմ կյանքի հեքիաթում» Անդերսենը խոստովանում է. «Առաջին հրատարակության մեջ ներառված էին մանկությունից ինձ հայտնի հեքիաթները. Մոզեուսի օրինակով՝ ես պարզապես վերաշարադրելի էի դրանք՝ պահպանելով, ըստ իս, ամենահարմար և բնական միևնույն լեզուն և ոճը: Գիտակցելով, որ գիտակ քննադատները խարազանելու են ինձ հենց այդ լեզվի համար՝ վերնագրեցի հեքիաթներս՝ «Հեքիաթներ երեխաների համար», ընթերցողներին ցանկալի տեսակետին հանգեցնելու նպատակով, սակայն ես մշտապես նկատի եմ ունեցել, որ գրում եմ դրանք ոչ միայն երեխաների, այլ նաև մեծահասակների համար» (Важдаев, 1957, 67–68., http: // www.sky–artcom/ Гренбек):

Մանկական գրականության մեծ նվիրյալ Աղայանը նույնպես «Մի կիսապատասխան «Մուրճ» ամսագրին» հոդվածում խորհուրդ է տալիս իր հեքիաթները կարդալ ոչ միայն փոքրերին, այլև՝ մեծերին (Աղայան 1963, 214), որոնք հեքիաթագրի գրչի տակ վերածվում էին իրական աշխարհի ճշգրիտ պատկերման, և այն վերափոխելու լավագույն միջոցների:

«Նախնականին մոտենալու» (Աղայան 1963, 213) աղայանական մղումը ճիշտ չէր ընկալվում, ժամանակի որոշ գրական քննադատների և մանկավարժների կողմից: Աղայանի հեքիաթները նույնիսկ կործանարար էին համարում «անմեղ երեխաների քնքուշ խելքի և երևակայության» համար (Ղազարյան 1890, 422):

Աղայանը կարողանում է հիմնավոր և ծանրակշիռ փաստարկներով հակադարձել քննաբաններին. վերջինս գտնում էր, որ հեքիաթների անկրկնելի աշխարհը երեխայի երևակայությունը զարգացնելու անփոխարինելի միջոց է.«Եթե ես գիտենայի, թե որպիսի հեքիաթների լսելով է զարգացել Շեքսպիրի, Սերվանտեսի, Գյոթեի, Շիլլերի, Կոլումբի և սրանց նմանների երևակայությունը, ես նույն հեքիաթները կտայի և իմ ընթերցող սիրելի մանուկներին, թեկուզ նրանց լսած հեքիաթները լինեին ավելի ևս աhռելի և զարհուրելի» (Աղայան 1963, 214):

Ժամանակին նման մեղադրանքներ ուղղվել են նաև Անդերսենին, որոնց հեքիաթագիրը անդրադարձել է «Փոքրիկ Իդայի ծաղիկները» (1835) և «Օլե–Լուկոյե» (1841) հեքիաթներում. երիտասարդ ուսանողին և Օլե–Լուկոյեին վերոհիշյալ հեքիաթներում մեղադրում են երեխաների գլուխները հիմարություններով լցնելու և երևակայությունն աղավաղելու մեջ, Անդերսենն իր հերոս Օլե–Լուկոյեի շուրթերով, հակադարձում է վայ քննադատներին (Անդերսեն 1980, 188):

Ժամանակի և տարածության հեռավորությունը չի խանգարում նմանություններ նկատել նույնիսկ գրողներին դեպ ժողովրդական բանահյուսության գանձարանն ու հեքիաթի ժանրաձևն ուղղորդող հանգամանքների միջև:

Հեքիաթին դիմելու Աղայանի կողմնորոշումը պայմանավորված էր դպրոցական կրթության ժողովրդականացման պահանջով, ինչպես նաև որոշակի քաղաքական հանգամանքներով՝ ութսունական թվականների սկզբից ծայր առած գրաքննական խստություններով, ազատ մտքի ու խոսքի հետապնդումներով, իրականությունն ազատորեն ներկայացնելու, կնճռոտ հարցերի վերքաշման արգելքով: (Հակոբջանյան 2007, 366):

Հեքիաթներին դիմելը՝ ազատ արտահայտվելու միջոց է եղել նաև Անդերսենի համար: Գրողը համոզված էր, որ իսկական արվեստը պետք է անքակտելիորեն կապված լինի կյանքին. «Յուրաքանչյուր առարկա պետք է անվանել իր անունով և եթե դա վախեցնում է իրական կյանքում, ուրեմն անհրաժեշտ է իրագործել թեկուզ հեքիաթում» (Важдаев 1957, 93):

Անդերսենը հեքիաթի միջոցով տեսակետ էր հայտնում ժամանակի նշանակալի իրադարձությունների, հիմնախնդիրների և հասարակական զարգացման վերաբերյալ, փառաբանում մարդկային հանճարի վիթխարի ուժը. «Փառքի փշոտ ճանապարհը» (1855) հեքիաթում համաշխարհային պատմության՝ «կախարդական լապտերի», օգնությամբ ներկայացնում է «մտքի նահատակներին», որոնց փառքի ուղին փշոտ էր ու դժվարանցանելի՝ Արիստոֆանես, Սոկրատես, Հոմերոս, Ֆիրդուսի, Տիխո Բրագե, Կոլումբոս, Գալիլեյ, ահա՝ մեծ պոետների, մտածողների, ճշմարտության մարտիկների վեր խոյացող անունները, որոնց վարքն ու գործը ներկայացնում է հեքիաթագիրը: Նրանց շարքը լրացնում է Քրիսթերն 2–րդը, որին Անդերսենն անվանում է «ժողովրդի սիրելին, գյուղացիների և քաղաքացիների բարեկամը» (Важдаев 1957, 95–97) :

Նույն սկզբունքը կիրառում էր Աղայանը ժողովրդական հեքիաթների որոշ մշակումներում. վերջինս ժամանակի հասարակական խնդիրներին, քաղաքական կացությանն անդրադառնում էր հակադրելով հեքիաթային իրականությունն ու ներկան՝ հեքիաթներին ազգային–պատմական գունավորումով հաղորդելու միջոցով:

Աղայանը ստեղծում է պատմաշխարհագրական ստույգ միջավայր՝ մեծ համակրանքով և ակնածանքով հիշատակում Աղվանից աշխարհի թագավոր Վաչագան Բարեպաշտին, ժամանակի Աղվանից կաթողիկոս Շուփհաղիշային, ազգային խորհրդանիշ դարձած Մեսրոպ Մաշտոցին և այլոց (Հակոբջանյան 200, 370–372):

Գրողն իր հեքիաթներում նշում է նաև աշխարհագրական բազմաթիվ տեղանուններ (Պարսկաստան, Մասիս սար, Կուր, Հնդկաստան, Հացիկ, Աղվանից աշխարհ, Պարտավ, Գանձակ, Շուշի, Թարթառ, Թիֆլիս, Սպահան, Խորասան, Հաշտարխան)՝ այսպիսով ստեղծելով աշխարհագրական ստույգ միջավայր:

Մի շարք հեքիաթներում աշխարհագրական տեղանունների մատնանշման, աշխարհագրական ստույգ միջավայրի կերտման անհրաժեշտությունը տեսել է նաև Անդերսենը: «Երջանկության կրկնակոշիկներ» (1838) հեքիաթում դանիացի հեքիաթագիրը շեղվելով հեքիաթի ձևակաղապարային առանձնահատկություններից ներկայացնում է ընթերցողին Կոպենհագենը՝ Էստերգադե փողոցն ու Թագավորական հրապարակից քիչ հեռու գտնվող առանձնատները: «Արագիլներ» (1839) հեքիաթում գրողը պատմում է Եգիպտոսի, Աֆրիկայի և նույնիսկ բուրգերի ու աֆրիկյան բնակլիմայական առանձնահատկությունների մասին (Брауде 1987, 65–66, 77) :

Անդերսենի մի շարք հեքիաթներում («Թագավորի նոր զգեստը» (1837), «Երջանկության կրկնակոշիկները», «Այգեպանն ու տերերը» (1872) և այլն) սուր են դրված դասակարգային մենաշնորհների, արտոնությունների խնդիրները, որի համար վերջինս ենթարկվում է դատափետման: «Դաննորա» հանդեսը մեղադրում է գրողին արքայական տոհմիկ ծագումով և պատվելի մարդկանց նկատմամբ ցուցաբերած անարգանքի մեջ՝ խորհուրդ տալով նրան օրինակ վերցնել ֆրանսիական նմուշներից կամ առհասարակ չստեղծագործել այդ ժանրում (Брауде 1987, 78) :

Իր հեքիաթներում Աղայանը նույնպես երբեն դիմում է անմիջական քննադատության. «Հոգևորականությունն այն ժամանակ մի ձրիակեր դասակարգ չէր, – գրում է Աղայանը «Անահիտ» հեքիաթում: Բոլոր վանքերը մի–մի գործարան էին, ուր պատրաստում էին ազնիվ մագաղաթ, գրում էին, կազմում էին և բացի սրանից իրանց բոլոր հագուստներն ու կարասիքը իրանց ձեռքովն էին պատրաստում» (Աղայան 1992, 118):

Հասարակական կյանքի կազմակերպման գործում Աղայանը կարևորում էր յուրաքանչյուրի մասնակցությունը՝ փայլուն գիտակցելով, սակայն, որ հասարակության շերտավորման պարագայում, առավել մեծ պատասխանատվություն պետք է ցուցաբերի վերնախավը և այն մարդիկ, ովքեր իշխանություն ունեն՝ «հոգևոր և մարմնավոր կառավարությունը» (Աղայան 1963, 189):

Գրողը, մասնավորապես, «Անահիտ» հեքիաթի տիրույթն օգտագործում է առաջնորդների, հոգևորականների, վերնախավի այնպիսի մոդելներ կերտելու համար, որոնք պետք է օրինակի նշանակություն, արժեք ստանային:

Եվ Անդերսենը, և՛ Աղայանը կերտել են հերոսներ, որոնց բարոյական որակները չափվում են աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքով. աշխատանքի և աշխատասիրության օրինակներ են նաև բարձրաշխարհիկ, ազնվազարմ ծագումով որոշ կերպարներ, որոնք իրենց դիրքին անհարիր չեն համարում բանալ քաղաքի դարպասները ամպրոպային, անձրևոտ եղանակին («Արքայադուստրը սիսեռի հատիկի վրա», 1835), վարել տնտեսությունը («Ջրահարսը», 1837), անկոտրում աշխատել եղբայրների փրկության համար («Վայրի կարապները», 1838) կամ ձեռք բերելով դիպակագործի հմտություններ, ազատվել մահվան ճիրաններից («Անահիտ»,1881):

Մեծանուն հեքիաթագիրները համեմում են հեքիաթները կենցաղային մանրամասներով, բնության նկարագրություններով, ծանոթ աշխարհագրական տեղանունների ու ազգային հատկանունների կիրառությամբ, որոնք ավելի հարազատ և ազգային են դարձնում ստեղծագործությունները՝ վերջիններս հեռացնելով հեքիաթի ժանրային ավանդույթներից և նկարագրական վերացականությունից. դանիացի հեղինակը հեքիաթներ արարելիս ոգեշնչվել է հայրենի բնության անսպառ գեղեցկությունից, որի գրկում էլ, իր իսկ խոստովանությամբ, գրել է հեքիաթների մեծ մասը. «…այն խաղաղ լճափներին, անտառների խորքում, կանաչ մարգագետիններում, որտեղ թփերի միջից թռչում և թռչկոտում էր փասիանը, որտեղ հաստատ քայլերով զբոսնում էր արագիլը …» (Важдаев 1957, 106–107):

Բնաշխարհի չքնաղ նկարագրություններով առանձնանում են նաև Աղայանի հեքիաթները: Բնության կենարար լիցքերն են ստանում Պախրատուրը («Անտառի մանուկը»), Եղեգնուհին («Եղեգնուհի»), Արսենը («Ասլան–Բալա»), Այծատուրը («Այծատուր»), Արևամանուկն («Արևամանուկ») ու Վաչագանը («Անահիտ»): Աղայանը բնության մեջ տեսնում էր այն ներդաշնակությունը, որը ցանկանում էր հաստատված տեսնել նաև հասարակական կյանքում, թերևս սրանով է պայմանավորված բնության ներդաշնակությունը ճաշակած հերոսների առատությունը Աղայանի հեքիաթներում:

Աղայանի և Անդերսենի հեքիաթները աչքի են ընկնում նաև կանացի ուժեղ կերպարներով, որոնց պասիվ դեր չի հատկացված. կինը և՛ Անդերսենի, և՛ Աղայանի հեքիաթներում սկզբունքային է, կամային, մտավոր, բարոյական, ֆիզիկական որակներով չի զիջում տղամարդկանց՝ որոշ դեպքերում նույնիսկ գերազանցելով նրանց: Հեքիաթագիրները կերտել են կին կերպարներ, որոնք մեկուսացված չեն

ընտանիքում և անմասն չեն հասարակական կյանքից, ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, ինքնուրույն գործելու, սիրելի աշխատանքով զբաղվելու և ինքնահաստատման ազատությունը, ընտանիքին, հասարակությանը օգտակար լինելու բարձր առաքինությունը:

Գրական հեքիաթը, լինելով սինթետիկ ժանրաձև, ամփոփում է և՛ ժողովրդական բանահյուսությանը բնորոշ գծեր, և՛ գրական տարբեր ժանրերի տարրեր, որպես հեղինակային ստեղծագործություն, ունի բանահյուսական ժանրից տարբերվող մի շարք կառուցվածքային տարբերակիչ առանձնահատկություններ և կրում է գրողի գաղափարական, պոետիկական շեշտը, ինչն էլ թույլ է տալիս ժանրը դասել գրական մյուս ժանրաձևերի թվին, սակայն երբեք չհեռացնելով այն բուն ակունքից՝ բանահյուսությունից: Գրական հեքիաթի վերոնշյալ առնձնահատկությունները, ժանրային տարորոշիչները, բնորոշ են նաև Աղայանի հեքիաթներին, քանի որ, ժողովրդական հեքիաթները գրական մշակման ենթարկելով, հեքիաթագիրը ստեղծել է գրական հեքիաթի նմուշներ, որոնք կառուցվածքային, կերպարային տարրերով ենթարկվել են գրողի կամքին, սակայն որոշ մշակումներում հեքիաթագիրն աշխատել է հարազատ մնալ բնագրին: Ինչպես նկատում է Լեոն, Աղայանը «վարվում է այդ նյութերի հետ թե իբրև ստեղծագործող և թե իբրև վերարտադրող, վերամշակող» (Լեո 1989, 310):

Կարծում ենք, Աղայանը հեքիաթագրության ոլորտում առաջնորդվել է նույն սկզբունքով, որը կիրառում էր նաև մանկավարժական աշխատությունների ստեղծման ընթացքում: Մանկավարժը դրանք գրում էր՝ ժամանակի առաջավոր մանկավարժության (Դ. Ուշինսկի, Դ. Պիսարև, Լ. Տոլստոյ, Ի. Պաուլսոն, Վ. Վոդովոզով և այլն) սկզբունքները իր և հայ նախորդների մանկավարժական փորձով խտացնելով (Գյուլնազարյան 1961, 45):

Նույն սկզբունքը Աղայանը կիրառում է ժողովրդական հեքիաթները գեղարվեստորեն մշակելիս. հետևելով հայ գրականության ավանդույթներին և համաշխարհային փորձին՝ գրողը բանահյուսական հեքիաթը ներմուծում է հայ նոր գրականություն, որպես գրական մի նոր ժանր. «Աղայանը գալիս է Աբովյանի տրադիցիաներից և անմիջական նախորդն է Հ. Թումանյանի»,– նկատում է Դ. Դեմիրճյանը (Դեմիրճյան 1941, 47):

Անհրաժեշտություն է ծագում հաստատելու, որ Աղայանն ուշադիր է եղել գրական հեքիաթի ավանդույթների նկատմամբ, ինչը փաստում են Աղայանի՝ Անդերսենի կենսագրական ակնարկին կցված միջամտություններն ու երկու ստեղծագործողների հեքիաթների համեմատական ուսումնասիրությունը:

Այսպիսով՝ Աղայանի հետաքրքրությունը Անդերսենի հեքիաթների և անձի նկատմամբ, ինչպես նաև գաղափարական–ստեղծագործական ընդհանրությունները թույլ են տալիս համարել դրանք ազդեցության արդյունք՝ հաշվի առնելով համաշխարհային հեքիաթագրության մեջ Անդերսենի հեքիաթների խորը հետքը: Ստեղծագործական ընդհանրությունները պայմանավորված են նաև բանահյուսության և ժողովրդական մտածողության հանդեպ գրողների տածած մեծ համակրանքով և դեմոկրատական գիծը պահպանելու հետևողականությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Ղ. (1962), *Երկերի ժողովածու*, հ.2, Երևան, Հայպետհրատ:
Աղայան Ղ. (1963), *Երկերի ժողովածու*, հ.3, Երևան, Հայպետհրատ:

Աղայան Ղ. (1992), *Հեքիաթներ*, Երևան:
Անդերսեն Հ. Ք. (1882), *Սոխակ*, Թիֆլիս:
Անդերսեն Հ. Ք. (1980), *Հեքիաթներ և զրույցներ*, Երևան:
Գյուլնազարյան Խ. (1961), *Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության*, Երևան:
Դեմիրճյան Դ. (1941), Ղազարոս Աղայանի լեզուն // «*Սովետական գրականություն*», համար 3, Երևան:
Երեմյան Ս. (1920), *Ազգային դեմքեր*, Ա–շարք, 2–րդ տպագրություն, Վենետիկ:
Լեո (1989), *Երկերի ժողովածու*, հ.9, Երևան, Խորհրդային գրող:
Հակոբյան Մ. (1959), «Աղբյուր» ամսագիրը (Ընդհանուր ակնարկ) // *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր. հասարակական գիտություններ*, N 2, Երևան:
Հակոբջանյան Ա. (2007), *Ղազարոս Աղայան*, Ստեփանակերտ:
Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում (1967), Երևան:
Ղազարյան Ե. (1890), Մանկական ընթերցանություն // *«Մուրճ»*, համար 3, Թիֆլիս:
Брауде Л. (1987), *Ханс Кристиан Андерсен.* Ленинград.
Важдаев В. (1957), *Ганс Христиан Андерсен.* Москва.
Гренбек, Бо. Г. Х . Андерсен. *Жизнь. Творчество. Личность.* http://www.sky–art.com.

Lusine Hayriyan

ANDERSEN'S TALES AND THEIR ARMENIAN RENDERINGS AS SEEN BY GHAZAROS AGHAYAN

Summary

At the beginning of the 1880s Ghazaros Aghayan commenced a new literary activity – writing fairy tales. Aghayan's talent in this new sphere leaned both on Armenian folklore traditions and on international experience. In his translation of Sisoyeva's essay *The Immortal Writer of Fairy Tales* the writer expresses his understanding of the fairy tale as a genre and his own interpretation of Andersen's tales. Aghayan also comments upon various Armenian translations of Andersen's major works. In this brief article we aim at revealing common features shared by the Armenian and Danish writers. Like many other talented men of letters Aghayan was deeply influenced by Andersen's art of fairy tale writing. The major commonality these authors shared was the deep love they had for the lore of their native lands.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
NEW PUBLICATIONS

Հարությունյան Ս.Բ. (2010), *Բանագիտական ակնարկներ*, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ.:

Սարգսյան Ա. Ճ. (2010), *Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը*, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ.:

Меликян, Гоар (2011). *Образ сказителя в фольклорном и литературном тексте.* Ереван: Зангак–97.

Bealoideas (2010). Iris an Chumainn le Bealoideas Eireann. The Journal of the Folklore of Ireland Society. N 78.

Bealoideas (2011). Iris an Chumainn le Bealoideas Eireann. The Journal of the Folklore of Ireland Society. N 79.

Enzyklopädie des Märchens Handwörterbuch zur historischen und vergleichenden Erzählforschung (2010). Band 13. Suchen – Verführung.

Bottigheimer, Ruth B. (2012). *Fairy Tales Framed: Early Forewords, Afterwords, and Critical Words.* State University of New York Press.

Cavallaro, Dani (2011). *The Fairy Tale and Anime: Traditional Themes, Images and Symbols at Play on Screen.* McFarland.

Greenhill, Pauline; Matrix, Sidney Eve (editors) (2010). *Fairy Tale Films: Visions of Ambiguity.* Utah State University Press.

Joosen, Vanessa (2011). *Critical and Creative Perspectives on Fairy Tales: An Intertextual Dialogue Between Fairy–Tale Scholarship and Postmodern Retellings* (Fairy–Tale Studies). Wayne State University Press.

Kerchy, Anna (2011). *Postmodern Reinterpretations of Fairy Tales: How Applying New Methods Generates New Meanings.* Edwin Mellen Press.

McAra, Catriona; Calvin, David (2011). *Anti–Tales: The Uses of Disenchantment.* Cambridge Scholars Publishing.

Markey, Anne (2011). *Oscar Wilde's Fairy Tales: Origins and Contexts.* Irish Academic Press.

Marvels and Tales. Journal of Fairy Tale Studies. Vol. 24, N1–2, (2010); Vol.25 N1–2, (2011); Vol.26 N 1, (2012).

Tatar, Maria (editor) (2011). *The Annotated Peter Pan* (The Centennial Edition). W.W. Norton and Company.

Tatar, Maria (editor, translator); Byatt, A. B. (Introduction) (2010). *The Grimm Reader: The Classic Tales of the Brothers Grimm.* W. W. Norton and Company.

Uther, Hans–Jörg (2011 reprinted). *The Types of International Folktales: A Classification and Bibliography.* 3 vols. FF Communications 284–286. Helsinki: Suomalainen Tiedeakatemia (Academia Scientiarum Fennica).

Warner, Marina (2010). *Wonder Tales.* Non Basic Stock Line.

Warner, Marina (2012). *Long Ago and Far Away: Eight Traditional Fairy Tales.* Hesperus Press.

Zipes, Jack (2012). *The Irresistible Fairy Tale: The Cultural and Social History of a Genre.* Princeton University Press.

Zipes, Jack (2011). *Little Red Riding Hood and Other Classic French Fairy Tales.* Penguin (Non–Classics).

Zipes, Jack (2011). *Literature and Literary Theory Bundle RC: Fairy Tales and the Art of Subversion.* Routledge.

Zipes, Jack (2010). *The Enchanted Screen: The Unknown History of Fairy–Tale Films.* Routledge.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ
NEW COLLECTIONS OF ARMENIAN FOLK TALES

Հայ ժողովրդական հեքիաթներ, XVI (Վասպուրական), աշխ.՝ Ա. Ղազիյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2009:

Հայ ժողովրդական հեքիաթներ, XVII, Մոկս (Մոկք), աշխ.՝ Թ. Հայրապետյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2012:

Contes Arméniens. L'Oiseau emeraude. Collecté par Tigrane Navassardian, choisis et traduit par Léon Ketcheyan. L'Ecole des Loisirs, 2012.

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ
NEW FAIRY TALE COLLECTIONS IN ARMENIAN

Պարսկական ժողովրդական հեքիաթներ, թարգմ. ՝ Գ. Ասատրյանի, 2010, Երևան, Էդիթ Պրինտ:

Ուկրաինական ժողվորդական հեքիաթներ, Երևան, թարգմ. և կազմ. Ա. Ղարագյոզյանը, 2010, Արևիկ:

ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ
FAIRY TALE STUDIES PERIODICALS

*Gramarye.*The Journal of the Sussex Center for Folklore, Fairy Tales and Fantasy. Ed. Bill Gray. University of Chichester.

Fabula. Zeitschrift für Erzählforschung / Journal of Folktale Studies / Revue d'Etudes sur le Conte Populaire. Editors: Hans–Jörg Uther. Christine Shojaei Kawan. Doris Boden.

Marvels and Tales. Journal of Fairy Tale Studies. Ed. Donald Haase. Wayne State University.

Ոսկե դիվան. հեքիաթագիտական հանդես, Երևան, Հովհ. Թումանյանի թանգարան, նախագծի հեղ. և խմբ. Ալվարդ Ջիվանյան:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
DOCTORAL THESES TITLES

Կազմեց Գոհար Մելիքյանը
Compiled by Gohar Melikyan

1. Գաբրիելյան, Ս. (2005), Գեղարվեստական համարժեքության խնդիրը Ռ. Քիփլինգի Հեքիաթների հայերեն թարգմանություններում, բ.գ.թ. ատենախոսություն, ԵՊՀ, Երևան:
2. Գալստյան, Մ. (2004), Պառավի կերպարը հայկական հրաշապատում հեքիաթում, բ.գ.թ. ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ, Երևան:
3. Ջիվանյան, Ա. (2008), Հրաշապատում հեքիաթի պոետիկան. համեմատությունը հեքիաթի համատեքստում, բ.գ.դ. ատենախոսություն,Երևան:
4. Վարդանյան, Ն. (2006), Հայոց իրապատում հեքիաթի ժանրային–տիպաբանական համակարգը, բ.գ.թ. ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ, Երևան:
5. Абдурахманова, Р. Д. (2006). Кумыкская литературная сказка. Дис.…к. ф.н. Дагестанский ГПУ, Махачкала.
6. Абуторабиан, Г.А. (2011). Сказка как феномен традиционной культуры народов Ирана и России: компаративный анализ. Дис. … кандидата культурологии. Моск. гос. ун–т культуры, Москва.
7. Аккубеков, Р. Ю. (2006). Башкирские народные сказки о животных: типология и взаимосвязь с письменными источниками Дис. …к.ф.н. Институт языка, литературы и искусства им. Г. Ибрагимова АН Республики Татарстан, Казань.
8. Алексеева, О. П. (2006). Виртуальная бытийность сказки в культуре. Дис. … к.ф.н. Ростовский ГУ, Ростов–на–Дону.
9. Алентьева, М.А. (2007). Фольклорные мотивы и литературные источники как факторы межкультурного диалога в русской стихотворной сказке начала XIX века. Дис. … к.ф.н. Адыгейский ГУ, Майкоп.
10. Алещенко, Е. И. (2008). Этноязыковая картина мира в текстах русского фольклора: на материале народной сказки. Дис. д.ф.н. Волгогр. ГПУ, Волгоград.
11. Амроян, И. Ф. (2006). Повтор в структуре фольклорного текста (на материале русских, болгарских и чешских сказочных и заговорных текстов). Дис. д.ф.н. МГПУ, Москва.
12. Арутюнян, Н. Э. (2007). Образная система трилогии Дж. Р. Р. Толкиена «Властелин колец» в контексте историко–литературного процесса (к проблеме литературного имени). Дис. к.ф.н. ЕГУ, Ереван.
13. Бабковская, К. В. (2010). Русская сказка XIX–XXI веков: народная – наивная – массовая – литературная: на материале сказок Тверского края. Дис. к.ф.н. Тверский ГУ, Тверь.
14. Баканова, А. В. (2006). Особенности языка испанских народных сказок. Дис. к.ф.н. МГУ им. М.В. Ломоносова, Москва.
15. Бережкова, Д. В. (2011). Понятие “доброта” в концептуальном пространстве английской народной сказки. Дис. к.ф.н.. МГУ им. М.В. Ломоносова, Москва.
16. Большакова, Н. Н. (2007). Игровая поэтика в литературных сказках Михаэля Энде. Дис. к.ф.н. Смоленский ГУ, Смоленск.
17. Брандаусова, А. В. (2008). Основные синтаксические особенности английской литературной сказки. Дис. к.ф.н. МГУ им. М.В. Ломоносова, Москва.

18. Бритаева, А. Б.(2008). Становление и развитие осетинской литературной сказки. Дис. к.ф.н. Сев.–Осет. ГУ им. К.Л. Хетагурова, Владикавказ.

19. Буров, С. Г. (2006). Специфика инверсирования русской волшебной сказки в романе Б. Пастернака«Доктор Живаго». Дис. к.ф.н. Армавирский ГПИ, Армавир.

20. Викторова, Н. А. (2011). Английская литературная сказка эпохи постмодернизма. Дис. к.ф.н. Казанский (Приволжский) федеральный университет, Казань.

21. Волкодав, Т. В. (2006). Структурно–типологические и лексико–семантические параметры литературной сказки Дж. Роулинг и ресурсы их передачи на русский и немецкий языки. Дис. к.ф.н. Кубанский ГУ, Краснодар.

22. Волощенко, О. В. (2006). Языковые основы фольклора в свете явлений традиционной народной культуры: на материале русской волшебной сказки. Дис. к.ф.н. Воронежский ГУ, Воронеж.

23. Гилёва, Е.Ф. (2011). Пути развития русской драматической сказки конца XX века: 1970–2000 гг. Дис. к.ф.н. МГУ им. М.В. Ломоносова, Москва.

24. Голубова, Ю. А. (2006). Социально–культурные условия нравственного воспитания дошкольников средствами сказкотерапии. Дис. к.п.н. Тамбовский ГУ им. Г. Державина, Тамбов.

25. Горбачева, О. Г. (2008). Ономастическое пространство русских народных и авторских сказок. Дис. к.ф.н. Орловский ГУ, Орел.

26. Горяева, Б. Б. (2006). Сюжетный состав и художественно–стилевая структура калмыцкой волшебной сказки. Дис. к.ф.н. Адыгейский ГУ, Майкоп.

27. Гришина, И. И. (2006). Функционирование имени собственного в кроссвордной логике английской авторской волшебной сказки. Дис. к.ф.н. Иркутский ГЛУ, Иркутск.

28. Гришучкова, И. Б. (2011). Лингвостилистическая специфика речевого поведения анималистического персонажа: на материале английских сказок. Дис. к.ф.н. Ставропольский ГУ, Ставрополь.

29. Данилова, И. Ф. (2008). Литературная сказка А.М. Ремизова: 1900–1920–е годы. Дис. к.ф.н. Институт русской литературы, Санкт–Петербург.

30. Дьякова, Т. В.(2006). Жанрообразующие свойства поэтонимов: на материале английской и русской авторской сказки. Дис. к.ф.н. Волгоградский ГПУ, Волгоград.

31. Еремкин, А. В. (2008). Поэтика мордовской литературной сказки. Дис. к.ф.н. МПГУ, Москва.

32. Ефремова, Ю. И. (2008). Моделирование категории пространственности в немецком языке: на материале жанровых разновидностей немецкой сказки. Дис. к.ф.н. Самарский ГПУ, Самара.

33. Жиляков, А. С. (2008). Жанровое своеобразие литературной сказки рубежа XIX–XX веков: «Посолонь» А.М. Ремизова – «Пак с Волшебных Холмов» Р.Киплинга. Дис. к.ф.н. Томский ГУ, Томск.

34. Завьялова, К. В. (2007). Функционирование прецедентного текста и прецедентного имени: сказка «Золушка» в русской, американской, испанской и венгерской лингвокультурах. Дис. к.ф.н. МГУ им. М.В. Ломоносова, Москва.

35. Иванова, Н. В. (2006). Методика драматизации сказки как средство развития коммуникативности младших школьников при обучении иностранному языку. Дис. к.п.н. Московский государственный открытый педагогический университет, Москва.

36. Ивченко, М. В. (2010). Функционально–семантические и лингвокультурологические особенности вербализованного концепта “волшебство” в сказочном и рекламном дискурсах. Дис. к.ф.н. Юж. федер. ун–т, Ростов–на–Дону.

37. Изотова, Г. Н. (2006). Русская литературная стихотворная сказка конца XIX – начала XX веков. Дис. к.ф.н. Орловский ГУ, Орел.

38. Имаева, Г. З. (2010). Народная сказка и ее литературные переложения: на восточнославянском и тюркоязычном материале. Дис. д.ф.н. Ин–т яз., лит. и искусства им. Г. Ибрагимова АН Республики Татарстан, Казань.

39. Карунная, О. В. (2008). Формирование коммуникативной компетентности подростков в процессе работы со сказкой. Дис. к.п.н. Помор. ГУ им. М.В. Ломоносова, Архангельск.

40. Королькова, П. В. (2011). Модификации жанра авторской сказки в современной чешской литературе. Дис. к.ф.н. МГУ им. М.В. Ломоносова, Москва.

41. Короткова, Л. Д. (2008). Авторская дидактическая сказка как средство духовно–нравственного воспитания детей дошкольного и младшего школьного возраста Дис. к. п.н. Московский гуманитарный университет, Москва.

42. Косогорова, Х. Г. (2006). Коммуникативно–синтаксическая организация вопросно–ответных диалогических единств: на материале русской волшебной сказки. Дис. к.ф.н. Ярославский ГПУ им. К.Д. Ушинского, Ярославль.

43. Краюшкина, Т. В. (2010). Мотивы состояний персонажей в русских народных волшебных сказках: системный анализ. Дис. д.ф.н. Ин–т монголоведения, буддологии и тибетологии, Улан–Удэ.

44. Кун Ай Лин (2009). Обучение китайских студентов чтению русских волшебных сказок: в сравнении с китайскими сказками. Дис. к.п.н. РГПУ им. А.И. Герцена, Санкт–Петербург.

45. Куприянова, Е. С. (2007). Литературные сказки Оскара Уайльда и сказочно–мифологическая поэтика романа «Портрет Дориана Грея». Дис. д.ф.н. Новгородский ГУ им. Ярослава Мудрого, Великий Новгород.

46. Кхерибиш, М. (2007). Лексикографическое описание русских народных сказок в учебных целях. Дис. к.ф.н. ГИРЯ им. А.С. Пушкина, Москва.

47. Ларионова, Е. И. (2008). Современная турецкая литературная сказка: типология и эволюция. Дис. к.ф.н. МГУ им. М. Ломоносова. Институт стран Азии и Африки, Москва.

48. Ларионова, М. Ч. (2006). Архетипическая парадигма: миф, сказка, обряд в русской литературе XIX века. Дис. д.ф.н. Волгоградский ГПУ, Волгоград.

49. Ледовская, И. В. (2008). Детские образы–типы в русских волшебных и новеллистических сказках. Дис. к.ф.н. МПГУ, Москва.

50. Лызлова, А.С. (2011). Похищение женщины в русской волшебной сказке: к семантике фольклорной коллизии. Дис. к.ф.н. Петрозаводский гос. ун–т, Петрозаводск.

51. Максимов, Б. А. (2007). Особенности сюжетной структуры в авторской сказке и фантастической новелле эпохи романтизма. Дис. к.ф.н. Тверский ГУ, Тверь.

52. Матвеичева, Т. В. (2011). Специфика языковой экспликации пространственно–временных координат в сказочной модели мира. Дис. к.ф.н. Ставропольский ГУ, Ставрополь.

53. Мауткина, И. Ю. (2006). Историческая поэтика британской сказки и литературные сказки О. Уайльда. Дис. к.ф.н. Новгородский ГУ им. Ярослава Мудрого, Великий Новгород.

54. Меликян, Г. Э. (2009). Нарраторская оценка сказочного текста и фактор адресата. Дис. к. ф. н. ЕГУ, Ереван.

55. Мостепанов, А. А. (2011). Анималистический жанр в английской литературной сказке XX века. Дис. к.ф.н. Воронежский ГУ, Воронеж.

56. Мукабенова, М. А. (2009). Мифологические и фольклорные основы калмыцкой литературной поэмы–сказки. Дис. к.ф.н. Адыгейский ГУ, Майкоп.

57. Мулляр, Л. А. (2006). Авторская сказка: Философско–антропологические смыслы. Дис. к.ф.н. Ставропольский ГУ, Ставрополь.

58. Надбитова, И. С. (2006). Сюжеты, образы и стилевые особенности калмыцких волшебных сказок. Дис. к.ф.н. Институт мировой литературы им. А.М. Горького, Москва.

59. Никеева, М. М. (2006). Формирование основ нравственных представлений у младших школьников посредством народных сказок. Дис. к.п.н. МГПИ, Йошкар–Ола.

60. Носов, Д. А. (2011). Структура повествования монгольской народной сказки. Дис. к.ф.н. С.–Петербургский ГУ, Санкт–Петербург.

61. Петрова, Е. Е. (2011). Способы лингво–прагматической репрезентации фантазийных концептов: на материале английских волшебных сказок. Дис. к.ф.н. Рос. гос. пед. ун–т им. А.И. Герцена, Санкт–Петербург.

62. Петрухина, М. В. (2006). Кластер «человек телесный» в лексиконе русской волшебной сказки. Дис. к.ф.н. Курский ГУ, Курск.

63. Плахова, О. А. (2007). Английские сказки в этнолингвистическом аспекте. Дис. к.ф.н. Нижегородский ГЛУ им. Н.А. Добролюбова, Нижний Новгород.

64. Плотникова, Е. А. (2011). “Настоящие сказки” Л.С. Петрушевской в контексте традиционной культуры. Дис. к.ф.н. Ульян. гос. пед. ун–т им. И.Н. Ульянова, Ульяновск.

65. Постричева, И. Д. (2009). Развитие толерантности как качества школьника–читателя при обращении к фольклорной волшебной сказке. Дис. к.п.н. РГПУ им. А.И. Герцена, Санкт–Петербург.

66. Протасова, М. Е. (2010). Литературная сказка Дж. Макдоналда: проблематика и поэтика: Дис. к.ф.н. Воронежский государственный университет, Тамбов.

67. Рамазанова, М. Ш. (2009). Фразеология аварских народных сказок. Дис. к.ф.н. Дагестанский ГПУ, Махачкала.

68. Ризвоншоева, Г. Н. (2006). Волшебные сказки Бадахшана: исследование идейного содержания и образов. Дис. к.ф.н. Институт языка и литературы им. Рудаки АН Республики Таджикистан, Душанбе.

69. Садалова, Т. М. (2009). Алтайская народная сказка: формы этнобытования, типология сюжетов, поэтика и текстология. Дис. д.ф.н. Калмыцкий ГУ, Элиста.

70. Синельникова, А. В. (2007). Лингвокультурные особенности фольклорной стереотипии: сопоставительный аспект: на материале французских и итальянских народных сказок. Дис. к.ф.н. Челябинский ГПУ, Челябинск.

71. Смирнов, А. В. (2006). Языковая картина мира английской народной сказки. Дис. к.ф.н. С.–Петерб. ГУ, Санкт–Петербург.

72. Содорова, М. В. (2006). Марийские бытовые сказки: жанровое своеобразие и поэтика. Дис. к.ф.н. Марийский ГУ, Ижевск.

73. Спутницкая, Н. Ю. (2010). Волшебная сказка и фольклорные традиции в российском детском кино: на материале игровых фильмов 1930 – 2000–х гг. Дис. кандидата искусствоведения. Науч.–исслед. институт киноискусства, Москва.

74. Стекольникова Н. В. (2008). Лексические парадигмы в текстах рекурсивной структуры: на материале русских сказок. Дис. к.ф.н. Воронежский ГУ, Воронеж.

75. Степочкина, С. Ю. (2006). Движение фольклорного мотива «поиск утраченной возлюбленной» в творчестве А.С. Пушкина: от поэмы «Руслан и Людмила» к сказкам. Дис. к.ф.н. МГОУ, Москва.

76. Тананыхина, А. О. (2007). Лингвостилистические особенности современной англоязычной литературной сказки. Дис. к.ф.н. РГПУ им. А.И. Герцена, Санкт–Петербург.

77. Танкиева, Л. Х. (2009). Генезис, специфика и типология ингушских сказок. Дис. к.ф.н. Ингушский ГУ, Махачкала.

78. Тихомирова, А. В. (2011). Жанровые особенности философской сказки в русской литературе второй половины XX – начала XXI в. Дис. к.ф.н. Гос. педагогический университет им. К.Д. Ушинского, Ярославль.

79. Томова, У. А. (2010). Наименование домашних животных и птиц в сказках: по сборнику русских народных сказок А.Н. Афанасьева. Дис. к.ф.н. МГОУ, Москва.

80. Фу Сяо (2010). Языковая репрезентация социально–ролевых отношений говорящих в императивных речевых жанрах: на материале русских народных сказок. Дис. к.ф.н. Томский ГУ, Томск.

81. Цикушева, И. В. (2010). Лингвостилистическая специфика комического в литературной сказке: на материале русского и английского языков. Дис.... к.ф.н. Адыгейский ГУ, Майкоп.

82. Чаплыгина, О. В. (2011). Структура рождественского текста Чарльза Диккенса. Дис.... к.ф.н. Балашовский институт Саратовского государственного университета им. Н.Г. Чернышевского, Балтийский федеральный университет имени И. Канта, Калининград.

83. Чой Кён Нам (2008). Языковое выражение культурных символов в русской народной сказке: на фоне корейского фольклора. Дис. к.ф.н. Ин–т рус. яз. им. В.В. Виноградова РАН, Москва.

84. Шапорева, А. А. (2007). Роль этнической функции содержания сказок в гармонизации взаимодействия когнитивной и эмоциональной сторон отношений у детей и подростков. Дис. к. псих. н. Моск. псих.–соц. ин–т, Москва.

85. Шебловинская, А. Н. (2008). «Фейные сказки» К.Д. Бальмонта в контексте творчества писателя: особенности поэтики. Дис. к.ф.н. Воронежский ГУ, Воронеж.

86. Шинкаренко, В. Д. (2006). Формирование знаково–смысловой структуры социокультурного пространства: социологические аспекты происхождения игры, ритуала, магии, мифа и сказки. Дис. доктора социологических наук. Ин–т соц.–полит. исслед., Москва.

87. Шлепикова, В. А. (2007). Формы простого глагольного сказуемого: проблемы семантико–грамматического представления: на материале русской традиционной бытовой сказки и бытовой сказки Южного Урала. Дис. к.ф.н. Челябинский ГУ, Челябинск.

88.Щурик, Н. В. (2007). Опыт лингвосемиотического анализа народной волшебной сказки: на материале британских и русских народных волшебных сказок. Дис. к.ф.н. Иркутский ГЛУ, Иркутск.

89.Эпоева, Л. В. (2007). Лингвокультурологические и когнитивные аспекты изучения языка волшебной сказки: на материале английского и русского языков. Дис. к.ф.н. Кубанский ГУ, Краснодар.

BIBLIOGRAPHY ON ARABIAN NIGHTS

Compiled by Gohar Melikyan

Ali, Muhsin Jassim (1982). *Scheherazade in England: A Study of Nineteenth–Century English Criticism of the Arabian Nights.* Pueblo: Passeggiata Press.

Ballaster, Ros (2008). *Fabulous Orients: Fictions of the East in England 1662–1785.* Oxford University Press, USA.

Bekkaoui, Khalid (1998). *Signs of Spectacular Resistance: The Spanish Moor and British Orientalism.* Publisher: s.n.

Caracciolo, Peter L. and others (contributors) (1988). *The Arabian Nights in English Literature: Studies in The Reception Of The Thousand And One Nights Into British Culture.* St. Martin's Press.

El–Shamy, Hasan M. (2006). *A Motif Index of The Thousand and One Nights.* Indiana University Press.

Ghazoul, Ferial Jabouri (1996). *Nocturnal Poetics: The Arabian Nights in Comparative Context.* American University in Cairo Press.

Ghazoul, Ferial Jabouri (1980). *The Arabian Nights: A Structural Analysis.* Cairo Associated Institution for the Study and Presentation of Arab Cultural Values.

Green, Margery (editor) (1959). *Strange Tales from the Arabian Nights (Stories to Remember).* Macmillan Education.

Irwin, Robert (2004). *The Arabian Nights: A Companion.* London, New York: Tauris Parke Paperbacks.

Irwin, Robert (2011). *Visions of the Jinn: Illustrators of the Arabian Nights.* (Studies in the Arcadian Library). Oxford University Press, USA.

Lane, Edward William (2009). *Arabian Society in the Middle Ages: Studies From the Thousand and One Nights.* BiblioLife.

Leeuwen, van Richard (2007). *The Thousand and One Nights: Space, Travel and Transformation.* (Routledge Studies in Middle Eastern Literatures). Routledge.

Marzolph, Ulrich (2007). *The Arabian Nights in Transnational Perspective* (Series in Fairy–Tale Studies). Wayne State University Press.

Makdisi, Saree; Nussbaum, Felicity (editors) (2009). *The Arabian Nights in Historical Context: Between East and West.* Oxford University Press, USA.

Marzolph, Ulrich (2004). *The Arabian Nights: An Encyclopedia* (Two Volume Set) Publisher: ABC–CLIO.

Musawi, Muhsin (2009). *The Islamic Context of The Thousand and One Nights.* Columbia University Press.

Nance, Susan (2009). *How the Arabian Nights Inspired the American Dream, 1790–1935.* The University of North Carolina Press.

Neuwirth, Angelika (1999). *Myths, Historical Archetypes, and Symbolic Figures in Arabic Literature: Towards a New Hermeneutic Approach : Proceedings of the International Symposium in Beirut, June 25th – June 30th, 1996.* Stuttgart: Franz Steiner Verlag.

Naddaff, Sandra (1991). *Arabesque: Narrative Structure and the Aesthetics of Repetition in the 1001 Nights.* Northwestern University Press.

Ouyang, Wen–Chin; Gelder, van Geert Jan (2005). *New Perspectives on Arabian Nights.* Routledge.

Pinault, David (1992). *Story–Telling Techniques in the Arabian Nights* (Studies in Arabic Literature, Vol 15) Leiden: Brill Academic Pub.

Sabry, Somaya Sami (2011). *Arab–American Women's Writing and Performance: Orientalism, Race and the Idea of the Arabian Nights* (International Library of Cultural Studies). London, New York, Melbourne: Tauris Academic Studies.

Sirdar Ikbal Ali Shah (1982). *Alone in Arabian Nights.* Octagon Press (2nd edition).

Sallis, Eva (1999). *Sheherazade Through the Looking Glass: The Metamorphosis of the 'Thousand and One Nights.* (Routledge Studies in Middle Eastern Literatures). Routledge.

Shafiee–Sabet, Seyed Gholamreza and Pourgiv, Farideh. (2012). Nabokov's *Ada* and *The 1001 Nights. // Marvels & Tales* 26.1. Wayne State University Press.

Warner, Marina (2012). *Stranger Magic: Charmed States and the Arabian Nights.* Belknap Press of Harvard University Press.

Yamanaka, Yuriko; Nishio, Tetsuo (editors) (2006). *The Arabian Nights and Orientalism: Perspectives from East and West.* London, New York, Melbourne: Tauris.

ա.ա.	աղբյուրն անհայտ է
ԱԳՆ	անհատական գործուղման նյութեր
ԱՀ	Ազգագրական հանդես
ա.թ.	առանց թվականի
ԲԱ	Բանահյուսական արխիվ
ՀԱԻԲԱ	Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ
ԳԱԱ ԳԻ	Գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ
ԳՍ	Գարեգին Սրվանձտյանց
ԴԲՆ	Դաշտային բանահյուսական նյութեր
ԵԼՄ	Երվանդ Լալայան, Մարգարիտներ հայ բանահյուսության
ԷԱԺ	Էմինյան ազգագրական ժողովածու
ՀԺՀ	Հայ ժողովրդական հեքիաթներ
ՀԱԲ	Հայ ազգագրություն և բանահյուսություն
ՀԱԻԲԱ	Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ
ՀԱԻ ԱԲԱ	Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության և բանահյուսության արխիվ
ՀԺՀ	Հայ ժողովրդական հեքիաթներ
ՀԺՊ	Հայ ժողովրդի պատմություն
ՀՀԺԱ	Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ
ՀՁՀ	Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ
ՄՄ	Մաշտոցի անվան Մատենադարան
ՊԲՀ	Պատմա–բանասիրական հանդես
ՍԾ	Սասնա ծռեր
տրբ.	տարբերակ
AT	Aarne Thompson
FFC	Folklore Fellows' Communications
JAF	Journal of American Folklore
L.	Leningrad
M.	Moscow
MSU	Moscow State University
ЕГУ	Ереванский гос. университет
ИВЛ	История всемирной литературы
МГУ	Московский государственный университет имени М.В. Ломоносова
МГЛУ	Московский государственный лингвистический университет
ГИРЯ	Государственный институт русского языка им. А.С. Пушкина
ГИХЛ	Гос. изд–во худ. литературы
МНМ	Мифы народов мира
МПГУ	Московский педагогический государсвенный университет

СУС	Сравнительный указатель сюжетов
ТГУ	Томский государственный университет
ТОДРЛ	Труды Отдела древнерусской литературы
ФАТГУ	Фольклорный Архив Тбилисского Государственного Университета им. И. Джавахишвили

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
CONTENTS OF THE PREVIOUS ISSUES

ՊՐԱԿ 1, 2009

NUMBER 1, 2009

ՊՐԱԿ 2, 2010

NUMBER 2, 2010

Հովհաննես Թումանյանի թանգարան
Hovhannes Toumanian Museum

ՈՍԿԵ ԴԻՎԱՆ

Հեքիաթագիտական հանդես

Պրակ 3, 2011

VOSKÉ DIVAN

Journal of fairy–tale studies

Volume 3, 2011

Գլխավոր խմբագիր՝ Ալվարդ Ջիվանյան
Edited by Alvard Jivanyan

ISSN 1829–1988

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ,
Երևան, Մոսկովյան 40, հեռ. (010) 560021, (010) 516021:
Վկայական 03Ա058539, տրվել է 03.02.2003 թ.

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Չափսը՝ 70x100 /16: Ծավալը՝ 13.5 տպ. մամ.: Տպաքանակը՝ 200:

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ–97» ՍՊԸ տպարանում